«ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ»

ՄԱՏԵՆԱՇԱՐ

Բ



Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՒ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԶԱՔԱՐԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆ

200 ՀԱՐՑ
Ս. ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2016

ՀՏԴ 27-558. 3
ԳՄԴ 86.37
Զ 431

ՀԱՔԱՐԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆ

Զ 431 200 հարց Ս. Մկրտության մասին / Հաքարիա վարդապետ Բաղումյան.- Երևան: Հեղ. հրատարակություն, 2016.- 288 էջ:

Ս. Մկրտությունն Ընդհանրական եկեղեցու սրբազան խորհուրդներից է, երբ ջրի մեջ Ս. Երրորդության անունով երիցս ընկղմամբ մարդ մաքրվում է ադամական մեղքից՝ դառնալով քրիստոնյա և եկեղեցու անդամ: Ս. Մկրտության անբաժան մասն է Ս. Դրոշմի խորհուրդը, որի ընթացքում հոգևորականը Ս. Մյուռոնով դրոշմում է մկրտվածի մարմնի ինը մասերը: Գրքում հարց ու պատասխանի ձևով անդրադարձ է կատարվում Ս. Մկրտությանը և Ս. Դրոշմին՝ ընդգրկելով հարցերի լայն շրջանակ:

Աշխատությունը նախատեսված է հոգևոր կյանքով հետաքրքրվողների և ընթերցասեր լայն հասարակության համար:

ՀՏԴ 27-558. 3
ԳՄԴ 86.37

Տպագրվում է մեկենասությամբ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ

ISBN 978-9939-0-1656-6 © Զաքարիա վրդ. Բաղումյան, 2016

Բովանդակություն

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ 7
Ս. ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ, ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏՄԱՆՆԵՐԸ 13
Ս. ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԲԱՆԱԶԵՎԸ 52
Ս. ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՇՏՈՆՅԱՆ 56
Ս. ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՅՈՒԹԸ 62
Ս. ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ 71
Ս. ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ 79
ԿՐԿՆԱՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ 85
ՄԱՆԿԱՄԿՐՏՈՒԹՈՒՆ 93
ԿՆՔԱՀԱՅՐՈՒԹՅՈՒՆ 108
ԵՐԱԽԱՅՈՒԹՅՈՒՆ. Ս. ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ «ՀՆԱԳՈՒՅՆ ՄԱՇՏՈՑԻ» 136
Ա. Ս. Երրորդության աստվածություն 143
Բ. Արարածների արարչություն և ստեղծում 148
Գ. Արդարների ընտրություն 151
Դ. Քրիստոսի ծնունդ 153
Ե. Խաչի մեծ խորհուրդ 156
Զ. Թաղում, հարություն 158
Է. Առ Հայր համբարձում 161
Ը. Երկրորդ գալուստ 162
Թ. Ընդհանրական հարություն 168
Ժ. Հատուցում 174

Ս. ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՇԵՍԸ 178
Ս. ԴՐՈՇՄԻ ԽՈՐՀՐԴԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 215
Ս. ԴՐՈՇՄԻ ԽՈՐՀՐԴԻ ԲԱՆԱՁԵՎԸ, ԵՂԱՆԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆՅԱՆ 221
Ս. ԴՐՈՇՄԻ ԽՈՐՀՐԴԻ ԻՆՆ ՕԾՈՒՄՆԵՐԸ 223
Ս. ԴՐՈՇՄԻ ԽՈՐՀՐԴԻ ՆՅՈՒԹԸ՝ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆ 230
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ 251
ՀԱՐՑԱՇԱՐ 259
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 270

Երկու խոսք

Սիրով և ուրախությամբ ընթերցողին ենք ներկայացնում «Հարցեր և պատասխաններ» մատենաշարի երկրորդ գիրքը՝ «200 հարց Ս. Մկրտության մասին» աշխատությունը, որն անդրադառնում է Ս. Մկրտության և Ս. Դրոշմի խորհուրդների բացատրությանը և հարակից հարցերի լուսաբանմանը:

Ս. Մկրտությունը մարդու հոգևոր կյանքի սկիզբն է, երբ օրհնված ջրի մեջ Ս. Երրորդության անունով երիցս ընկղմամբ մաերվում ենք ադամական մեղքից՝ դառնալով Եկեղեցու անդամ և քրիստոնյա: Ապա նորածին քրիստոնյան սկսում է հոգևոր իր ճանապարհորդությունն այս կյանքում՝ զորացած Տիրոջով և զարդարված Ս. Հոգու յոթնարփյան շնորհներով, սակայն լի փորձություններով և վտանգներով, անկումներով և վերելքներով, մեղքի և չարի դեմ մշտամնա պայքարով: Չնայած Ս. Մկրտությունից հետո էլ մեղքեր ենք գործում, բայց Ապաշխարության խորհրդի միջոցով կրկին վերականգնվում ենք Եկեղեցու Ս. Ավազանից վերստին ծննդյամբ ստացած շնորհների մեջ: Այդ պատճառով Քրիստոսի Եկեղեցու կյանքում մշտապես կարևորվել է աստվածահաստատ այս խորհուրդը և շեշտվել սրբազան ծեսի անխաթար կատարումն ու կանոնի հիմնական տարրերի պահպանման անհրաժեշտությունը՝ մկրտվողից պահանջելով նախապատրաստություն, հոգևոր արթնություն, զգոնություն և երկյուղածություն:

Կենդանանար այս խորհուրդն ամենաշատ կատարվող ծիսական արարողությունն է հայոց եկեղեցիներում, որն այն-



հան սիրելի և հոգեհարազատ է նաև մեր ժողովրդի համար՝ դառնալով հոգևոր և ընտանեկան ուրախության պատեհ առիթ: Ուստի ամենևին էլ պատահական չէ, որ Ընդհանրական եկեղեցու հայրերի նման Հայոց եկեղեցու նշանավոր վարդապետներն ու հայրերը նույնպես իրենց հոգեշահ գրվածքներում անդրադարձել են Ս. Մկրտությանը, մեկնել և բացատրել դրա կարևորությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ 2010 թ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Ն.Ս.Օ.Տ.Տ. Առամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի օրհնությամբ ստեղծվեց Հայոց Եկեղեցու Ծիսական հանձնախումբը, որին հանձնարարվեց ուսումնասիրել և ստեղծել Ս. Մկրտության կանոնի միասնական մեկ բնագիր, կանոնական ուղեցույց և նախապատրաստական-ուսուցողական ձեռնարկ: Շնորհակալությամբ պետք է նշենք, որ 2013 թ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ մենք նույնպես ներգրավվեցինք հանձնախմբի աշխատանքներում՝ հետազոտելով խնդրին առնչվող սկզբնաղբյուրները և ուսումնասիրությունները, որոնց արդյունքում ծնվեց նաև սույն ձեռթական աշխատությունը:

Գիրքը բաղկացած է երկու խոսքից և 15 գլուխներից, որոնց հաջորդում են գործնական հարցերի պատասխանները, ընդհանուր հարցաշարը և օգտագործված գրականության ցանկը: Աշխատության մեջ անդրադարձել ենք **Ս. Մկրտության խորհրդի հաստատմանը, նշանակությանը և պայմաններին, բանձնին, խորհրդակատար պաշտոնյային, նյութին, եղանակին, վայրին, կրկնամկրտությանը, մանկամկրտությանը, կնքահայրությանը, երախայությանը, ծեսի ընթացքին և նկարագրությանը, Ս. Դրոշմի խորհրդի նշանակությանը, բանձնին, եղանակին, պաշտոնյային, ինն օծումներին և Ս. Դրոշմի նյութին՝ Սրբալույս Մյուռոնին**: Խոսելով երախայության մասին՝ մասնավոր անդրադարձ ենք կատարել նաև Ս. Մկրտության պատրաստությանը՝ ըստ «Հնագույն Մաշտոցի» նշելով և բացատրելով այն բոլոր կետերը, որոնք պահանջվում են չափահաս մկրտվողից, այսինքն՝ իմացություն **Ս. Երրորդութ-**

յան աստվածության, արարչության և արարածների ստեղծման, արդարների ընտրության, Քրիստոսի ծննդյան, Խաչի մեծ խորհրդի, թաղման, հարության, համբարձման, երկրորդ գալստյան, ընդհանրական հարության և հատուցման մասին: Գրքի այս բաժինն օգտակար կարող է լինել հատկապես չափահաս մկրտվողի և կնքահոր համար:

Հարց ու պատասխանի ոճով շարադրված այս աշխատության նպատակն է մատչելի և հնարավորինս պարզ լեզվով բացատրել Ս. Մկրտության և Ս. Դրոշմի խորհուրդները, որպեսզի ընթերցողն ամբողջականորեն պատկերացում կազմի դրանց մասին: Հույս ունենք, որ գիրքը կօգնի նաև Ս. Մկրտությանը պատրաստվողներին գիտակցաբար և հոգևոր գիտելիքներով մոտենալ խորհրդին:

Հարցերը կազմել ենք Միսական հանձնախմբի կատարած հարցախույզի, տարբեր հոգևորականների և մեր անձնական հոգևոր փորձառության հիման վրա՝ ներառելով պարզ հարցերից մինչև աստվածաբանական նրբություններ ունեցողները, և ուշադրություն դարձնելով դրանցից յուրաքանչյուրի վրա: Մեզ համար չեն եղել երկրորդական բնույթի հարցեր, ուստի փորձել ենք պատասխանել հնարավոր բոլոր այն հարցերին, որոնք կարող են առաջանալ մարդկանց մոտ:

Աշխատությունը շարադրել ենք՝ հիմնվելով Ս. Գրքի, հայրախոսական գրականության, կանոնագիտական երկերի և խորհրդին առնչվող հայերեն և օտարալեզու ուսումնասիրությունների վրա: Այս տեսանկյունից մեզ համար շատ օգտակար է եղել մեր սիրելի ուսուցչի՝ Հակոբ Քյոսեյանի աշխատասիրությամբ լույս տեսած «Եկեղեցու հայրերը և վարդապետները Սուրբ Մկրտության խորհրդի մասին» երկհատորյակը:

Հարցերը խմբավորել ենք համապատասխան գլուխներում՝ նշելով նաև պատասխանների հիմքերը: Գրքի որոշ մասեր ծանոթագրել ենք՝ հավելյալ հետաքրքիր տեղեկություններ հաղորդելով: Քանի որ Հայոց Եկեղեցում և մեր աստվածաբանական մտածողության մեջ Ս. Դրոշմի արարողությունը Ս. Մկրտության խորհրդի անբաժան մասն է, գիրքը վերնագրել ենք «200 հարց Ս. Մկրտության մասին»՝ բնականաբար անդ-



ռադառնալով նաև Ս. Դռոշմին առնչվող հարցերին: Օտար լեզուներից թարգմանությունները և գրաբարից աշխարհաբար փոխադրումները մեր են:

Գրի տպագրության առիթով որդիական խոնարհությամբ և երախտագետ սրտով շնորհակալություն ենք հայտնում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան թեմին և նրա ժրաջան ու նախանձախնդիր առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արեպիսկոպոս Տեր-Տերյանին, ով իր անձնական օրինակով մշտապես ոգևորել և աջակցել է մեզ:

Խորին շնորհակալություն ենք հայտնում Աւրժանապատիվ Տ. Վահրամ քահանա Մելիքյանին և Աւրժանապատիվ Տ. Մարկոս քահանա Մանգասարյանին՝ աշխատության նախնական տարբերակն ուշադրությամբ ընթերցելու, օգտակար դիտողությունների և առաջարկների համար: Շնորհակալությամբ ենք արձանագրում նաև, որ Տեր Մարկոսը սիրահոժար կատարել է նաև գրի էջադրման աշխատանքները: Շնորհակալություն նաև Սոֆյա Առուշանյանին՝ գրի գեղեցիկ կազմի համար:

Եվ վերջապես շնորհակալություն ենք հայտնում Մաշտոցի անվան Մատենադարանի գլխավոր ավանդապահ, Ձեռագրագիտության և Մայր ցուցակի բաժնի վարիչ Գևորգ Տեր-Վարդանյանին՝ ձեռագրերից օգտվելու հնարավորության, ինչպես նաև մեր վաղեմի բարեկամ Լիլիթ Հովսեփյանին՝ լեզվաոճական խմբագրման համար:

Ջահարիա վարդապետ Բաղումյան
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան

ՀԱՐՑԵՐ
ԵՎ
ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ



Ս. ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ, ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Ի՞նչ է Ս. Մկրտությունը:

Ս. Մկրտությունն Ընդհանրական Եկեղեցու սրբազան խորհուրդներից է, որով մարդ *մաքրվում է ադամական կամ սկզբնական մեղքից և մինչ այդ գործած բոլոր մեղքերից, դառնում քրիստոնյա, մարմին և անդամ Քրիստոսի եկեղեցու, երկնավոր Հոր որդեգիր, Քրիստոսին ժառանգակից և Ս. Հոգու տաճար*[1]: Այն հաճախ անվանում են նաև «մուտքի» խորհուրդ, քանզի առանց մկրտվելու, որևէ մեկը չի կարող մասնակցել Եկեղեցու մյուս խորհուրդներին: Ս. Մկրտությունն անկրկնելի խորհուրդ է և նվիրական մի պահ ամեն մարդու կյանքում, որը լինում է միայն մեկ անգամ: Աստվածահաստատ այս խորհուրդը Եկեղեցի մտնելու դուռն է, առաջին քայլը, որից էլ սկսվում է մարդու հոգևոր կյանքը: Ս. Մկրտությունն այն սահմանագիծն է, որը բաժանում է Եկեղեցու մեջ գտնվողներին մյուսներից: Այն մարդկանց կամ հոգևորականների կողմից հնարված ծիսակատարություն կամ երկրորդական բան չէ, այլ Քրիստոսի Եկեղեցուն անդամակցելու և քրիստոնյա դառնալու գլխավոր նախապայմանը: Ուստի, ինչ Աստված անհրաժեշտ է համարել մեզ համար

1 Տե՛ս Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ, Կ. Պոլիս, 1807, էջ 15:

և պատվիրել այն կատարել, ավելորդ չհամարենք՝ միշտ հիշելով, որ առանց Ս. Մկրտության չկա նաև փրկություն: Եթե մկրտյալը պահում է Ս. Մկրտությամբ ստացած շնորհները, առօրյայում ձգտում առ Աստված, փորձում կյանքում կիրառել Տիրոջ պատվիրաններն ու աստվածահաճո կյանքով ապրել, ապա այդ շնորհները բազմապատկվում են և տալիս իրենց քաղցր և բարի պտուղները: Բայց եթե մարդ Ս. Մկրտության է գալիս անգիտակցաբար, առանց ներքին համոզման և պարզապես ավանդույթի ուժով և դրանից հետո էլ անհավատի նման շարունակում է ապրել իր նախկին կյանքով, ապա զրկվում է աստվածային շնորհներից: Ընդհանրական Եկեղեցու 12 վարդապետներից Ս. Կյուրեղ Երուսաղեմացին (313-386) ասում է. *«Մեծ բան է վերահաս Մկրտությունը: Այն գերիների փրկագինն է, մեղքերի թողությունը, մեղքի մահը, հոգու վերածնունդը, լուսավոր զգեստը, սուրբ, անխախտ կնիքը, դեպի երկինք տանող կառքը, արքայության գրավականը, որդեգրության շնորհը»*[2]:

2. Ի՞նչ է ադամական կամ սկզբնական մեղքը:

Աստվածաշնչի Ծննդոց գրքից տեղեկանում ենք, որ մեր նախածնող Ադամը չպահեց Տիրոջ

2 **Святитель Кирилл, Архиепископ Иерусалимский**, Поучения огласительные и тайноводственные, Москва, 2010, стр. 16, հմմտ. **Ս. Կյուրեղ Երուսաղեմացի**, Կոչումն ընծայության (այսուհետ՝ Կոչումն ընծայության), Ս. Էջմիածին, 2007, էջ 19: Այս միտքը վերագրվում է նաև Ս. Բարսեղ Կեսարացուն. տե՛ս **Ս. Բարսեղ Կեսարացի**, Գիրք պահոց, աշխատասիրությամբ Կիմ Մուրադյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2008, էջ 428:

պատվիրանը և պատվիրանազանց ու անհնազանդ գտնվեց՝ ճաշակելով արգելված պտուղը: Ահա այս անհնազանդությունն էլ կոչվում է *առաջնական* կամ *սկզբնական* մեղք[3]: Ս. Գրիգոր Տաթևացին (1346-1409) Ադամի մեղքն այսպես է բացատրում. *«Ադամի մեղքն այն է, որ կորցրեց արդարությունը և մեղքով ու ցանկությամբ որդի ծնեց, և այն մեղքը «սկզբնական» է կոչվում և չի ներվում, եթե չի մկրտվում Քրիստոսի մահով»*[4]:

Աստված մարդուն ստեղծել էր Իր պատկերով և նմանությամբ, այսինքն՝ ազատ կամքով, անմահ հոգով և ընտրության հնարավորությամբ: Բայց մարդը մեղք գործեց հենց նույն ազատ կամքով, որն էլ դարձավ ամբողջ մարդկության ողբերգությունը: Ս. Պողոսն ասում է. *«Ինչպես մեկ մարդով մեղքն աշխարհ մտավ, և մեղքով էլ՝ մահը, այնպես էլ բոլոր մարդկանց մեջ տարածվեց մահը, որովհետև բոլորը մեղանչեցին»* (Հռոմ. 5. 12), *«Ինչպես Ադամով բոլորը մեռնում են, նույնպես էլ Քրիստոսով ամենքը պիտի կենդանանան»* (Ա Կորնթ. 15. 22): Մեր նախածնողների մեղսագործությամբ մարդ կորցրեց դրախտային երանական վիճակը, անմիջական և երանական կապն Արարչի հետ և մահը ժառանգեց: Ադամական մեղքը փոխանցվում է բոլոր մարդկանց սերնդից սերունդ, բայց ոչ թե գեների միջոցով, այլ պարզապես ամբողջ մարդկությունն ապրում է այդ մեղքի մեջ, ուս-

3 Այս մասին տե՛ս **Յակոբ արք. Գլնճեան**, Հաւատի և բանականութեան հետքերով, Երևան, 2014, էջ 290-295:

4 **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց (այսուհետ՝ Գիրք հարցմանց), Երուսաղէմ, 1993, էջ 591:

տի ոչ ոք առանց դրա չի ծնվում: Եվ այդ մեղքը ջնջվում է միայն Ս. Մկրտությամբ: Եթե Ադամն ազատ կամքով թողեց Աստծուն, իր անհնազանդությամբ զրկվեց Աստծո հետ անմիջական հաղորդակցությունից և Աստծո որդին լինելու շնորհից, ապա մենք՝ Ադամի ժառանգներս, Ս. Մկրտության խորհրդով մաքրվելով ադամական և մինչ Ս. Մկրտությունը գործած բոլոր մեղքերից՝ դարձյալ որդեգրվում ենք Աստծուն և հետագա մեր ամբողջ կյանքում ճիգ ու ջանք գործադրում պահպանելու համար Ս. Մկրտությամբ ստացած շնորհները: Այս խորհրդով է սկսվում մեր փրկության ճանապարհը և սատանայի, նրա գործակիցների ու մեղքի դեմ շարունակական պատերազմը, որը կարող ենք հաղթահարել միայն Տիրոջ օգնականությամբ և Նրան ապավինելով:

3. Չէ՞ որ մենք Ս. Մկրտությունից հետո էլ ենք մեղքեր գործում, ի՞նչ անել այդ ժամանակ:

Այո՛, մեր մեղանչական բնության պատճառով Ս. Մկրտությունից հետո էլ մեղանչում ենք՝ մեղքեր գործում: Դրանք կոչվում են *ներգործական* մեղքեր, որոնք լինում են *ներելի, մահուչափ* կամ *մահացու*: Եթե ադամական մեղքից մաքրվում և ազատվում ենք Ս. Մկրտությամբ, ապա դրանից հետո գործած մեղքերից Ապաշխարության խորհրդով, երբ զղջում ենք, ապաշխարում, խոստովանում դրանք, թողություն ստանում ձեռնադրություն և օծում ունեցող հոգևորականից և նոր միայն Ս. Հաղորդություն ստանում: Այլ խոսքով՝

ներգործական մեղքերից մաքրվելու համար նորից չենք մկրտվում, քանզի Ս. Մկրտությունը մարդու կյանքում մեկ անգամ է կատարվում:

4. Ո՞վ է հաստատել այս խորհուրդը:

Ս. Մկրտության կենդանարար խորհուրդը հաստատեց Հիսուս Քրիստոս հրաշափառ հարությունից հետո, երբ առաքյալներին պատվիրեց. *«Գնացե՛ք ուրեմն, աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին, մկրտեցե՛ք նրանց Հոր, Որդու և Ս. Հոգու անունով»* (Մատթ. 28. 19): Տիրոջ այս խոսքերից հետո Ս. Մկրտությունն արդեն խորհուրդ է բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են փրկվել և երկնքի արքայությանն արժանանալ՝ զինվորագրվելով Քրիստոսի Ս. Եկեղեցուն: Հիսուս իր այս խոսքերին նաև հավելեց. *«Ով հավատա և մկրտվի, պիտի փրկվի, իսկ ով չհավատա, պիտի դատապարտվի»* (Մարկ. 16. 16): Իսկ Ս. Մկրտության հոգևոր նշանակության մասին Հիսուս շատ հստակ խոսում է Նիկոդեմոսի հետ զրույցում: Երբ վերջինս զարմացած հարցրեց, թե ինչպե՞ս կարող է ծեր մարդը նորից ծնվել, Տերը նրան ասաց. *«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթե մեկը ջրից և Հոգուց չծնվի, չի կարող Աստծո արքայությունը մտնել, որովհետև մարմնից ծնվածը մարմին է, իսկ Հոգուց ծնվածը՝ հոգի»* (Հովհ. 3. 5-6):

5. Ի՞նչ արեցին առաքյալները Տիրոջ հրաշափառ հարությունից հետո:

Հետևելով Տիրոջ վերոբերյալ պատգամներին՝ առաքյալներն ամենուր քարոզում էին Քրիստո-

սով ավետարանված փրկությունը և հավատացյալներին մկրտում: Առաջին հավաքական նմանատիպ Ս. Մկրտությունը տեղի ունեցավ հենց Հոգեգալստին, երբ Ս. Հոգին կրակե լեզուների տեսքով իջավ առաքյալների վրա: Երբ այդ օրը Ս. Պետրոսի քարոզությունից հետո մարդիկ նրան հարցրեցին, թե ինչ անեն փրկվելու համար, առաքյալն անվարան պատասխանեց. *«Ապաշխարեցե՛ք, և ձեզանից յուրաքանչյուրը թող մկրտվի Տեր Հիսուս Քրիստոսի անունով մեղքերի թողության համար, և պիտի ընդունեք Ս. Հոգու պարգևը»* (Գործք 2. 38): Այդ ժամանակ Քրիստոսի Եկեղեցին համալրվեց շուրջ 3000 անդամով (Գործք 2. 41): Այնուհետև Ս. Փիլիպպոսը մկրտեց Կանդակա թագուհու ներքինուն (Գործք 8. 38), Ս. Պետրոսը՝ Կոռնելիոս հարյուրապետին՝ ընտանիքի և ուրիշների հետ (Գործք 10. 47-48), Ս. Պողոսը՝ Լիդիային (Գործք 16. 15), բանտապետին՝ իր ընտանիքով (Գործք 16. 33), Կրիսպոսին՝ իր ամբողջ տնով և կորնթացիներից շատերին (Գործք 18. 8), մի քանի աշակերտների՝ Եփեսոսում, ովքեր նախապես Ս. Հովհաննես Մկրտչի մկրտությամբ էին մկրտվել (Գործք 19. 1-5): Ահա դարեր շարունակ Հայոց Եկեղեցին էլ առաքյալներից մեզ փոխանցված տերունահաստատ այս խորհուրդը կատարում է անխափան և անաղարտ՝ իր Ս. Ավազանից ծնելով նոր քրիստոնյաների:

6. Ինչո՞ւ են Ս. Մկրտության խորհուրդն անվանում «վերստին ծնունդ»:

Մարդ, առաջին անգամ ծնվելով իր մարմնավոր ծնողներից, իբրև հին մարդ՝ ստանում է նախա-

հոր՝ առաջին Ադամի պատկերը, բայց վերստին ծնվելով Եկեղեցու Ս. Ավազանից՝ «ջրից և Հոգուց»՝ իբրև նոր մարդ՝ երկրորդ Ադամի՝ Քրիստոսի պատկերը[5]: Վերստին ծննդյան կարևորության մասին է խոսում նաև մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս: Երբ փարիսեցի Նիկոդեմոսը գիշերով այցելում է Նրան, Հիսուս նրա հետ խոսում է մկրտվելու անհրաժեշտության մասին՝ ասելով. *«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթե մեկը ջրից և Հոգուց չծնվի, չի կարող Աստծո արքայությունը մտնել, որովհետև մարմնից ծնվածը մարմին է, իսկ Հոգուց ծնվածը՝ հոգի: Դու մի՛ զարմացիր, որ քեզ ասացի՝ պետք է ձեզ վերստին ծնվել, որովհետև քամին ուր ուզում է՝ փչում է, և նրա ձայնը լսում ես, բայց չգիտես որտեղից է գալիս կամ ուր է գնում. այսպես է ամեն ոք, որ Հոգուց է ծնված»* (Հովհ. 3. 5-8): Իսկ Ս. Պողոս առաքյալն այսպես է բացատրում հոգևոր ծնունդը. *«Մի ժամանակ մենք էլ էինք անմիտ, անհնազանդ, մոլորված, ծառայում էինք ցանկությունների և պես-պես անառակությունների. չարությամբ և նախանձով էինք ապրում, ատելի էինք և ատում էինք միմյանց: Իսկ երբ մեր Փրկիչ Աստծո քաղցրությունը և մարդասիրությունը հայտնվեց,- ոչ այն արդարության գործերի համար, որ մենք արեցինք, այլ իր ողորմության համաձայն,- փրկեց մեզ վերստին ծննդյան Ավազանի միջոցով և նորոգությամբ Ս. Հոգու»* (Տիտ. 3. 3-5): Վերստին ծննդյամբ՝ Ս. Մկրտությամբ, մարդ ուխտում է թողնել իր հին կյանքը և այսուհետ ապրել նորը Քրիստոսով, ուր մեղքի դեմ անդադար պայքար է՝ հանուն երկնքի արքայության ժառանգման:

---

5 Տե՛ս **Ս. Ս. Մայիլեան**, Ոսկեփորիկ կամ կրօնական գիտելիքների հանրագիտարան, Մասն Բ, Երևան, 1993, էջ 48:

7. Ի՞նչ են ասում Ընդհանրական և Հայոց Եկեղեցիների հայրերն ու վարդապետները վերստին ծննդյան մասին:

Քրիստոսի Եկեղեցու սրբակենցաղ հայրերից Ս. Հովհան Ոսկեբերանը (347-407) Հովհաննեսի Ավետարանի մեկնության համապատասխան հատվածում ասում է. *«Լսե՛ք ամենքդ, որ առանց Մկրտության եք, զարհուրե՛ք և ա՛խ քաշե՛ք, ահավոր է սպառնալիքը, ահավոր է նաև վճիռը, որովհետև հնար չկա. «Ով չծնվի ջրից և Հոգուց, չի կարող երկնքի արքայությունն մտնել»: Քանզի նա, ով չի հագել անեծքների և ապականության մահվան զգեստը, չի կրել տերունական նշանը, օտար և անցողիկ է, քանզի արքունական մատանին չունի...: Եվ եթե Աստված չանի հանկարծակի մահը մեկին հասնի և առանց հույսի (նկատի ունի Մկրտությունը) այստեղից գնանք, թեպետ բյուր բարիքներ էլ ունենանք, մեզ այլ բան չի սպասվում, բացի գեհենից, անշեջ հրից և անլուծանելի կապանքներից: Բայց լսողներից ոչ ոքի այս տանջանքները թող չպատահեն: Իսկ սրանից ազատվելու միջոցը Ս. Խորհրդին արժանանալն է»*[6]:

***

Մեր հավատքի հայր Ս. Գրիգոր Լուսավորչին վերագրվող «Հաճախապատումի» երկրորդ ճառում, որը Ս. Երրորդության անձերի մասին է, Ս. Ավազանից վերստին ծննդյան մասին ասվում

6 Творения святого отца нашего Иоанна Златоуста, Том Восьмой, Книга Первая, С-Петербург, 1902, стр. 162, 166, **Յովհան Ոսկեբերան**, Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին, որ ըստ Յոհաննու, Կոստանդնուպոլիս, 1717, էջ 242, 248:

է. *«Այսպես է հոգևոր Ավազանի վերսաին ծնունդը, որ Ամենասուրբ Երրորդության շնորհով և մարդասիրությամբ ախտավոր ծնունդը վերսաին դարձնում է առանց ախտի. «Որոնք ո՛չ արյունից և ո՛չ մարդու կամքից, այլ Աստծուց ծնվեցին» (Հովհ. 1. 13)՝ որպէս առհավատչյա՝ Քրիստոսի ժառանգության մեջ: Քանզի այսպես ծնվում են Աստծո որդիներն Աստծո Որդու կերպարանքով և դառնում ճշմարտության վկայողներ նեղության և անդորրի մեջ, և ուղիղ սրտով ու ուղղափառ խոստովանությամբ անսասանելի են մնում Աստծո սիրո մեջ, և կենդանարար Հոր որդիներն անճառ շնորհներով երկնավորին են ընծայվում: Եվ այնուհետև Աստծո գործն են կատարում և Նրա կամքն իրագործում՝ ըստ Բարերարի երախտիքի, և Արարչի շնորհով կցորդակից են լինում երկնավոր զորքերին մարդկանց ապաստավորության համար, նրանց, ովքեր ժառանգելու են հավիտենական փրկությունը, որ Քրիստոսով է»*[7]:

***

Երզնկայի դպրոցի նշանավոր րաբունապետ Հովհաննես Երզնկացի Պլուզը († 1293) «Խրատ հասարակաց» կարևոր աշխատության մեջ Ս. Մկրտության փրկարար խորհրդի մասին ասում է. *«Քրիստոնեության սկիզբն ու գլուխը Մկրտությունն է, որը ժողովրդական խոսքով «կնունք» է կոչ-*

7 Մատենագիրք հայոց, Ա. հատոր, Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 15-16, **Григорий Просветитель (Григор Лусаворич)**, Многовещательные речы, Перевод с древнеармянского, предисловие и премечания С. С. Аревшатяна, Ереван, 2011, стр. 31, հմմտ. **Գրիգոր Լուսաւորիչ**, Սուրբ Երրորդության անձերի մասին. «Գանձասար» աստուածաբանական կենտրոն, հ. Դ, Երևան, 1993, էջ 148:

վում: Իսկ թե ինչ է Մկրտությունը՝ վերստին և հոգևոր ծնունդ է, ինչպես Քրիստոս ասաց. «եթե մեկը Հոգուց և ջրից չծնվի, ապա չի մտնի Աստծո արքայությունը» (Հովհ. 3. 5): Նաև «վերստին ծնունդ» է ասվում, քանի որ առաջին անգամ [մարդ] ըստ մարմնի ծնվում է մարմնավոր ծնողներից, որը մեղանչական ծնունդ է, երկրորդ անգամ ծնվում է հոգևոր և աստվածային ծննդյամբ՝ հոգևոր ծնողներից: Այս ծննդյան Հայրն Աստված է, մայրը՝ եկեղեցին, արգանդն էլ՝ Ավազանը, որ ծնում է մանկանը ջրով և Հոգով»[8]:

8. Ի՞նչ այլ անվանումներ են տալիս Ս. Մկրտության խորհրդին:

Ս. Գրքում և Եկեղեցու հայրերի գրվածքներում Ս. Մկրտության խորհուրդը զանազան անուններով է հիշատակվում, ուր շեշտվում է խորհրդի այս կամ այն տեսանելի կամ խորհրդավոր կողմը: Ուստի այս խորհուրդը հաճախ անվանվում է՝

✠ **կնիք**: Ս. Պողոս առաքյալն ասում է. *«Ստեփանոսի ընտանիքն էլ մկրտեցի (գրաբար՝ եառու կնիք): Ջգիտեմ ամենևին ուրիշ մեկի, որին մկրտեցի»* (Ա Կորնթ. 1. 16),

✠ **Ավազան**: *«Որ սրբացնի Ավազանի մաքրությամբ»* (Եփես. 5. 26, հմմտ. Տիտ. 3. 5),

✠ **լուսավորություն:** Հուստինոս Վկան († 161) Ա Ջատագովության 61-րդ գլխում ասում է. *«Այս լվացումը «լուսավորություն» է կոչվում, քանզի ովքեր գիտակցում են սա, լուսավորվում են մտքով»*[9],

---

8 **Է. Մ. Բաղդասարյան**, Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, Երևան, 1977, էջ 149:

9 Ante-Nicene Fathers, Vol. 1: The Apostolic Fathers: Justin Martyr,

✠ **լվացում, շնորհ, կատարելություն**: Ս. Մըկըրտության խորհրդին այսպիսի բնորոշումներ է տալիս 2-3-րդ դդ. եկեղեցական մատենագիր, աստվածաբան Կղեմես Ալեքսանդրացին «Դաստիարակ» եռագրության առաջին գրքում. *«**Լվացում** է կոչվում, քանզի նրանով ենք ազատվում մեղքերի դատապարտությունից, **շնորհ**, քանզի նրա մեջ ենք տեսնում երկնային փրկարար լույսը, այսինքն՝ Աստծուն ենք ճանաչում: **Կատարելություն** ենք անվանում, քանզի որևէ թերություն չկա»*[10],

✠ **օծում**: Ս. Գրիգոր Նազիանզացին (329-389) Ս. Մկրտությանը նվիրված ճառում ասում է. *«Այն կոչում ենք **պարգև, շնորհ, մկրտություն, օծում, լուսավորություն, անապականության զգեստ, նորոգության Ավազան, կնիք**՝ այն ամենը, ինչ արժանապատիվ է մեզ համար: **Պարգև** ենք կոչում, ինչպես այն պարգևը, որ տրվում է նրանց, ովքեր ոչինչ իրենց կողմից չեն ներդնում: **Շնորհ** ենք կոչում, քանզի տրվում է նրանց, ովքեր դեռ պարտական են, **մկրտություն**, քանզի մեղքն է թաղվում ջրի մեջ, **օծում** ենք կոչում, քանզի այն սուրբ է և թագավորական, որովհետև թագավորներն ու քահանաներն են օծվել: **Լուսավորություն**՝ իբրև պայծառություն,*

Irenaeus, editors Alexander Roberts and James Donaldson. Revised and Chronologically arranged with brief prefaces and occasional notes by A. Cleveland Coxe, New York, 1885, p. 183.

10 Ante-Nicene Fathers. Vol. 2: Fathers of the Second Century: Hermes, Tatian, Athenagoras, Theophilus, and Clement of Alexandria (Entire), editors Alexander Roberts and James Donaldson. Revised and Chronologically arranged with brief prefaces and occasional notes by A. Cleveland Coxe, New York, 1885, p. 215.

զգեստավորում *իբրև ամօթի քողարկում,* ***Ավազան*** *իբրև լվացում,* ***կնիք*** *ենք կոչում իբրև տերութեան պահպանութիւն և նշան»*[11]:

9. Որո՞նք են ըղձից և արյան Մկրտությունները:

Բացի ջրի Մկրտությունից, ուղղափառ աստվածաբանության մեջ խոսվում է նաև ըղձից և արյան Մկրտությունների մասին: Ըղձից Մկրտությունն է, երբ մեկը մկրտվելու մեծ փափագ ունի, բայց իր կամքից անկախ և հանգամանքների բերումով, մահանում է: Եկեղեցին հավատում է, որ նմանատիպ մարդիկ նույնպես փրկության հույս ունեն. *«Ամեն ոք, ով Տիրոջ անունը կանչի, պիտի փրկվի»* (Հռոմ. 10. 13): Մեր հոգևոր փորձառության ընթացքում հանդիպել ենք նման դեպքի, երբ մեծահասակ մի անձնավորություն սրտանց ցանկանում էր մկրտվել և երախայից պատրաստության շրջանն էր անցնում, բայց հանկարծամահ եղավ Նարեկն ընթերցելիս:

Իսկ արյան Մկրտությամբ մկրտվում են մարտիրոսները, ովքեր իրենց կյանքն են զոհում ու արյունը թափում հանուն Հիսուսի և իրենց հավատքի. *«Ով իր անձն Ինձ համար կորցրեց, այն կգտնի»* (Մատթ. 10. 39): Այս մասին պարզորոշ խոսում է Ս. Կյուրեղ Երուսաղեմացին «Կոչումն ընծայութեան» երկում[12]: Մեկը կարող է մկրտվե-

11 Творения иже во святых отца нашего Григория Богослова, Архиепископа Константинопольского, Том 1, Издательство П. П. Сойкина, 1912, стр. 545: Այս մասին տե՛ս նաև Православная энциклопедия, Том XXXVIII, Москва, 2015, стр. 614-615.

12 Կոչումն ընծայութեան, էջ 38, նաև՝ **Ղևոնդ արքեպիսկոպոս Չէպէյեան**, Հայ Եկեղեցւոյ եօթը խորհուրդները (կանոնագիտա-

լու ջերմ ցանկություն ունենալ, բայց զոհվել մարտի դաշտում իր սրբությունները պաշտպանելիս: Մեր օրերում նույնպես քիչ չեն նմանատիպ դեպքերը: Այսօր քաղաքակիրթ 21-րդ դարում՝ Մերձավոր Արևելքում, բոլորի աչքի առաջ մեր բազում եղբայրներ և քույրեր նահատակվում են հենց քրիստոնյա լինելու պատճառով:

10. Ի՞նչ է ընդհանրական Մկրտությունը:

Երբ խմբերով և մեծ թվով մարդիկ են մկրտվում Մկրտության մեկ արարողության ժամանակ: Օր.՝ Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից արքայական ընտանիքի և ժողովրդի Մկրտությունը: Ընդհանրական Ս. Մկրտություններ տեղի ունեցան նաև մեր օրերում՝ խորհրդային կարգերի փլուզումից հետո, երբ բազում հայորդիներ հոգևոր վերազարթոնքի պայմաններում մկրտվեցին և քրիստոնյա դարձան: Նմանատիպ Մկրտություններից է հայոց մեծ դարձի 1700-ամյակի նախաշեմին 1999 թ. Ծավ գետում կատարվածը, երբ 1000-ից ավել երեխաներ և չափահասներ մկրտվեցին[13]: Այսօր երբեմն ընդհանրական Մկրտություններ են կատարվում նաև բանակում: Այդպիսի Մկրտությունների ժամանակ պետք է ամեն մկրտյալ ունենա իր առանձին կնքահայրը, սրբիչը և խաչը: Իսկ հոգևորականները շատ զգույշ պետք է լինեն և աչալուրջ՝ յուրաքանչյուրին պատրաստելով սրբազան արարողությանը:

կան նկատումներ), Անթիլիաս-Լիբանան, 1988, էջ 14-15:

13 **Ֆլորա Կաբաղյան**, Մկրտություն Ծավ գետում, «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, ապրիլ Ա, 1999:

11. Որո՞նք են Ս. Մկրտության նախատիպերը Հին Կտակարանում:

Ինչպես Ընդհանրական, այնպես էլ մեր Եկեղեցու հայրերը հինկտակարանյան որոշ դրվագներում տեսել և բացահայտել են Ս. Մկրտության թաքնված խորհուրդը: Հիմնականում դրանք են՝

✠ **արարչագործության ժամանակ ջրերի վրա Ս. Հոգու շրջելը** (Ծննդ. 1. 2) խորհրդապատկերն է Ս. Մկրտության: Ընդհանրական Եկեղեցում տարածված այս մեկնաբանությունը լայնորեն կիրառվել է նաև մեր եկեղեցական մատենագրության մեջ, որի վաղագույն վկայություններից է 5-րդ դարի պատմիչ Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ մուծված «Ս. Գրիգորի վարդապետությունը» երկի համապատասխան հատվածը (§ 412-415)[14]: Նույն կերպ են սուրբգրային այս հատվածը մեկնաբանում Ս. Մովսես Խորենացին (5-րդ դ.)[15], Ս. Հովհան Օձնեցին (717-728)[16], Տիմոթեոս վարդապետը (10-11-րդ դդ.)[17], Ս. Գրիգոր Նարեկացին (10-11-րդ դդ.)[18], Հովհան-

---

14 Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեանի և Ստ. Կանայեանցի, Տփղիս, 1909, էջ 206-207, Ս. Գրիգորի Վարդապետությունը, թարգմ. գրաբարից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Սեն Արևշատյանի, Ս. Էջմիածին, 2007, § 154-157, էջ 95-96:

15 Կանոն Աստուածայայտնութեան Ութերորդ աւուրն. Ձայնքաղ շարական, Վաղարշապատ, 1888, էջ 44:

16 Տե՛ս **Միեր Պապյան**, Հովհան Իմաստասեր Օձնեցի, Երևան, 1998, էջ 127, նաև՝ Մատենագիրք հայոց, Է. հատոր, Ը. դար, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 106-107:

17 **Յակոբ Քէոսէեան**, Յառաջաբան համառաւտ ի Ծննդոց, զոր արարեալ է ի Տիմոթեա լուսաւոր վարդապետի. Մատենագիրք հայոց, Ժ. հատոր, Ժ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 913:

18 **Գրիգոր Նարեկացի**, Մատեան ողբերգութեան, աշխատասի-

նես Երզնկացի Պլուզը[19], Ս. Հովհան Որոտնեցին (1315-1386)[20] և ուրիշներ,

✠ **Նոյյան տապանը**: Ինչպես արդար Նոյն ու իր ընտանիքը մտան տապանի մեջ և փրկվեցին ջրհեղեղից, այնպես էլ Ս. Մկրտության ջուրն է փրկարար: Ս. Պետրոս առաքյալն ասում է. *«Այդ օրերին քչեր, այսինքն՝ ութ հոգի փրկվեցին ջրից: Մկրտությունն էլ, ըստ նոյն օրինակի, ապրեցնում է ձեզ (ոչ թե մարմնի կեղտը հեռացնելու համար, այլ որպես մաքուր խղճով հանձնառություն առ Աստված) Հիսուս Քրիստոսի հարության միջոցով»* (Ա Պետ. 3. 20-21),

✠ **թլփատությունը**: Շատերի կարծիքով՝ հինկտակարանյան թլփատությունը նախատիպն է Ս. Մկրտության խորհրդի[21]: Թլփատության մի-

---

րությամբ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Երևան, 1985, Բան ԼԳ, տ. 117-119, էջ 382:

19 **Յովհաննէս Երզնկացի**, Յաւուր Ծննդեան և Մկրտութեան Քրիստոսի, «Գանձասար» աստուածաբանական հանդէս, հ. Ջ, Երևան, 1996, էջ 451:

20 **Սուրբ Հովհան Որոտնեցի**, Մեկնողական-իմաստասիրական ճառեր, քննական բնագրերը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Անուշ Մինասյանի, պատասխանատու խմբագիր՝ ակադեմիկոս Ս. Ս. Արևշատյան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2009, էջ 262:

21 Հինկտակարանյան թլփատության՝ իբրև նորկտակարանյան մկրտության նախատիպ լինելու պարագան վիճարկում է Հովհաննես Տերոյենցը (1801-1888) իր աշխատության մեջ. տե՛ս **Յովհաննէս Պրուսացի Տէր Կարապետեան Չամուռճեանց**, Մկրտութեան վրայ նորադաւաններուն քանի մը վարդապետութիւններուն քննութիւնը, Կոստանդնուպոլիս, 1845, էջ 37-60: Թլփատությունը Ս. Մկրտությունից է զանազանում նաև Պետրոս արք. Բերդումյանը Ծննդոց գրքի իր մեկնության մեջ. տե՛ս **Պետրոս արքեպիսկոպոս Բերդումեան** († 1787), Մեկնութիւն Ծննդոց (Ա 1-ԽԱ 14), աշխատասիրությամբ Տիգրան սարկավագ Բաղդումյանի, Ս. Էջմիածին, 2010, էջ 207, հմմտ. **Տէր Սահակ քահանայի Տէր Սարգսեան**, Քննական կրօնագիտութիւն հանդերձ ապացու-

ջոցով Աստված ուխտ կապեց Աբրահամի սերնդի հետ (Ծննդ. 17. 11-14), իսկ Նոր Ուխտում այն շարունակվեց Ս. Մկրտության խորհրդով (հմմտ. Կող. 2. 11-12, Գաղ. 3. 26-29): Ինչպես ութ օրական հասակում մանուկներին պետք է թլփատեին, այնպես էլ Եկեղեցին թույլատրում և խրախուսում է ութօրյա մանուկների Ս. Մկրտությունը,

✠ **Կարմիր ծովով հրեաների անցումը**: Հրեաները, Կարմիր ծովով անցնելով, փրկվեցին եգիպտական գերությունից: Այս անցումը խորհրդանշում է մեղքի ծառայությունից անցումը փրկության, ուստի Ս. Պողոս առաքյալն ասում է. *«Եղբայրնե՛ր, չեմ ուզում, որ անգիտանաք, որ մեր հայրերը բոլորն էլ ամպի առաջնորդության տակ էին, և բոլորն էլ ծովով անցան, և բոլորը, հետևելով Մովսեսին, մկրտվեցին ամպի և ծովի մեջ»* (Ա Կորնթ. 10. 1-2): Ըստ Հովհաննես Երզնկացի Պլուզի՝ ծովն այստեղ խորհրդանշում է Ավազանի ջուրը, ամպը՝ Ս. Հոգին, գավազանն էլ՝ խաչը[22],

✠ **Հեսու Նավեի առաջնորդությամբ հրեաների անցումը Հորդանան գետով** (Հեսու 3. 15-17)[23]: Ս. Հովհան Օձնեցին եկեղեցու հիմնարկեքին նվիրված ճառում զուգահեռ է անցկաց-

---

ցությեամբք կրօնից, Կ. Պօլիս, 1897, էջ 837-840:

22 **Յովհաննէս Երզնկացի**, Յաւուր Ծննդեան և Մկրտութեան Քրիստոսի, էջ 439: Նման մեկնաբանություն է տալիս դեռևս Ստեփանոս Սյունեցին († 735) իր ճառերից մեկում. **Յակոբ Քէոսէեան**, Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի և այլոց վարդապետաց ի խորհուրդ Եկեղեցւոյ. Մատենագիրք հայոց, Զ. հատոր, Ը. դար, էջ 492-493:

23 Православная энциклопедия, Том XXXVIII, стр. 615.

նում եկեղեցու հիմքում դրվող 12 քարերի, Իսրայելի 12 ցեղերի և Հորդանանի անցումից հետո զետեղված հիշատակության 12 քարերի միջև: Ըստ նրա՝ 12 քարերը Տիրոջ 12 առաքյալներն են, որոնց Տերը Ս. Մկրտության խորհրդով պատվիրեց՝ բոլորին մկրտելու Ս. Երրորդության անունով[24],

✠ **Նեեման Ասորու բժշկումը**: Եղիսե մարգարեի հորդորով Նեեման Ասորին յոթ անգամ *թաթախվեց* Հորդանան գետում և մաքրվեց բորոտությունից (Դ Թագ. 5. 14): Աստվածաշնչի Յոթանասնից (LXX) թարգմանության մեջ այստեղ օգտագործվում է ἐβαπτίσατο բայը, որը մեր Ս. Թարգմանիչները թարգմանել են «մկրտել» բառով: Ըստ Ս. Եփրեմ Ասորու (306-373) և Տերտուղիանոսի (2-3-րդ դդ.)՝ այս հատվածում ակնարկվում է հեթանոսների մկրտության մասին[25]:

12. Ո՞րն է Ս. Մկրտության նախատիպը Նոր Կտակարանում:

Ս. Հովհաննես Մկրտչի կատարած մկրտություններն ապաշխարության համար: Հենց նա Հորդանան գետում մկրտեց Հիսուսին[26]: Ըստ Սրբազան Ավանդության՝ ինչպես Քրիստոս ծնվեց հունվարի 6-ին Բեթղեհեմում, այնպես էլ 30 տարի հետո՝ նույն օրը մկրտվեց: Սա է պատճա-

---

24 Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 119:

25 Православная энциклопедия, Том XXXVIII, стр. 615.

26 Մանրամասն տե՛ս **Maxwell E. Johnson**, The Rites of Christian Initiation: Their Evolution and Interpretation, Liturgical Press Collegeville, Minnesota, 2007, p. 7-23.

ռը, որ Հայոց Եկեղեցին, հավատարիմ մնալով Վաղ Եկեղեցու Ավանդությանը, դարեր շարունակ հունվարի 6-ին նշում է Մեր Տիրոջ և Փրկչի՝ Ս. Ծննդյան և Աստվածհայտնության տոնը, իսկ Ս. Պատարագի վերջում կատարում է ջրօրհնեք՝ ի հիշատակ Հորդանանում Տիրոջ Մկրտության:

13. Ինչո՞ւ Հիսուս մկրտվեց. չէ՞ որ Նա ադամական մեղք չուներ:

Հիսուս մկրտվեց ոչ թե ադամական մեղքից մաքրվելու համար, այլ շեշտելու Ս. Մկրտության անհրաժեշտությունը մարդու կյանքում, քանզի Նա կատարյալ մարդ էր ամեն ինչով, բացի մեղքից: Տերն այս արարքով ևս մեկ անգամ ցույց տվեց, որ Նա մեզանից մեկն է, ով աշխարհ է եկել մարդկության փրկության համար՝ կատարելով Աստծուց մարդուն տրված բոլոր պատվիրանները: Հայոց Եկեղեցու վարդապետներն ու իմաստուն հայրապետներն ավետարանական այս հատվածը մեկնելիս զուգահեռներ են անցկացնում մեր նախածնողի՝ առաջին Ադամի և երկրորդ Ադամի՝ Քրիստոսի միջև: Ինչպես առաջին Ադամը ստեղծվեց երեսնամյա և մեղանչեց Աստծո դեմ, նույն հասակում երկրորդ Ադամը՝ մեր Տերը, մկրտվեց և խորհրդաբար խորտակեց վիշապ-սատանայի գլուխը և մեզ փրկություն շնորհեց: Հորդանանի ջրերում Փրկչի ընկղմամբ երկինքն ու երկիրը նոր եղան, մաքրվեցին բոլոր ջրերը՝ ադամորդիներիս ազատագրելով Ադամի անեծքից և դարձնելով նոր մարդ Քրիստոսով:

14. Ինչպե՞ս են մեկնաբանում Հիսուսի Մկրտության դրվագը Եկեղեցու հայրերը:

Աստվածաբանական վերոգրյալ ըմբռնումներին ենք հանդիպում 5-րդ դարի նշանավոր հեղինակ Անտիպատրոս Բոստրացու՝ հունարեն բնագրով և հայերեն թարգմանությամբ պահպանված Տիրոջ Ս. Մկրտությանը նվիրված ճառում, ուր կարդում ենք. *«Հորդանանի խորքերն իջնելով՝ վիշապի գլուխը պիտի ջախջախեմ և նրա ժանիքների միջից դուրս պիտի հանեմ մարդկային ցեղը...: Մկրտվում եմ, որպեսզի աշխարհը մաքրեմ մեղքերից: Մկրտվում եմ, որպեսզի վիշապին կարթով բռնեմ...: Մկրտվում եմ, որպեսզի Ադամի մերկությունը զգեստավորեմ»*[27]:

***

Հայոց Եկեղեցու նշանավոր վարդապետ և Ավարայրի ճակատամարտի մասնակից Ս. Եղիշեի՝ Տիրոջ Մկրտությանը նվիրված ճառում մասնավորապես ասվում է. *«Եվ որովհետև երեսուն տարեկանում է մարդ կատարյալ գործում, սրան համապատասխան էլ ստեղծվեց առաջին Ադամը, ով խաբվելով օձից, փափկության դրախտից դուրս ելավ. ըստ նույն կատարելության երկրորդ Ադամը Հորդանանի հորձանքներում վիշապի գլուխը ջախջախեց: Սկզբում Ս. Հոգին ջրերի վրա անկերպարան շրջում էր՝ հորինե-*

27 Անտիպատրոսի եպիսկոպոսի Բոստրացւոյ խօսք ի Մկրտութիւնն Տեառն, «Գանձասար» աստուածաբանական հանդէս, հ. Ա, 1992, էջ 40-41: Ս. Մկրտության խորհրդի հայրաբանական և մատենագրական վկայակոչումների մասին տե՛ս Православная энциклопедия, Том XXXVIII, стр. 623-650.

լու համար արարածների տարրը, որին նախանձավոր թշնամին ոտնակոխ էր արել: Այստեղ աղավնակերպ Հոգին արարածների ապականությունը վերստին հրաշագործեց, հավիտենապես ծածկված խորհուրդը ճանաչեցրեց՝ հայտնելով Երրորդության Անձնավորությունը...: Սկզբում երկիրը ջրհեղեղի կորստով է ապականվում, իսկ այստեղ Մկրտության ջրհեղեղով կենդանանում է՝ ոչ թե արարածների բնության ընկղմամբ, այլ մեղքերի գործն է ընկղմում: Այնտեղ մարդկային սերնդի՝ ջրերի մեջ թաղվելն ապականություն առաջ բերեց, այստեղ ջրերի մեջ թաղումը՝ նորոգում և կյանքի հաղորդություն: Այնտեղ շյուղաբեր աղավնին բարկության իջնելու լուրն էր ավետարանում, այստեղ՝ աղավնու նմանությունը կյանքի առհավատչյան և աստվածության հետ մշտնջենավոր հարատևությունն էր ավետարանում Հոր ձայնով, ով Որդու սիրելիությունն էր ազդարարում»[28]: Անպայման ընթերցե՛ք այս ճառը, այնտեղ գեղեցիկ և դիպուկ համեմատություններ կան Ս. Հովհաննես Մկրտչի և Հիսուսի տարբերությունների մասին:

***

Զաքարիա Ա Զագեցի (855-876) կաթողիկոսն ասում է. *«Այսօր երկինքն ու երկիրը նոր եղան, որովհետև բոլոր ջրերը մաքրվեցին՝ ամբողջ աշխարհը որդեգրության համար վերածնելով: Այսօր առաջին խավարն ավարտվեց, որ սփռված անզարդությունն էր*

28 Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք, Վենետիկ, 1859, էջ 207-208, հմմտ. **Սուրբ Եղիշե վարդապետ**, Աստվածաբանական երկեր, թարգմ. գրաբարից Մարթա Արաբյանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 9-10:

բոնել: Այն համատարած և համասփյուռ լույսը բոլոր մարդկանց լուսավորեց, ովքեր եկել են այս աշխարհ և գալու են: Այսօր Հորդանանն առաջին ջրհեղեղի նման անօրենին և կարծեցյալ իշխանին իր դևերի բազմութ-յամբ ընկղմեց...: Այսօր Մկրտությամբ Քրիստոսի հետ ջրի մեջ թաղվեցինք, Նրա մահվամբ Նրա հետ վերս-տին ծնվելով, Նրա հետ կենդանացանք, Նրա հետ էլ պիտի թագավորենք [հավիտենական] կյանքում: Այ-սօր կռապաշտ մոլորության սովերը մարեց. մարդիկ մեղքերից ազատվեցին և հրեշտակների հետ թևածե-լով՝ պայծառանում և լուսազարդվում են: Այսօր մեղ-սաճաշակ խաբեբաների մեգն ու մառախուղը, որոնք Ադամի անեծքների պատճառով [էին], հալածվեցին, քանզի Քրիստոս գալով՝ մեզ համար անեծք եղավ, իսկ բոլոր երկրածին ազգերը Նրանով օրհնվեցին...: Այսօր կորսոյան շավիղները կորացան, պատրանքների ճա-նապարհները փակվեցին, և մարդկային ցեղի համար ճշմարտության ճանապարհն ու պողոտան հորինվե-ցին՝ ջրով և Հոգով անվախճան կյանքում վերածն-վելով: Այսօր սուրբ սերովբեի հրեղեն սուրը կենաց ծառից վերցվեց, որովհետև արքունական զգեստով պճնվեցինք՝ ջրով վերածնվելով, որի առաջ սերովբեն տեղի տալով՝ կենաց ծառի շավիղներն է բացում: Այ-սօր տրամությունից ազատվեցինք՝ հագնելու համար այս նոր՝ «քրիստոնյաներ» անունը, Ավազանի վերած-նությամբ Քրիստոսով զգեստավորվելով, Քրիստոսի հետ ժառանգորդներ դառնալով»[29]:

29 **Զաքարիա Կաթողիկոս Զագեցի** (855-877), Ճառք, աշխա-տասիրությամբ Հ. Պօղոս վրդ. Անանեանի, Վենետիկ-Ս. Ղազար, 1995, էջ 55-58, 64-65:

***

Հովհաննես Երզնկացին Տիրոջ Ս. Ծննդյանը նվիրված սքանչելի ճառում ասում է. *«Իսկ ինչո՞ւ երեսուն տարեկանում մկրտվեց։*

Նախ՝ որովհետև նույն հասակում Ադամը մեղանչեց, երկրորդ Ադամը նույն հասակում և անմեղությամբ լվանում է առաջին Ադամի մեղքը։

Երկրորդ՝ որպեսզի ամաչեցնի նրանց, ովքեր աշխարհում Նրա երեսուն առաչոք են ասում։

Երրորդ՝ որովհետև երեսունը վեց հինգ է կամ հինգ վեց։ Մկրտությամբ մարմնի հինգ զգայարաններն ու վեց շարժումները մաքրեց՝ դրանց ընթացքն ուղղելով դեպի աստվածային բանները։

Չորրորդ՝ քանզի Մկրտությունից հետո էր դնելու վարդապետության սկիզբը, երբ Հոգին ստանար, թեպետ միշտ Նրա հետ էր։ Եվ որովհետև կատարյալ հասակն էր վարդապետելու ժամանակը, որպեսզի ժամանակի թերի լինելու պատճառով վարդապետությունը խոտան չհամարվի։

Հինգերորդ՝ երեսնամյա է մկրտվում, քանզի ոչինչ չէր տագնապեցնում Նրան շտապելու Մկրտության, որովհետև հենց Ինքն էր չարչարանքների տնօրինողը, ինչպես Ծննդյան ժամանակ...։ Իսկ Տերը գիտեր [Իր] մահվան ստույգ ժամանակը, այդ պատճառով էլ մնաց մինչև երեսուն տարեկանը և ապա մկրտվեց։

Վեցերորդ՝ Քրիստոս պատրաստվում էր Մկրտությունից հետո Օրենքը լրացնել և կրկին լուծարել, ուստի սպասեց մինչև երեսուն տարեկանը, քանի որ այդ հասակում մեր բնությունը կարող է մեղքերի բոլոր գործերը կատարել...։

Յոթերորդ՝ երեսնամյա մկրտվելով՝ ցանկացավ մեզ



ցույց տալ, որ ինչպես երեսնամյան կատարյալ է հասակով, այնպես էլ վերստին ծնունդը Մկրտությամբ մարդուն կատարյալ է դարձնում տեսանելի հասակով...: Ութերորդ՝ մինչև երեսուն տարեկան դառնալը հայտնապես ցույց չտվեց, թե ով էր...: Արդ, այս մեծագույն խորհուրդների պատճառով Քրիստոս մկրտվում է երեսուն տարեկանում և տալիս մեզ սրբարար ջուրն ու կենդանարար Հոգին:

Եվ քանի որ մարդը մարմին է և հոգի, Նա երկու տեսակի մաքրություն տվեց՝ ջրից և Հոգուց, որպեսզի նորոգի հոգին, որ Աստծո պատկերն է և նմանությունը, իսկ ջուրը՝ Ս. Հոգու շնորհով, մարմինը մեղքերից մաքրի և ապականությունից ազատի, որպեսզի մահվան կերպարանքը ջրով լվացվի, քանի որ Քրիստոսի մահվամբ ենք մկրտվում, և կյանքի առհավատչյա Հոգին պարգևի: Եվ ինչպես մյուս բոլոր դեպքերում նախ օրինակները խորհրդով տպավորվեցին և մարդկանց մտքերը կրթեցին, իսկ հետո միայն եկավ ճշմարտությունն ուժգին կատարմամբ, նույնպես նաև այս Մկրտության խորհուրդը: Քանզի Հորդանանի ջրերով մաքրվել էին բազում անգամ, քանզի նրա միջով անցնելով Իսրայելը մաքրվեց եգիպտական բոլոր ախտերից և արժանի եղավ ժառանգելու Ավետյաց երկիրը: Նրա մեջ նաև Եղիա մարգարեն մաքրվեց և երկինք վերացավ: Նեեման Ասորին մաքրվեց՝ սրա մեջ յոթ անգամ մտնելով: Այս ջրի մեջ Քրիստոս մկրտվելով Հոգու շնորհները մեզ տվեց, որով մաքրվում ենք եգիպտական և խավարային բոլոր ախտերից, և սրանից թևեր առնելով՝ բարձրանում ենք դեպի երկնային խորանները, և սրանով սրբվում ենք բոլոր ախտերից և ընդունում Հոգու յոթնարփյան շնորհները»[30]:

30 **Յովհաննէս Երզնկացի**, Յաւուր Ծննդեան և Մկրտութեան

***

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ Ս. Ներսես Շնորհալի կաթողիկոսը Մատթեոսի Ավետարանի մեկնության մեջ նույնպես փաստում է. *«Առաջին Ադամը, երեսնամյա ստեղծվելով, ընդունեց Հոգու փչումը, բայց չպահեց, այս երկրորդ Ադամը՝ Տերը, Հոգու իջմամբ Հորդանանում յոթնյակ շնորհներն առնելով նույն բնությամբ, [դրանք] տվեց նրա բոլոր ծնունդներին՝ Ավազանից վերսին ծննդյան միջոցով»*[31]:

15. Ինչո՞վ է տարբերվում Հովհաննեսի մկրտությունը Հիսուսինից:

Ս. Հովհաննես Կարապետը մկրտում էր ջրով ապաշխարության համար: Մարդիկ գալիս էին նրա մոտ, խոստովանում իրենց մեղքերը և նոր մկրտվում: Տիրոջ նախակարապետն ինքը շատ հստակ ասում է. *«Ես ձեզ մկրտում եմ ջրով ապաշխարության համար, բայց ով ինձնից հետո է գալիս, ինձնից ավելի հզոր է, և ես արժանի չեմ հանելու Նրա կոշիկները. Նա կմկրտի ձեզ Ս. Հոգով և հրով»* (Մատթ. 3. 11, հմմտ. Հովհ. 1. 33): Այս մասին խոսում է նաև Տերը. *«Հովհաննեսը մկրտեց ջրով, բայց դուք այս օրերից ոչ շատ հետո պիտի մկրտվեք Ս. Հոգով»* (Գործք 1. 5, 11. 16): Այս երկու մկրտությունների տարբերություններն են ցույց տալիս

Քրիստոսի, էջ 441-443:

31 Մեկնութիւն Սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթէոսի՝ արարեալ ի սրբոյն Ներսիսէ Շնորհալւոյ մինչ ի համարն 17 հինգերորդ գլխոյն, և անտի աւարտեալ յերանելւոյն Յոհաննու Երզնկացւոյ, որ և կոչի Ծործորեցի, Կ. Պոլիս, 1825, էջ 64, **Ս. Ներսես Շնորհալի**, Մեկնություն Մատթեոսի Ավետարանի, թարգմ. գրաբարից՝ Ս. Ստամբոլցյանի, Ս. Էջմիածին, 2008, էջ 149:

նաև Գործք Առաքելոցի 19. 3-6 համարները: Ս. Բարսեղ Մեծը (330-379) ասում է. *«Հովհաննեսն ապաշխարության մկրտությունն էր քարոզում և նրան ընդառաջ էր գալիս ամբողջ Հրեաստանը: Աստված որդեգրման Մկրտություն էր քարոզում և Նրա վրա հույսը դրածներից ով չի ենթարկվի: Այն մկրտությունը սկզբնավորող էր, իսկ սա՝ ավարտին հասցնող, այն մեղքից հեռացնում է, իսկ սա՝ Աստծուն վերապահվում»*[32]: Իսկ Ս. Գրիգոր Տաթևացին այս զանազանության մասին ասում է. *«Հովհաննեսի մկրտությունը տրվում էր Նրա անունով, ով գալու էր, իսկ Քրիստոսինը՝ Ս. Երրորդության անունով, քանզի Քրիստոսի Մկրտությունն արդարացնում և բացում է երկնքի դուռը, իսկ Հովհաննեսինը՝ ոչ»*[33]: Հիսուսի Մկրտության ժամանակ նաև բացահայտվեց Ս. Երրորդության խորհուրդը, երբ Հայր Աստված վկայեց մկրտվող Որդու սիրելի լինելը, իսկ Ս. Հոգին աղավնակերպ իջավ Նրա վրա:

16. Ինչպիսի՞ն է Հիսուսի Մկրտության պատկերագրությունը հայկական ավանդության մեջ:

Տիրոջ Մկրտության հնագույն որմնանկարները հայտնաբերվել են առաջին քրիստոնյաների ստորգետնյա աղոթատներում (1-2-րդ դդ.): Հայկական արվեստում այս պատկերագրությունը կարելի է տեսնել 4-5-րդ դարերի Թալինի

32 **Святитель Василий Великий**, Архиепископ Кесарии Каппадокийской, Творения в двух томах, Т. 1: Догматико-полемические творения. Экзегетические сочинения. Беседы, Москва, 2008, стр. 677.

33 Գիրք հարցմանց, էջ 488:

և Օձունի քարակոթողների վրա: Իսկ Հիսուսի Մկրտությունը պատկերող ամենահին մանրանկարը պահպանվել է 989 թ. ընդօրինակված փղոսկրյա «Էջմիածնի Ավետարանում»[34]: Մանրանկարը կարված է բուն ձեռագրի հետ և թվագրվում է 6-րդ դարով:

Մեծավ մասամբ Հիսուսի Մկրտության պատկերագրությունն ունի հետևյալ առանձնահատկությունները. մեջտեղում մկրտվող Տերն է Հորդանան գետի ջրերի մեջ՝ մինչև ուսը կամ գոտկատեղը ջրաճածկ: Չնայած Տերը մկրտվեց 30 տարեկանում, բայց «Էջմիածնի Ավետարանի» նմանությամբ հնագույն պատկերներում Հիսուս անմորուս պատանի է, որը խորհրդանշում է մարդու հոգևոր ծնունդը և նոր կյանքի սկիզբն անկախ տարիքից: Հետագայում արդեն Հիսուս պատկերվում է մեծ տարիքով, երբեմն երկու ձեռքով մարդկանց օրհնելիս կամ աղոթելիս: Իսկ Հովհաննես Մկրտիչը պատկերվում է մերթ աջ կողմում, մերթ էլ՝ ձախում՝ մորուքավոր և տարիքով մարդու նման, չնայած իրականում նա Հիսուսից մեծ էր կես տարով, երկար մազերով և անապատականի հագուստով: Այս պատկերագրության հիմքը Հովհաննես Մկրտչի ավետարանական նկարագրությունն է. *«Եվ ինքը՝ Հովհաննեսը, ուղտի մազից զգեստ ուներ և կաշվե գոտի՝ իր մեջքին, իսկ նրա կերակուրն էր մորեխ և վայրի մեղր»* (Մատթ. 3. 4, Մարկ. 1. 6): Նրա աջ ձեռքը Հիսուսի գլխին է, իսկ ձախը՝ դեպի վերև կամ ներքև: Հիսուսի ոտքերի մոտ պատկերվում են ձկներ,

34 Տե՛ս ՄՄ ձեռ. Հմր 2374, թ. 229բ:

որոնք խորհրդանշում են Նրանով փրկագնված մարդկանց, իսկ նրա ոտքերի տակ օձագալար կամ կծկված մարմնով հաղթված սատանա-վիշապն է: Սատանա կամ հրեշանման արարած պատկերելու հիմքը 73. 13 սաղմոսն է, որն իր մեկնաբանական արատացոլումն է գտել նաև հայրաբանական գրականության մեջ: Հովհաննես Մկրտիչը և հրեշտակները նույն լուսապսակով են՝ ի տարբերություն Հիսուսի և փառապսակի մեջ երևացող Ս. Հոգու խորհրդանիշ աղավնու:

5-6-րդ դարերից սկսած՝ Ս. Մկրտության մանրանկարներում տեսնում ենք նաև հրեշտակների, որոնց ձեռքերում սրբիչներ, հագուստներ կամ յուղի սրվակներ են: Տիրոջը սպասարկող հրեշտակները պատկերվում են կա՛մ գետի ափին կանգնած, կա՛մ էլ վերևից երկիր թեքված: Հաճախ մանրանկարներում ներքևի մասում պատկերվում է ծերունանման մի մարդ՝ սափորը ձեռքին կամ փող փչելիս: Արվեստաբանները սրան անվանում են «Հորդանանի արքա», որը սատանայի գեղարվեստական կերպավորումներից է: Եթե պատկերի բոլոր կերպարների հայացքներն ուղղված են Տիրոջը, ապա այս վերջինն անբնական դիրքով է: Ավետարանական խոսքի համաձայն, թե՝ *«կացինն ահա ծառերի արմատին է դրված: Ամեն ծառ, որ բարի պտուղ չի տա, կտրվում և կրակն է գցվում»* (Մատթ. 3. 10), մանրանկարիչները գետի ափին ծառի կամ թփուտների մեջ խրված մի կացինն են պատկերում: Հետաքրքրական է, որ մանրանկարներում Հորդանան գետի ափերն

անսովոր կտրտված են, բլրապատ կամ ժայռապատ: Գետի նման պատկերումը համեմատվում է հրեաների՝ Կարմիր ծովն անցնելու հետ, որը Ս. Մկրտության խորհրդապատկերներից է: Պատկերի վերևի մասում Աստծո Աջն է, որից բխող աղավնակերպ Ս. Հոգին իջնում է Հիսուսի վրա՝ բացահայտելով Ս. Երրորդության խորհուրդը: Իսկ գետի մեջ խաչի կամ խաչակոթողի պատկերը ցույց է տալիս մարդկության փրկությունը տերունական նշանով[35]:

17. Ս. Գրքի մի քանի հատվածներում խոսվում է «Հիսուս Քրիստոսի անունով» Մկրտության մասին, ինչպե՞ս հասկանալ դրանք:

Իսկապես, Գործք Առաքելոցի 2. 38, 8. 16, 10. 48, 19. 5 և 22. 16 համարներում խոսվում է «Հիսուս Քրիստոսի անունով» Մկրտության մասին: Եկեղեցու հայրերի կարծիքով՝ այս արտահայտությունն ամենևին էլ չի մերժում Ս. Երրորդության անունով մկրտելու Հիսուսի պատվերը, այլ դրանով հստակորեն զանազանություն է դրվում Հովհաննեսի մկրտության և Հիսուսի անվամբ կատարված Մկրտությունների միջև: Ալեքսանդրիայի պատրիարք Եվլոգիոսը (Զ-Է դդ.) ասում է. *«Հիսուս Քրիստոսով մկրտվել նշանակում է մկրտվել Հիսուս Քրիստոսի պատվիրանով և ավանդությամբ,*

35 Այս մասին տե՛ս Ավետարանական պատկերներ, տերունական շարքի 12 պատկերները, Երևան, 1993, էջ 32-36, **Հակոբ Քյոսեյան**, Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Ս. Էջմիածին, 1995, էջ 20-26, **Լ. Բ. Զուգասզյան**, Գրիգոր Ծաղկող, Երևան, 1986, էջ 51-58, **Н. В. Покровский**, Евангелие в памятниках иконографии, Москва, 2001, стр. 251-284.

այսինքն՝ Հորով, Որդիով և Ս. Հոգով»[36]: Իսկ Ս. Բարսեղ Կեսարացին «Ս. Հոգու մասին» աշխատության 12-րդ գլխում ասում է. *«Որևէ մեկին թող չշփոթեցնի այն, որ առաքյալը, հիշատակելով Մկրտության մասին, հաճախ լռում է Հոր և Ս. Հոգու անվան մասին, և ոչ ոք չպետք է եզրակացնի, որ անուններ տալը չպետք է պահել»: Ասված է. «Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտվեցիք, Քրիստոսով զգեստավորվեցիք» (Գաղ. 3. 27), և նաև՝ «Մենք բոլորս, որ մկրտվեցինք Հիսուս Քրիստոսով, Նրա մահով է, որ մկրտվեցինք» (հմմտ. Հռոմ 6. 3): Դա այն պատճառով է, որ Քրիստոսի անունը տալն ամեն ինչի խոստովանությունն է, այն մատնանշում է թե՛ օծող Աստծուն, թե՛ օծվող Որդուն և թե՛ Հոգու օծությունը, ինչպես սովորեցնում է մեզ Ս. Պետրոսը (Գործք 10. 38)»*[37]:

18. Արդյո՞ք անհրաժեշտ է Ս. Մկրտությունը:

Այո՛, որովհետև առանց Ս. Մկրտության, մարդ չի կարող փրկվել: Հիսուս Ինքը մկրտվեց Հորդանան գետում Ս. Հովհաննես Մկրտչի ձեռքով՝ ընդգծելով դրա կարևորությունը և Իր երկրային

---

36 **Митрополит Московский и Коломенский Макарий**, Православно-догматическое богословие, Т. II, С-Петербург, 1883, стр. 328.

37 **Святитель Василий Великий**, Архиепископ Кесарии Каппадокийской, Творения в двух томах, Т. 1, стр. 76, նաև՝ **Զարեհ արք. Ազնաւորեան**, Մեկնութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Հաւատամքին, խմբագիր՝ Վաղինակ վրդ. Մելոյեան, Հալէպ, 2008, էջ 376, 385-386, **Ղևոնդ վարդապետ Դուրեան**, Մկրտութեան խորհուրդը, Կ. Պոլիս, 1907, էջ 21-23, **Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյան, Գևորգ սարկավագ Ղուշչյան**, Մկրտություն, Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք Բ, Երևան, 2007, էջ 30-31:



առաքելության վերջում առաքյալներին պատվիրեց բոլորին մկրտել Ս. Երրորդության՝ Հոր, Որդու և Ս. Հոգու անունով: Պետք է միշտ հիշել՝ մարդ կարող է լինել շնորհալի, բարի, առաքինի, բարեպաշտ, բայց միայն Ս. Մկրտությամբ կարող է դառնալ քրիստոնյա և Եկեղեցու անդամ: Հետևաբար այս խորհուրդը մարդու փրկության ճանապարհի սկիզբն է: Դառնալով քրիստոնյա՝ մարդ պետք է մի կողմ դնի հին ընթացքը և այլևս իր կյանքն իմաստավորի Տիրոջով և ավետարանական պատգամներով:

19. Չնայած մկրտված չեմ, բայց ինձ համարում եմ Հայոց Եկեղեցու անդամ, արդյոք ճի՞շտ է մոտեցումս:

Բնական է, որ Հայոց Եկեղեցու զավակի ընտանիքում ծնված մարդն իրեն համարում է Մայր Եկեղեցու զավակ, բայց այդ զգացողությունը պետք է ամրագրել՝ անպայման մկրտվելով և Հայոց Եկեղեցու Ավազանից ծնվելով, այսինքն՝ միայն այդպես մտածելը կամ այդ զգացողությունն ունենալն անբավարար են:

20. Ի՞նչ են ասում Եկեղեցու հայրերը Ս. Մկրտության խորհրդի անհրաժեշտության և նշանակության մասին:

Ս. Հովհան Ոսկեբերանն ասում է. *«Բոլորին մաքրում է Մկրտության շնորհը, լինի իգացող թե անառակ, կռապաշտ թե մի ուրիշ որևէ մեծ մեղավոր, և թեկուզև իր մեջ պարունակած լինի մարդկային ամեն չարիք, ընկղմվելով Մկրտության Ավազանը՝*

նա դուրս է գալիս աստվածային ջրից ավելի մաքուր, քան արևի ճառագայթներն են: Այս Ավազանից դուրս գալով՝ դառնում է ոչ միայն մաքուր, այլև սուրբ և արդար, քանի որ առաքյալը պատվիրեց ոչ միայն «լվացվել», այլ նաև «սրբվել և արդարանալ» (Ա Կորնթ. 6. 11): ...Մկրտությունը ոչ թե ուղղակի թողնում է մեզ մեր մեղքերը ու մաքրում անօրենությունից, այլ ասես մենք նորից ենք ծնվում, քանի որ այն (Մկրտությունը) նորից է ստեղծում և կազմավորում մեզ»[38]:

***

Ս. Գրիգոր Տաթևացին «Ոսկեփորիկ» դավանաբանական աշխատության մեջ Ս. Մկրտության օգտակարության մասին ասում է.

«Առաջին՝ որովհետև բացում է երկինքը, ինչպես Քրիստոսի Մկրտության ժամանակ երկինքը բացվեց:

Երկրորդ օգուտը՝ որովհետև Մկրտությամբ մարդ Աստծո Հոգու տաճար է դառնում, ինչպես Քրիստոսի Մկրտության ժամանակ Ս. Հոգին աղավնակերպ իջավ:

Երրորդ օգուտը՝ որովհետև Մկրտությունը մարդուն Աստծո որդի է դարձնում, ուստի Քրիստոսի մկրտության ժամանակ Հոր ձայնը հնչեց. «Դա՛ է Իմ սիրելի Որդին»:

Չորրորդ օգուտը՝ որովհետև բուժում է հոգևոր հիվանդությունը, ինչպես եղիսեն մաքրեց Նեեման Ասորուն՝ Հորդանանում լվանալով բորոտությունից, որ հոգու մեղքերն էր խորհրդանշում:

Հինգերորդ օգուտն է, որ սատանայի բոլոր գոր-

38 **Митрополит Московский и Коломенский Макарий**, Православно-догматическое богословие, стр. 332-333.

ծերն է խափանում, քանզի կախարդները, որոնք մարդու կերպարանքը ոչ թե ըստ էության, այլ երևութապես փոխում են էշի կամ շան, երբ ջրի մեջ են մտնում, բժշկվում և մարդու առաջին կերպարանքն են ստանում:

Վեցերորդ օգուտը՝ որովհետև Ավազանի ջուրը մարում է դժոխքի կրակը նրանից, ով մկրտվում է, ինչպես ջուրը՝ այս կրակը:

Յոթերորդ օգուտը՝ որովհետև ինչպես ջուրն է ընկղմում մարդուն, նմանապես Մկրտության ջուրը՝ սատանային, ինչպես փարավոնին ծովի մեջ ընկղմեց:

Ութերորդ օգուտը՝ որովհետև ջուրը կենդանություն է տալիս բույսերին և տունկերին, այսպես էլ Ավազանի ջուրը մեղքերով մեռածներին Հոգով է կենդանացնում, ովքեր մկրտվում են ի փառս Քրիստոսի՝ մեր Աստծո»[39]:

21. Ի՞նչ է պահանջվում չափահաս մկրտվողից Ս. Մկրտության համար:

Եկեղեցին առաջին հերթին չափահաս մկրտվողից պահանջում է **հավատ**: Հիսուս հստակ ասում է. *«Ով հավատա և մկրտվի, պիտի փրկվի, իսկ ով չհավատա, պիտի դատապարտվի»* (Մարկ. 16. 16): Ուստի հավատքը կարևոր նախապայմաններից մեկն է այս խորհուրդն ընդունելու համար: Ս. Գրիգոր Տաթևացին ասում է. *«Մկրտությունը հավատքի խորհուրդն է, որից պարզ է դառնում, որ նախ հավատում ենք և ապա*

39 Գիրք, որ կոչի Ոսկեփորիկ՝ արարեալ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Տաթևացոյն յոթնալոյս վարդապետի, Կ. Պոլիս, 1746, էջ 382-383, հմմտ. **Գրիգոր Տաթևացի**, Ոսկեփորիկ, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Հակոբ Քյոսեյանի, Երևան, 1995, էջ 166-167:

մկրտվում»[40]: Չպետք է մկրտվել երկրորդական բաների պատճառով, քանի որ ուզում եք պսակվել եկեղեցում, չարից պաշտպանվելու կամ չհիվանդանալու համար, որպեսզի ձեզ հետ ոչ մի վատ բան չկատարվի և այլն: Ամեն մի չափահաս մկրտվող այս խորհրդին հարկ է՝ մոտենա գիտակցաբար և հոգևոր գիտելիքներով զինված՝ խոստովանելով, որ հավատում է Հիսուս Քրիստոս Փրկչին, Նրա տնօրինություններին, ցանկանում է դառնալ Հայոց Եկեղեցու անդամ և այսուհետ ապրել աստվածահաճո՝ քրիստոնյային հարիր կյանքով: Եթե ունեք այս զգացողությունը ձեր հոգում և սրտում, ապա անպայման գնացե՛ք եկեղեցի և մկրտվե՛ք՝ համալրելով Քրիստոսի հաղթական բանակը: Մկրտությունը փրկության ճանապարհի սկիզբն է, բայց վերջնական փրկությանը հասնելու համար պահանջվում է միշտ կենդանի պահել Ս. Մկրտության խորհրդով ստացած շնորհները:

Երկրորդ նախապայմանն **ապաշխարությունն** է, ինչպես Ս. Պետրոս առաքյալն էր հորդորում. *«Ապաշխարեցե՛ք, և ձեզանից յուրաքանչյուրը թող մկրտվի Տեր Հիսուս Քրիստոսի անունով մեղքերի թողության համար, և պիտի ընդունեք Ս. Հոգու պարգևը»* (Գործք 2. 38), այսինքն՝ մարդ պետք է անդրադառնա իր անցած կյանքին, հրաժարվի նախկին ընթացքից և սկսի նորը՝ Ս. Ավազանից ծնվելով:

40 Գիրք հարցմանց, էջ 585:

22. Ո՞վ կարող է մկրտվել Հայոց Եկեղեցում:

Հայոց Եկեղեցու Ս. Ավազանում կարող են մկրտվել ազգությամբ հայեր, մեր Եկեղեցու անդամի հետ ամուսնացող և ամուսնացած օտարազգիներ, հայ ընտանիքների կողմից որդեգրված երեխաներ, ինչպես նաև այլադավաններ և այլակրոններ, ովքեր սահմանված կարգով անցել են խորհրդի համար անհրաժեշտ նախապատրաստական-ուսուցողական շրջանը, ընդունել և խոստովանել մեր դավանանքը:

23. Իսլամացած հայը կարո՞ղ է մկրտվել Հայոց Եկեղեցում:

Այո՛, Հայոց Եկեղեցին մշտապես ողջունել և խրախուսել է ամեն հայորդու վերադարձն իր ազգային ինքնությանը, արմատներին և հատկապես Մայր Եկեղեցու գիրկը: Ցավոք, իսլամացած կամ դավանափոխ հայերն էլ պատմության և անբարենպաստ ժամանակների պատճառով հեռացել են քրիստոնեությունից և երկար տարիներ ապրել ո՛չ քրիստոնեական և ո՛չ հայկական միջավայրերում: Եթե նրանց մեջ կրկին արթնացել է հայկականությունը և իսկապես ցանկություն ունեն մկրտվելու՝ քրիստոնյա դառնալու, ապա միայն պետք է ուրախ լինել և ցույց տալ նրանց ճիշտ ճանապարհը:

Իսլամացած հայերին մկրտելու կամ չմկրտելու խնդրին պետք է մոտենալ ոչ թե ավելորդ զգացականությամբ, այլ հոգևոր և ազգային-եկեղեցական անվտանգության տեսանկյուններից: Գաղտնիք չէ, որ բազում այլազգիներ, իրենց

որոշ շահադիտական նպատակներից ելնելով, իսլամացած հայերի անվան ներքո ցանկանում են մկրտվել Հայոց Եկեղեցում: Ուստի Եկեղեցին այս հարցում որոշակի զգուշավորություն է ցուցաբերում: Եթե իսլամացած հայը ցանկանում է մկրտվել, ապա նա պետք է նախ՝ իր նույնականացման քարտում փոխի կրոնական պատկանելությունը քրիստոնեության, երկրորդ՝ դիմի Կ. Պոլսի Պատրիարքություն՝ հաստատում ստանալով հայ լինելու մասին, երրորդ՝ անցնի նախապատրաստական-ուսուցողական շրջան: Ի վերջո՝ բոլորին էլ հասկանալի է, որ հայկական միջավայրում մեծացած հայն ունի այլ հոգեբանություն և մտածողություն, քան ասենք Թուրքիայում իսլամ ընդունածը, որը երկար տարիներ ընդհանրապես առնչություն չի ունեցել հայկականության հետ: Էլ չենք խոսում կրոնական հայացքների տարբերության մասին: Դրա համար իսլամացած հայը պետք է ունենա քրիստոնյա դառնալու անհրաժեշտ գիտելիքները, որպեսզի մկրտվելուց հետո դառնա Քրիստոսի Եկեղեցու անդամ և քրիստոնյա: Նման մարդկանց հետ անհրաժեշտ է շփվել առավել սիրով, ուրախությամբ և ամեն ինչ անել, որպեսզի նրանց մեջ նորովի արթնանա ազգային գիտակցությունը:

24. Փոխնակ մայրությամբ ծնված երեխան կարո՞ղ է մկրտվել:

Մեր Եկեղեցին դեռևս պաշտոնական տեսակետ չի արտահայտել փոխնակ մայրության վերաբերյալ, մինչդեռ Կաթոլիկ, Ռուս, Բուլղար,

Հույն Ուղղափառ Եկեղեցիները դատապարտել են մարդկային վերարտադրողականության ցանկացած տեխնիկական միջամտում՝ այս երևույթը նույնպես դիտարկելով իբրև քրիստոնեական ընտանիքի և արարչապարգև կյանքի մասին պատկերացումներին հակառակ: Սա ժամանակակից աշխարհին և Եկեղեցուն ուղղված մարտահրավեր է, երբ առօրյա կյանքի պայմանները ստիպում են ամուսնական զույգին զավակ ունենալու խնդիրը լուծել այդ ճանապարհով: Իսկ ինչ է փոխնակ մայրությունը. երբ ամուսիններից վերցվում է բեղմնավորված ձվաբջիջը և տեղադրվում այլ կնոջ արգանդում: Պտուղը չի կրում փոխնակ մոր ժառանգական ինֆորմացիան, վերջինս պարզապես ինն ամիս կրում է ուրիշի երեխային՝ ծնվելուց հետո երեխային հանձնելով կենսաբանական ծնողներին[41]:

Մի կողմ թողնելով խնդրի աստվածաբանական, էթիկական, հոգեբանական, ընտանեկան և այլ դիտանկյունները՝ փորձենք պատասխանել այս հարցին: Ի վերջո՝ այսօր հայերի մոտ արդեն այս ճանապարհով ծնված երեխաներ կան, որոնց մկրտելու կամ չմկրտելու հարցն առկախ է: Անկախ ամեն ինչից, աշխարհ եկած յուրաքանչյուր զավակ ադամական մեղքի պատճառով կարիք ունի Ս. Մկրտության: Մանուկը մեղավոր չէ, որ լույս աշխարհ է եկել նման ձևով: Եթե նրա ծնողները ցանկանան մկրտել իրենց զավակին, ապա կարծում ենք, որ Եկեղեցին չպետք է խոչընդոտի:

41 Խնդրի մասին տե՛ս Փոխնակ մայրությունը և Եկեղեցին (քննարկման նյութեր), Սբ. Էջմիածին, 2013, էջ 5-87:

Օր.՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցու Ս. Սինոդը 2013 թ. դեկտեմբերի 25-26-ին ընդունված փաստաթղթում չնայած չի մերժում նման երեխայի Մկրտությունը, բայց նաև որոշակի արգելքներ է դնում: Ըստ փաստաթղթի՝ շատ կարևոր է, որ նման քայլի դիմած ծնողները հասկանան, որ այն դատապարտելի է բարոյական տեսանկյունից և ապաշխարեն կատարվածի համար անկախ նրանից, թե իրենք դա արել են գիտակցաբար կամ անգիտակցաբար: Եթե ապաշխարեն, ապա այս քայլը հույս կներշնչի, որ երեխան կմեծանա ուղղափառ հավատքով և քրիստոնեական բարոյական արժեքներով: Իսկ եթե, այնուամենայնիվ, ծնողները չգիտակցեն իրենց մեղքը, ապա Մկրտությունը կհետաձգվի մինչև երեխայի չափահաս դառնալը: Բայց մահվան սպառնալիքի դեպքում, անպայման կմկրտվի եկեղեցում[42]:

25. Հղի կանայք կարո՞ղ են մկրտվել:

Անկասկած. կանոնական առումով որևէ արգելք չկա, բայց մեկ բան պետք է անպայման հիշել, ինչը հաճախ շփոթ է առաջացնում. հղի կնոջ Մկրտությամբ պտուղը մկրտված չի համարվում: Երբ երեխան ծնվի, նրան անպայման պետք է մկրտել: Սա են փաստում Երկրորդ Նիկիական կանոնախմբի 37-րդ[43], Նեոկեսարիայի 6-րդ[44] կանոնները, ինչպես նաև Մխիթար Գոշի

42 Տե՛ս О крещении младенцев, родившихся при помощи суррогатной матери. http://www.patriarchia.ru/db/text/3481024.html.

43 Կանոնագիրք հայոց, հ. Բ, աշխատասիրությամբ՝ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1971, էջ 79:

44 Կանոնագիրք հայոց, հ. Ա, աշխատասիրությամբ՝ Վազգեն Հա-

Դատաստանագիրքը[45]: Իսկ Ս. Աթանաս Ալեքսանդրացու կանոնախմբի 39-րդ կանոնը հրահանգում է անմիջապես մկրտել դժվարածին կնոջ մանկանը՝ մոտակա մահվանն ընդառաջ[46]:

26. Ամսականի մեջ գտնվող կինը կարո՞ղ է մկրտվել:

Մկրտվելու համար անհրաժեշտ է սպասել անմաքրության շրջանի ավարտին: Եթե տվյալ կնոջ կյանքին վտանգ է սպառնում, ապա քահանան անպայման պետք է նրան մկրտի:

27. Հոգեկան հիվանդին և դիվահարին կարե՞լի է մկրտել:

Այս մասին է խոսվում Ս. Աթանասի կանոնախմբի 2-րդ և 4-րդ կանոններում: Եթե երախան հիվանդանա և հոգեկան, մտային խնդիրներ ունենա և չկարողանա անձամբ հավատքի խոստովանություն կատարել, բայց նրա ընտանիքը խնդրանք ներկայացնի Ս. Մկրտության համար, ապա քահանան կարող է մկրտել: Իսկ դիվահարը նախ պետք է դևերից ազատվի և նոր մկրտվի: Բացառություն է միայն այն իրավիճակը, երբ տվյալ անձը մահամերձ է[47]: Անշուշտ,

---

կոբյանի, Երևան, 1964, էջ 181:

45 **Մխիթար Գոշ**, Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ՝ Խոսրով Թորոսյանի, Երևան, 1975, էջ 92, հմմտ. Գիրք հարցմանց, էջ 592-593:

46 Կանոնագիրք հայոց, հ. Ա, էջ 306:

47 Կանոնագիրք հայոց, հ. Ա, էջ 291-292:

Ս. Մկրտության շնորհներն անհրաժեշտ են նաև հիվանդներին, ովքեր այս խորհրդի միջոցով կարող են բժշկվել: Ուստի Եկեղեցին չի մերժում հոգեկան շեղում ունեցող մարդկանց հարազատների խնդրանքը և մկրտում է: Եկեղեցին կարող է մերժել միայն այն հոգեկան հիվանդին, ով ֆիզիկական վտանգ է ներկայացնում շրջապատի համար և աստվածհայհոյության մեջ է, այսինքն՝ իր քայլերով խոչընդոտում է արարողությանը և հայհոյում:

28. Եկեղեցով չամուսնացած զույգի երեխան կարո՞ղ է մկրտվել:

Այո՛, բայց ճիշտ կլինի, որ ծնողներն իրենց ամուսնությունն անպայման վավերացնեն նաև եկեղեցական Ս. Պսակով[48]:

29. Արդյոք կա՞ն Ս. Մկրտության համար արգելված օրեր:

Ո՛չ: Եթե Ս. Պսակի դեպքում արգելված օրեր կան, ապա Ս. Մկրտություն կարելի է կատարել տարվա բոլոր օրերին:

48 Հմմտ. Եկեղեցու հայրերը և վարդապետները Սուրբ Մկրտության խորհրդի մասին, Գիրք Ա, աշխատասիրությամբ՝ Հակոբ Քյոսեյանի, Երևան, 2015, էջ 317:

Ս. ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԲԱՆԱՁԵՎԸ

30. Ո՞րն է Ս. Մկրտության բանաձևը:

Այսօր Հայոց Եկեղեցում գործածվող բանաձևը հետևյալն է. *«(Այս անուն) Աստծո այս ծառան, երախայությունից Մկրտության գալով, մկրտվում է Հոր, Որդու և Ս. Հոգու անունով: Քրիստոսի արյամբ մեղքի ծառայությունից գնվելով ընդունում է երկնավոր Հոր որդեգրությունը, դառնում Քրիստոսին ժառանգակից և Ս. Հոգու տաճար»*[49]: Ս. Մկրտության խորհրդակատարության վերոբերյալ բանաձևն արդեն առկա է Կ. Պոլսի 1785 թ. տպագիր «Մաշտոցում»[50]:

Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, նշանավոր հայագետ Հ. Սահակ Ճեմճեմյանը (1939-1996), ուսումնասիրելով տարբեր դարերում մեր Եկեղեցում գործածված Ս. Մկրտության բանաձևերը, հանգել է հետևյալ եզրակացության: Ըստ նրա՝ մինչ այս բանաձևը, 9-15-րդ դարերում Հայոց Եկեղեցում կիրառության մեջ է եղել Ս. Մկրտության մեկ այլ բանաձև, որը տեսնում ենք 10-11 դարերով թվագրվող «Հնագույն Մաշտոցում». *«(Այս անուն) մկրտվում է Հոր, Որդու և Ս. Հոգու անունով գնվելով Քրիստոսի արյամբ մեղքի ծառայությունից, ընդունելով երկնավոր Հորդ որդեգրության ազատությունը, լինելով ժառան-*

49 Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ, Կ. Պոլիս, 1807, էջ 15:

50 Սուրբ Գիրքս, որ կոչի Մաշտոց, Կ. Պոլիս, 1785, էջ 30:



գակից Քրիստոսին և Ս. Հոգու տաճար, այժմ և միշտ և հավիտյանս»[51]: Իսկ 15-րդ դարից գործածվել է մեկ այլ բանաձև՝ հետևյալ բովանդակությամբ. *«(Այս անուն) Աստծո ծառան, կամավոր երախայութ-յան գալով, երախայությունից Մկրտության, մկրտվում է իմ ձեռքով Հոր, Որդու և Ս. Հոգու անունով՝ գնվելով Քրիստոսի արյամբ...»*[52]:

31. Ինչո՞ւ է բանաձևի մեջ «անունով» բառը եզակի:

Եզակի թիվը ցույց է տալիս, որ Ս. Երրորդությունը՝ Հայրը, Որդին և Ս. Հոգին մեկ աստվածություն է, մեկ բնություն, մեկ զորություն և մեկ իշխանություն, ուստի և մեկ անունով էլ մկրտվում ենք, այսինքն՝ Ս. Երրորդության:

32. Կարելի՞ է փոփոխություններ կատարել բանաձևի մեջ:

Ո՛չ. յուրաքանչյուր հոգևորական խստորեն պետք է պահպանի կանոնական բանաձևը: Ս. Գրիգոր Տաթևացին անընդունելի է համարում, երբ ծիսակատար հոգևորականը կամայական փոփոխություններ է կատարում ընդունված բանաձևի մեջ՝ բառերի տեղափոխում, կրճատում,

---

51 Մայր Մաշտոց, հ. Ա, գիրք Ա՝ ըստ հնագոյն երկաթագիր ձեռագրերի և համեմատութեամբ Աստուածաշունչ մատեանի, բնագրական և կանոնացանկային յաւելուածովք, աշխատասիրութեամբ՝ Գէորգ Տէր-Վարդանեանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2012, էջ 226:

52 Մանրամասն տե՛ս **Հ. Սահակ Ճեմճեմեան,** Մկրտութեան խորհուրդի բանաձևը, «Բազմավէպ», Վենետիկ, Զ-Ը, 1967, էջ 135-142:

դրանց հավելում, բանաձևի կրկնություն և այլն[53]: Ըստ եռամեծ վարդապետի՝ խորհրդակատար քահանան անձամբ պետք է նաև արտասանի Ս. Մկրտության բանաձևը[54]: Քրիստոսի պատվերի օրինակով շատ կարևոր է Ս. Մկրտությունը կատարել Ս. Երրորդության անունով: Եթե այս խորհրդում բացակայում է Ս. Երրորդության անձերից մեկի անունը, ապա տվյալ Մկրտությունն անվավեր է: Այս մասին Ս. Աթանաս Ալեքսանդրացին դավանաբանական ճառերից մեկում ասում է *«Ով Ս. Երրորդությունից ինչ-որ բան բաժանում է կամ միայն Հոր անունով մկրտվում, կամ Հոր և Որդու՝առանց Հոգու, նա ոչինչ չի ստանա... քանի որ խորհուրդը կատարվում է Ս. Երրորդության անունով»*[55]:

33. Ի՞նչ տարբերություն կա Ս. Մկրտության բանաձևի հարցում մեր և Լատին Եկեղեցու միջև:

Եթե Հայոց Եկեղեցու բանաձևում գործածվում է *մկրտի* (մկրտվում է) բայը, ապա Լատին Եկեղեցու բանաձևում հետևյալն է. *«Ես մկրտում եմ...»*: Վերջինս խստորեն դատապարտվում է մեր Եկեղեցու վարդապետների կողմից: Մասնավորապես Հայոց Եկեղեցու մեծանուն վարդապետ Վարդան Արևելցին († 1271) իր դավա-

---

53 Գիրք հարցմանց, էջ 588:

54 **Գրիգոր Տաթևացի**, Ճմեռան հատոր (այսուհետ՝ Ճմեռան հատոր), Երուսաղէմ, 1993, էջ 76:

55 Творения иже во Святых отца нашего Афанасия Великого, Архиепископа Александрийского, Часть 3, Свято-Троицкая Сергиева Лавра, 1903, стр. 43.

նաբանական «Խրատում» խստորեն քննադատում է լատինական բանաձևը[56]: Խրատն ամբողջությամբ զետեղվել է նաև Կիրակոս վրդ. Երզնկացու († 1355) «Թուղթ առ Կարնեցիս» դավանաբանական թղթում[57]: Այս բանաձևն է քննադատում նաև Ս. Գրիգոր Տաթևացին[58]: Ըստ հայ վարդապետների՝ լատինական բանաձևից այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ մկրտվողը ոչ թե իր կամքով է եկել, այլ բռնությամբ: Իսկ նման դեպքում Ս. Հոգու պարգևները չեն բաշխվում: Երբ ասվում է. *«Ես մկրտում եմ»*, միայն մկրտողին է ցույց տալիս և ոչ թե մկրտյալին: Այս բանաձևը մեզ է փոխանցվել մեր հավատքի հորից՝ Ս. Գրիգոր Լուսավորչից, ուստի այն պետք է կատարել առանց փոփոխությունների և նույնությամբ:

56 Տե՛ս **Տ. Շահէ վրդ. Անանեան**, Վարդան Արևելցին և նրա նորայայտ «Խրատը». «Էջմիածին», Գ, 2014, էջ 96-97:

57 Կիրակոսի վարդապետի Երզնկացւոյ թուղթ առ Կարնեցիս. «Գանձասար» աստուածաբանական հանդէս, հ. Է, Երևան, 1996, էջ 562-563:

58 Գիրք հարցմանց, էջ 588:

Ս. ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՇՏՈՆՅԱՆ

34. Ո՞վ կարող է կատարել Ս. Մկրտության խորհուրդը:

Հայոց Եկեղեցում Ս. Մկրտության խորհրդի կատարումը վերապահված է միայն քահանայական ձեռնադրություն և օծում ունեցող հոգևորականներին, այսինքն՝ ամուսնացյալ և կուսակրոն քահանայից մինչև Ամենայն Հայոց Կաթողիկոս: Եկեղեցու ավելի խոնարհ սպասավորները չեն կարող այս խորհուրդը կատարել[59]:

35. Ս. Գրքում կարդում ենք, որ Վաղ Եկեղեցում սարկավագները մկրտում էին մարդկանց: Ինչպե՞ս կբացատրեք սա:

Այո՛, Եկեղեցու սկզբնավորման ժամանակ սարկավագներն առաքյալների նման մկրտում էին մարդկանց: Գործք Առաքելոցում կարդում ենք, թե ինչպես է յոթ սարկավագներից Ս. Փիլիպ-

59 Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցին բացառիկ դեպքերում թույլատրում է սարկավագներին Ս. Մկրտության խորհուրդը կատարել, իսկ անհրաժեշտության պարագային նաև յուրաքանչյուր աշխարհականի, անգամ չմկրտվածի, եթե պահպանվում է Ս. Երրորդության բանաձևը. հմմտ. Լատին Եկեղեցու Կանոնագիրք, կանոն 861 § 1, 2, Արևելյան Եկեղեցիների Կանոնագիրք, կանոն 677 § 1, Քրիստոնէական Կաթողիկէ Եկեղեցւոյ, Վատիկանի հրատարակչատուն, 1997, էջ 511, Code of Canon Law. http://www.vatican.va/archive/ENG1104/__P2W.HTM; Code of canons of Oriental Churches. http://www.intratext.com/IXT/ENG1199/_PMJ.HTM; A guide to the Eastern Code: A commentary on the Code of the Eastern Churches, edited by George Nedungatt, S. J., Pontificio Instituto Orientale, Rome, Italy, 2002, p. 500-501.

պոսը մկրտում սամարացիներին, Սիմոն մոգին և եթովպացի ներքինուն. *«Բայց երբ հավատացին Փիլիպպոսին, որն Աստծո արքայության և Հիսուս Քրիստոսի անվան մասին էր ավետարանում, բոլորը՝ տղամարդիկ և կանայք, մկրտվեցին: Ինքը՝ Սիմոնը ևս հավատաց, և մկրտվելով միշտ Փիլիպպոսի հետ էր լինում...: Եվ ներքինին հրամայեց կառքը կանգնեցնել. երկուսով ջուրն իջան, և՛ Փիլիպպոսը, և՛ ներքինին: Եվ Փիլիպպոսը մկրտեց նրան»* (Գործք 8. 12-13, 38): Սակայն հետագայում Եկեղեցին արգելեց սարկավագներին Ս. Մկրտության խորհրդի կատարումը՝ այն վերապահելով միայն ձեռնադրյալ եկեղեցականներին:

36. Այս արգելքի մասին եկեղեցական կանոններ կա՞ն:

Անկասկած. այս մասին ուշագրավ տեղեկություն է պահպանվել Վրթանես Ա Հայոց Կաթողիկոսին (333-341) շուրջ 335 թ. ուղղված Երուսաղեմի Մակար Ա հայրապետի (314-335/6) նամակում, որի հայերեն բնագիրը զետեղվել է «Կանոնագիրք Հայոց»-ում և «Գիրք թղթոց» դավանաբանական ժողովածուի մեջ: Պատմական եզակի այս գրությունից պարզ է դառնում, որ Վրթանես հայրապետը խնդրի վերաբերյալ հարցում է կատարել Մակարին և նրանից պարզաբանումներ ստացել: Հավանաբար, այդ ժամանակ որոշ տեղերում սարկավագները շարունակում էին Ս. Մկրտություններ կատարել: Մակար Ա հայրապետը պատասխան նամակում նշում է, որ սարկավագները չեն կարող մկրտել, քանզի Ս.

Մկրտության խորհրդի կատարման իրավունքը միայն քահանայական աստիճան ունեցող հոգևորականներինն է: Այս նամակից կարելի է ենթադրել, որ դրանից հետո էլ մեր Եկեղեցու ծիսական կյանքում հստակվել է սարկավագների կողմից մկրտելու կամ չմկրտելու հարցը[60]: Շատ չանցած Հայոց Եկեղեցու դիրքորոշման մասին արդեն հստակ ասվում է Ս. Սահակ Պարթևի 17-րդ կանոնում. *«Եվ սարկավագները թող չհամարձակվեն Մկրտություն կատարել, իսկ եթե անեն՝ կզրկվեն սարկավագությունից պատուհասով, քանի որ սարկավագը քահանա չէ, այլ քահանայի սպասավոր»*[61]: Այս տեսանկյունից հետաքրքրական է 768 թ. Սիոն Ա Բավոնեցի կաթողիկոսի (767-775) օրոք գումարված Պարտավի Բ ժողովի 20-րդ կանոնը, որն արգելում է անգամ մահամերձ երախայի դեպքում քահանայից բացի ուրիշ մեկի կողմից Ս. Մկրտության արարողության կատարումը[62]: Ս. Նունեի վարքից էլ տեղեկանում ենք, որ նա վրացիներին չմկրտեց, այլ քահանաներ խնդրեց Ս. Գրիգոր Լուսավորչից[63]: Նմանապես Ս. Գրի-

60 Տե՛ս **Abraham Terian**, Macarius of Jerusalem letter to the Armenians, A. D. 335, Introduction, Text, Translation and Commentary, St. Vladimir's seminary press, St. Nersess Armenian seminary, Crestwood, New York, 2008, p. 80-81, Կանոնագիրք հայոց, հ. Բ, էջ 221-222, «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 409, «Գիրք թղթոց», Երուսաղէմ, 1994, էջ 4:

61 Կանոնագիրք հայոց, հ. Ա, էջ 378:

62 Կանոնագիրք հայոց, հ. Բ, էջ 15-16:

63 Յայսմաւուրք՝ ըստ կարգի ընտրելագոյն օրինակի Յայսմաւուրաց Տէր Իսրայէլի, հ. Բ, Կոստանդնուպոլիս, 1834, էջ 213, Գիրք հարցմանց, էջ 589:

գորն էլ ոչ ոքի չմկրտեց նախքան Կեսարիայում ձեռնադրվելը Ղևոնդիոս հայրապետի կողմից[64]:

37. Եթե մկրտող հոգևորականը վատ վարքի տեր է, արդյո՞ք նրա կատարած խորհուրդը վավերական է:

Այո՛, վավերական է, քանզի առաքելական հաջորդականությամբ, եպիսկոպոսի կողմից ձեռնադրությամբ և օծմամբ միայն նրան է տրված Եկեղեցու սուրբ խորհուրդները կատարելու իշխանությունը: Այլ խոսքով՝ խորհրդի վավերականությունը կախված չէ կատարողի անձնական որակներից: Աստված Ինքն է շնորհների բաշխողը պարզապես հոգևորականի միջոցով: Չպետք է մոռանալ, որ բոլորն էլ մեկ օր պատասխան են տալու իրենց կատարած գործերի համար: Ուստի պետք է հաճախակի աղոթել նաև հոգևորականների համար, որպեսզի անսասան լինեն իրենց հավատքի մեջ և առավել նախանձախնդրությամբ և անսակարկ նվիրումով ծառայեն Աստծուն, Մայր Եկեղեցուն, Հայրենիքին և ձեզ:

38. Ի՞նչ են այս մասին ասում Ս. Հովհան Մանդակունին և Ս. Ներսես Շնորհալին:

Ս. Հովհան Մանդակունին (478-490) «Բամբասողների և վարդապետներին չդատելու մասին» ճառում մեզ հուզող հարցի մասին ասում է. *«Թեպետ քահանան անպիտաններից մեկն էլ լինի, Աստված տեսնում է, որ Իր համար նաև անարգներին*

64 Գիրք հարցմանց, էջ 589:

ես մեծարում, քանզի սրբին սրբության համար ես պատվում։ Իսկ Աստծո համար անարգին մեծարելը [քո] պատիվն է, բայց [քահանան] անարգ չէ, «քանի որ Ամենակալ Տիրոջ հրեշտակն է» (տե՛ս Մաղ. 2. 7)։ Իսկ եթե արհամարհում ես նրան, ապա մեղանչում ես Աստծո դեմ, ով նրան ձեռնադրությունը տվեց, և Նրանով է ինքը կատարում [Պատարագի] խորհուրդն ու Մկրտությունը։ Թեպետև նրանք արժանի չեն մերձենալու ահեղ խորհրդին, բայց ժողովրդի փրկության համար չի արգելում Ս. Հոգու շնորհները։ Քանզի եթե ժողովրդի փրկության համար խոսեց Բաղաամի էշի միջոցով գուշակությամբ (տե՛ս Թվ. 22. 28-30), ապա որքա՜ն առավել ևս անարժան քահանայի միջոցով է Ինքն ամեն բան գործում մեր փրկության համար։ Եվ դու, եթե սրբությամբ հաղորդվես սուրբ խորհրդին, ապա քահանայի պղծությունը քեզ չի վնասի. ինչպես նրան, ով պղծությամբ է մոտենում, քահանայի սրբությունը չի օգնում։ Իսկ եթե համարում ես, թե արատավոր քահանայի պատճառով Հոգու շնորհները չեն իջնում Պատարագին, և Աստված նրա միջոցով չի գործում, հիշի՛ր, որ վերացնում ես եկեղեցու կարգերը և քո քրիստոնյա անունը։ Եթե այդպես է, ապա, ըստ քեզ, ո՛չ Պատարագն է Պատարագ, ո՛չ ձեռնադրությունը՝ ձեռնադրություն, ո՛չ էլ քահանայության կարգը՝ հաստատուն. ահա ուրեմն ունայն է քրիստոնյայիդ հույսը, որովհետև բոլորս մեղքերի ենթակայության տակ ենք»[65]։

---

65 Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Հայրապետի Ճառք, Վենետիկ, 1860, էջ 92-93, հմմտ. **Սուրբ Հովհան Մանդակունի**, Ճառեր, թարգմանությունը գրաբարից՝ Մարթա Արաբյանի, Ս. Էջ-

Իսկ Ս. Ներսես Շնորհալին (1166-1173) քահանաներին ուղղված իր թղթում հորդորում է. *«Ս. Պատարագի նման երկյուղով կատարեցեք Ս. Մկրտության խորհրդի պաշտամունքը, Աստվածաշնչի խոսքերի ընթերցումներն ու բոլոր կանոնները: Եթե այսպես անեք, ապա հավատացեք, որ ինչպես Ս. Հոգին Հորդանանի մեջ Իր Փառակցի վրա իջավ, նույնպես կիջնի ամեն ուղղափառ հավատքով մկրտվողի վրա, որին էլ Հայր Աստծո որդեգրությամբ կվերակոչի շնորհով, ինչպես բնությամբ Որդուն, և կլինեք դուք գործակից և սպասավոր Ս. Հոգու աստվածարար շնորհին, և մանավանդ, իբրև մանկաբարձներ՝ Աստծո որդիներին՝ ձեռքով կատարելով [խորհուրդը] և ընդունելով իրենց մորից՝ Ավազանի ծոցից»*[66]:

39. Արդյո՞ք վավերական է կարգալույծ հոգևորականի կողմից կատարված Ս. Մկրտությունը:

Ո՛չ. կարգալույծ եկեղեցականն իրավունք չունի խորհուրդներ կատարել, ուստի այդպիսի Մկրտությունը վավերական չէ: Այս մասին է մասնավորապես Ս. Բարսեղ Կեսարացու կանոնական գրի 28-րդ հոդվածը[67], իսկ ըստ Ս. Աթանաս Ալեքսանդրացու կանոնախմբի 49-րդ հոդվածի՝ պետք է մկրտել նաև նրան, ով մկրտվել է կեղծ քահանայի կողմից[68]:

միածին, 2008, էջ 111-112:

66 **Ս. Ներսէս Շնորհալի**, Թուղթ ընդհանրական (այսուհետ՝ Թուղթ ընդհանրական), գրաբարից աշխարհաբարի վերածեցին Տէր Մեսրոպ քահանայ Արամեանը, Տիգրան Խաչատրեանը, Սեդա Ստամբօլցեանը, «Գանձասար» հանդէս, 1991, էջ 91-92:

67 Կանոնագիրք հայոց, հ. Բ, էջ 107:

68 Կանոնագիրք հայոց, հ. Ա, էջ 311:

Ս. ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՅՈՒԹԸ

40. Ո՞րն է Ս. Մկրտության խորհրդի նյութը:

Ս. Մկրտության ժամանակ օգտագործվող նյութը ջուրն է: Այն կարող է լինել օվկիանոսի, ծովի, լճի, գետի, աղբյուրի և այլն: Տերն ասում է. *«եթե մեկը ջրից և Հոգուց չծնվի, ապա չի կարող Աստծո արքայությունը մտնել»* (Հովհ. 3. 5): Ջուրը Ս. Գրքում խորհրդանշում է կյանքը (Ես. 35.6-7, 58, 11), մարդու հոգևոր և բարոյական մաքրությունը (Ես. 1. 16), Աստծո շնորհը (Հովհ. 4. 10-14)[69]:

Ջրով Մկրտության մասին են խոսում նաև հինկտակարանյան մարգարեները. *«Ձեզ վրա սուրբ ջուր եմ ցանելու, և դուք մաքրվելու եք ձեր բոլոր պղծություններից...: Նոր սիրտ եմ տալու ձեզ, նոր հոգի եմ դնելու ձեր մեջ»* (Եզեկ. 36. 25-26), *«Այն օրը Դավթի տան համար պիտի բացվի ամեն մի վայր՝ նրա փոփոխման և մաքրման համար»* (Զաք. 13. 1), *«Նա պիտի դառնա և գթա մեզ, պիտի թաղի մեր մեղքերը և ծովի խորքը պիտի նետի մեր բոլոր անօրենությունները»* (Միք. 7. 19):

41. Ի՞նչ է խորհրդանշում ջուրը:

Ինչպես համաշխարհային այլ կրոններում, այնպես էլ քրիստոնեության մեջ ջուրը մաքրության խորհուրդն ունի[70]: Անդրադառնալով Ս.

---

69 Ջրի մասին տե՛ս նաև հետևյալ սուրբգրային համարները՝ Գործք 8. 38, 10. 47, Եբր. 10. 22:

70 Այս մասին տե՛ս **Протопресвитер Александр Шмеман**, Водою и духом, Москва, 1993, стр. 42-50.

Մկրտության խորհրդի մեջ ջրի կիրառությանը՝ Ս. Գրիգոր Տաթևացին հետևյալ բացատրությունն է տալիս. *«Ջուրը լվանում է աղտերը, վերացնում ծարավը, պատկերը ցույց տալիս: Այսպես Ս. Հոգու շնորհը Մկրտության ժամանակ մեղքերի աղտն է մաքրում, Աստծո խոսքով հոգու ծարավը վերացնում և Աստծո կորսված պատկերին վերադարձնում»*[71]: Ընդհանրական Եկեղեցու հայրերից Ս. Կյուրեղ Երուսաղեմացին «Կոչումն ընծայութեան» երկի երրորդ ճառում տալիս է Ս. Մկրտության ջրի աստվածաբանական բացատրությունը. *«Մի՛ համարիր պարզապես ջուր կամ ունայն մի բան այն Ավազանում, այլ ջրով և շնորհով խառնված կենդանի Ս. Հոգու հետ: Քանզի մարդ երկակի է՝ բաղկացած հոգուց և շնչից, ուստի մաքրվողը երկու բան պետք է լինի. ով անմարմին է անմարմին կերպով, իսկ ով մարմնավոր է, մարմնավոր ձևով: Բայց ջուրը մաքրում է մարմինը, Հոգին դրոշմում հոգու վրա, որովհետև սրտի մեջ ցողելով և մարմինը սուրբ ջրով մաքրելով, կկարողանանք մոտենալ և կանգնել Աստվածության մեծության առջև: Արդ, երբ իջնես այդ ջրի մեջ, իբրև աննշան, սովորական ջրի չնայես, այլ այն Հոգու զորությունից փրկություն սպասի՛ր, քանզի առանց երկուսի, քեզ համար անհնար է կատարյալ լինել»*[72]: Ըստ Ս. Կյուրեղի՝ ջրով Մկրտությունն անհրաժեշտ է փրկության համար: Առանց ջրի միայն մարտիրոսներն են փրկության արժանանում, քանզի մկրտվում են իրենց սեփական արյամբ. *«եթե մեկը Մկր-*

71 Գիրք հարցմանց, էջ 591:

72 Կոչումն ընծայութեան, էջ 31-32:

տուիչյունը չընդունի, նրա համար փրկութիւն չկա, բայց միայն մարտիրոսներն են, ովքեր առանց ջրի էլ թողութիւն են գտնում»: Այս տեսանկյունից էլ Ս. Կյուրեղը բացատրում է Տիրոջ կողից բխած ջրի և արյան պարագան՝ առաջինը համարելով Ս. Մկրտության նշանակ, իսկ երկրորդը՝ մարտիրոսական Մկրտության[73]: Ըստ Հայոց Եկեղեցու ուղղափառ մտածողության՝ Տիրոջ կողից բխած արյունը Ս. Հաղորդության նշանն է[74]:

42. Ի՞նչ են ասում Եկեղեցու վարդապետները և հայրերը ջրի մասին:

Ս. Մկրտության ջրի կարևորությանն են անդրադարձել Եկեղեցու նշանավոր հայրերից և վարդապետներից շատերը, այստեղ պարզապես մեջբերենք մի քանի վկայակոչումներ:

Ս. Գրիգոր Նազիանզացին ասում է. *«Քանի որ մենք կազմված ենք երկու բնութիւնից, այսինքն՝ հոգուց և մարմնից, տեսանելի և անտեսանելի բնութիւնից, մաքրումն էլ կրկնակի է. այսինքն՝ ջրով և Հոգով. մեկն ընդունվում է տեսանելի և մարմնապես, իսկ մյուսը միևնույն ժամանակ կատարվում է ոչ մարմնավոր և անտեսանելի, մեկը պատկերավոր է, իսկ մյուսը՝ իրական և մինչև խորքը մաքրող»*[75]:

---

73 Կոչումն ընծայութեան, էջ 38:

74 Տե՛ս **Զաքարիա վարդապետ Բաղումյան**, Անապակ բաժակի խնդիրը Հայոց Եկեղեցում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2013, էջ 96-110:

75 Творения иже во святых отца нашего Григория Богослова, Архиепископа Константинопольского, Том 1, стр. 547.

***

Ս. Բարսեղ Մեծը հավելում է. *«Քանի որ Մկրտության մեջ առաջադրված են երկու նպատակ՝ կործանել մեղավոր մարմինը, որպեսզի այն չբերի մահվան պտուղներ, այլ Հոգով վերակենդանանա և սրբության պտուղ ունենա: Այս դեպքում ջուրը մահն է, որ մարմինն իր մեջ ընդունում է դագաղի նման, իսկ Հոգին հաղորդում է կենդանարար ուժ մեր հոգիները մեղսավոր մեռելությունից նորոգելով նախասկզբնական կյանքի»*[76]:

***

Օգոստինոսը (354-430) Հովհաննեսի Ավետարանի մեկնության մեջ ասում է. *«Ինչ է Քրիստոսի Մկրտությունը՝ ջրի Ավազան՝ բառերի արտասանությամբ: Հանի՛ր ջուրը՝ Մկրտությունը չկա, հանի՛ր խոսքերը, Մկրտությունը չկա»*[77]:

43. Ինչո՞ւ է եկեղեցականն օրհնում ջուրն արտողության ժամանակ:

Մեր նախածնողի՝ Ադամի պատվիրանազանցության պատճառով մեղքը մտավ աշխարհ, ամեն ինչ, այդ թվում նաև ջուրը կորցրեց կյանք տալու զորությունը: Ուստի, այն ջուրը, որի մեջ պետք է երախային մկրտեն, օրհնվում է, որպեսզի ազատվի նախահոր անեծքից և դառնա մաքրության նյութ:

76 **Святитель Василий Великий**, Архиепископ Кесарии Каппадокийской, Творения в двух томах, Т. 1, стр. 81.

77 Nicene and Post-Nicene Fathers, V. 7: Augustin: Homilies on the Gospel of John, homilies on the first epistle of John, Soliloquies, edited by Philip Schaff, Hendrickson Publishers, United States of America, 1999, p. 100.

Ըստ 6-րդ դարի «Կանոնք Ներսէսի և Ներշապհոյ» կանոնախմբի 9-րդ կանոնի՝ ջուրը պետք է օրհնվի անպայման եկեղեցում, իսկ խորհրդակատարությունը կարող է կատարել միայն քահանան. *«Ծանր լուր հասավ մեզ, թէ քահանաները որոշ տեղերում իրենք չեն մկրտում, բայց միայն ջուր են օրհնում և տալիս երիտասարդներին՝ հրամայելով նրանց իրենց տանը մկրտել մանուկներին, որի պատճառով պատժվեցին աներևույթ տանջանքներով»*[78]:

44. Ինչպե՞ս է կատարվում ջրի օրհնությունը:

Հոգևորականը ջուրը խաչանման լցնում է Մկրտության Ս. Ավազանի մեջ՝ ասելով 28-րդ սաղմոսը. *«Աստծո ձայնը ջրերի վրա է, փառքի Աստվածը որոտաց, և Տերն Ինքն է անապատ ջրերի վրա...»*: Նույն սաղմոսն է ասվում նաև հունվարի 6-ին՝ Աստվածհայտնության տոնին կատարվող ջրօրհնեքի արարողության ժամանակ: Ըստ Եկեղեցու հայրերի՝ այս սաղմոսում ևս բացահայտվում է Ս. Երրորդության խորհուրդը[79]: Իսկ ջրի խաչաձև լցնելը ցույց է տալիս, որ Ս. Մկրտության ջուրն այլևս Հին Կտակարանի մաքրագործման ջուրը չէ, այլ Քրիստոսի բերած փրկության հետ հաղորդակցվելու տեսանելի նշանը[80]:

---

78 Կանոնագիրք հայոց, հ. Ա, էջ 482:

79 Տե՛ս **Զաքարիա արեղա Բաղումյան**, Կիրակոս վարդապետ Երզնկացու ԻԸ. 3 սաղմոսի մեկնությունը, «Էջմիածին», Է, 2012, էջ 83-85:

80 Տե՛ս **Մեսրոպ քահանայ Արամեան**, Մկրտութեան արարողութեան աստուածաբանութիւնը, «Գանձասար» հ. Գ, Երևան, 1993, էջ 81:

45. Ի՞նչ ընթերցվածքներ են հաջորդում վերոգրյալ սաղմոսին:

Ս. Մկրտության բուն հայկական ծեսում 28-րդ սաղմոսին հաջորդում են 3 ընթերցվածներ՝ Եզեկ. 36. 25-28, Գաղ. 3. 24-29 և Հովի. 3.1-8: Բնականաբար, սուրբգրային այս հատվածները պատահականորեն չեն ընտրված: Դրանցում խոսվում է ջրի մասին՝ իբրև մաքրության և փրկության խորհրդանիշի, իսկ Ս. Պողոս առաքյալի թղթի հատվածում ընդգծվում է Ս. Մկրտությամբ Քրիստոսով զգեստավորվելու իրողությունը: Ապա քահանան կամ սարկավագն ասում են քարոզների մի շարք, որոնցում աղոթում ենք աշխարհի խաղաղության, Ս. Եկեղեցու հաստատության և ժամանակի կաթողիկոսի կենաց արևշատության համար, ինչպես նաև Տիրոջից խնդրում ենք, որ Ս. Հոգու իջմամբ ջուրը մաքրվի, Հորդանան գետի օրհնությունը ստանա, դառնա մարմնի և հոգու բժշկություն, որպեսզի Ս. Մկրտությամբ այս ջրից վերածնվածները լինեն լույսի և ճշմարտության որդիներ:

46. Ի՞նչ է հաջորդում այս քարոզաշարին:

Սրան հաջորդում է մի աղոթք, որը մկրտող հոգևորականն ասում է Ս. Ավազանի մոտ: Քանի որ աղոթքը շատ հետաքրքիր է և իմաստալից, այն մեջբերում ենք ամբողջությամբ և խորհուրդ տալիս անպայման ընթերցել. *«Դու՛, Տե՛ր, Քո մեծ զորությամբ սահեցնիր ծովը, յամաքը և նրանց միջի բոլոր արարածներին: Բաժանեցիր և հաստատեցիր ջրերը երկնքի վերևում և լուսեղեն զորքերի բնակավայրերում, որոնք անդադար փառաբանում*

են Քեզ: Առաքեցիր քո երանելի սուրբ առաքյալներին՝ հրաման տալով նրանց քարոզելու և մկրտելու բոլոր հեթանոսներին Հոր, Որդու և Ս. Հոգու անունով: Նաև անսուտ խոսքովդ սահմանեցիր ջրով և Հոգով չծնվածներին արքայություն չմտնել, որից զարհուրած Քո այս ծառան, ցանկանալով մշտնջենավոր կյանքիդ [հաղորդակցությունը]՝ կամավոր եկավ հոգևոր այս ջրով մկրտվելու: Եվ այժմ աղաչում ենք Քե՛զ, Տե՛ր բարերար, ուղարկի՛ր Քո Ս. Հոգին այս ջրի վրա և մաքրի՛ր այն, ինչպես մաքրեցիր Հորդանան գետը, նրա մեջ մտնելով, մեղքերից Ամենասո՛ւրբդ, մեր Տեր Հիսո՛ւս Քրիստոս՝ իբրև օրինակ այս Ավազանի Մկրտության բոլոր մարդկանց վերստին ծննդյան համար: Շնորհի՛ր սրան այս ջուրը, որում այժմ սա մկրտվում է, որպես մեղքերի թողություն, Ս. Հոգուդ ընդունելություն, երկնավոր Հորդ որդեգրություն, երկնքի արքայության ժառանգություն: Որպեսզի, մեղքերից սրբվելով, Քո կամքին հաճելի ապրի այս աշխարհում և ստանա հանդերձյալում անսպառ բարիքները բոլոր սրբերիդ հետ և ուրախությամբ միշտ գոհանա և փառավորի Հորը, Որդուն և Ս. Հոգուդ. ամեն»[81]:

47. Ինչո՞վ է ավարտվում ջրի օրհնությունը:

Խորհրդապատար հոգևորականը երեք անգամ ջուրն օրհնում է Ս. Խաչով՝ ասելով. *«Թող օրհնվի և մաքրվի այս ջուրը Ս. Խաչի այս նշանով, այս Ս. Ավետարանով, Սրբալույս այս Մյուռոնով և այս օրվա շնորհով Հոր, Որդու և Ս. Հոգու անունով, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից»*: Երեք անգամ ասելուց հետո հավելում է. *«Օրհնություն և փառք*

81 Մայր Մաշտոց, հ. Ա, գիրք Ա., էջ 224-225:

Հորը, Որդուն և Մ. Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»: Ապա նա հոգեգալստյան «Առաքելոյ աղաւնոյ» շարականի երգեցողության ներքո Ս. Մյուռոնը խաչանման լցնում է Ս. Մկրտության Ավազանի մեջ:

48. Ի՞նչ է խորհրդանշում Ս. Մյուռոնի խաչանման լցնելը Ս. Ավազանի մեջ:

Ըստ Ս. Գրիգոր Տաթևացու՝ Ս. Մկրտության ջրի մեջ Ս. Մյուռոնի հեղումը Ս. Հոգու էջքի նշանակն է: Ինչպես Ս. Հոգին աղավնակերպ իջավ Հորդանանի վրա Տիրոջ Մկրտության ժամանակ, այնպես էլ այժմ աներևութապես իջնում է Ս. Ավազանի մեջ[82]: Ս. Գրիգորը նաև հավելում է, որ խաչանիշ լցնելը ցույց է տալիս, որ այս Մկրտությունը Քրիստոսինն է և ոչ թե Հովհաննեսինը, իսկ *«ջուրը հենց Քրիստոս է՝ նույն Մյուռոնը, ասես Ինքն Իրեն է մաքրում և մկրտվողին»*[83]: Իսկ Հովհաննես Երզնկացի Պլուզն ասում է. *«Եվ Մեռոնը խաչանման ջուրն է կաթեցնում, որովհետև Մեռոնը Քրիստոս է, իսկ խաչաձևը Քրիստոսի խաչն է: Եվ ինչպես Քրիստոս խաչով մեռավ, նույնպես էլ քրիստոնյան Քրիստոսի հետ Ավազանի մեջ խորհրդաբար խաչակից է դառնում Քրիստոսին, և ասես մեռնում է այս աշխարհի և մեղքերի համար, և միայն Քրիստոսի բարեգործությամբ կենդանի լինում»*[84]:

---

82 **Գրիգոր Տաթևացի**, Ամառան հատոր (այսուհետ՝ Ամառան հատոր), Երուսաղէմ, 1993, էջ 151:

83 Ձմեռան հատոր, էջ 566:

84 **Է. Մ. Բաղդասարյան**, նշվ. աշխ., էջ 150:

49. Ի՞նչ տեսակ ջուր պետք է լցնել Ս. Ավազանի մեջ:

Սովորաբար «Մաշտոցները» հրահանգում են տաք ջուր լցնել Մկրտության Ս. Ավազանի մեջ: Ըստ Ս. Գրիգոր Տաթևացու՝ *«Ջրի տաքությունը Ս. Հոգու ջերմության նշանն է, քանզի ատելության սառնությունը հանում է և մկրտյալին ջերմացնում Քրիստոսի սիրով»*[85]:

50. Նույն ջրի մեջ քանի՞ մարդ կարելի է մկրտել:

Ս. Մկրտության մեկ խորհրդակատարության ժամանակ Ս. Ավազանի մեջ լցված ջրում կարող են շատերը մկրտվել, բայց հաջորդ արարողության ժամանակ այն փոխվում է, վերտին օրհնվում է և այլն:

85 Ամառան հատոր, էջ 182:

Ս. ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՀՈՐՀՐԴԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

51. Ինչպե՞ս է կատարվում Ս. Մկրտությունը:

Ընդհանրապես Ս. Մկրտությունը կատարվում է երեք ձևով՝ *ընկղմամբ, հեղմամբ, սրսկմամբ* կամ *ցողմամբ*: Հայոց Եկեղեցին որդեգրել է ավանդական առաջին ձևը: Եթե հնարավոր չէ խորհուրդը կատարել ընկղմամբ, ապա այն կարող է կատարվել մյուս եղանակներով: Այսօր Եկեղեցու գործնական ծիսական կյանքում մանուկների *(նկատի ունենք ութօրյա, քառասնօրյա կամ դրանից մեծ այն երեխաներին, որոնց հնարավոր է ընկղմել Ս. Մկրտության Ավազանում)* Ս. Մկրտությունը կատարվում է Ս. Ավազանում մարմնի ամբողջական ընկղմամբ, իսկ ավելի մեծերինը՝ լվացմամբ: Վերջին եղանակով Ս. Մկրտություններն ավելացան հատկապես 20-րդ դարում՝ Խորհրդային իշխանության տարիներին, երբ իշխող գաղափարախոսության և հալածանքների պատճառով մարդիկ վախենում էին բացահայտ մկրտել իրենց զավակներին, ուստի շատերը մկրտվում էին հասուն տարիքում տանը կամ գաղտնի ձևով որևէ եկեղեցում: Նման դեպքերում հոգևորականը լվանում է մարմնի այն բոլոր մասերը, որոնք հետագայում պիտի դրոշմվեն, այսինքն՝ գլուխը, երեսը, կուրծքը, թիկունքը, ձեռքերը և ծնկները:

Իսկ եթե տվյալ Եկեղեցու Ս. Ավազանը մեծ է և հարմար, ապա մեծահասակ չմկրտվածներին նույնպես կարելի է մկրտել ընկղմամբ: Չնայած առաքելահիմն մեր Եկեղեցին այս հարցում հետևում է Առաքելական Ավանդությանը, բայց նաև չի մերժում այլ ձևերով կատարվածը: Այս մասին է վկայում մասնավորապես Ս. Գրիգոր Տաթևացու հետևյալ արտահայտությունը. *«Իսկ լվանալը հարկ է, որ ամբողջ մարմնին վերաբերի: Իսկ եթե հարկը պարտադրի պետք է միայն պատվական մասերը լվանալ կամ բավական է միայն երեսը»*[86]: Եռամեծ վարդապետն իր այս խոսքով փաստորեն չի մերժում լատինների կատարած Ս. Մկրտության խորհուրդը, ովքեր 13-րդ դարից սկսած խորհուրդը կատարում են սրսկմամբ կամ հեղմամբ: Իսկ Բողոքական եկեղեցիներում խնդրի վերաբերյալ միաձևություն չկա:

52. Ի՞նչ ձևով էր կատարվում այս խորհուրդը Վաղ Եկեղեցում:

Ս. Մկրտության խորհուրդը կատարելու եղանակի մասին որևէ խոսք չկա Նոր Կտակարանում: Բնագրում «մկրտել» բայի համար օգտագործվում է հունարեն βαπτίζω (baptizo) բառը, որը բառացի նշանակում է «ընկղմում»: Այս բառը նորկտակարանյան համատեքստում երկու նշանակություն ուներ. այն կիրառվում էր ծիսական լվացման և Ս. Մկրտության խորհրդի համար: Սա նշանակում է, որ առաքելական շրջանում և

86 Գիրք հարցմանց, էջ 588:

Վաղ Եկեղեցում Ս. Մկրտության խորհուրդը կատարվում էր ընկղմամբ՝ իբրև օրինակ ունենալով Տիրոջ Մկրտությունը: Նույն ձևով մկրտվեց նաև Հիսուս, ինչպես Ս. Գիրքն է ասում. *«Եվ երբ Հիսուս մկրտվեց, իսկույն ջրից դուրս ելավ»* (Մատթ. 3. 16, Մարկ. 1. 10): Ս. Ղուկաս ավետարանիչը Փիլիպպոսի կողմից Կանդակա թագուհու պաշտոնյայի Մկրտության առիթով ասում է. *«Եվ ներքինին հրամայեց կառքը կանգեցնել. երկուսով ջուրն իջան. և՛ Փիլիպպոսը և՛ ներքինին: Եվ Փիլիպպոսը մկրտեց նրան: Երբ ջրից դուրս ելան, Ս. Հոգին իջավ ներքինու վրա»* (Գործք 8. 38-39): Նորկտակարանյան այս դրվագը նույնպես փաստում է, որ այդ ժամանակ Մկրտությունը կատարվում էր ջրի մեջ ամբողջական ընկղմամբ, այլապես Ս. Փիլիպպոսը հենց կառքի մեջ ջուրը կցողեր ներքինու վրա, և ջրի մեջ իջնելու կարիք չէր լինի:

53. Ի՞նչ հայրաբանական վկայություններ ունենք Ս. Մկրտությունն ընկղմամբ կատարելու մասին:

Ինչպես տեսանք վերևում, Հիսուս նույնպես ընկղմամբ մկրտվեց Հորդանան գետում, այսպես էին մկրտում նաև առաքյալները: Վաղ Եկեղեցում այս խորհուրդը ցողմամբ կամ հեղմամբ[87] էր կատարվում միայն ծայրահեղ անհրաժեշ-

87 Ս. Մկրտությունը հեղմամբ կատարելու ձևի մասին նշվում է հետառաքելական շրջանի կարևոր երկերից մեկում՝ Դիդախեի 7-րդ գլխում. տե՛ս Տասներկու առաքյալների վարդապետությունը, «Գանձասար», աստուածաբանական հանդէս, հ. Է, Երևան, 2002, էջ 147, Православная энциклопедия, Том XXXVIII, стр. 613.

տության դեպքում՝ ծանր հիվանդների կամ այն ժամանակ, երբ հնարավոր չէր Ս. Մկրտությունն ընկղմամբ կատարել: Ըստ Ս. Պողոս առաքյալի բացատրության՝ Ս. Մկրտության Ավազանն այն գերեզմանն է, որի մեջ մենք թաղվում ենք Քրիստոսի մահվան մեջ, և իբրև նոր մարդ՝ հարություն առնում (տե՛ս Հռոմ. 6. 4, Կող. 2. 12): Բնականաբար, Ընդհանրական Եկեղեցու հայրերը, հետևելով Տիրոջ օրինակին և պողոսյան աստվածաբանությանը, իրենց երկերում շեշտում են Ս. Մկրտության խորհուրդն ընկղմամբ կատարելու ավանդական ձևը: Մեջբերենք դրանցից երկուսը:

Ս. Գրիգոր Նյուսացին (334/335-394) Տիրոջ Մկրտության մասին ճառում, խոսելով Ս. Մկրտության եղանակի մասին, ասում է. *«Ինչպես Փրկիչը ծածկվեց գետնի մեջ, այնպես էլ մենք՝ ջրի»*[88]: Այստեղ Ս. Գրիգորը ևս մեկ անգամ շեշտում է, որ խորհրդի կատարման ժամանակ ջուրը պետք է ծածկի մկրտվողի ամբողջ մարմինը: Իսկ Ս. Հովհան Ոսկեբերանը Հովհաննեսի Ավետարանի մեկնության մեջ հավելում է. *«Մեր գլուխն Ավազանի ջրի մեջ ենք իջեցնում ասես գերեզմանի մեջ, և մեր հին մարդը թաղվում է և այնտեղ ամբողջովին ընկղմվում, ապա այնտեղից ելնելիս՝ իբրև նոր մարդ ենք դուրս գալիս»*[89]:

---

88 Творения святого Григория Нисского, Часть 8, Москва, 1871, стр. 10.

89 **Յովհան Ոսկեբերան**, Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին, որ ըստ Յօհաննու, էջ 246:

54. Ինչպե՞ս է այժմ գործնականում կատարվում Ս. Մկրտությունը:

Քահանան բարձրաձայն արտասանում է Ս. Մկրտության բանաձևը և մկրտվողին Ս. Երրորդության անունով երեք անգամ ընկղմում է ջրի մեջ՝ ամեն անգամ այն կատարելով Ս. Երրորդության անձերից մեկի անունով: Այսպես՝ առաջին ընկղման ժամանակ քահանան ասում է՝ *«յանուն Հօր»*, երկրորդին՝ *«և Որդւոյ»*, և երրորդին՝ *«և Հոգւոյն Սրբոյ»*: Այնուհետև շարունակում է ասել բանաձևի մնացած մասը՝ լվանալով Ս. Դրոշմի համար անհրաժեշտ մարմնի մյուս մասերը:

55. Ի՞նչ է խորհրդանշում ջրի մեջ երեք անգամ ընկղմելը:

Ջրի մեջ երիցս ընկղմելը խորհրդանշում է Տիրոջ մահը, թաղումը, իսկ ջրից դուրս գալը՝ հարությունը: Ջրի մեջ մտնելով՝ մեռնում ենք Քրիստոսի հետ մեր մեղքերի համար, ընկղմվելով՝ թաղվում Նրա հետ, ջրից դուրս գալով էլ՝ հարություն առնում: Ս. Մկրտության խորհուրդն իրական մուտք է Քրիստոսի մահվան մեջ և, հետևաբար, նաև Նրա հրաշափառ հարության: Այլ խոսքով՝ մկրտվել նշանակում է Քրիստոսի հետ մեռնել, թաղվել և հարություն առնել[90]: Պողոս առաքյալն ասում է. *«Մկրտութ֊եամբ թաղվե֊ցինք Նրա հետ մահվան մեջ, որպեսզի, ինչպես Քրիս֊տոս մեռելներից հարութ֊յուն առավ Հոր փառքով,*

90 **Մեսրոպ քահանայ Արամեան**, Մկրտութեան արարողութեան աստուածաբանութիւնը, «Գանձասար» հ. Գ, էջ 83-84:

նույնպես և մենք քայլենք նոր կյանքով, որովհետև եթե Նրա մահվան նմանությամբ տնկակից եղանք Նրան, ապա պիտի լինենք նաև Նրա հարության նմանությամբ» (Հռոմ. 6. 4-5), իսկ մեկ այլ թղթում՝ *«Թաղվելով Նրա հետ Մկրտության մեջ՝ դրանով իսկ Նրա հետ հարություն առաք Աստծո զորությանը հավատալով, ով Նրան հարություն տվեց մեռելներից»* (Կող. 2. 12): Մեր միջի հին մարդը մեռնում է, իսկ նորը՝ հարություն առնում: Ուստի նոր մկրտվածին արարողությունից հետո նոր զգեստներ են հագցնում, որը խորհրդանշում է մկրտվածի երկրորդ՝ վերստին ծնունդը, մեղքից ազատվելը, աշխարհի համար մեռնելն ու Աստծո համար կենդանի լինելը: Ուստի նույն առաքյալն ասում է. *«Դուք բոլորդ, որ Քրիստոսով մկրտվեցիք, Քրիստոսով զգեստավորվեցիք»* (Գաղ. 3. 27):

56. Ի՞նչ է նշանակում մեռնել և հարություն առնել Քրիստոսի հետ:

Ս. Կյուրեղ Երուսաղեմացին ասում է. *«Մեղքերով մեռած իջնում ես ջրի մեջ և այնտեղից ելնում կենդանացած արդարության մեջ: Քանզի եթե տնկակից եղար Փրկչի մահվանը, ապա Նրա հարությանն էլ արժանի կդառնաս»*[91], այսինքն՝ ամեն մկրտվող նախապես պիտի մեռնի այս աշխարհի համար, հրաժարվի մեղքերից և հին մարդուց, որպեսզի կարողանա մտնել Քրիստոսի մահվան խորհրդի մեջ, և իբրև նոր մարդ՝ հարություն առնի,

91 Երանելւոյն Կիւրղի Երուսաղեմայ հայրապետի Կոչումն ընծայութեան, Վիեննա, 1832, էջ 39, հմմտ. Կոչումն ընծայության, էջ 49:

ինչպես առաքյալն է ասում. *«Ով Քրիստոսի մեջ է, նա նոր արարած է»* (Բ Կորնթ. 5. 17): Ս. Մկրտությամբ սկսվում է քրիստոնյայի նոր կյանքը՝ հույսով, հավատով, սիրով, փորձություններով և խոչընդոտներով լի խաչի ճանապարհը, որի վերջնական հանգրվանը Տիրոջ երկրորդ գալստյան սպասումն է և Աստծո խոստացած երկնքի արքայության ժառանգումը:

57. Ի՞նչ է այս մասին ասում Հովհաննես վրդ. Երզնկացին:

Հովհաննես Պլուզն ասում է. *«Եվ այն, որ քահանան երեք անգամ մանկանը ջրի մեջ է ընկղմում, Քրիստոսի երեքօրյա թաղման խորհուրդն է՝ որպես թե թաղվեց Քրիստոսի հետ: Ջրից դուրս գալը՝ Քրիստոսի հետ մեռելներից հարություն առնելը: Եվ բարձրացնելը՝ Քրիստոսի հետ երկինք համբարձվելը, որովհետև բեմը երկնքի օրինակն է: Իսկ մանկան հաղորդվելը՝ այսուհետև Քրիստոսի հետ միանալը, ինչպես Քրիստոս ասաց. «Ով ուտում է Իմ Մարմինը և ըմպում Իմ Արյունը, Նա Իմ մեջ է բնակվում, Ես էլ՝ նրա» (Հովհ. 6. 57)*[92]:

58. Ինչպե՞ս պետք է քահանան ընկղմի մկրտվողին:

Մանկահասակ երախայի համար «Մաշտոցը» հրահանգում է, որ մկրտող հոգևորականը ձախ ձեռքով բռնի երեխայի պարանոցը, աջով՝ ոտքերը, մանկան երեսը պետք է լինի դեպի արևելք

92 **Է. Մ. Բաղդասարյան**, նշվ. աշխ., էջ 150:

և մի փոքր բարձր, իսկ ոտքերը՝ ավելի ցածր: Իսկ չափահաս մկրտվողի դեպքում քահանան պետք է վերցնի սուրբ ջրից, լցնի նրա գլխին, լվանա երեսը, ապա ձեռքերը, թիկունքը, պարանոցը և ոտքերը, այսինքն՝ մարմնի այն բոլոր հատվածները, որոնք հետո պետք է դրոշմվեն Ս. Մյուռոնով[93]:

93 Հմմտ. **Դերենիկ եպիսկոպոս**, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ խորհուրդները, Պէյրութ, 1957, էջ 18-19:

Ս. ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ

59. Որտե՞ղ պետք է կատարվի Ս. Մկրտությունը:

Ս. Մկրտության վայրը Եկեղեցին է, որի վիմակերտ Ս. Ավազանում կատարվում է սրբազան այս խորհուրդը: Ս. Ավազանը պետք է լինի եկեղեցու աջակողմյան մասում՝ եկեղեցի մտնելիս ձախ կողմում, հյուսիսային պատին, Ս. Սեղանի մոտ կամ աջակողմյան ավանդատան մեջ: Հաճախ եկեղեցիները կից ունենում են նաև առանձին մկրտարաններ, որտեղ էլ կատարվում է Ս. Մկրտության խորհուրդը: Նկատի պետք է ունենալ, որ Ս. Ավազանի ջրահեռացումը պետք է կատարվի առանձին համակարգով, այսինքն՝ օրհնված և մյուռոնաբույր ջուրը չպետք է թափվի կոյուղի: 768 թ. Պարտավի Բ ժողովի 8-րդ կանոնում ասվում է. *«Եվ տեսնում ենք որոշ տեղերում, որ տգետ և անմիտ քահանաներն անարգում, անպիտան են համարում Մկրտության Ս. Ավազանը և Մկրտության ջուրը դուրս են թափում՝ ոտնակոխ լինելու և ապականվելու համար: Այսուհետ թո՛ղ չհամարձակվեն նույն անպատվությունն անել Ս. Ավազանի հանդեպ, այլ մյուս սրբություններին նման պատվով մոտենան՝ Սեղանի և խաչի նման շորով ծածկեն և խնկարկությամբ պատվեն, և ջուրն անմիջապես նույն Ավազանի մեջ լցնեն: Իսկ այս հրամանին հակառակ գործող քահանան թո՛ղ կարգալույծ արվի»*[94]:

94 Կանոնագիրք հայոց, հ. Բ, էջ 9:

60. Այդ դեպքում տանը կամ այլուր կատարված Ս. Մկրտությունը վավերակա՞ն է:

Իհարկե, վավերական են, եթե կատարվել են ըստ անհրաժեշտության՝ պահպանելով Ս. Մկրտության խորհրդի բոլոր պայմանները՝ խորհրդի պաշտոնյան, բանաձևը, նյութը և այլն: Օր.՝ խորհրդային տարիներին հասկանալի պատճառներով շատերն իրենց զավակներին մկրտել են տանը: Բնականաբար, այսպիսի դեպքերում կատարված Ս. Մկրտությունը նույնպես վավերական է: Անկախ պետականության պայմաններում նման խնդիր չկա, քանզի եկեղեցու դռները բաց են բոլորի առաջ: Ուստի, եթե որևէ խանգարող հանգամանք չկա, ապա պետք է անպայման մկրտվել հենց եկեղեցում:

61. Ո՞ր դեպքերում Ս. Մկրտությունը կարելի է կատարել եկեղեցուց դուրս:

Եթե խանգարող հանգամանքներ կան, և հնարավոր չէ տվյալ մարդուն եկեղեցի բերել, ապա Ս. Մկրտության արարողությունը կարող է կատարվել նաև տանը, հիվանդանոցում, բանտում, բանակում և այլուր՝ պահպանելով խորհրդի համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Հետաքրքրական է, որ հնում մեր նախնիները Ս. Մկրտության արարողությունը կատարում էին հենց թոնրի վրա, որը սրբություն էր տվյալ տան համար[95]:

62. Ի՞նչ է խորհրդանշում Ս. Ավազանը:

Եկեղեցու Ս. Ավազանը խորհրդանշում է արգանդը, որից վերստին ծնվում են քրիստոնյա-

95 Տե՛ս Ազգագրական հանդէս, հ. Բ, Շուշի, 1897, էջ 148:

ները՝ դառնալով Քրիստոսի Եկեղեցու անդամ: Ս. Ավազանը երբեմն համեմատվում է Հորդանան գետի կամ Վերնատան հետ, քանզի Տերը նախքան Ս. Հաղորդության խորհրդի հաստատումը, լվաց Իր աշակերտների ոտքերը, որը հենց նրանց Ս. Մկրտությունն էր[96]:

63. Ինչի՞ց է պատրաստվում Ս. Ավազանը:

Ըստ Ս. Հովհան Օձնեցու կանոնախմբի 13-րդ կանոնի՝ Ս. Ավազանն անպայման պետք է լինի քարից և եկեղեցու մեջ կամ առանձին մկրտարանում[97]: Մկրտության Ս. Ավազանը պատրաստելիս հարկ է հաշվի առնել, որ այն ընդարձակ և խորը լինի, որպեսզի մանկանը մկրտելիս ծածկի նրա ամբողջ մարմինը: Այս մասին է նաև 554 թ. Դվինի Բ ժողովի 15-րդ կանոնը[98]:

64. Ինչո՞ւ են մեր Եկեղեցու Ս. Մկրտության Ավազանները հիմնականում փոքր:

Պատասխանը շատ պարզ է, քանզի դրանք նախատեսված են եղել մանուկների Ս. Մկրտության համար: Հայոց Եկեղեցու ավանդության համաձայն՝ մեր նախնիներն իրենց զավակներին մկրտել են ութօրյա կամ քառասնօրյա հասակում, ուստի նման չափ Ս. Ավազանները բավարար են եղել խորհրդի կատարման համար:

---

96 Այս մասին տե՛ս **Վարդան Դևրիկյան**, Խորհրդավոր ընթրիք. հայկական ավանդույթից մինչև Լեոնարդո, Երևան, 2008, էջ 51, Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին, որ ըստ Ղուկասու՝ արարեալ սուրբ վարդապետին Իգնատիոսի, Կ. Պոլիս, 1735, էջ 356, Կանոնագիրք հայոց, հ. Ա, էջ 36:

97 Կանոնագիրք հայոց, հ. Ա, էջ 521:

98 Նույն տեղում, էջ 485:

Ցավոք, խորհրդային աստվածմերժության տարիներին զանազան պատճառներով մարդիկ հնարավորություն չեն ունեցել մկրտվել փոքր հասակում, ուստի այսօր մարդկանց տարիքային մի խումբ կա, որոնք դեռևս մկրտված չեն: Միևնույն ժամանակ ուրախությամբ պետք է արձանագրել, որ այժմ շատացել են մանկամկրտությունները, ինչը վկայում է մեր ժողովրդի հոգևոր գիտակցության վերազարթոնքի մասին:

65. Հայոց Եկեղեցին շարժական Ս. Ավազան ունի՞:

Ո՛չ. կանոնական տեսանկյունից Ս. Ավազանը պետք է անշարժ լինի, բայց բացառիկ և եզակի դեպքերում՝ երբ չմկրտվածը ծանր հիվանդ է կամ մահամերձ, երբ մոտակայքում հայկական եկեղեցի չկա, թույլատրվում է արարողությունը կատարել մաքուր անոթի մեջ, օր.՝ հիվանդանոցում, բանտում, բանակում և տանը: Սովորաբար նման դեպքերում կա՛մ գնում են նորը, կա՛մ էլ օգտագործում են խմոր անելու կամ անուշ եփելու տաշտերը: Այս պարագային նույնպես Ս. Մկրտության ջուրը պետք է թափվի մաքուր տեղ, որպեսզի ոտնակոխ չլինի: Օր.՝ բացառության կարգով շարժական Ս. Ավազանի մասին է վկայում ոսկեդարի պատմիչ Ս. Եղիշե վարդապետը: Նա «Վարդանի և հայոց պատերազմի մասին» հայտնի երկում պատմում է, որ պատերազմից առաջ Ս. Ղևոնդ երեցն ու իր գործակիցները Ս. Սեղան և Ս. Ավազան կանգնեցրեցին, մկրտեցին չմկրտվածներին և Ս. Հաղորդություն տվեցին բոլորին[99]:

---

99 Տե՛ս **Եղիշե**, Վարդանի և հայոց պատերազմի մասին, աշխարհա-

Եկեղեցուց դուրս կատարված Ս. Մկրտության ժամանակ նույնպես պետք է պահպանվեն խորհրդակատարության էական մասերը՝ Ս. Երրորդության անունով երեք անգամ ընկղմումը, ուղղափառ դավանության խոստովանությունը և օծումը Սրբալույս Մյուռոնով: Օր.՝ Գրիգոր Մագիստրոս Պահլավունին (990-1058) իր թղթերից մեկում թոնդրակեցիների Մկրտության նկարագրության մեջ նշում է, որ նրանք խոստովանեցին իրենց հանցանքներն ու մոլորությունները և ընդունեցին անաստված առաջնորդների չարությունը: Ապա Բջնիի Եփրեմ եպիսկոպոսը և ուրիշներ Ս. Մկրտության Ավազան կանգնեցրեցին, նրանց Ս. Երրորդության անունով մկրտեցին և վերջում Ս. Հաղորդություն տվեցին[100]:

66. Երբ նոր եկեղեցի են կառուցում, Ս. Ավազանը նույնպես օծո՞ւմ են:

Իհարկե, «Մայր Մաշտոցում» հատուկ կարգ կա, որը կոչվում է «Ավազան օրհնելու կանոն»: Այն բաղկացած է սաղմոսներից, շարականներից, սուրբգրային ընթերցվածքներից, քարոզներից և աղոթքներից: Համաձայն այս կանոնի՝ Ս. Ավազանը նախ լվանում են ջրով և գինով, ապա եպիսկոպոսը Ս. Մյուռոնով օծում է Ավազանի չորս անկյունները և մեջտեղը՝ ասելով. *«Թող օրհնվի և մաքրվի այս եկեղեցու Ավազանը Ս.*

բար թարգմանությունը և ծանոթագրությունները Երվանդ Տեր-Մինասյանի, Երևան, 1994, էջ 82-83:

100 **Գոհար Մուրադեան**, Գրիգորի Մագիստրոսի թուղթք և չափաբերականք. Մատենագիրք հայոց, ԺԶ. հատոր, ԺԱ. դար, Երևան, 2012, էջ 200:

խաչի այս նշանով, Ս. Ավետարանով, Ս. Մյուռոնով և օրվա շնորհով Հոր, Որդու և Ս. Հոգու անունով, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»[101]: Ապա եպիսկոպոսը սպիտակ շապիկով ծածկում է նորաօծ Ս. Ավազանը, վրան գցում փորուրար և գոտի, վերցնում է նույնատիպ երեք մոմեր, դրանցից մեկը դնում է Ս. Ավազանի մեջտեղում, իսկ մյուս երկուսը՝ եզրերին: Եպիսկոպոսն իր վերջին աղոթքում մասնավորապես Աստծուց խնդրում է. *«...Աղաչում ենք Քեզ, երկնավո՛ր Հայր, ուղարկի՛ր Քո Ս. Հոգին և օրհնի՛ր այս Ս. Ավազանը, որ հաստատեցինք Քո Միածնի անվամբ և որով ստանում ենք Քո Ս. Հոգին և Քրիստոսով զգեստավորվում: Դարձրո՛ւ սա շնորհների աղբյուր և անապական պարգև հավատացյալներիդ համար, որպեսզի ովքեր մկրտվեն սրա մեջ, [նրանց անունները] գրվեն կյանքի գրքում և ազատվեն սատանայի ծառայությունից: Որպեսզի ամենքս լինենք երկնավոր Հորդ լույսի որդիներ և Քրիստոսին ժառանգակիցներ, արժանանանք երկնքի արքայությանդ բոլոր սրբերի հետ և գոհանալով փառավորենք Հորը, Որդուն և Ս. Հոգուդ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»*[102]:

67. Ո՞ր դեպքերում են վերաօծում Ս. Ավազանը:

Երբ Ս. Ավազանը պղծվում է, վերանորոգվում կամ փոխադրվում:

---

101 Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ, Կ. Պոլիս, 1807, էջ 189-190:

102 Նույն տեղում, էջ 193:

ԿՐԿՆԱՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

68. Արդյո՞ք ընդունելի է կրկնամկրտությունը:

Կրկնամկրտությունն աններելի մեղք է և անընդունելի: Ս. Պողոս առաքյալը հստակ ասում է. *«Մե՛կ Տեր կա, մե՛կ հավատ, մե՛կ Մկրտություն»* (Եփես. 4. 5): Նույնն ենք խոստովանում նաև Նիկիակոստանդնուպոլսյան հանգանակում, որը բարձրաձայն ասում ենք յուրաքանչյուր Ս. Պատարագի ժամանակ՝ իբրև մեր ուղղափառ հավատքի խոստովանություն. *«Հավատում ենք նաև միայն մեկ, ընդհանրական, առաքելական, սուրբ եկեղեցու, մեկ Մկրտության...»*[103]: Անշուշտ, մարդ մկրտվելուց հետո էլ մեղքեր է գործում, բայց այս դեպքում տվյալ մարդը ոչ թե պետք է վերամկրտվի, այլ ապաշխարության խորհրդի միջոցով վերականգնվի Ս. Մկրտությամբ ստացած շնորհների մեջ:

69. Ինչո՞ւ է մերժելի կրկնամկրտությունը՝ ըստ Եկեղեցու հայրերի:

Ընդհանրական և Հայոց Եկեղեցիների հոգեկիր հայրերն ու վարդապետները, եկեղեցական մատենագիրները մշտապես խստորեն դատապարտել են կրկնամկրտության ամեն մի փորձ՝

---

103 Խորհրդատետր Սրբոյ Պատարագի՝ ըստ ծիսի Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1880, էջ 9, հմմտ. **Священник Андрей Светлаков**, О таинстве Крещения и Миропомазания, Лествица, 2004, стр. 14-15.

այն դիտելով ընդդեմ Ս. Գրքի և Առաքելական Ավանդության: Այստեղ մեջբերենք դրանցից մի քանիսը:

Ս. Հովհան Ոսկեբերանը Եբրայեցիների թղթի մեկնության մեջ արձանագրում է. *«Ինչպես անհնար է երկրորդ անգամ խաչել Քրիստոսին, քանզի դա կնշանակեր ծաղրել Նրան, այնպես էլ անհնար է երկրորդ անգամ մկրտվելը»*[104]:

***

Եփրեմ Ասորին հավելում է. *«Տերն իր աշակերտներին պատվիրեց, որ միայն մեկ անգամ ջրով մաքրեն մարդկային բնության մեղքերը»*[105]:

***

Հայոց Եկեղեցու յոթնալույս վարդապետ Ս. Գրիգոր Տաթևացին կրկնամկրտության դեմ չորս պատճառ է նշում. նախ՝ մարմնավոր ծնունդը հոգևոր ծննդյան նշանակն է: Ինչպես մեկ է մարմնավոր ծնունդը, այնպես էլ՝ հոգևորը, երկրորդ՝ Մկրտությունը սկզբնական մեղքի դեմ է, իսկ սկզբնական մեղքը մեկ է և ոչ երկու, երրորդ՝ ով մկրտվում է, Քրիստոսի մահով է մկրտվում, իսկ Քրիստոս մեկ անգամ մեռավ: Իսկ ով կրկին մկրտվում է, Քրիստոսին կրկին խաչն է հանում, չորրորդ՝ որովհետև Մկրտությունը Հոգու անքակտելի կնիքն է, ինչպես Քա-

104 Творения святого отца нашего Иоанна Златоуста, Том Двенадцатый, Книга Первая, С-Петербург, 1906, стр. 90.

105 **Митрополит Московский и Коломенский Макарий**, Православно-догматическое богословие, стр. 334.



հանայական կարգն ու Դրոշմի խորհուրդները: Ուստի ովքեր Ս. Երրորդության անունով են մկրտված, չեն մկրտվում նորից[106]:

70. Ո՞ւմ է վերամկրտում Հայոց Եկեղեցին:

Մեր Եկեղեցին նույնպես, լինելով Ընդհանրական Եկեղեցու անբաժանելի մի մասը, վերամկրտում է Ս. Երրորդության անունով չմկրտվածներին և հերետիկոսներին: Հայոց Եկեղեցին չի ընդունում նաև աղանդավորական կամ զանազան կրոնական կազմակերպությունների կատարած մկրտությունները, քանի որ դրանք վավերական և օրինական չեն, քանզի իրենց բնույթով պարզ լվացումներ են և չեն կարող ապահովել մարդու փրկագործությունը, ուստի նման դեպքերում անպայման կատարվում է Ս. Մկրտության խորհուրդը, որը երբեք չպետք է շփոթել կրկնամկրտության հետ: Օր.՝ եթե Եհովայի վկաներ աղանդի կամ Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցու (մորմոնների եկեղեցի) անդամը դարձի գա, ապաշխարի և ցանկություն հայտնի մկրտվելու Հայոց Եկեղեցում, ապա նրան կմկրտենք օրինավոր կերպով, քանզի նրանց կատարած խորհուրդը վավերական չէ:

71. Բազմաթիվ աղանդավորական ուղղություններ և շարժումներ կան, որոնք նույնպես մկրտում են Ս. Երրորդության անունով: Արդյոք վավերակա՞ն է նրանց կատարած խորհուրդը:

Ո՛չ, քանզի այս դեպքում բացակայում է Ս. Մկրտության օրինավոր պաշտոնյան՝ առաքե-

106 Գիրք հարցմանց, էջ 590:

լական հաջորդականությամբ վավերական ձեռնադրություն և օծում ունեցող հոգևորականը: Ինքնահռչակ մարդը չի կարող կատարել Եկեղեցու որևէ խորհուրդ, ինչպես որ աղանդավորների դեպքում է: Սա է պատճառը, որ Ուղղափառ Եկեղեցիներում անընդհատ շեշտվում և կարևորվում է առաքելական հաջորդականությունը, երբ Տիրոջ կողմից առաքյալներին տրված իշխանությունը եպիսկոպոսի ձեռքով և Ձեռնադրության խորհրդի միջոցով փոխանցվում է ընծայացուին՝ նրան իշխանություն տալով կատարելու Եկեղեցու խորհուրդները և այլն:

72. Այդ դեպքում ո՞ր Եկեղեցիների կատարած Մկրտություններն են Հայոց Եկեղեցու համար ընդունելի:

Հարցն իսկապես բարդ է: Եթե փորձենք սահմանել Ս. Մկրտության ընդունելի լինելու չափանիշները, ապա կարող ենք փաստել հետևյալը[107]. մեզ համար ընդունելի են այն Եկեղեցիների կատարած մկրտությունները, որոնք ունեն **առաքելական հաջորդականություն, վավերական քահանայություն և եպիսկոպոսություն**[108]:

107 Ս. Մկրտության խորհրդի փոխադարձ ճանաչման մասին տե՛ս **Dagmar Heller**, Baptized into Christ: A guide to the ecumenical discussion on Baptism, World Council of Churches publications, Geneva, Switzerland, 2012, p. 197-241.

108 Արտերկրում ապրող մեր հայրենակիցները երբեմն բախվում են հետևյալ խնդրին՝ ի՞նչ անել, երբ ապրածդ վայրում կամ հարակից երկրներում հայկական եկեղեցի չկա, սակայն խիստ անհրաժեշտ է Ս. Մկրտությունը: Եթե մեկը մահամերձ է կամ հիվանդ, բայց բնակավայրին մոտ Հայոց Եկեղեցի չկա և հնարավոր չէ տեղափոխել մեկ այլ երկիր Ս. Մկրտության համար, պետք է նախ փնտրել և

Օրինակ՝ եթե Կաթոլիկ կամ Ուղղափառ Եկեղեցու հավատացյալը ցանկանում է դառնալ Հայոց Եկեղեցու անդամ, նա չի վերամկրտվում, որովհետև Հայոց Եկեղեցին ընդունում է այդ Եկեղեցիների կատարած Ս. Մկրտությունը: Նրանք մեր Եկեղեցու գիրկն են ընդունվում ապաշխարության միջոցով[109]: Մասնավորապես այս մասին է 1905 թ. հուլիսի 16-ի Մկրտիչ Ա Վանեցի Խրիմյան (1892-1907) կաթողիկոսի՝ սինոդին ուղղված ուշագրավ կոնդակը[110], որում Հայոց Հայրապետը սահմանում է, թե ինչպես պետք է այլադավաններին ընդունել Հայոց Եկեղեցի: Ըստ կոնդակի՝ անխտիր պետք է ընդունել մեր Եկեղեցի դիմած թե՛ հայ և թե՛ օտար մարդկանց: Ոչ մի դեպքում նրանց չի կարելի վերամկրտել,

---

գտնել Հայոց Եկեղեցուն դավանակից Եկեղեցի և այնտեղ մկրտել: Իսկ եթե դրանք էլ չկան, ապա նման բացառիկ դեպքերում կարելի է մկրտել Կաթոլիկ կամ Ուղղափառ Եկեղեցիներում, որպեսզի մարդ անկնունք չմահանա:

109 Այս առումով մեր եկեղեցական պատմության եզակի դեպքերից է, երբ Անանիա Ա Մոկացի կաթողիկոսը (946-968), խորհրդակցելով ժամանակի նշանավոր վարդապետների հետ, կարգադրում է քաղկեդոնական ծեսով մկրտվածներին վերամկրտել. տե՛ս **Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի**, Տիեզերական պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վ. Հ. Վարդանյանի, Երևան, 2000, էջ 230, **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան**, Ազգապատում, հ. Ա, Կոստանդնուպոլիս, 1912, § 763, էջ 1105-1106, հմմտ. **Сергей Говорун**, Из истории богословских споров 18 века по проблеме латинского крещения. http://www.pravoslavie.ru/archiv/anabaptism.htm#ftn9.

110 Տե՛ս Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան, Գիրք Է, Խրիմեան Հայրիկը և ցարական բռնապետութիւնը (1903-1907 թթ.), հատորը կազմեց և առաջաբանը գրեց Սանդրո Բէհբուդեանը, Երևան, 2000, էջ 339:

քանզի Հայոց Եկեղեցին մերժում է կրկնամկրտությունը: Խրիմյան Հայրիկը սահմանում է հետևյալ արարողությունը, որը նա վերցրել է Ավագ Հինգշաբթի հայոց եկեղեցիներում առավոտյան կատարվող ապաշխարության կարգից՝

✠ «Հայր մեր»,

✠ Սաղմոս 50-րդ. «Ողորմի՛ր ինձ, Աստվա՛ծ...» (ամբողջությամբ),

✠ Եսայի մարգարեի գրքից 60. 20[111]-22 համարները,

✠ Եբրայեցիներին ուղղված թղթից 10. 19-31 համարները,

✠ Ալէլուիա, ալէլուիա. Սաղմոս 41. 2. «Ինչպես եղջերուն է փափագում ջրի աղբյուրներին, այնպես էլ ես՝ Քե՛զ, Աստվա՛ծ»,

✠ Ս. Բարսեղ Կեսարացու աղոթքի երկրորդ մասը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»-ից հետո. «Եվ արդ, Տե՛ր Աստված մեր, բարերար և բազմագութ...»,

✠ Աղոթքի ավարտին մեկը բոլորի փոխարեն ասում է Ս. Գրիգոր Տաթևացու խմբագրած և «Ժամագրքի» սկզբում դրված «Խոստովանում և հավատում ենք կատարյալ սրտով» սկսվածքով հավատքի դավանությունը,

✠ «Պահպանիչ»,

✠ «Հայր մեր»,

✠ Ապա մասնակցում են Ս. Պատարագին և հաղորդվում:

111 Բնագրում՝ 21. տե՛ս նույն տեղում:



73. Կին քահանայի կատարած Ս. Մկրտությունը վավերակա՞ն է:

Ինչպես Ուղղափառ մյուս, այնպես էլ Հայոց Եկեղեցին չեն ընդունում կանանց քահանայագործությունը: Հետևաբար, կին քահանայի կողմից կատարված մկրտությունը վավերական չէ:

74. Իսկ վավերակա՞ն է կնոջ կողմից ձեռնադրված հոգևորականի կատարածը:

Ո՛չ: Ինչպես անընդունելի է կանանց քահանայությունը, նմանապես վավերական չէ նրանց կողմից կատարված որևէ ձեռնադրություն:

75. Բացահայտ միասեռական հոգևորականի կողմից կատարվածը նույնպես անընդունելի՞ է:

Այո՛, քանզի միասեռականությունը մեղք է, և բացահայտ միասեռական անձը չի կարող նախ քահանայագործել, էլ չենք խոսում Եկեղեցու որևէ խորհուրդ կատարելու մասին:

76. Իսկ միասեռական զույգի որդեգրած երեխան կարո՞ղ է մկրտվել:

Երեխան մեղավոր չէ, որ իրեն որդեգրել են նույնասեռական հակում ունեցող մարդիկ: Եթե նման խնդրանք կամ դիմում լինի, ապա հոգևորականը չի կարող մերժել մկրտել այդ երեխային հանուն նրա իսկ փրկության: Այլ հարց է, որ արդեն նորածին քրիստոնյան ինչ արժեքային համակարգով պետք է մեծանա նման «ընտանիքում» և միջավայրում: Չէ՞ որ այդպիսիներն արդեն իսկ ապրում են մեղքի մեջ՝ գիտակցա-

բար կամ անգիտակցաբար խեղելով նաև այդ երեխային, թույլ չտալով նրան ապրելու և մեծանալու հոգեմտավոր առողջ մթնոլորտում: Անշուշտ, վերոգրյալ խնդիրները մարտահրավեր են՝ ուղղված Եկեղեցու, առողջ հասարակության և ընտանիքի ինստիտուտի դեմ, քանզի ուղղափառ դավանության համաձայն՝ ընտանիքը տղամարդու և կնոջ միությունն է: Ըստ Ս. Գրքի՝ նույն սեռի մարդկանց միությունը մեղք է և դատապարտելի (տե՛ս Ղևտ. 20. 13, Հռոմ. 1. 24-27, Ա Կորնթ. 6. 10):

Մանկամկրտություն

77. Ո՞ր տարիքում կարելի է մկրտել երեխային:

Հայոց Եկեղեցու ընկալյալ ավանդության համաձայն՝ եթե խանգարող հանգամանքներ չկան, ապա նորածնին կարելի է մկրտել ութ օրականում[112], իսկ մահվան սպառնալիքի դեպքում՝ ավելի շուտ: Նկատի պետք է ունենալ, որ այդ ժամանակ մանկան մայրը չի կարող մասնակցել արարողությանը, քանզի ծննդաբերությունից հետո 40 օր անմաքրության և օրգանիզմի վերականգնման ու կազդուրման շրջանում է: Հասկանալի է, որ ծնողների համար շատ կարևոր է իրենց մանկան Ս. Մկրտության արարողությունը: Թե՛ հայրը և թե՛ մայրն անպայման ուզում են մասնակցել սուրբ արարողությանը: Մեր խորհուրդն է, որ եթե նման խնդիր ծագի ընտանիքում, ապա պարզապես սպասեք և ձեր զավակին մկրտեք քառասունքից հետո:

78. Ինչո՞ւ ենք մկրտում մանուկներին:

Ս. Մկրտության խորհուրդն անհրաժեշտ պայման է Քրիստոսի Եկեղեցուն անդամագրվելու և փրկվելու համար, որի մասին հստակ ասել է նաև մեր Տերը՝ Իր աշակերտներին պատվիրելով մարդկանց մկրտել Ս. Երրորդության՝ Հոր, Որդու և Ս. Հոգու անունով: Հիսուսի այս հոր-

112 Տե՛ս «Կանոնք առաքելականք», կանոն 13. Կանոնագիրք հայոց, հ. Ա, էջ 36:

դորն ու պատգամն ուղղված են ամենքին՝ անկախ սեռից և տարիքից, սոցիալական դիրքից և ընտանեկան դրությունից, ովքեր ցանկանում են ազատվել մեղքից և մահից՝ հավատալով Քրիստոսի բերած փրկագործությանը: Այս մտածումով արդեն իսկ առաքելական շրջանից Եկեղեցին խրախուսել է մանկամկրտությունը, որպեսզի մանուկներն էլ զրկված չլինեն Ս. Մկրտության աստվածային շնորհից, դառնան Եկեղեցու անդամ և քրիստոնյա: Հիսուս Ինքը երկրային կյանքի ընթացքում շփվում էր մանուկների հետ և նրանց օրինակով բացատրում աստվածային ճշմարտությունները. *«Մանուկներին էլ մոտեցնում էին Նրան, որպեսզի նրանց դիպչի. երբ աշակերտներն այդ տեսան, սաստեցին բերողներին: Իսկ Հիսուս, կանչելով մանուկներին Իր մոտ, ասաց. «Թո՛ւլ տվեք այդ մանուկներին, որ Ինձ մոտ գան, և մի՛ արգելեք նրանց, որովհետև այդպիսիներինն է Աստծո արքայությունը: Ճշմարիտ եմ ասում ձեզ, ով Աստծո արքայությունը չընդունի ինչպես մի մանուկ, այնտեղ չի մտնի»* (Ղուկ. 18. 15-17):

79. Ինչպե՞ս են Եկեղեցու վարդապետները և հայրերը բացատրում մանկամկրտության անհրաժեշտությունը:

Նրանք մի քանի կարևոր հանգամանքներ են մատնանշում.

ա. մանուկներն էլ ծնվում են ադամական մեղքով, իսկ այն սրբվում է միայն Ս. Մկրտությամբ,

բ. Հին Ուխտում Ս. Մկրտության նախատիպը թլփատությունն էր: Ինչպես ութօրյա մանկանը

թլփատում էին, այնպես էլ Քրիստոսի Եկեղեցին մկրտում է,

գ. մանուկն էլ չափահասի նման կատարյալ մարդ է՝ ստեղծված Աստծո պատկերով և նմանությամբ, որը նույնպես փրկության կարիք ունի,

դ. մանուկներն իրենց բնությամբ տկար են և վաղաժամ մահվան վտանգը միշտ կա: Ցավոք, բոլորը չէ, որ հասնում են չափահասության, ուստի ոչ մի դեպքում չպետք է ուշացնել Ս. Մկրտությունը՝ Եկեղեցուն անդամագրվելը: Այս ամենը հաշվի առնելով՝ Հայոց Եկեղեցին այսօր էլ քաջալերում է, որպեսզի ծննդից հետո մանուկը մկրտվի ութերորդ օրը, եթե դրան խանգարող բժշկական կամ այլ պատճառներ չկան: Իսկ եթե մանկան կյանքին վտանգ է սպառնում, ապա կարելի է ավելի շուտ էլ մկրտել,

ե. մարդ անընդհատ փորձվում է սատանայի կողմից: Հետևաբար, Ս. Մկրտությունը թե՛ մանկան և թե՛ չափահասի դեպքում կարևոր է նաև պաշտպանված լինելու տեսանկյունից:

80. Ի՞նչ վկայություններ ունենք Ս. Գրքում մանկամկրտության մասին:

Այս մասին բառացի վկայություն չունենք Նոր Կտակարանում, բայց սա չի նշանակում, որ մանկամկրտությունն այն ժամանակ ընդունված չէր: Ընդհակառակն՝ նորկտակարանյան բազում հատվածներում խոսվում է, թե ինչպես էին առաքյալները մարդկանց ընտանիքներով՝ տնով, մկրտում: Իսկ տունը կամ ընտանիքը,

բնականաբար, բաղկացած էր ոչ միայն մեծահասակներից, այլ նաև մանուկներից: Մեջբերենք վերոգրյալ սուրբգրային համարները՝

✠ *«Եվ Լիդիա անունով աստվածավախ մի կին, որ Թիվատիր քաղաքից էր և ծիրանի զգեստներ վաճառող, լսում էր, և նրա սիրտը Տերն Ինքն էր բացել՝ անսալու Պողոսի խոսքերին: Երբ մկրտվեցին ինքը և իր տունը»* (Գործք 16. 14-15),

✠ Եվ նրանք ասացին. *«Հավատա՛ Տեր Հիսուս Քրիստոսին և կփրկվես դու և քո ամբողջ տունը»: Եվ նրան ու բոլոր նրանց, որ նրա տանն էին, քարոզեցին Տիրոջ խոսքը: Եվ գիշերվա նույն ժամին տարավ նրանց, վերքերից լվաց, և ինքն ու յուրայինները բոլորն էլ անմիջապես մկրտվեցին»* (Գործք 16. 31-33),

✠ *«Կրիսպոս ժողովրդապետը հավատաց Տիրոջն իր ամբողջ տնով: Նաև կորնթացիներից շատերը նրան լսելով՝ հավատացին և մկրտվեցին»* (Գործք 18. 8),

✠ *«Ստեփանոսի ընտանիքն էլ մկրտեցի»* (Ա Կորնթ. 1. 16),

Բացի այդ, առաքելական շրջանում մանկամկրտությունը շատ տարածված էր և հասկանալի, ուստի կարիք չկար մասնավորեցնելու մկրտվողների տարիքը: Հստակ է, որ Տիրոջ կողմից մկրտվելու պատվերը բոլորի համար է: Եթե շարժվենք այն տրամաբանությամբ, որ մանկամկրտության մասին որևէ բառացի վկայակոչում չկա Աստվածաշնչում, ապա նույն ձևով ուղղակի վկայակոչում չունենք նաև կանանց և տարեցների Մկրտության մասին: Հետևաբար, դա պատճառ չէ մանկամկրտություն չկատարելու համար:

81. Ի՞նչ հայրաբանական և կանոնական վկայություններ ունենք մանկամկրտության մասին[113]:

Իրինեոս Լուգդոնացին († 202) «Ընդդէմ հերձուածողաց» աշխատության 2-րդ գրքի 22-րդ գլխում գրում է. *«Նա եկավ Իր միջոցով փրկելու բոլորին. բոլորին՝ նկատի ունեմ նրանց, ովքեր Նրա միջոցով վերածնվում են Աստծո համար՝ մանուկներին, երեխաներին, պատանիներին, երիտասարդներին և՛ ծերերին»*[114]:

***

Վաղ Եկեղեցու բեղուն հեղինակներից Որոգինեսը (185-253/4) Ս. Պողոսի՝ Հռոմեացիներին ուղղված թղթի մեկնության 5-րդ գրքի 6-րդ գլխում մանկամկրտության ավանդության մասին նշում է, որ Եկեղեցին այն ժառանգել է առաքյալներից: Իսկ Տիրոջ առաքյալները քաջ գիտեին, որ ամեն մարդ ունի ծննդյան աղտոտում, որը մաքրվում է միայն ջրով և Հոգով[115]:

***

Ս. Գրիգոր Աստվածաբանն ասում է. *«Մանուկ ունե՞ս: Վնասվածքին զորանալու ժամանակ մի՛ տուր. թո՛ղ սրբվի մանկական տարիքում և ամենավաղ հասակից նվիրվի Հոգուն: Վախենում ես դրոշմից բնական տկարության պատճառով, ինչպես փոքրոգի ու*

113 Հմմտ. **Dagmar Heller**, Baptized into Christ, p. 79-81, 162-167.

114 Библиотека Отцов и Учителей Церкви, Т. 2, Св. Ириней Лионский, Творения, Паломник, Благовест, 1996, стр. 174.

115 Опыт Православнаго догматическаго богословия с историческим изложением догматов епископа Сильвестра, Т. IV, Киев, 1897, стр. 403.

թերահավատ մայր: Սակայն Աննան ծննդից առաջ էր Սամուելին խոստանում Աստծուն և ծննդից հետո դաստիարակեց և ընծայեց սրբազան գգեստի համար՝ չերկնչելով մարդկային տկարությունից, այլ Աստծուն հավատալով»[116]:

***

Օգոստինոսն ասում է. *«Եկեղեցին վերցրել է առաքյալներից ավանդությունը՝ մկրտելու նաև մանուկներին»*[117]:

***

252 թ. Կիպրիանոս Կարթագենացու առաջնորդությամբ տեղի ունեցած Կարթագենի տեղական ժողովում նույնպես քննարկվել է մանկամկրտության հարցը, բայց ոչ թե մանուկներին մկրտելու կամ չմկրտելու տեսանկյունից, այլ մանկանը պե՞տք է մկրտել ութ օրական հասակում հինկտակարանյան թլփատության օրինակով, թե՞ կարելի է այն կատարել նաև ծննդից հետո՝ երկրորդ կամ երրորդ օրը: Ժողովականները քննարկումներից հետո որոշեցին, որ չպետք է սպասել ութերորդ օրվան, մանուկներին կարելի է մկրտել նաև մինչ այդ: Այս մասին Կիպրիանոսը գրում է Ֆիդ եպիսկոպոսին ուղղված 46-րդ նամակում. *«Ինչ վերաբերում է նորածիններին, որոնց, ըստ քո խոսքերի, պետք չէ մկրտել ծննդից հետո երկրորդ կամ երրորդ օրը, այլ պետք է համա-*

116 Творения иже во святых отца нашего Григория Богослова, Архиепископа Константинопольского, Том 1, стр. 554.

117 Մեջբերումն ըստ հետևյալ հրատարակության. **Протопресвитер Николай Афанасьев**, Вступление в Церковь, Париж, 1952, стр. 102.

պատասխանի թլփատության հին օրենքին...: Ընդհակառակն, մենք՝ բոլորս (նկատի ունի ժողովականներին) *ավելի լավ համարեցինք որևէ ծնվածի չզրկել Աստծո ողորմությունից և շնորհից...: Եթե մեծ մեղավորներին էլ, ովքեր նախկինում մեղանչել են Աստծո դեմ, մեղքերի թողություն է շնորհվում, և ոչ ոքի չեն մերժվում ներումն ու շնորհը, ապա առավել ևս չպետք է արգելվի այն մանկանը, ով, հազիվ ծնված լինելով, ոչ մի բանում չի մեղանչել, այլ միայն, Ադամի մարմնից լինելով, վերցրել է հին մահվան վարակը հենց ծննդյամբ, և որն ավելի հեշտ է մեղքերի թողություն ընդունում, որի ոչ թե սեփական մեղքերն են ներվում, այլ ուրիշներըը»*[118]: Այստեղ նկատի պետք է ունենալ, որ ժողովի մասնակիցների համար հստակ է, որ սկզբնական մեղքը ներվում է միայն Ս. Մկրտությամբ:

***

Մանկամկրտությանն է անդրադառնում նաև 419 թ. Կարթագենի մեկ այլ տեղական ժողովի 124-րդ կանոնը, որին մասնակցում էին 217 եպիսկոպոսներ. *«Ով ժխտում է փոքրերի և մոր որովայնից նոր ծնված երեխաների Մկրտության անհրաժեշտությունը, կամ ասում է, որ թեև նրանք մկրտվում են մեղքերի թողության համար, բայց նախածնողական՝ ադամական մեղքից ոչինչ չեն առնում, որ անհ-*

118 Ancient Christian Writers 46, The works of the fathers in translation, edited by Johannes Quasten, Walter J. Burghardt, Thomas Comerford Lawler, The Letters of St. Cyprian of Carthage, translated and annotated by G. W. Clarke, V. III, Letters 55-66, Newman Press, New York, 1986, p. 110-112.

րաժեշտ լիներ վերստին ծննդյան լվացմամբ մաքրելուն (որից կհետևեր, որ մեղքերի թողության համար Մկրտության կարգը նրանց վրա կիրառվում է ոչ թե իրական, այլ կեղծ նշանակությամբ), նա թող նզովյալ լինի: Քանի որ ըստ առաքյալի խոսքի՝ «Մեկ մարդով մեղքն աշխարհ մտավ, և մեղքով էլ՝ մահը, այնպես էլ բոլոր մարդկանց մեջ տարածվեց մահը, որովհետև բոլորն էլ մեղանչեցին» (Հռոմ. 5. 12), պետք է հասկանալ ոչ այլ կերպ, եթե ոչ այնպես, ինչպես միշտ հասկացել է ամենուր սփռված և տարածված Ընդհանրական եկեղեցին, քանի որ, ըստ հավատի այս օրենքի, մանուկներն էլ, իրենք որևէ մեղք գործելու դեռ անկարող, իրապես մկրտվում են մեղքերի թողության համար, որպեսզի վերստին ծննդյամբ նրանց մեջ մաքրվի այն, ինչ փոխ են առել հին ծննդից»[119]:

***

Ս. Դիոնիսիոս Արեոպագացին (Ե դ.) ասում է, որ աստվածային դաստիարակներին (առաքյալներին) թույլատրվեց Մկրտության թողնել նաև մանուկներին այն սուրբ պատճառով, որպեսզի երեխայի իսկական ծնողները հանձնեին նրան հավատացյալներից մեկին, ով իսկապես կդաստիարակեր նրան աստվածային գործերով և կխնամեր երեխային հոր նման[120]:

---

119 Поместный Собор-Карфагенский. http://www.agioskanon.ru/sobor/014.htm.

120 **Дионисий Ареопагит**, Сочинения, Максим Исповедник, Толкования, Санкт-Петербург, 2002, стр. 733; The Armenian Version of the works attributed to Dionysius the Areopagite, edited by Robert W. Thomson, Lovanii, 1987, Corpus Scriptorum Christianorum Orienta-



82. Ի՞նչ կարիք կա մանուկներին մկրտելու, եթե Ս. Գրքում ասվում է, որ «այդպիսիներինն է երկնքի արքայությունը» (Մատթ. 19. 14, Մարկ. 10. 14, Ղուկ. 18. 16):

Հիսուս Ավետարանում իսկապես մի քանի անգամ պնդում է, որ եթե չդառնանք ու չլինենք մանուկների նման, ապա չենք կարող ժառանգել երկնքի արքայությունը: Չպետք է սխալ եզրակացության հանգել սրանից և մտածել, որ մանուկներից ոչինչ չի պահանջվում, նրանք փրկվում են պարզապես իրենց մանուկ լինելու շնորհիվ: Քանզի բոլորը՝ այդ թվում նաև մանուկները, ծնվում են ադամական մեղքով, իսկ դրանից ձերբազատվելու միակ ճանապարհը Ս. Մկրտությունն է: Քրիստոս այստեղ նկատի ունի, որ փրկության են արժանանում նրանք, ովքեր մանուկների նման անմեղ են և մաքուր, չունեն չարություն և շահադիտական նպատակներ, ինչպիսին փարիսեցիներն ու սադուկեցիներն էին:

83. Ինչո՞ւ պետք է մկրտել մանուկներին, եթե նրանք անհրաժեշտ գիտակցություն և հավատ չունեն:

Ս. Մկրտությունը Քրիստոսով փրկության ճանապարհի սկիզբն է, որի կարիքն ունեն անխտիր բոլորը: Ճիշտ է, մանուկը չունի համապատասխան գիտելիքներ և գիտակցություն՝ հասկանալու համար Եկեղեցու խորհուրդները, բայց նրան էլ անհրաժեշտ է Աստծո շնորհը, Քրիստո-

---

lium, Vol. 448, Scriptores Armeniaci, Tomus 17, p. 125-126.

սով փրկագնված լինելն ու Տիրոջ օրհնության ներքո ապրելը: Ի վերջո՝ Եկեղեցին պարզապես մարդկանց հավաքականություն չէ, այլ կենդանի հաղորդակցություն և հարաբերություն Աստծո հետ: Միթե երեխան կարիք չունի այս ամենի, ինչո՞ւ ենք նրան զրկում Տիրոջ հետ մտերմությունից և քրիստոնեական կյանքի բարիքները վայելելուց: Հենց այս նկատառումով էլ Եկեղեցին սահմանել է կնքահայրությունը, քանզի կնքահայրը հենց այն անձն է, ով Ս. Մկրտության արարողության ժամանակ մկրտվողի հավատքի երաշխավորն է, ինչպես նաև հոգևոր կյանքում նրան առաջնորդողն ու խրատողը: Եկեղեցու ցանկությունն է, որ մանուկը, փոքր հասակում մկրտվելով, զրկված չլինի աստվածային շնորհներից և Տիրոջ օրհնությունից՝ հասակ առնելով քրիստոնյա ընտանիքում և միջավայրում:

84. Արդյոք մանկամկրտությունը դե՞մ չէ մարդու ազատ կամքին, քանզի մանկան փոխարեն ուրիշներն են որոշում:

Յուրաքանչյուր ծնողի պարտականությունն է իր զավակին սնել, խնամել, մեծացնել, հագցնել, դաստիարակել, ինչպես նաև պատասխանատու լինել նրա հոգեմտավոր աճի համար: Մանուկներն իրենց տարիքի պատճառով շատ հաճախ չեն գիտակցում իրենց օգուտը: Ծնողներն իրենց իմաստությամբ և կենսափորձով շատ անգամ որոշումներ են ընդունում նրանց փոխարեն, քանզի միայն նրանց բարին են ցանկանում: Օր.՝ ընդունված է զանազան հիվան-



դությունների դեմ պատվաստումներ կատարել: Բնականաբար, երեխան չի կարող ամբողջությամբ գիտակցել դրա կարևորությունը: Բայց ծնողը շատ լավ հասկանում է, որ դրանք անհրաժեշտ են մանկան համար, ուստի անպայման համապատասխան տարիքում կատարում է այդ պատվաստումները: Նույնն է նաև Ս. Մկրտության դեպքում: Այս խորհուրդն էլ ինքնատիպ «պատվաստում» է՝ չարից պաշտպանվելու և Քրիստոսի Եկեղեցուն անդամագրվելու համար:

85. Ի՞նչ է սպասվում անկնունք մահացած մանուկներին:

Բնականաբար, ամեն երեխայի անժամանակ մահն անդառնալի ցավ և կորուստ է ծնողների համար: Բայց այն առավել խորն է և ուժգին, երբ քրիստոնյա ծնողները գիտակցում են, որ իրենց զավակն անկնունք է մահացել: Նման դեպքերում ծնողներին ասել, որ իրենց զավակը փրկություն չունի, պարզապես կսպանի նրանց և է՛լ ավելի կխորացնի նրանց՝ առանց այդ էլ անմխիթար վիճակը: Եկեղեցու հայրերն ու վարդապետները նույնպես այս հարցում շատ զգուշավոր են՝ մանուկների վերջնական դատաստանը թողնելով Աստծուն: Միևնույն ժամանակ հստակ է, որ Եկեղեցու ծիսագործնական կյանքում որևէ կարգ չի կատարվում չմկրտվածի վրա:

Ինչպես նշել ենք, ամեն մարդ ծնվում է ադամական մեղքով, որը ջնջվում է միայն Ս. Մկրտությամբ: Հետևաբար, անկնունք մահացած երեխաները նույնպես չափահաս մյուս չմկրտվածների

նման հանդերձյալ կյանք են մտնում՝ սպասելով իրենց դատաստանին: Ըստ Եկեղեցու որոշ հայրերի՝ քանի որ մանուկներն իրենց անմեղությամբ և պարզությամբ Աստծո բաժինն են համարվում, նրանք ոչ թե դատապարտվելու են հավիտենական տանջանքների, այլ վայելելու են մի երանություն, որտեղ չնայած չկան հավիտենական տանջանքները, բայց նաև բացակայում է դրախտային երանական վիճակը: Երանաշնորհ Շնորհք եպս. Գալուստյանը խնդրի վերաբերյալ ասում է. *«Անկնունք մեռնող մանկունք, թէև Քրիստոնէի մը յատուկ երանական տեսութենէն զրկուած են, սակայն կը վայելեն այն բնական երանութիւնը, որ Աստուծոյ բարութենէն պարգեւուած է անոնց, որոնք բնական օրինաց հետեւելով հասած են Աստուծոյ բնական ճանաչումին և ապրած են, որուած պայմաններու տակ, բարոյականի յատուկ կեանք մը»*[121]: 12 վարդապետներից Ս. Աթանաս Ալեքսանդրացին իր «Հարցմունք»-ում և Ս. Գրիգոր Աստվածաբանը Մկրտության մասին ճառում նշում

121 **Շնորհք եպիսկոպոս Գալուստեան**, Տեղիք աստուածաբանութեան, Երուսաղէմ, 1993, էջ 74-75: Այս պատկերացումներն արտացոլվել են նաև ժողովրդական զանազան սովորությունների մեջ: Օր.՝ Բաղեշում, երբ նորածինն անկնունք էր մեռնում, ընտանեկան քավորը քահանային 3-5 դուրուշ էր տալիս, որ «խաչ օծէ»: Հոգևորականը Մկրտության Ս. Ավազանի մոտ խաչ էր անում կամ փոքրիկ պղնձե խաչ օծում Ավետարանի կամ սրբապատկերի վրա, որից հետո այն կապում էր Ավազանի պատուհանին: Սա խորհրդանշում էր, որ այդ նորածինը նվիրվել է եկեղեցուն և մեռնված է. տե՛ս **Ռաֆիկ Նահապետյան,** Նորածնի մկրտությունը որպես նրա հասարակական ճանաչման փուլ, Հայ ժողովրդական մշակույթ, XIV, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, 2007, էջ 230:

են, որ անկնունք մահացածները ո՛չ տանջվելու են, ո՛չ էլ վայելելու են երկնքի արքայությունը[122]: Իսկ Դավիթ Ալավկա Որդին անկնունք մեռած, բայց անմեղ մանուկների համար ասում է, որ նրանց կարելի է խաչով և օրհնությամբ թաղել, քանզի ծնվել են քրիստոնյա ծնողներից: Նույնն է պատվիրում նաև այն դեպքում, երբ երեխան մոր արգանդում երկու կամ երեք ամսականում մեռած է ծնվում[123]: Հետաքրքրական է, որ անկնունք մանուկներին թաղել են գերեզմանոցների ծայրերում կամ առանձին վայրերում: Օր.՝ Հնդկաստանի հայկական գերեզմանատներում անկնունք մահացած մանուկների գերեզմանների վրա պարզապես խաչ է փորագրված՝ առանց որևէ արձանագրության:

Ինչպես տեսնում ենք, այս հարցում Եկեղեցում միասնական կարծիք չկա: Նման դեպքերում Եկեղեցին հորդորում է ծնողներին, որ մշտապես աղոթեն անկնունք մահացած իրենց զավակների համար և խնդրեն ամենակարող Աստծուց, որ Վերջին դատաստանին նրանց Իր անսահման ողորմությամբ դատի և ոչ թե արդարությամբ:

---

122 Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք և ընդդիմաս[ա]գութիւնք, Վենետիկ, 1899, էջ 378, Творения иже во святых отца нашего Григория Богослова, Архиепископа Константинопольского, Том 1, стр. 558.

123 The penitential of David of Ganjak, edited by C. J. F. Dowsett, Corpus Scriptorum Christianorum Orientalum, V. 216, Scriptores Armeniaci, Tomus 3, Louvain, 1961, p. 39, Մատենագիրք հայոց, ԺՉ. հատոր, ԺԱ. դար, էջ 696:

86. Մահամերձ մանուկը կամ չափահասը կարո՞ղ են անմիջապես մկրտվել:

Այո՛, քանզի մարդու փրկությունն առաջնային է, եթե նման խնդրանքով դիմեն այդ երեխայի կամ չափահասի ծնողները, հարազատները, կամ նրանք անձնապես ակնարկեն այդ մասին: Ս. Աթանաս Ալեքսանդրացու կանոնախմբի 38-րդ կանոնում ասվում է, որ եթե մահվան սպառնալիքի դեպքում երախան չկարողանա խոսել, բերանով խոստովանել իր մեղքերը, ասել «Հավատամքը» և միայն ակնարկի, որ մկրտվել է ուզում, ապա տվյալ մարդուն անպայման պետք է մկրտել[124]: Ըստ 343 թ. Լավոդիկեի ժողովի 44-րդ (ուղղափառների մոտ՝ 47-րդ) կանոնի՝ հիվանդն առողջանալուց հետո անպայման պետք է հավատքի դավանությունը սովորի[125]: Իսկ Ս. Բարսեղ Կեսարացու կանոնախմբի 232-րդ կանոնում նշվում է, եթե Ս. Պատարագի ժամանակ մահամերձ մանուկ երախայի բերեն եկեղեցի, ապա քահանան պիտի դադարեցնի Ս. Պատարագը, մկրտի այդ մանկանը, ապա շարունակի Ս. Պատարագն իր թողած տեղից[126]: Նույն կանոնախմբի հաջորդ կանոնն արդեն այն պարագայի մասին է, երբ քահանան սկսում է Ս. Մկրտության արարողությունը և հանկարծ մանուկը մահանում է[127]: Ըստ Ս. Բարսեղի՝ քահանան նման դեպքում պիտի դրոշմի նրան, քանզի հո-

124 Կանոնագիրք հայոց, հ. Ա, էջ 306:

125 Նույն տեղում, էջ 238:

126 Կանոնագիրք հայոց, հ. Բ, էջ 164:

127 Նույն տեղում:

գին ավանդեց հրեշտակի ձեռքերում, ապա կարող է նաև թաղման կարգ կատարել: Այս մասին է նաև Պարտավի ժողովի 20-րդ կանոնը: Եթե երախան հիվանդ լինի, նրա ընտանիքի անդամները գան քահանային կանչելու, և տվյալ հոգևորականը զգա, որ երախան կարող է անկնունք մեռնել, ապա Ս. Մկրտության արարողությունը նա կարող է սկսել ճանապարհին: Եթե երախան քահանայի հասնելու ժամանակ մահանա, ապա տվյալ հոգևորականը խաչով կարող է կնքել նրա գլուխը և հետո թաղման կարգ կատարել[128]:

87. Ինչպե՞ս վարվել, երբ ծնողները երեխային բերում են մկրտելու, բայց երկուսն էլ կամ ծնողներից մեկը մկրտված չէ:

Անշուշտ, գովելի է, երբ ծնողները մտածում են իրենց զավակի փրկության համար: Բայց կարևոր է նաև նրանց մկրտված լինելը, քանզի քրիստոնյան պետք է հասակ առնի և մեծանա քրիստոնյա ընտանիքում, ուր հայրը և մայրը նույնպես քրիստոնյա են և նույն արժեքային համակարգի կրողները: Նման դեպքերում սովորաբար քահանաները նախ մկրտում են ծնողներին կամ ծնողին, ապա նոր երեխային: Եթե անգամ երեխայի ծնողները մկրտված չեն, ապա քահանան չի կարող մերժել երեխայի Մկրտությունը:

128 Կանոնագիրք հայոց, հ. Բ, էջ 15-16, հմմտ. **Համազասպ քհնյ. Առաքելեան**, Մկրտութեան խորհուրդը, Նոր Ջուղա, 1984, էջ 22-23:

ԿՆՔԱՀԱՅՐՈՒԹՅՈՒՆ

88. Ո՞վ է կնքահայրը:

Կնքահայրը մկրտվողի հոգևոր ծնողն ու դաստիարակն է, որին վստահված է նրա հոգևոր կյանքի մեջ աճն ու զարգացումը: «Կնքահայր» բառին զուգահեռ հայոց լեզվում օգտագործվել են նաև «կնքաւոր», «երաշխաւոր» և «վկայ» անվանումները: Ժողովրդական լեզվում տարածված «քավոր» բառը «կնքաւոր»-ի կրճատ տարբերակն է:

89. Ո՞րն է կնքահոր պարտականությունը:

Եթե ծնողների պարտականությունն է զավակին մեծացնելը, սնելը, հագցնելը, երկրի և հասարակության համար պիտանի մարդ դաստիարակելը, ապա կնքահայրը ոչ միայն իր սանիկի հավատքի երաշխավորն է Ս. Մկրտության խորհրդի ժամանակ, այլ նաև կարևոր և սուրբ պարտականություն ունի՝ այսուհետ ծնողներին հավասար նրան խրատելու, սովորեցնելու և միշտ ճիշտ ճանապարհի վրա դնելու՝ դաստիարակելով նրան Հայոց Եկեղեցու ուղղափառ մտածողությամբ և Սրբազան Ավանդություններով[129]: Կնքահայրությունը Եկեղեցու կողմից

129 Տե՛ս Таинсво Святого Крещения и обязанности восприемников, Москва, 2011, стр. 57-62; **Священник Андрей Шевчук**, О Таинстве Крещения, Минск, 2009, 15-17, О крестных родителях, Москва, 2011, стр. 11-30.

սահմանված ձևական մի պաշտոն չէ, ուստի կնքահայրերն իրենց վստահված այս պարտականությանը պետք է մոտենան ամենայն լրջությամբ և պատասխանատվությամբ: Այն սկսվում է Ս. Մկրտությամբ և շարունակվում ողջ կյանքի ընթացքում: Չէ՞ որ նրանք էլ մեկ օր պատասխան պիտի տան իրենց արածի կամ չարածի համար Աստծո առաջ:

90. Ինչպիսի՞ն էր կնքահայրությունը Վաղ Եկեղեցում:

Սկզբնական շրջանում մանուկների համար կնքահայր էին դառնում հենց նրանց ծնողները, իսկ մեծահասակների դեպքում՝ տվյալ քրիստոնեական համայնքի ներկայացուցիչներից, ովքեր եպիսկոպոսի մոտ վկայում էին երախայի պատրաստակամության և նրա կյանքի մասին: Երբ արդեն 4-րդ դարում ավելացավ մկրտվողների քանակը, բնականաբար, մեծացավ նաև կնքահայրության անհրաժեշտությունը: Նկատի պետք է ունենալ, որ մեծ քաղաքներում հոգևորականները ֆիզիկապես չէին կարող իմանալ բոլոր մկրտվողների պատրաստության աստիճանի կամ նրանց կյանքի մանրամասների մասին, ուստի կնքահայրը հենց այն մարդն էր, ով պարտականություն ուներ վկայելու նրա մասին, ուսուցանելու և պատրաստելու նրան Ս. Մկրտության խորհուրդն ընդունելու համար: Չպետք է մոռանալ, որ արդեն 5-րդ դարում մանկամկրտությունը սովորական երևույթ էր Եկեղեցու կյանքում, որոշակի զարգացում և իր մնայուն

տեղն ուներ նաև կնքահայրությունը մեծահասակների դեպքում: Աստիճանաբար մանուկ մկրտյալների համար կնքահայր էին դառնում ոչ թե ծնողները, այլ ուրիշներ: Խնդիրը սուր էր հատկապես որբերի, անհայտ ծնողների զավակների և ստրուկների դեպքերում: Այս փոփոխության պատճառը հավանաբար Ս. Մկրտության խորհրդով մկրտյալի և կնքահոր միջև ստեղծված հոգևոր ազգակցությունն էր, ինչպես նաև մարմնավոր ծնողներից բացի հոգևոր ծնող ունենալու հանգամանքը: 5-րդ դարում Լևոն Մեծ պապը († 461) դեմ էր, որ ծնողները լինեին նաև իրենց զավակների հոգևոր ծնողները, իսկ 813 թ. Մայնցի ժողովը կտրականապես արգելեց այն: Կաթոլիկ և Ուղղափառ Եկեղեցիներում մարդ կարող է ունենալ տարբեր սեռերի մեկից ավելի կնքահայր կամ կնքամայր: 1545-1563 թթ. Տրիդենտյան ժողովը սահմանեց, որ նույն սեռի մկրտվողը կարող է ունենալ կա՛մ նույն սեռի կնքահայր, կնքամայր, կա՛մ էլ միաժամանակ երկուսն էլ: Այս սովորությունն այժմ էլ կիրառվում է Ուղղափառ Եկեղեցիներում: Մեր Եկեղեցում մարդ մեկ կնքահայր է ունենում:

91. Ի՞նչ հին վկայություններ ունենք կնքահայրության մասին:

Կնքահայրության մասին վաղագույն վկայություններից մեկը պահպանվել է 2-3-րդ դդ. հայտնի աստվածաբան Հիպոլիտոս Հռոմեացու (170-235) «Առաքելական ավանդություն» աշխատության մեջ. *«Թող հարցնեն նրանց պատ-*

ճառի մասին, որի արդյունքում հավատքի են գալիս: Եվ նրանք, ովքեր նրանց բերել են, թող վկայեն, որ եկածները պատրաստ են խոսքի ունկնդրմանը: Թող հարցնեն նրանց կյանքի մասին»[130]: Այդ ժամանակ կնքահայրը մկրտվել ցանկացողին եկեղեցի էր բերում և վկայում, որ նա պատրաստ է անցնել երախայության՝ Ս. Մկրտության պատրաստության շրջանը, ինչպես նաև վկայում էր ընծայացուի կենցաղավարության մասին: Այլ խոսքով՝ կնքահայրն իր սանիկի համար պատասխանատվություն էր ստանձնում Եկեղեցու առաջ՝ վկայում էր նրա մասին, առաջնորդում եկեղեցի, և իբրև Քրիստոսի Մարմնի նոր անդամի՝ նրան իր գիրկն էր վերցնում Ս. Ավազանից ծնվելուց հետո:

***

Ըստ Անտիոքի աստվածաբանական դպրոցի ներկայացուցիչ, ժամանակի նշանավոր աստվածաբան Թեոդորոս Մոփսուեստացու († 428)՝ կնքահայրը մկրտյալի խրատատուն և առաջնորդողն է երկնքի արքայության մեջ, որոնց երկուսի անունն էլ գրվում է կենաց գրքում: Այս խորհրդով մկրտվածը, երկրից լինելով, անմիջապես դառնում է երկնքի քաղաքացի, որի քաղաքացիությունն արդեն ունի կնքահայրը, ուստի պարտավոր է իր սանիկին ուսուցանել և ծանոթացնել երկնքի բոլոր նրբություններին[131]:

130 **Священномученик Ипполит Римский**, Апостольское предание. http://azbyka.ru/otechnik/Ippolit_Rimskij/Apostolskoe_predanie/.

131 **Протопресвитер Александр Шмеман**, Водою и духом, стр. 204.

***

Ս. Հովհան Ոսկեբերանը, Ս. Մկրտության պատրաստության ժամանակ դիմելով երախային և նրա կնքահորը, մասնավոր անդրադարձ է կատարում կնքահոր պարտականություններին: Վերջինս պետք է մեծ խնամք ցուցաբերի իր ապագա սանիկի հանդեպ, խրատի նրան և հայրական սեր ցուցաբերի. *«Եվ թող չմտածեն, որ կատարվածն իրենց համար նշանակություն չունի, այլ թող հաստատ գիտենան, որ փառքին էլ մասնակից կլինեն, եթե իրենց հորդորներով հորդորվողներին առաքինության ճանապարհի վրա դնեն, իսկ եթե անգործության մատնվեն, ապա կրկին շատ բաներ իրենց համար դատապարտություն կդառնան: Ուստի, այս պատճառով սովորություն է նրանց «հոգևոր հայրեր» անվանելը, որպեսզի հենց գործերի միջոցով իմանան, թե ինչպիսի՛ սեր պիտի տածեն հոգևորի մասին խրատելիս: Քանզի եթե գովելի է առաքինության մղել նրանց, ովքեր որևէ կերպ հարազատ չեն հանդիսանում, ապա ինչքա՜ն առավել այն, ինչ պետք է իրագործենք նրա հանդեպ, ում իբրև հոգևոր զավակ ենք ընդունում: Իմացաք այժմ նաև դո՛ւք, կնքահայրե՛ր, որ ձեզ քիչ վտանգ չի սպառնում, եթե անգործության մատնվեք»*[132]:

132 Ancient Christian writers 31, The works of the fathers in translation, edited by Johannes Quasten, Walter J. Burghardt, St. John Chrysostom, Baptismal instructions, translated and annotated by Paul W. Harkins, Newman Press, New York, 1963, p. 48-49.

92. Ի՞նչ են ասում Հայոց Եկեղեցու վարդապետները կնքահոր և նրա պարտականությունների մասին:

Հայոց Եկեղեցու ավանդության մեջ կնքահայրը դիտվել է ոչ միայն Ս. Մկրտության պահին որոշակի գործառույթներ ունեցող անձ, այլ հոգևոր հայր, ով իր կենցաղավարությամբ և ուղղափառ դավանանքով օրինակ պիտի լինի մկրտյալի համար և առաջնորդի նրան հավատքի կյանքի մեջ: Ուստի Հայոց Եկեղեցու բանիմաց վարդապետներն իրենց գրվածքներում կնքահոր պարտականությունների մեջ շեշտում են հոգևոր խրատատուի դերակատարությունը, որի սրբազան պարտքն է նաև իր սանիկին մայրենի լեզվով ուսուցանել հայոց դավանանքը: Այսպես՝ Հովհաննես Երզնկացի Պլուզը, խոսելով կնքահոր մասին, ասում է. *«Եվ պետք է ընտրեն սուրբ և անարատ կնքահայր՝ ոչ հայհոյող, ոչ շնացող, այլ լավ քրիստոնյա, մաքուր և գիտուն»*[133]: Երզնկայի դպրոցի մեկ այլ նշանավոր րաբունապետ Կիրակոս Երզնկացին «Բանք խրատականք» աշխատության մեջ նույնպես խոսում է կնքահոր պարտականությունների մասին, որին անվանում է «սանահայր»: Ըստ նրա՝ սանահայրը պետք է խնամի մանկանը և ամեն ինչ անի, որպեսզի մանուկը լավ լինի՝ օգնելով ծնողներին դաստիարակության հարցերում, մինչև երեխայի չափահաս դառնալը: Երբ երեխան արդեն 15 տարեկան լինի, կնքահայրը նրան պետք է տանի եկեղեցի, քահանայի ու աշխարհականների

133 **Է. Մ. Բաղդասարյան**, նշվ. աշխ., էջ 151:

առաջ ասել տա «Հրաժարիմքը» և հավատքի խոստովանությունը: Եվ դրանից հետո չափահասը պարտավոր է մեղքերի խոստովանության մասնակցել և Ս. Հաղորդություն ստանալ[134]: Իսկ Եսայի վրդ. Նչեցին հավելում է. *«Որովհետև կնքահայրը երեք գործառույթ ունի. խրատող է, որ սովորեցնում է, երաշխավոր է, որ պահում է, որպեսզի վատ ընկերոջ հետ չշրջի, վկայում է, որ քրիստոնյա է: երբ երեխան խելահաս է դառնում, խաչ հանել է սովորեցնում, երբ ոտքի է կանգնում ծնրադրել, երբ սկսում է խոսել՝ հայոց դավանանքը»*[135]: Միայն այս երեք նշանավոր վարդապետներից մեջբերումները բավարար են՝ ցույց տալու համար, թե ի՛նչ կարևորություն է տվել մեր Եկեղեցին կնքահորը: Ուստի ծնողները և չափահաս մկրտյալները կնքահոր ընտրության հարցում պետք է լինեն առավել նախանձախնդիր և ուշադիր:

93. Ո՞վ կարող է կնքահայր լինել մեր Եկեղեցում:

Կնքահայրը պետք է լինի՝

✠ **արական սեռի**,

✠ **Հայոց Եկեղեցու զավակ**, այսինքն՝ մեր Եկեղեցում մկրտված և դրոշմված կամ այլ Եկեղեցում մկրտված, բայց Հայոց Եկեղեցուն ան-

134 **Ձաքարիա վարդապետ Բաղումյան**, Կիրակոս վարդապետ Երզնկացու «Բանք խրատականք» երկը, «Էջմիածին», Ե, 2013, էջ 83:

135 Թուղթ Եսայեայ վարդապետի առ Տէր Մատթէոս, «Ճռաքաղ» ամսագիր կրօնական, բանասիրական և ազգային գիտելեաց, հրատարակեալ ի Մսերայ Մագիստրոսէ Մսերեանց և ի Զարմայրայ Մսերեանց, հ. Բ, տետրակ Ժ, Մոսքուա, 1860, էջ 206:



դամագրված[136]: Այս մասին երջանկահիշատակ Շնորհք արք. Գալուստյանը (1913-1990) շատ հստակ բացատրում է. «**Հայ Եկեղեցիի անդամ** պէտք է ըլլայ կնքահայրը, որովհետև ան երախան կը ներկայացնէ, որպէսզի անդամ դառնայ Հայ Եկեղեցիին: Եթէ ինք անդամ չէ՝ իրաւասու չէ առաջարկելու որևէ երախայ Հայ Եկեղեցիի անդամակցութեան. ո՛չ իրաւունք և ո՛չ ալ ոևէ հանգամանք ունի Հայ Եկեղեցիի անդամ չեղող մը միջնորդ հանդիսանալու մէկու մը Հայ Եկեղեցիի զաւակ դառնալուն: Երկրորդ՝ Հայ Եկեղեցիի **հաղորդական անդամ** պէտք է ըլլայ, որովհետև կնքահայրն է, որ տակաւ առ տակաւ պիտի վարժեցնէ և սորվեցնէ մկրտեալ իր սանին Հայ Եկեղեցիի տարրական կրօնական սովորութիւնները և կարգ կանոնը, որոնց մէջ առաջին հերթին կուգայ պարբերաբար **Ս. Հաղորդութիւն առնելը**: Եթէ կնքահայրը ինք չի հաղորդուիր, ինչպե՞ս կրնայ իր սանը առաջնորդել Ս. Հաղորդութեան»[137]:

---

136 Օր.՝ եթե մեկը մկրտվել է Կաթոլիկ կամ Ուղղափառ Եկեղեցիներից մեկում, բայց հետո մեր Եկեղեցուն է անդամակցել և Ս. Հաղորդություն է ստանում Հայոց Եկեղեցում, ապա տվյալ մարդը նույնպես կարող է կնքահայր դառնալ Հայոց Եկեղեցում:

137 Մաշտոց, որ կը պարունակէ միայն Ս. Մկրտութեան, Ս. Պսակի և թաղման խորհրդակատարութիւնները թեթեւօրէն յապաւեալ՝ աշխարհաբար թարգմանութիւններով՝ ըստ հրամանի Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի Ամենայն Հայոց ձեռամբ Տ. Շնորհք արքեպիսկոպոսի՝ Պատրիարքին Հայոց Թուրքիոյ, Իսթանպուլ, 1985, էջ 10-11, նաև տե՛ս **Մաղաքիա արքեպս. Օրմանեան**, Տեղիք աստուածաբանութեան, Տեսական աստուածաբանութիւն, Երուսաղէմ, 1985, էջ 241: Պոլսական ավանդության մեջ այժմ էլ կնքահայրը պետք է Ս. Հաղորդություն ստանա նախքան Ս. Մկրտությունը,

✠ **չափահաս**: Նախընտրելի է, որ մանկան պարագային կնքահայրը գոնե շուրջ 20 տարեկան լինի, իսկ չափահասի դեպքում՝ մկրտվողից մի քանի տարի մեծ՝ ստանձնելու համար հոգևոր դաստիարակի իր պարտականությունները:

✠ **ուղղափառ հավատքի տեր, առաքինի և պարկեշտ կյանքով ապրող մարդ**, ով քաջատեղյակ է քրիստոնեությանը, հավատքի կարևոր սկզբունքներին, Հայոց Եկեղեցու սրբազան խորհուրդներին և այլն, որպեսզի իր կենդանի օրինակով կարողանա վկայել, երաշխավոր ու հոգևոր խնամակալ դառնալ մկրտվողի համար: Եվ ամենակարևորը՝ նա պետք է նոր մկրտվածին դաստիարակի այն Եկեղեցու ոգով, որի անդամն է ինքը: Եթե կնքահայրն ամուսնացած է, ապա պետք է ընտանիքի լավ հայր և օրինակ լինի մյուսների համար: Իսկ եթե ամուրի է, ապա նրա բարոյական նկարագրի մասին պիտի վկայեն ուրիշները: Այլ խոսքով՝ կնքահայրն իր ընտանիքով և նկարագրով տիպար օրինակ պետք է լինի:

94. Ովքե՞ր չեն կարող կնքահայր լինել:

Կնքահայր չեն կարող լինել՝

✠ անչափահասներ,

✠ անհավատներ,

✠ այլազգիներ,

ինչպես նաև Ս. Պսակի խաչեղբայրը՝ նախքան արարողությունը: Իսկապես գեղեցիկ սովորություն է, որն արժե կիրառել նաև Հայաստանում՝ առավել պատասխանատվության և զգոնության կոչելով կնքահորը:



- այլադավաններ,
- այլակրոններ,
- հոգեկան հիվանդներ,
- ընտանիքի անդամներ,
- մկրտվող կնոջ դեպքում նրա կենակիցը,
- կանայք:

95. Ինչո՞ւ այլազգին կամ անհավատը չեն կարող կնքահայր լինել:

Հայոց Եկեղեցում այլազգիների՝ կնքահայր լինել կամ չլինելու խնդիրը քննարկման նյութ է եղել դեռևս 12-14-րդ դարերում: Նման երևույթի դեմ են պայքարել մեր եռամեծ վարդապետներն ու հայրերը: Այդ ժամանակ օտարազգի կնքահայր ընտրելու պատճառներից էին տարբեր ժողովուրդների հետ երկար համակեցությունը և քաղաքական դրդապատճառներով տիրապետող ազգի ներկայացուցչի հովանավորությունն ունենալու ցանկությունը: Բնականաբար, պետականության բացակայության և մեր երկրում օտարալեզու տարրի առկայության պայմաններում այլազգի կնքահայր ունենալը վտանգում էր հայերի ազգային դիմագծի պահպանումը և մեծացնում ուծացվելու վտանգը: Ուստի ժամանակաշրջանի մատենագիրները մեծ ուշադրություն են դարձրել այս խնդրին:

11-12-րդ դարերի հեղինակ Դավիթ վրդ. Ալավկա Որդու կանոնագրքի 21-րդ գլխում մասնավորապես ասվում է. *«Բայց ամենևին բովանդակ խորհրդով պետք է հրաժարվել այլազգիների կնքահայրությունից, որովհետև հավատացյալն ինչ բաժին*

ունի անհավատի և կամ Քրիստոս՝ Բելիարի հետ»[138]: Իսկ Ս. Ներսես Շնորհալին իր «Ընդհանրական թղթում» անհավատի մասին ասում է. *«Եվ թող անհավատ տղամարդկանցից կամ կանանցից, ովքեր Քրիստոսի երկրպագուները չեն, որևէ մեկը մկրտվող մանուկների կնքահայր չդարձնի, որովհետև ինչպես կարող են ուրիշին տալ այն, ինչ իրենք չունեն, այսինքն՝ Ս. Երրորդության խոստովանությունը, երբ քահանան մկրտվողի փոխարեն հավատքի դավանություն է պահանջում»*[139]:

Նույն խնդիրն առկա էր նաև բուն Հայաստանում: Հովհաննես Պլուզ րաբունապետը նույնպես շատ կտրուկ է արտահայտվում այս հարցի շուրջ. *«Այլազգի կնքահայր մի՛ ունեցեք»*[140]: Իսկ Եսայի Նչեցի րաբունապետը պարզապես հորդորում է այլազգի քրիստոնյաներից կնքահայր չունենալ, քանզի նրանք չունեն հայոց դավանանքը, ինչպես նաև շեշտում է մայրենի լեզվով մեր դավանանքի խոստովանության անհրաժեշտությունը[141]: Ե՛վ Հովհաննես Երզնկացին, և՛ Եսայի Նչեցին ազգային դիմագծի պահպանման գործում մեծ տեղ են հատկացնում մասնավորապես հայոց լեզվի պահպանության խնդրին: Մեր

---

138 The penitential of David of Ganjak, p. 22, Դաւիթ վարդապետ Ալաւկայ որդի, որ գրեաց զկանոնական աւրէնսդրութիւնս գեղեցկայարմարս և պիտանացուս ի խնդրոց քահանայի միոջ, որում անուն էր Արքայութիւն՝ ի քաղաքէն Գանձակայ. Մատենագիրք հայոց, ԺՉ. հատոր, ԺԱ. դար, էջ 687:

139 Թուղթ ընդհանրական, էջ 92:

140 **Է. Մ. Բաղդասարյան**, նշվ. աշխ., էջ 151:

141 Թուղթ Եսայեայ վարդապետի առ Տէր Մատթէոս, էջ 206:



մյուս եռամեծ վարդապետ Ս. Գրիգոր Տաթևացին, մանկան հոգևոր դաստիարակության գործում նույնպես բացառում է այլազգի կնքահոր ընտրությունը՝ տալով հետևյալ բացատրությունը. *«Սուրբ հավատք չունի, չի հրաժարվել սատանայից, ուստի չի կարող լեզու կամ երաշխավոր լինել մանկանը, քանի որ նա, ով հավատք չունի, ուրիշներին միջնորդ չի կարող լինել»*[142]: Այսօր էլ իրականությունը չի փոխվել: Արտագաղթի, օտարանալու մոլուցքի և երբեմն ազգային բարձր գիտակցության բացակայության պայմաններում մեր Եկեղեցին կրկին հորդորում է՝ կնքահոր ընտրության հարցին մոտենալ ամենայն պատասխանատվությամբ և ընտրել Հայոց Եկեղեցու և նախընտրաբար ազգությամբ հայ մի զավակի, ով քաջատեղյակ է առաքելական մեր սուրբ Եկեղեցու դավանանքին և նրա կարգ ու կանոնին:

96. Հայրը, եղբայրը, պապը կարո՞ղ են կնքահայր լինել:

Ըստ Եպիսկոպոսաց ժողովում ընդունված ուղեցույցի՝ չեն կարող լինել[143]: Այսօր մարդիկ տարբեր պատճառներով, այդ թվում՝ նաև ֆինանսական, նախընտրում են կնքահայր ընտրել ընտանիքի անդամներից մեկին կամ մոտ ազգականին: Նկատի պետք է ունենալ, որ կնքա-

142 Գիրք հարցմանց, էջ 591:

143 Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, Եպիսկոպոսաց ժողով, 11-13 նոյեմբեր 2014, Խորհուրդ Սուրբ Մկրտության, էջ 22 (անտիպ):

հայրությամբ տվյալ մարդը հարազատ է դառնում այդ ընտանիքին, ստեղծվում են նոր կապեր և հարաբերություններ: Ուստի նախընտրելի է կնքահայր ընտրել ոչ ազգականի:

97. Կարո՞ղ է կենակիցը դառնալ կնքահայր:

Երբ կինը սեռական հարաբերություն է ունենում մի տղամարդու հետ, վերջինիս չի կարող ընտրել իրեն իբրև կնքահայր: Եթե արգելվում է սանիկի և կնքահոր միջև ամուսնությունը, ապա առավել ևս միասին կենակցելը Ս. Պսակի խորհրդից դուրս, որն արդեն շնություն է և անբարոյականություն:

98. Ինչո՞ւ կինը չի կարող կնքամայր լինել:

Ի տարբերություն Լատին և Բյուզանդական Եկեղեցիների, Հայոց Եկեղեցում կնքամայրություն չկա: «Մաշտոցները» և սուրբ հայրերն անգամ արգելում են, որ կինը մոտենա Ս. Ավազանին: Իսկ թե ինչո՞ւ կինը չի կարող վկա լինել արարողության ժամանակ, այսպես են բացատրում մեր Եկեղեցու վարդապետները:

Հովհաննես Երզնկացի Պլուզ վարդապետն ասում է. *«[Մկրտյալին] կնոջ գիրկը մի՛ դրեք, քանի որ կնքահայրը վկա է, երաշխավոր և հավատքի ուսուցիչ, իսկ կինը ո՛չ վկա է, ո՛չ երաշխավոր, ո՛չ էլ ուսուցիչ պետք է լինի»*[144]:

Իսկ Ս. Գրիգոր Տաթևացին «Գիրք հարցմանց» հանրագիտարանային աշխատության մեջ խնդրի վերաբերյալ ասում է. *«Ջի կարող, որով-*

144 **Է. Մ. Բաղդասարյան**, նշվ. աշխ., էջ 151:

հետև կնքահայր ենք ասում և ոչ թե կնքամայր, քանզի նորածինների համար կնքամայրը եկեղեցին է, որի պատճառն այն է, որ կինը երաշխավոր և վկա չի կարող լինել, ուստի կնքահայր չի կարող լինել: Եվ դարձյալ՝ կանայք չեն կարող քահանայագործել և ոչ կնքահայր լինել: Եվ ոչ միայն այս դեպքում, այլև Մկրտության ժամանակ կնոջը վայել չէ մնալ եկեղեցում, որովհետև Տիրամայր Կույսը Քրիստոսի հետ չէր Մկրտության ժամանակ»[145]: Նույն հեղինակն իր քարոզներից մեկում հավելում է. *«Մարդս հոգի է և մարմին, և ըստ մարմնի՝ ունի մարմնավոր հայր և մայր՝ ծնողներին, իսկ ըստ հոգու՝ իբրև հոգևոր մայր՝ Ավազանը, հոգևոր հայր՝ կնքահայրը,... քանի որ կնքահայր ենք ասում և ոչ թե կնքամայր, որովհետև Մկրտությամբ դառնում ենք երկնավոր Հոր որդիներ և ոչ թե երկնավոր մոր»*[146]:

Ճիշտ է մեր Եկեղեցին արգելում է կնոջը վկա, երաշխավոր լինել և վկայել մկրտվողի հավատքի մասին Ս. Մկրտության արարողության ընթացքում, բայց կնքահոր կինը՝ քավորկինը, իր ամուսնու հետ անկաշկանդ կարող է զբաղվել մկրտվողի հոգևոր դաստիարակությամբ հատկապես աղջիկ երեխաների դեպքում:

99. Մեզ դավանակից Ղպտի, Ասորի, Հնդիկ Մաղանկարա և Եթովպական Ուղղափառ Եկեղեցիների անդամը կարո՞ղ է Հայոց Եկեղեցու զավակի համար կնքահայր լինել:

Սփյուռքի մեր գաղթօջախների գործնական ծիսական կյանքում նմանատիպ դեպքեր կան,

145 Գիրք հարցմանց, էջ 591:

146 Ամառան հատոր, էջ 145-146:



երբ հայ զավակի կնքահայրը դավանակից Եկեղեցու անդամ է: Սրա պատճառները տարբեր են՝ խառն ամուսնություններ, տվյալ շրջանում Հայոց Եկեղեցու անդամի կամ հայ մարդու իսպառ բացակայություն, մտերմություն, ընկերություն դավանակից Եկեղեցու անդամի հետ և այլն: Ուստի նմանատիպ դեպքերում հայ ընտանիքներն իրենց զավակների համար հաճախ կնքահայր են ընտրում Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների պատկանող որևէ անդամի: Ճիշտ է՝ վերոգրյալ Եկեղեցիների հետ մենք նույն հավատքն ունենք, կիսում ենք Ս. Հաղորդությունը, բայց պիտի նաև ազնվորեն խոստովանենք, որ նաև որոշ տարբերություններ ունենք: Դրանք վարդապետական բնույթի չեն, այլ կապված են Հայոց Եկեղեցու աստվածաբանական մտածողության և մեր ժողովրդին բնորոշ ազգային հոգեկերտվածքի հետ: Ի վերջո՝ կնքահոր պարտականություններից մեկն էլ իր սանիկին Հայոց Եկեղեցու ոգով և ավանդությամբ դաստիարակելն է: Ինչպե՞ս կարող է ասորին, ղպտին կամ եթովպացին մեր Եկեղեցու անդամին այդ ոգով կամ մտածողությամբ դաստիարակել ու մեծացնել: Դրա համար ծնողներն ամեն ինչ պետք է անեն, որ կնքահայրը լինի անպայման Հայոց Եկեղեցու անդամ և նախընտրաբար ազգությամբ հայ:

100. Իսկ Ռուս կամ մյուս Ուղղափառ, Կաթոլիկ Եկեղեցիների կամ Բողոքական և Ավետարա-



նական ուղղություններին պատկանող անձը կարո՞ղ է կնքահայր լինել:

Ոչ մի դեպքում: Եթե դավանակից Եկեղեցիների հետ մենք նույն հավատքի խոստովանությունն ունենք, ապա Քաղկեդոնական, Բողոքական և Ավետարանական ընտանիքին պատկանող Եկեղեցիների պարագային նաև լուրջ վարդապետական, ծիսական և այլ տարբերություններ ունենք: Մի պահ պատկերացրեք՝ ինչպե՞ս է Քաղկեդոնական Եկեղեցու անդամ կնքահայրը Հայոց Եկեղեցու զավակին մեր Եկեղեցու ուղղափառ դավանանքի տեսանկյունից դաստիարակելու և կրթելու, երբ մենք վաղուց մերժել և այսօր էլ նզովում ենք Քաղկեդոնի ժողովն ու նրա որոշումները, կամ ինչպե՞ս է բացատրելու վարդապետական, ծիսաաստվածաբանական տարբերությունները և այսպես շարունակ: Ուստի, ինչպես վերևում նշեցինք, շատ կարևոր է, որ կնքահայրը լինի Հայոց Եկեղեցու անդամ:

Նույն ձևով էլ Մյուս Եկեղեցիները թույլ չեն տալիս Հայոց Եկեղեցու անդամին կնքահայր դառնալ իրենց մոտ՝ նկատի ունենալով վերոգրյալ տարբերությունները: Եթե նրանք նախանձախնդիր են իրենց Եկեղեցիների կարգ ու կանոնին, ապա ինչո՞ւ է խանգարում մեզ նույն հավատարմությունը և առավել նախանձախնդրությունը ցույց տալու մեր Եկեղեցու կարգ ու կանոնի հանդեպ: Ցավոք, երբեմն մարդիկ օրինակներ են բերում, որ այլ Եկեղեցիների անդամներ կնքահայր են դարձել մեր Եկեղեցում, և մկրտող հոգևորականը չի ընդդիմացել սրան:

Այո՛, հնարավոր են նմանատիպ դեպքեր, բայց դրանք չեն արդարացնում ո՛չ մկրտող հոգևորականին, ո՛չ էլ Ս. Մկրտության եկողներին, քանզի Հայոց Եկեղեցին շատ հստակ տեսակետ ունի այս հարցում:

101. Ծիսակատար հոգևորականը կարո՞ղ է միևնույն ժամանակ նաև կնքահայր լինել:

Ո՛չ: Ինչպես կարող է նույնը հոգևորականը մկրտել և նույն պահին նաև մկրտվողի կնքահայրը լինել: Ս. Մկրտության խորհրդակատարության ժամանակ մկրտող հոգևորականն ու կնքահայրը տարբեր պարտականություններ և պարտավորություններ ունեն, ուստի պետք է երկու տարբեր անձեր լինեն: Բացի այդ, ծիսակատար հոգևորականը չի կարող ինքն իրեն հարց տալ, ինքն էլ պատասխանել կնքահոր փոխարեն: Քահանայի պարտականությունն է հարց տալ կնքահորը, իսկ վերջինս էլ պետք է բերանով և խոսքերով վկայի մկրտվողի հավատքի և պատրաստության մասին:

102. Կուսակրոն հոգևորականը կարո՞ղ է կնքահայր լինել:

Չնայած գործնականում նման դեպքեր շատ կան, բայց Դավիթ վրդ. Ալավկա Որդու կանոնագրքի 22-րդ գլխում նշվում է, որ կրոնավորները, բարեկամները և սիրելիներ չեն կարող կնքահայր լինել մանկան համար[147]: Իսկ Մաղա-

147 The penitential of David of Ganjak, p. 23, Մատենագիրք հայոց, ԺՉ. հատոր, ԺԱ. դար, էջ 687: Նշենք, որ Ուղղափառ Եկեղեցում

քիա արք. Օրմանյանը հետևյալ պատճառաբանությունն է բերում. *«Աբեղաներուն և առհասարակ կուսակրօններուն ալ ներելի չէ կնքահայրութեան պաշտօնը, և այս մանաւանդ ընտանեկան խնամակալութեան պատճառաւ, զոր կնքահայրերը պարտականութիւն կը նկատեն իրենց համար իրենց սաներուն վրայ, երբ անոնք իրենց ծնողքը կորսնցնեն, ինչպէս նաև ընտանեկան յարաբերութեանց համար սանահայրերուն և սանամայրերուն հետ»*[148]:

103. Չափահասը կարո՞ղ է մկրտվել առանց կնքահոր:

Անկախ տարիքից, յուրաքանչյուր մկրտվող կնքահոր կարիք ունի, ով Ս. Մկրտության ժամանակ պետք է վկայի մկրտյալի հավատքի մասին և երաշխավոր դառնա նրա համար:

104. Կնքահայրը կարո՞ղ է ամուսնանալ իր սանիկի հետ:

Հարցն իսկապես արդիական է, քանզի Եկեղեցու գործնական կյանքը ցույց է տալիս, որ անգիտության կամ այլ պատճառներով երբեմն քավորը և սանիկը նման խնդրի առաջ են կանգնում և ցանկանում պսակվել: Նման իրավիճակներում սովորաբար հոգևորականների մի մասն արգելում է, դատապարտում և չի պսակում, իսկ մյուս հատվածն ուշադրություն չի դարձնում և

նույնպես վանականները չեն կարող կնքահայր լինել, քանզի հրաժարվել են աշխարհային ամեն ինչից:

148 **Մաղաքիա արքեպս. Օրմանեան**, Տեղիք աստուածաբանութեան, էջ 242:

կատարում է Ս. Պսակի խորհուրդը: Ուղղափառ և Արևելյան Կաթոլիկ Եկեղեցիներն արգելում են ամուսնությունը քավորի և սանիկի միջև[149]: Հետևաբար հարց է առաջանում՝ վերջապես ո՞րն է Հայոց Եկեղեցու դիրքորոշումն այս հարցում:

Ս. Պսակի խորհրդի կարևոր պայմաններից է կանոնական հասությունը, որով մինչև որոշակի աստիճանն արգելվում են արյունակցական և ազգակցական ամուսնությունները: Վերջինս մասնագիտական գրականության մեջ կոչվում է նաև «ճյուղ» կամ «ճյուղահամար», իսկ խոսակցական լեզվով՝ «պորտ»: Այն մարդկանց միջև արյունակցական կապի սերնդային հեռավորությունն է: Դարերի ընթացքում Եկեղեցու կանոնական և հայրաբանական միտքը որոշակի կանոններ են սահմանել, որոնց դեպքում արգելվել կամ թույլատրվել է ամուսնությունը: Ընդհանրապես ազգակցության կամ մերձավորության երեք տեսակ կա՝ *ազգակցական, խնամիական* և *հոգևոր*: Քանի որ կնքահայրը կամ քավորը մկրտյալի հոգևոր ծնողն է և հայրը, այս փոխհարաբերությունը կոչվում է նաև *հոգևոր ազգակցություն*:

Ըստ Ս. Ներսես Շնորհալու և Հովհաննես Պլուզի խրատների՝ քավոր-սանիկ ամուսնությունն արգելված է մինչև 7-րդ պորտը, այսինքն՝ թույ-

149 Տե՛ս Православная энциклопедия, Том XVI, Москва, 2007, стр. 420-421, Արևելյան Եկեղեցիների Կանոնագիրք, կանոն 811 § 1. http://www.intratext.com/IXT/ENG1199/_PMJ.HTM , A guide to the Eastern Code: A commentary on the Code of the Eastern Churches, p. 557.



լատրելի է 8-ից սկսած[150]: Խնդրի վերաբերյալ մեզ հասած միակ ամբողջական երկը Հակոբ վրդ. Ղրիմեցու (1360-1426) «Յաղագս ազգականութեանց բաժանման» երկն է, որում հոգևոր ազգակցությունը բնորոշվում է *«պսակ հոգևոր, հոգևոր ծնողութիւն կամ ազգակցութիւն»* արտահայտություններով, որը ենթադրում է կնքահայր և որդեգիր հարաբերությունը[151]: Նա Ս. Ներսես Շնորհալու նման հոգևոր ազգակցության դեպքում ընդունում է չորս (այլ հաշվարկով՝ ութ) պորտ հասկացությունը: Ղրիմեցու այս ճյուղագրությունը մերժվեց 1851 թ. Ներսես Ե Աշտարակեցու (1843-1857)՝ Սինոդին ուղղած հրամանով, որով հոգևոր ազգակցության աստիճանն իջեցվեց 6-ի: Այս հրամանով հարազատ համարվեցին միայն կնքահոր որդիներն ու սանիկը, իսկ մնացած արյունակիցների դեպքում արտոնվեց ամուսնությունը:

1899 թ. Խրիմյան Հայրիկը հոգևոր ազգակցությունը սահմանեց մինչև երրորդ (այլ հաշվարկով՝ 6) աստիճան, որը գործեց մինչև 1919 թ.[152]: Այս մասին վերջին հայրապետական տնօրինությունը կատարել է Գևորգ Ե Սուրենյանցը (1911-1930) 1922 թ. նոյեմբերի 11-ի կոնդակով: Նա, հաշվի առնելով Մեծ Եղեռնից հետո հայ ժողովրդի մարդկային կորուստները և ծնելիության

150 Թուղթ ընդհանրական, էջ 95-96, **Է. Մ. Բաղդասարյան**, նշվ. աշխ., էջ 154:

151 Յակոբ Խրիմեցի և իր «Յաղագս ազգականութեանց բաժանման» գրչագիրը, «Բազմավէպ», 1945, էջ 17-18:

152 ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 106:

նվազումը, ընդհանրապես վերացրեց հոգևոր ազգակցություն հասկացությունը[153]: Նշենք, որ սա վերջին կանոնական որոշումն է՝ պարտադրված ժամանակի պայմաններով: Հետաքրքրական է, որ 1932 թ. Ազգային-եկեղեցական ժողովը, որը հաստատեց Գևորգ կաթողիկոսի որոշումները, հոգևոր ազգակցության վերացման հատվածն ընդունեց *«ի ժամանակաւոր գործադրութիւն, մինչև նոր ազգային եկեղեցական ժողովի նոր սահմանադրութեան հաստատումը»*[154]:

Փորձենք ամփոփել վերոգրյալ փաստերը: Եթե նկատի ունենանք այն բոլոր հանգամանքները, որոնց պատճառով շուրջ մեկ դար առաջ Գևորգ Ե կաթողիկոսը հրապարակեց իր կոնդակը, ինչպես նաև մեր ժողովրդի մտածողության մեջ կնքահայրության նվիրական լինելը և կնքահայր-սանիկ հարաբերության մեջ Ս. Մյուռոնի առկայությունը, 1932 թ. Ազգային-եկեղեցական ժողովի տեսակետը, ապա անպայման պետք է պահպանել ամուսնության արգելքը[155]: Իսկ 2014

153 ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 48, ցուցակ 1, գործ 731:

154 Խնդրի մասին տե՛ս նաև **Ներսես վարդապետ Մելիք-Թանգյան**, Հայոց եկեղեցական իրավունքը, Ս. Էջմիածին, 2011, էջ 812-826, Ձեռնարկ հոգևորականների համար. հայ ընտանիքը 21-դարի շեմին, Էջմիածին, 2010, էջ 60-61:

155 Ժողովրդական բանահյուսության մեջ պահպանվել են մի շարք պատմություններ, որոնցում դատապարտվում է նաև քավորի և սանամոր միջև կապը: Հայագետ, բանահավաք Արամ Ղանալանյանը այսպիսի մի ավանդություն է մեջբերել իր կարևոր աշխատության մեջ. «Ավուր մեկին քավորն ու սանամեր կերթան Ջոջ ձոր: Քավոր սանամոր խետ սիրող կենա (սիրաբանում է): Աստված կքարկանա ընտոնց վրեն ու երկուսին էլ իրար գրկած վախտն քար կդարձու: Չուրի մըկա էլ (մինչև հիմա էլ) էտ քարն կա, անուն՝

թ. նոյեմբերի 11-13-ը Մայր Աթոռում տեղի ունեցած Եպիսկոպոսաց ժողովը վերահաստատեց կնքահոր և սանիկի միջև ամուսնության արգելքը, ինչպես նաև սահմանեց, որ կնքահոր և սանիկի հարազատների միջև ամուսնությունը հնարավոր է ազգակցության 3-րդ աստիճանից[156]:

Վստահ ենք, որ հենց այնպես չեն սահմանել այս արգելքը մեր լուսամիտ հայրապետներն ու վարդապետները՝ հաշվի առնելով Եկեղեցու դարավոր փորձառությունը, մեր ժողովրդի հոգևոր մտածողությունը և առողջ սերունդ ունենալու հրամայականը: Հետևաբար, քանի դեռ հայրապետական նոր կոնդակ չկա այս մասին, կանոնական առումով դեռևս ուժի մեջ է Խրիմյան Հայրիկի սահմանած հոգևոր ազգակցության 6 պորտը:

105. Ի՞նչ անել, երբ կնքահայրն ու սանիկն իրար իսկապես սիրում են և ցանկանում են ամուսնանալ:

Նման բացառիկ դեպքերում թույլտվություն տալու կամ չտալու խնդիրն արդեն տվյալ թեմի առաջնորդի կամ եկեղեցական բարձրագույն իշխանության իրավասության ներքո է: Այստեղ ուզում ենք հատկապես երիտասարդների ուշադ-

---

Քավոր-սանամեր». տե՛ս **Արամ Դանիելյան**, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 65:

156 ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 409, ցուցակ 1, գործ 153, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, Եպիսկոպոսաց ժողով, 11-13 նոյեմբեր 2014, Խորհուրդ Սուրբ Մկրտության, էջ 22 (անտիպ):



րությունը հրավիրել մի շատ կարևոր նրբության վրա: Երբեմն տղաները, ցանկանալով ավելի մոտ լինել իրենց սիրած աղջկան, այլ տարբերակ չգտնելով՝ դառնում են նրանց կնքահայրը: Բայց երբ պարզվում է, որ Եկեղեցին արգելում է նման ամուսնությունը, տխրում են և սկսում իրավիճակից ելքեր փնտրել: Մեր խորհուրդն է՝ սիրած էակին մոտ գտնվելու համար այլ տարբերակներ մտածել և երբեք չդառնալ նրա կնքահայրը: Հոգևորականները նույնպես պետք է ուշադիր լինեն այս հարցում:

106. Կարելի՞ է կնքահոր փոփոխություն կատարել որևէ պատճառով:

Այսպիսի հարց է երբեմն ծագում, երբ մկրտվածը կամ նրա ծնողները դժգոհ են իրենց կնքահորից և այլևս չունեն նախկին ջերմ հարաբերությունները: Բայց մկրտվածի դեպքում կնքահոր փոփոխություն հնարավոր չէ, քանզի այդ մարդն է եղել վկան ու երաշխավորը Ս. Մկրտության ժամանակ: Ուստի նախապես պետք է լուրջ մոտենալ կնքահայրության հարցին և ճիշտ ընտրություն կատարել: Եթե կնքահայրը թերանում է իր պարտականությունների մեջ, ապա ձեր մյուս զավակների համար կարող եք մեկ ուրիշ կնքահայր ընտրել: Որևէ կանոն կամ պարտադրանք չկա, որ ընտանիքի բոլոր զավակների կնքահայրը պետք է լինի նույն մարդը: Պարզապես նույն կնքահայր ունենալը նպատակահարմար է այն առումով, որ տվյալ մարդն արդեն ճանաչում է այդ ընտանիքին, հաստատվել են որոշակի հարաբերություններ և մտերմություն, ուստի կնքա-



հոր համար էլ ավելի դյուրին է հոգևոր դաստիարակություն և խնամք տածելը: Ժողովրդի մտածողության մեջ կնքահայրը սրբություն է և շատ կարևոր անձ տվյալ ընտանիքի համար, ուստի մարդիկ կնքահորը պատվում և հարգանքի են արժանացնում տարբեր ձևերով՝ հյուրասիրությամբ, զանազան նվերներով և այլն: Հետևաբար նյութական տեսանկյունից ևս ավելի հարմար է նույն կնքահորը պատվել, քան մի քանիսի:

107. Նոր մկրտվածը կարո՞ղ է կնունքից անմիջապես հետո մեկ ուրիշի կնքահայրը դառնալ:

Ս. Մկրտությունը մարդու հոգևոր կյանքի սկիզբն է: Ուստի կնքահայր դառնալու համար նոր մկրտվածից կպահանջվի որոշակի ժամանակ և պատրաստվածություն, որպեսզի ինքն էլ մեկ օր վկա և երաշխավոր դառնա մեկ ուրիշի համար: Ս. Մյուռոնով նոր դրոշմված և դեռ Ս. Մյուռոնից դուրս չեկած անձն ինչպե՞ս կարող է միանգամից կնքահայր դառնալ, երբ դեռ ինքը նորածին քրիստոնյա է: Նման դեպքերից խուսափելու համար խորհուրդ ենք տալիս, որ ապագա կնքահայրը ոչ թե մկրտվի նույն օրն իր սանիկի հետ, այլ ավելի շուտ, զինվի հոգևոր գիտելիքներով, իր մեջ զգա և հասկանա կնքահայր լինելու պատասխանատվությունը և նոր ստանձնի սրբազան այդ պարտականությունը:

108. Ճի՞շտ է արդյոք Ս. Մկրտությունը հետաձգել, քանի որ կնքահայրն արտերկրում է:

Ցավալի և հաճախ տարածված իրողություն է մեր հասարակության մեջ, որ կնքահոր՝ ար-

տերկրում գտնվելու պատճառով մարդիկ անորոշ ժամանակով հետաձգում են Ս. Մկրտության խորհրդի կատարումը՝ սպասելով ավելի հարմար ժամանակի: Ս. Մկրտությունը շատ կարևոր է ամեն մարդու համար, և եթե մարդ գիտակցում է այդ կարևորությունը, ապա որևէ պատճառաբանություն չի կարող արդարացված լինել, այդ թվում նաև՝ կնքահոր դրսում գտնվելը: Բացի այդ, եթե կնքահայրը դրսում է, ապա ինչպե՞ս պետք է զբաղվի իր սանիկի հոգևոր դաստիարակությամբ:

109. Կարելի՞ է Ս. Մկրտությունը հետաձգել խընջույքի կամ ճոխ սեղան չգելու պատճառներով:

Ո՛չ, կարևորը Ս. Մկրտությունն է՝ քրիստոնյա դառնալը, և ոչ թե խնջույքն ու սեղանի պարունակությունը: Մեծ ցանկության դեպքում, այն կարող եք նշել նաև հետագայում, երբ հարմար կլինի: Ուստի երկրորդական պատճառներով մի՛ զրկեք ձեր զավակներին Ս. Մկրտությունից:

110. Քանի անգամ կարելի՞ է կնքահայր լինել:

Այս հարցի վերաբերյալ որևէ հստակ կանոն կամ որոշում չկա: Պարզապես կնքահայր դառնալուց առաջ պետք է շատ կարևոր մեկ բան հիշել. կնքահայրությունը մեծ պատասխանատվություն է, և կնքահայրը մեկ օր պատասխան պիտի տա Աստծո առաջ: Մնացածն արդեն տվյալ մարդու պատասխանատվության և լրջության աստիճանից է կախված:



111. Կարելի՞ է հրաժարվել կնքահայրությունից առաջարկի դեպքում, թե՞ դա մեղք է:

Եթե մարդ իրեն անպատրաստ է համարում կամ մտածում է, որ չի կարող ամբողջականորեն և լիարժեք իրականացնել կնքահոր պարտականությունները, ապա կարող է հրաժարվել նման առաջարկից: Բնականաբար, կնքահայր դառնալու առաջարկի մերժումը մեղք չէ, ընդհակառակն՝ այն խոսում է տվյալ մարդու ազնվության, հոգևոր բարձր գիտակցության և պատասխանատվության մասին: Ուստի ավելի լավ է նման դեպքերում հրաժարվել, քան ստանձնել պատասխանատվությունը և ոչինչ չանել:

112. Տոհմական կամ ընտանեկան կնքահորը կարելի՞ է փոխել, թե՞՝ ոչ:

Մեր ժողովրդի մտածողության և սովորույթների մեջ ընդունված է տոհմական կամ ընտանեկան կնքահայրությունը, երբ ընտանիքներով իրար քավոր-սանիկ են դառնում: Բայց սա պարզապես ավանդույթ է և ոչ թե պարտադրանք: Ամեն մարդ կամ ընտանիք ազատ է կնքահոր ընտրության հարցում: Երբեմն հենց այս մտածողության պատճառով մարդիկ իրենց զավակներին չեն մկրտում, քանզի «պապական» քավորը շատ հեռու է բնակվում: Ուստի Եկեղեցին հորդորում է կնքահայր ընտրել նրան, ով կարող է ձեզ առաջնորդել հոգևոր կյանքում:

113. Ի՞նչ հագուստով պետք է լինի կնքահայրը Ս. Մկրտության ժամանակ՝ սովորակա՞ն, թե՞ եկեղեցական շապիկով:

Ս. Մկրտության բոլոր մասնակիցներն արարողությանը պետք է լինեն հավուր պատշաճի հագնված և հատկապես կնքահայրը, որի համար յուրահատուկ օր է: Սփյուռքում ընդունված է, որ կնքահայրն արարողության ժամանակ եկեղեցական շապիկով լինի: Այս սովորությունը պահպանվում է նաև Հայաստանի որոշ եկեղեցիներում, որոնք ունեն այդ հնարավորությունը: Այստեղ որևէ պարտադրանք կամ վարդապետական խնդիր չկա, ուղղակի նախընտրելի է արարողության ընթացքում եկեղեցական շապիկ հագնել, որով էլ կնքահայրը կտարբերվի ներկաներից: Ուստի, եթե եկեղեցականը ձեզ առաջարկի շապիկ հագնել, ապա այն պատիվ համարեք և սիրով ընդունեք առաջարկը:

114. Ի՞նչ պարտականություններ ունի կնքահայրը Ս. Մկրտության ժամանակ:

Ինչպես նշել ենք, կնքահայրը մկրտյալի հավատքի վկան և երաշխավորն է Ս. Մկրտության ժամանակ: Նա արարողության ժամանակ ունի նաև որոշակի պարտականություններ: Գովելի է, երբ կնքահայրը կարդում կամ անգիր է ասում «Հրաժարիմքը» և «Հավատամքը»:

Երբ քահանան երեք անգամ հարցնի կնքահորը, թե ի՛նչ է խնդրում երախան մկրտվելուց առաջ, կնքահայրը պետք է պատասխանի.

«Հաւատք, յոյս, սէր և մկրտութիւն: Մկրտիլ և արդարանալ, սրբիլ ի մեղաց, ազատիլ ի դիւաց և ծառայել Աստուծոյ» (աշխարհաբար՝

Հավատք, հույս, սեր և մկրտություն: Մկրտվել և արդարանալ, սրբվել մեղքերից, ազատվել դևերից և ծառայել Աստծուն):

Այս հարց ու պատասխանից հետո քահանան տյառնագրում է կնքահորը և ասում. *«Ըստ քո հավատքի թող լինի քեզ»*:

115. Քացի բերված հատվածներից, կնքահայրն ուրիշ ի՞նչ պարտականություններ ունի Ս. Մկրտության ժամանակ:

Քահանան մանկանը Ս. Ավազանի մեջ երեք անգամ ընկղմելուց և բանաձևն ասելուց հետո նրան հանձնում է կնքահորը: Վերջինս սրբիչով գրկում է իր սանիկին, իսկ չափահաս մկրտյալի դեպքում լվացումից հետո սրբում նրան:

ԵՐԱԽԱՅՈՒԹՅՈՒՆ. Ս. ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ «ՀՆԱԳՈՒՅՆ ՄԱՇՏՈՑԻ»

116. Ովքե՞ր են «երախաները»:

Վաղ Եկեղեցում «երախաներ» (հունարեն՝ κατηχουμενος) էին անվանում նրանց, ովքեր նախապատրաստվում էին Ս. Մկրտությանը՝ ուսանելով հավատի կարևոր սկզբունքները: Հնում նրանց անվանում էին նաև «զգաստացածներ», «լուսավորվողներ», «հավատարիմներ», «խնդրողներ» և «ընտրյալներ»: Բացի նախնական այս իմաստից, այժմ մեծ մասամբ «երախաներ» ենք կոչում չմկրտված մարդկանց՝ անկախ իրենց տարիքից:

117. Ի՞նչ է «երախայությունը»:

Ս. Մկրտությունը, լինելով քրիստոնեական կյանքի սկիզբը, բնականաբար, պահանջում է հոգևոր լուրջ պատրաստություն, որը նախկինում տևում էր մեկից երեք տարի՝ կախված տվյալ մարդու մեղքերի բազմությունից և տեսակներից: Նախապատրաստության հենց այս շրջանն էլ անվանում ենք «երախայություն», որի ընթացքում երախաներն ընթերցում էին Ս. Գիրքը, ծանոթանում Եկեղեցու ուղղափառ դավանությանը, խորհուրդներին, ծեսերին և կարգերին: Այս ամենն էական էր հատկապես քրիստոնեության դեմ հալածանքների և հերետիկոսութ-



յունների շուրջ վիճաբանությունների շրջանում, երբ նորադարձ քրիստոնյայից պահանջվում էր հավատքի ամրություն և հաստատուն գիտելիք:

Վաղ Եկեղեցում Ս. Մկրտության երկար նախապատրաստության շրջանին հաջորդում էր ավելի կարճ մի ժամանակահատված, որը տևում էր 40 օր՝ մինչև Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը՝ Ս. Զատիկը, երբ երախաները մկրտվում էին և դառնում Քրիստոսի Եկեղեցու անդամ՝ զորացած հարության ավետիսով և Քրիստոսի փրկարար լույսով: Ամենևին էլ պատահական չէր Ս. Զատկին մկրտվելը, քանզի Ս. Մկրտությունը ներառում է հենց հարության խորհուրդը՝ մարդուն մահից կյանք առաջնորդելով: Այսօր փոփոխությունների է ենթարկվել այս կարգը, որը կատարվում է Ս. Հարությունից անկախ, բայց Ս. Մկրտության խորհրդի նախապատրաստությունը մնում է կարևոր մի շրջան ապագա քրիստոնյայի կյանքում: Պատկերացրեք՝ եթե ամեն ոք Ս. Մկրտությունից առաջ իսկապես անցնի նախապատրաստության այս շրջանը և զինվի հոգևոր կարևոր գիտելիքներով, ապա Եկեղեցին կունենա ավելի գիտակից անդամներ: Այդ դեպքում ոչ մի աղանդավորական կազմակերպություն կամ կրոնական ուղղություն չի կարողանա նրան շեղել ուղղափառությունից: Ուրախալի է, որ այժմ չափահաս մկրտվողներից շատերը Ս. Մկրտությունից առաջ ցանկանում են հոգևորականի առաջնորդությամբ անպայման նախապատրաստվել և գիտակցաբար մոտենալ խորհրդին, ինչը վկայում է նրանց հոգևոր բարձր գիտակցության մասին:

118. Ի՞նչ է երախայից օծումը:

Վաղ Եկեղեցում ծիսական մի սովորություն կար, երբ երախայության վերջում յուղով օծում էին երախայի ճակատը և զգայարանները կա՛մ «Հրաժարիմքից» առաջ, կա՛մ դրանից հետո: Այսօր էլ ծիսական այս սովորությունը պահպանվել է Արևելքում: Մեր Եկեղեցում նույնպես ինչ-որ ժամանակ եղել է երախայի օծումը, բայց այն այժմ չկա Ս. Մկրտության հայկական կանոնում, բացառությամբ յուղի օրհնության քարոզի և աղոթքի, որոնք էլ ձևափոխվել են դարերի ընթացքում[157]: Այսօր դժվար է ստուգությամբ պնդել, թե ինչո՛ւ և ե՛րբ է վերացել ծիսական այս տարրը Ս. Մկրտության ծեսից: Հստակ է, որ Ս. Հովհան Օձնեցին ջանքեր է գործադրել՝ վերականգնելու այս սովորությունը, որն իր ժամանակ աղավաղված էր կատարվում կամ ընդհանրապես չէր կատարվում՝ սահմանելով որոշակի կանոններ: Այս մասին են խոսում նաև Սարգիս Շնորհալին (12-րդ դ.), Ներսես Լամբրոնացին (1153-1198), Բարսեղ Մաշկևորցին (13-14 դդ.) և ուրիշներ: Երեխաների օծման յուղն օրհնում էր մկրտող քահանան, որը չպետք է շփոթել կաթողիկոսի կողմից օրհնվող Ս. Մյուռոնի և հիվանդների օծման համար նախատեսված յուղի հետ[158]:

---

157 Տե՛ս Մայր Մաշտոց, հ. Ա, գիրք Ա, էջ 220-221:

158 Խնդրի մասին տե՛ս **Հ. Ս. Ճեմճեմեան**, Երախաներու օծումը Հայ Եկեղեցւոյ մէջ, «Բազմավէպ», Վենետիկ, Ա-Գ, 1968, էջ 21-29, ինչպես նաև՝ **Բագրատ եպիսկոպոս Գալստանեան**, Օծումն հիւանդաց խորհրդի խնդիրը Հայ Եկեղեցում, Ս. Էջմիածին, 2011, ծնթ. 30, էջ 22-23, **Gabriele Winkler**, The History of the Syriac Prebaptismal Anointing in the Light of the Earliest Armenian Sources,

119. Ինչպե՞ս էր կատարվում երախայության շրջանը Վաղ Եկեղեցում:

Մկրտվել ցանկացողին զրուցելու նպատակով բերում էին տեղի եպիսկոպոսի մոտ: Վերջինիս բացակայության ժամանակ եպիսկոպոսի արտոնությամբ զրույցը վարում էր քահանան կամ սարկավագը, որի ընթացքում տվյալ մարդը պատմում էր մկրտվելու իր մտադրության և կյանքի մանրամասների մասին: Հոգևորականը կարճ քարոզ էր խոսում քրիստոնեության և Հիսուս Քրիստոսի բերած փրկության մասին: Հավատարիմները կամ խորհրդազգածները վկայում էին թեկնածուի դարձի մասին, որից հետո եպիսկոպոսը նրա անունը մտցնում էր ընծայության կոչվածների ցուցակի մեջ: Արևելքում երախայության կարգի մեջ ընդունումը բաղկացած էր մի քանի մասերից՝ ընծայացուի երեսին փչում, ճակատի, սրտի խաչակնքում և ձեռնադրություն: Արևմուտքում նաև ընծայացուի բերանն օրհնված աղ էին դնում, որը խորհրդանշում էր Աստծո խոսքն ու իմաստությունը: Այս ամենից հետո երախայության կոչվածները ծանոթանում էին Ս. Գրքին, աստվածային տնօրինություններին, հավատքի սկզբունքներին, մասնակցում եկեղեցական արարողություններին, պահքով և ապաշխարությամբ անցկացնում իրենց օրերը, այսինքն՝ ամեն ինչ անում էին, որպեսզի ստացած տեսական գիտելիքները և իրենց կյանքը համահունչ և միանման

Symposium Syriacum 1976, Orientalia Christiana Analecta 205, Rome, 1978, p.-317-324.

լինեին: Նրանք չէին կարող մասնակցել Հավատացելոց Պատարագին, որը նախատեսված էր միայն մկրտվածների համար[159]: Մկրտվել կարող էին նրանք, ովքեր երկար տարիներ անցել էին այս պատրաստության շրջանը, փոխել էին իրենց ապրելակերպը, ինչի մասին կարող էին վկայել նաև ուրիշները, կարող էին խոստովանել իրենց հավատքը և դիվահար չէին: Ս. Զատկին մկրտվել ցանկացողները ևս մեկ անգամ զրուցում էին եպիսկոպոսի հետ, խոսում իրենց հետ կատարված փոփոխությունների և մկրտվելու աներկբա մտադրության մասին: Զրույցին ներկա էին լինում անպայման նաև կնքահայրերը: Սրանից հետո երախայի անունը գրվում էր մկրտվողների ցուցակում, և երախայության կոչվածն արդեն անվանվում էր «լուսավորված», այսինքն՝ պատրաստվում էր լուսավորությանը՝ Ս. Մկրտությանը: Ապա աղոթքներով, պահքով և ապաշխարությամբ նա սպասում էր Ս. Զատկին, որպեսզի մկրտվեր:

120. Ինչպե՞ս է այսօր կատարվում նախապատրաստական այս շրջանը մեր Եկեղեցում:

Ս. Մկրտությանը նախորդող նախապատրաստական-ուսուցողական շրջանի տևողությունը և

159 Երախայից Պատարագի ժամանակ՝ նախքան բուն խորհրդի կատարումը, սարկավագն ազդարարում է. «Ո՛չ ոք երախաներից, ո՛չ ոք թերահավատներից և ո՛չ ոք ապաշխարողներից թող չմոտենա աստվածային այս խորհրդին»: Հնում երախաները և նմանատիպ մարդիկ սարկավագի այս հորդորից հետո դուրս էին գալիս գավիթ կամ կանգնում եկեղեցու դռան մոտ և այնտեղից հետևում էին սրբազան արարողությանը: Եկեղեցու ներսում մնում էին միայն արժանավորները, ովքեր պիտի Ս. Հաղորդություն ստանային:

կատարման ձևը կախված է տվյալ թեմի առաջնորդից, մկրտող հոգևորականից և տեղում ձևավորված ավանդույթից: Հոգևորականները հիմնականում կարճ զրույց են ունենում չափահաս մկրտվողի և նրա կնքահոր հետ բուն արարողությունից առաջ՝ անդրադառնալով Ս. Մկրտության խորհրդի կարևորությանը մարդու կյանքում և սովորեցնում հավատքի կարևոր սկզբունքները: Կազմակերպված ծխական համայնքներում հոգևոր հովիվները պարբերաբար հանդիպում են այդպիսի մարդկանց հետ նախքան արարողությունը և նրանց հոգեպես ու ֆիզիկապես պատրաստում Ս. Մկրտության համար: Մկրտվել ցանկացողների համար որոշ եկեղեցիներում կազմակերպվում են նաև հատուկ դասընթացներ: Չպետք է մոռանալ, որ Ս. Մկրտությունը ձևական ծես չէ կամ ազգային ավանդույթ: Այն առաջին նախապայմանն է Քրիստոսի Եկեղեցու անդամ լինելու և քրիստոնյա դառնալու համար: Ուստի նախապատրաստական այս շրջանին ամեն ոք պետք է մոտենա լրջությամբ և ամենայն պատասխանատվությամբ: Մեր հոգևոր փորձառությունը ցույց է տալիս, որ գիտակցաբար մկրտվողները ոչ միայն ուրախ են այդ ամենի համար, այլ նաև հորդորում և խրախուսում են իրենց ընկերներին, հարազատներին և մտերիմներին՝ նույն պատրաստվածությամբ մոտենալու Ս. Մկրտությանը: Հետևաբար, այս հարցում մեծ է մկրտող հոգևորականի դերակատարությունը, ով պետք է անհատական և պատշաճ մոտեցում ցուցաբերի յուրաքանչյուր մկրտվողի հանդեպ:

121. Ի՞նչ է պահանջվում յուրաքանչյուր մկրտվողից:

«Մաշտոցում»՝ Ս. Մկրտության արարողությունից առաջ, զետեղված է կարևոր մի խրատ, որում հստակորեն բացատրվում և սահմանվում է Հայոց Եկեղեցու վերաբերմունքը «վերստին ծննդյան» խորհրդին մերձենալ ցանկացողների հանդեպ: Այս խրատը չնչին փոփոխություններով առկա է ձեռագիր և տպագիր գրեթե բոլոր «Մաշտոցներում»: Խրատում մասնավորապես ասվում է. «Երբ [մեկին] քրիստոնյա են դարձնում, նախ պետք չէ թողնել եկեղեցի [մտնի], այլ պետք է ձեռնադրվի երեք կամ ավելի շաբաթ առաջ նախքան Մկրտությունը, որի ընթացքում հասցնի վարդապետից ուսանել Եկեղեցու հավատքն ու Մկրտությունը. նախ՝ **Ս. Երրորդության աստվածությունը, արարչությունը և արարածների ստեղծումը**, ապա **արդարների ընտրությունը**, դրանից հետո **Քրիստոսի ծնունդը**, և ըստ կարգի՝ տնտեսության ողջ ընթացքը՝ **խաչի մեծ խորհուրդը**, **թաղումը, հարությունը, առ Հայր համբարձումը, հաջորդ գալուստը, բոլոր մարմինների հարությունը և հատուցումը՝ ըստ յուրաքանչյուր գործի**: Սա ուսուցանելով՝ թող խրատի և ջանասիրաբար պատվիրի՝ մշտապես աղոթքի կանգնել՝ առաքյալի պատվերի համաձայն: Այս կարգավորությունը չափահասների համար է: Նախ չափահասներին և մանուկներին պետք է երախա ձեռնադրել...»[160]:

160 Մայր Մաշտոց, հ. Ա, գիրք Ա, էջ 215: Հետագայում «Մաշտոցներում» խրատի պահանջներն ավելացել են կամ պակասել՝

Ինչպես տեսնում ենք, մեր Եկեղեցում Ս. Մկրտությունից առաջ պարտադիր է եղել երախայության շրջան անցնելը, որն այսօր էլ խրախուսելի է: Հոգևոր այս գիտելիքների իմացությունն օգտակար է նաև կնքահոր համար, որը պիտի վկայի մկրտյալի հավատքի մասին հենց Ս. Մկրտության արարողության ժամանակ: Հաջորդիվ համառոտակի կանդրադառնանք այն բոլոր կետերին, որոնց իմացությունն անհրաժեշտ է չափահաս մկրտվողի համար:

Ա. Ս. Երրորդության աստվածություն

Ս. Երրորդության դավանանքը քրիստոնեության հիմնաքարն է և հոգևոր կյանքի առանցքը, առանց որի չի կարող լինել ճշմարիտ աստվածճանաչողություն: Մեկ Աստծո՝ իբրև Ս. Երրորդության, վարդապետությունը քրիստոնեությունը զանազանում է միաստվածյան մյուս կրոններից: Եթե մովսիսականության և իսլամի մեջ «Աստված» ասելով հասկանում են միայն Հայր Աստծուն, ապա քրիստոնեության մեջ՝ Հորը,

---

պահպանելով հայկական ավանդական ծեսի կետերը: Օր.՝ ըստ 1905 թ. Վաղարշապատի «Մաշտոցի»՝ երախային պետք է ուսուցանել նաև Ս. Հովհաննես Մկրտչի կողմից Հիսուսի մկրտության, Տիրոջ քարոզության, հրաշքների, մատնության և Եկեղեցու յոթ խորհուրդների մասին. Մաշտոց յորում աւանդին սրբազան արարողութիւնք ազգիս՝ ըստ Սահմանադրութեան Սուրբ Եկեղեցւոյս Հայոց, Վաղարշապատ, 1905, էջ 3: Հետագա խրատներում փոփոխվել են նաև աստվածաբանական որոշ իրողությունների իմաստային շեշտադրումները: Ուստի մեզ համար հիմք է հանդիսացել խրատի հնագույն տարբերակը: Այս մասին տե՛ս նաև **А. Н. Новиков**, Как правильно подготовиться к Таинству Крещения, Санкт-Петербург, 2012, стр. 10-29.

Որդուն և Ս. Հոգուն: Մեր Եկեղեցում գործածվող և Ս. Գրիգոր Տաթևացու կողմից խմբագրված Հանգանակում խոստովանում ենք. *«Հավատում ենք, որ Ս. Երրորդությունը մեկ բնություն է, մեկ աստվածություն, ոչ թե երեք աստվածներ, այլ մեկ Աստված, մեկ կամք, մեկ թագավորություն, մեկ իշխանություն, արարիչ երևացող և աներույթ արարածներ»*[161]: Ուղղափառ այս վարդապետությունից շեղումը և ոչ ճիշտ մեկնաբանությունները դարերի ընթացքում պատճառ են դարձել զանազան հերետիկոսությունների և աղանդների առաջացման: Բնականաբար, Ընդհանրական Եկեղեցին միշտ պայքարել է նրանց դեմ և գումարել տիեզերաժողովներ, որոնց ընթացքում ուղղափառ տեսանկյունից ձևակերպվել և սահմանվել են աստվածային ճշմարտությունները:

Ս. Երրորդության խորհուրդը հնարավոր չէ բացատրել մարդկային տրամաբանությամբ, սակայն այն որոշ չափով ըմբռնելի է հավատքով և խորը հոգևոր ճգնությամբ ու փորձառությամբ, երբ մարդ ճանաչում է իր Արարչին: Ս. Երրորդության անճառելի խորհուրդը բացահայտվում է աստվածային Հայտնությամբ, որ տեսնում ենք Ս. Գրքում: Ինչպես Ընդհանրական, այնպես էլ Հայոց Եկեղեցու սուրբ հայրերն ու վարդապետները իրենց հոգեշահ գործերում մեծ տեղ են հատկացրել այս վարդապետության բացատրությանը: Նրանք փորձել են գեղեցիկ և հաս-

161 Ժամագիրք Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ՝ արարեալ Ս. Սահակայ Հայրապետի և Մեսրոպայ վարդապետի, Գիւտոյ և Յովհաննու Մանդակունւոյ, Անթիլիաս, 1986, էջ 6:

կանալի օրինակներով հնարավորինս հասու դարձնել Ս. Երրորդության անպատմելի խորհրդին: Բայց անգամ նրանք էլ խոստովանում են, որ հողեղեններս մեր տկար մարդկային մտքով չենք կարող ամբողջովին ըմբռնել Ս. Երրորդության խորհուրդը: Նրանք Ս. Երրորդության խորհուրդը հաճախ բացատրում են արեգակի օրինակով: Արեգակը Հայր Աստված է, նրա ճառագայթը՝ Որդի Աստված, իսկ ջերմությունը՝ Ս. Հոգի Աստված: Կամ ջրի բնությունը մեկ է, բայց այն կարող է լինել աղբյուր, գետ և ծով:

«Երրորդություն» բառն աստվածաշնչային չէ, այն սկսվում է կիրառվել 2-րդ դարից սկսած[162], սակայն Ս. Գրքի բազում հատվածներում խոսվում է այս վարդապետության մասին[163]: Աստվածաշունչը մշտապես շեշտում է Աստծո մեկության մասին և մարդկանց զգուշացնում, որ հեռու մնան չաստվածներին պաշտելուց: «Հավատամքի» մեջ էլ ասում ենք. *«Հավատում ենք մեկ Աստծո՝ ամենակալ Հորը, երկնքի և երկրի, երևելիների և աներևույթների Արարչին»*[164]:

Ս. Երրորդության առաջին անձը՝ Հայր Աստված, անծին է և անսկիզբ, Որդին՝ անժամանակ ծնունդ Հորից, իսկ Ս. Հոգին՝ անճառաբար բխում: Ինչպես Հայրն է հավիտենական, նույն

---

162 Առաջին անգամ այս եզրն օգտագործել է Թեոփիլոս Անտիոքացին 180 թ.:

163 Տե՛ս Ծննդ. 1. 1-3, 26, 18. 2, Բ Օր. 6. 4, Սաղմ. 32. 6, Ես. 6. 3, Մատթ. 3. 16-17, 17. 1-6, 28. 19 և այլն:

164 Խորհրդատետր Սրբոյ Պատարագի՝ ըստ ծիսի Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, էջ 9:

ձևով էլ՝ Որդին և Ս. Հոգին: Չկար մի ժամանակ, երբ կար Հայրը և չկային Որդին և Ս. Հոգին: Ինչպես օրինակ՝ ճառագայթը և ջերմությունն արևից են, բայց նրա հետ միաժամանակ են, քանզի արև չի կարող լինել առանց ճառագայթի և ջերմության, ոչ էլ աղբյուրը՝ առանց ջրի և բխման, ոչ էլ միտքը՝ առանց խոսքի և հոգու:

Հիսուս նույնպես Աստծուն «Հայր» է կոչում: Մարդկային հարաբերության մեջ հայրը և որդին նույն բնությունն ունեն, բայց միմյանցից տարբերվում են իրենց տարիքով, փորձառությամբ, գործով և այլն: Յուրաքանչյուր զավակ, երբ ամուսնանում է և երեխա ունենում, ինքն էլ է հայր դառնում: Բայց Ս. Երրորդության դեպքում այսպես չէ: Ըստ ուղղափառ դավանության՝ Հայրը և Որդին մատնանշում են անժամանակ պատճառականություն և հարաբերություն, որի մեջ չկա առավելություն և նվազություն, մեծություն և փոքրություն: Նրանք ունեն նույն էությունը, բայց տարբեր անձեր են: Հայրը, Որդին և Ս. Հոգին երեք տարբեր աստվածներ չեն, այլ մեկ Աստված՝ մեկ բնությամբ, մեկ աստվածությամբ, մեկ տերությամբ, մեկ իշխանությամբ, մեկ կամքով և մեկ ներգործությամբ: Անձերի բնութենական նույնությունն արտահայտվում է նաև այլ եզրերով՝ *բնութենակից, էակից, փառակից, երկրպագակից, համազոր, նույնագո, համապատիվ, համաբուն* և այլն:

Ս. Երրորդության անձերի համար օգտագործում ենք «համագոյություն» եզրը, այսինքն՝ նույն գոյությունն ունեցող, որը բանաձևվեց և

ընդունվեց 325 թ. Նիկիայի Ա տիեզերաժողովում 318 հայրապետներին տրված աստվածային Հայտնության արդյունքում: «Համագոյությամբ» Եկեղեցին շեշտում է, որ Հայրը և Որդին նույն բնությունն ու էությունն ունեն՝ ընդդիմանալով արիոսականությանը, որը պնդում էր, թե Որդին Աստված չէ, կրտսեր է Հորից, և թե կար ժամանակ, երբ Որդին չկար:

Ս. Երրորդության երեք անձերը տարբերվում են իրենց առանձնավորական հատկություններով: Ուստի Եկեղեցու հայրերն ու վարդապետները շեշտում են, որ ինչ Հորն է, նաև Որդունն է, բացի հայրությունից, ինչ Որդունն է, նաև Հոգունն է, բացի որդիությունից, ինչ Հոգունն է, նաև Հորն է և Որդունը, բացի հոգիությունից:

Երբ Որդի Աստծո համար օգտագործում ենք *ծնունդ* եզրը, այն չպետք է հասկանալ մարդկային ծննդի նման, այլ ինչպես լույսից լույս է առաջանում, կրակից՝ կրակ, կամ ինչպես մտքից ծնվում է խոսքը: Ուստի Նիկիական հանգանակում խոստովանում ենք, որ հավատում ենք *«մեկ Տեր Հիսուս Քրիստոսին՝ Աստծո Որդուն՝ ծնված Հայր Աստծուց՝ միածին, Աստված՝ Աստծուց, լույս՝ լույսից, ճշմարիտ Աստված՝ ճշմարիտ Աստծուց, ծնունդ և ոչ արարած»*[165]: Չի եղել ժամանակ, երբ չի եղել Հայրը, նմանապես չի եղել ժամանակ, երբ չի եղել Որդին:

Ս. Երրորդության երրորդ անձը՝ Ս. Հոգին բխում է Հորից և փառակից է Որդուն: Բխելով

165 Խորհրդատետր Սրբոյ Պատարագի՝ ըստ ծիսի Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, էջ 9:

Հորից՝ Ս. Հոգին չի դադարում Աստված լինելուց, Նա կատարյալ Աստված է Հոր և Որդու նման՝ իր առանձավորական հատկություններով: Հետևաբար «համագոյություն» եզրը նմանապես վերաբերում է նաև Ս. Հոգուն: Այն սահմանվեց 381 թ. Կ. Պոլսի Բ տիեզերական ժողովում, որը դատապարտեց Ս. Հոգու աստվածությունը չընդունող մակեդոնականությունը: «Հավատամքում» Ս. Հոգու մասին ասվում է. *«Հավատում ենք և Ս. Հոգուն՝ անեղին և կատարյալին, ով խոսեց Օրենքում, մարգարեների և Ավետարանների մեջ, ով իջավ Հորդանան, քարոզեց առաքյալների միջոցով և բնակվեց սրբերի մեջ»*[166]: Այս նույն Ս. Հոգին էր, որ արարչագործության ժամանակ շրջում էր ջրերի վրա, նույն Ս. Հոգին էր, որ Հոգեգալստին իջավ առաքյալների վրա, և նույն Ս. Հոգին է, որ այսօր գործում է Եկեղեցու մեջ:

Բ. Արարչություն և արարածների ստեղծում

Աստծո անսահման սիրո, բարության և ողորմության արդյունքն է ողջ արարչագործությունը, որն ուղղափառ հավատքի խոստովանության կարևոր կետերից է: Աստված արարիչն է երկնքի ու երկրի, երևելի և աներևույթ արարածների, տեսանելի և անտեսանելի աշխարհների: Վեցօրյա արարչագործությունը նկարագրված է Աստվածաշնչի Ծննդոց գրքի 1-2 գլուխներում: Աստված ամեն օր ստեղծում է ինչ-որ բան կամ բաներ, որոնք բարի են և կատարյալ: «Բարի»

166 Նույն տեղում:



ասելով՝ Աստվածաշունչը հաստատում է, որ ողջ արարչագործությունը բարի է, քանզի նրա արարիչը գերագույն Բարին է: Ս. Գրքում օգտագործված «օր» հասկացությունն ամենայն հավանականությամբ պետք է ընկալել ոչ թե այժմյան 24 ժամ տևողությամբ, այլ ժամանակ և շրջան իմաստով, հատկապես որ առաքյալն էլ ասում է. *«Տիրոջ համար մեկ օրն ինչպես հազար տարի է, և հազար տարին՝ ինչպես մեկ օր»* (Բ Պետ. 3. 8):

Ըստ Եկեղեցու հայրերի՝ Աստված ամեն ինչ ստեղծեց ոչնչից և անգոյությունից. *«Նայի՛ր երկնքին ու երկրին, այդտեղ ապրող արարածներին: Հիշի՛ր, որ Աստված նրանց ստեղծել է ոչնչից»* (Բ Մակ. 7. 28): Իսկ թե ինչպե՛ս եղավ այդ ամենը, Ս. Գիրքն ասում է. *«Ասաց և ստեղծվեցին, հրամայեց և հաստատվեցին»* (Սաղմ. 32. 9): Ծննդոց Ա 1 համարում կարդում ենք. *«Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը»*, իսկ «Հայր մեր»-ի մեջ խնդրում ենք, որ Նրա կամքը լինի ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա: Նկատի ունենալով վերոգրյալը՝ սուրբ հայրերը «երկինք» բառի համար նշում են, որ այստեղ խոսքը ոչ թե տեսանելի երկնքի մասին է, այլ անտեսանելի երկնքի, ուր բնակվում են նաև հրեշտակների ինը դասերը, որոնք ստեղծվեցին Աստծուն փառաբանելու և օրհնելու համար: Ս. Պողոս առաքյալն էլ ասում է. *«Նրանով ստեղծվեց այն ամենը, ինչ երկնքում է և ինչ՝ երկրի վրա, ինչ երևում է, և ինչ չի երևում. թե՛ գահեր, թե՛ տերություններ, թե՛ պետություններ, թե՛ իշխանություններ, և ամեն ինչ նրանո՛վ և նրա՛ համար ստեղծ-*

վեց» (Կող. Ա 16)։ Հրեշտակները երկնաբնակ են, անմարմին, անմահ, անսեռ, իմացական, մշտաշարժ, մանկություն և ծերություն չունեն։ Հրեշտակները, աննյութական լինելով, կապված չեն նյութի և նյութականի հետ։ Հրեշտակների մի մասը, օգտագործելով անձնիշխանությունը, ապստամբեց Աստծո դեմ, ընկավ երկնքից, և սկզբնավորվեց չարը։ Ընկած հրեշտակներին անվանում են նաև դևեր։ Չարը բնություն չէ, այլ վիճակ՝ մարդու ազատ կամքի դրսևորումը և բարու բացակայությունը։ Եթե դևերն ամեն կերպ ցանկանում են շեղել մարդուն Աստծուց և աստվածահաճո արարքներից, ապա հրեշտակները պահպանում են մարդուն՝ դեպի Աստված ուղեկցելով։

Արարչագործությունը Ս. Երրորդության արտաքին առաջին գործն է։ Ծննդոց գրքի առաջին տողերում իսկ բացահայտվում է Ս. Երրորդության թաքնված խորհուրդը։ Երբ ասվում է. *«Աստված ստեղծեց»*՝ նկատի ունի Հայր Աստծուն, *«Աստծո Հոգին շրջում էր ջրերի վրա»*՝ Ս. Հոգի Աստծուն, *«Աստված ասաց»*՝ Որդի Աստծուն։ Հովհաննես ավետարանիչն էլ Որդի Աստծուն նույնացնում է Խոսքի հետ՝ ասելով. *«Ամեն ինչ նրանով եղավ, և առանց նրա չեղավ ոչինչ, որ եղել է»* (Հովհ. 1. 3)։

Արարչագործության թագն ու պսակը մարդն է, որի ստեղծումով էլ ավարտվում է այս ամբողջ գործընթացը։ Ս. Երրորդությունը մասնակից է մարդու արարմանը. *«Մարդ ստեղծենք մեր կերպարանքով և նմանությամբ...։ Եվ Աստված մարդուն*



ստեղծեց Իր պատկերով և նմանությամբ» (Ծննդ. 1. 26-27), այսինքն՝ բանականությամբ, ազատ կամքով և անմահ հոգով: Մարդու կոչումն էր հավատարմությամբ պահել կապն իր Արարչի հետ, Նրան ճանաչել, ձգտել ու ամեն վայրկյան զգալ Աստծո ներկայությունը: Մարդը վեր էր բոլոր ստեղծագործություններից իր նշանակությամբ և առաքելությամբ: Աստված-մարդ սերտ հարաբերությունը խզվեց մեղքի պատճառով, երբ մեր նախածնողներն անհնազանդ գտնվեցին Աստծո հանդեպ: Այս պատճառով մարդ ոչ միայն զրկվեց Աստծո ներկայությունը զգալու և վայելելու երանական վիճակից, այլ նաև արտաքսվեց դրախտից՝ դառնալով մահկանացու: Չնայած սրան, Աստված շարունակում է նախախնամել աշխարհն ու հատկապես մարդուն, առանց որի մարդը պարզապես կկորչի:

Գ. Արդարների ընտրություն

Աստված երկրի վրա Իր սուրբ առաքելությունն իրականացնելու համար ընտրում է արդարներին, ովքեր խրատում, զգուշացնում և ուսուցանում են մարդկանց՝ նրանց ետ պահելով ճշմարիտ ուղուց շեղվելուց: Տերն Իր անսահման ողորմությունն է ցույց տալիս մարդկության հանդեպ նաև նմանատիպ մարդկանց շնորհիվ: Հիշենք Սոդոմ-Գոմորի պատմությունը, երբ Աստված Աբրահամին խոստացավ, որ չի կործանի այն, եթե այնտեղ անգամ տասն արդար լինի: Արդարն Աստծո պատգամներով ու կամքի համաձայն ապրող մարդն է, ով երբեք չի հակա-

ռակվում իր Արարչին: Երբ Աստվածաշնչում որևէ մեկի համար գործածվում է «արդար» մակդիրը, նշանակում է, որ տվյալ մարդը զարդարված է նաև մյուս առաքինություններով: Հինկտակարանյան արդարներ էին նախահայրերը, նահապետները, դատավորներն ու մարգարեները, որոնք ընտրված էին Բարձրյալի կողմից՝ տարբերվելով իրենց հավատքով ու նախանձախնդրությամբ: Իսկ Նոր Կտակարանում արդարներ են առաքյալներն ու նրանց աշակերտները, ովքեր Տիրոջ հարությունից հետո՝ Հոգեգալստին ստանալով Ս. Հոգու զորությունը, սփռվեցին աշխարհով մեկ՝ քարոզելու Ս. Ավետարանը:

Ամեն տարի Հայոց Եկեղեցին Ս. Պայծառակերպության (Վարդավառի) երկրորդ կիրակիին հաջորդող հինգշաբթի օրը կատարում է «Սուրբ նախահայրերի՝ Ադամի, Աբելի, Սեթի, Ենովսի, Ենովքի, Նոյի, Մելքիսեդեկի, Աբրահամի, Իսահակի, Հակոբի, Հովսեփի, Մովսեսի, Ահարոնի, Եղիազարի, Հեսուի, Սամվելի, Սամփսոնի, Հեփթայեի, Բարակի, Գեդեոնի և մյուս սուրբ նախահայրերի» հիշատակությունը: Ինչպես տեսնում ենք, այստեղ ոչ միայն նախահայրերն են, այլ նաև նահապետներն ու դատավորները: Ընդհանրական Եկեղեցին սրբացրել է նաև նախահայր Ադամին՝ ցույց տալով, որ Քրիստոսի փրկագործությունը նույնիսկ նրա համար էր: Նրանք բոլորն էլ իրենց մասնակցությունն են ունեցել մարդ-Աստված հարաբերության սերտացմանը՝ սպասելով Տիրոջ փրկագործությանը:

Արդարներ էին նաև մարգարեները, որոնք

Տիրոջ պատգամն ու կամքն էին փոխանցում ժողովրդին, զգուշացնում և առաջնորդում՝ աստվածային Հայտնությամբ մարգարեանալով Տիրոջ գալստյան և Նրա մյուս տնօրինություններ ի մասին: Ուստի մկրտվել ցանկացող ամեն ոք պետք է փորձի լինել այն արդարը, որին Աստված կընտրի և կդարձնի Իր առաքելությանը մասնակից:

Դ. Քրիստոսի ծնունդ

Հիսուս Քրիստոս Ս. Երրորդության երկրորդ անձն է՝ համագոյակից Հորն ու Ս. Հոգուն, Աստծո Միածին Որդին և անժամանակ Ծնունդը, Աստված՝ Աստծուց, Լույս՝ Լույսից, մարդկության Փրկիչը, ով ժամանակի մեջ ծնվեց Ս. Կույս Մարիամից՝ վերցնելով մարդուն հատուկ ամեն ինչ, բացի մեղքից: Նա կատարյալ Աստված է և կատարյալ մարդ: Ավետարանն ասում է. *«Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր Միածին Որդուն տվեց, որպեսզի ով Նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը, որովհետև Աստված Իր Որդուն չուղարկեց աշխարհ, որ դատապարտի աշխարհը, այլ որպեսզի աշխարհը Նրանով փրկվի»* (Հովհ. 3. 16-17):

Ս. Գիրքը և Եկեղեցու վարդապետները տարբերակում են Քրիստոսի երկու ծնունդ. առաջինը՝ Հայր Աստծուց, անժամանակ և հավիտյաններից առաջ՝ առանց մոր, իսկ երկրորդը՝ ժամանակի մեջ, Ս. Մարիամից՝ առանց հոր: Առաջինն անմարմին է երկնքում, իսկ երկրորդը՝ մարմնավոր երկրի վրա: Նույն ձևով առաջին

ծնունդն անպատճառ է, իսկ երկրորդը՝ պատճառավոր, քանզի Հիսուս մարմնացավ մարդկության փրկության համար:

Հիսուսի հրաշափառ ծննդյան մասին դարեր առաջ խոսել էին մարգարեները: Նա ծնվեց Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքի քարայրներից մեկում: Այդ ժամանակ Արևելքից երեք մոգեր կամ թագավորներ, առաջնորդվելով օրը ցերեկով երևացած աստղից, եկան կանգնեցին այն մսուրի վրա, որտեղ ծնվել էր մարդկության Փրկիչն ու խաղաղության Իշխանը: Եկեղեցական ավանդությունը պահպանել է այս երեք մոգերի անունները՝ Մելքոն, Գասպար, Բաղդասար, որոնցից առաջինը թագավորն էր պարսից, երկրորդը՝ հնդիկների, իսկ երրորդը՝ արաբների: Նրանք մանկանը նվիրեցին ոսկի, կնդրուկ և զմուռս: Ոսկին խորհրդանշում էր Մանկան Թագավոր լինելը, կնդրուկը՝ Հիսուսի աստվածությունը, զմուռսն էլ՝ Տիրոջ քավչարար մահը, այսինքն՝ սրանով երեք մոգերը խոստովանեցին, որ ծնված Մանուկն իրենց Թագավորն է, Աստվածը և Փրկիչը՝ մի դավանություն, որ պահանջվում է յուրաքանչյուր քրիստոնյայից: Միջնադարում երեք մոգերին նույնացրել են նաև Նոյի երեք որդիների հետ, որոնց միջոցով բազմացավ ամբողջ մարդկությունը:

Ավետարանիչն ասում է. *«Այդ շրջանում բացօթյա բնակվող հովիվներ կային, ովքեր իրենց հոտերի գիշերային պահպանությունն էին անում: Եվ Տիրոջ հրեշտակը երևաց նրանց, Տիրոջ փառքը ծագեց նրանց շուրջ, և նրանք սաստիկ վախեցան: Եվ հրեշտակն*



ասաց նրանց. «Մի՛ վախեցեք, որովհետև ահա ձեզ մեծ ուրախություն եմ ավետում, որն ամբողջ ժողովրդինը կլինի, որովհետև այսօր Դավթի քաղաքում ձեզ համար ծնվեց մի Փրկիչ, որ օծյալ Տերն է»: Եվ հրեշտակի հետ երևաց երկնային զորքերի մի բազմություն, որն օրհնում էր Աստծուն և ասում. «Փա՛ռք Աստծուն բարձունքներում, և երկրի վրա խաղաղությո՛ւն և մարդկանց մեջ հաճությո՛ւն» (Ղուկ. 2. 8-14): Հրեշտակները փառաբանում են Աստծուն երկնքում՝ բարձունքներում, քանի որ մեզ համար մարդացավ, և հաշտություն հաստատվեց երկրի ու երկնքի մեջ, քանի որ երկրի վրա խաղաղություն կլիներ միայն այն դեպքում, երբ մարդկանց սրտերի միջից վերանար թշնամությունը և հաստատվեր սերը: Հատկապես այն սերը, որն այդ Մանուկը բերեց աշխարհ, քանի որ Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր Միածին Որդուն տվեց, որպեսզի Նրան հավատացողը փրկվի: Աստված խոնարհվեց, ծնվեց մսուրի մեջ, որպեսզի մարդուն բարձրացնի: Աստված մարմնով հայտնվեց, որպեսզի մարդը հոգեպես վերածնվի: Աստծո Որդին Մարդու որդի դարձավ, որպեսզի մարդն Աստծո որդի դառնա: Սա է Աստվածհայտնության խորհուրդը: Հիսուսի ծննդյան ավետիսը նախ հովիվները լսեցին և ոչ թե այդ ժամանակի մեծահարուստները կամ այլ անվանի մարդիկ: Հովիվները մաքուր սրտով և մտքով, անկեղծ և պարզ մարդիկ են, ովքեր անխոնջ իրենց գործն են անում, իսկ Աստված սիրում է նմանատիպ մարդկանց: Եթե մենք էլ այդ հովիվների նման լինենք, ապա Աստված անպայման կայցելի մեզ

և կդարձնի Իր կարևոր առաքելության իրականացողներից մեկը: Քրիստոսի ծննդյամբ ամեն ինչ նոր եղավ, շրջվեց մարդկության պատմության անիվը: Մենք չգիտենք, թե ի՛նչ է լինելու մեզ հետ վաղը: Քրիստոս Իր ծննդյամբ հեռացրեց հենց այդ անորոշությունը մեզանից և շատ հստակ ասաց, որ Իր պատվիրանները կատարելու դեպքում, կարժանանանք նաև երկնքի արքայության և հավիտենական կյանքի:

Ե. Խաչի մեծ խորհուրդ

Խաչը Հռոմեական կայսրության ժամանակ մահապարտներին անարգելու և նախատելու համար էր: Խաչելությունը ոչ միայն անպատվաբեր վախճան էր համարվում, այլև հին աշխարհի հայտնագործած ամենաանմարդկային և դաժան պատիժներից էր: Ս. Գիրքն ասում է. *«Անիծված է նա, ով կախված է փայտից»* (Բ Օր. 21. 23), բայց Հիսուս Քրիստոս խաչի վրա հեղած իր թանկագին արյամբ կենաց և օրհնության միջոց դարձրեց այն՝ *«մեզ վերստին գնելով օրենքի անեծքից՝ անեծք դառնալով մեզ համար»* (Գաղ. 3. 13): Աստվածորդին միացավ խաչափայտին՝ սրբագործելով այն և մեզ տալով *«հաղթության զենքը»* ընդդեմ սատանայի ու նրա խաբկանքների: Եթե մինչև Քրիստոս խաչն անարգանքի և նախատինքի նշանն էր, ապա Տիրոջ խաչելությամբ նրա մեջ դրվեց կյանքի խորհուրդը, և մարդ արարած հնարավորություն ստացավ նոր արարած լինելու. Քրիստոս խաչի վրա ներեց մեզ, մեր մեղքերի պարտամուրհակը վերացրեց՝



գամելով այն խաչափայտին: Ուստի խաչը մեզ համար հույսի, սիրո, հաղթանակի և փրկության նշանն է, որի վրա Հիսուս պարտության մատնեց սատանային՝ մեր առաջ բացելով դրախտի դուռը, որը մինչ այդ փակված էր մեր նախածնողներ Ադամի ու Եվայի անհնազանդության պատճառով: Հիսուս խաչի վրա ցույց տվեց Իր անհուն սերն ու անբավ ողորմածությունը մեր նկատմամբ: Տերն Իր փրկագործության խորհրդով խաչը վերածեց հաղթության նշանի: Եվ այս գիտակցությամբ ու խոր համոզմամբ է, որ Ս. Պողոսն ի լուր ամենքի ազդարարում է. *«Քա՛ւ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով»* (Գաղ. 6. 14): Տերունական նշանը ճշմարիտ քրիստոնյաների համար պարծանքների պարծանքն է և փրկության գրավականը: Ապավինելով խաչի զորությանը՝ խափանում ենք չարը: Մեզ տյառնագրում ենք և զորացնում, նրանով զարդարում մեր հոյակերտ եկեղեցիները, նրանով կնքում մեր զավակներին, նրանով պսակվում, նրանով էլ գերեզման իջնում՝ հավիտենական կյանքի հույսով:

Գովելի և լավ կլինի, որ Ս. Մկրտության պատրաստվող անձն իմանա նաև խաչակնքման ճիշտ ձևը: Միացնում ենք աջ ձեռքի առաջին երեք մատները՝ բթամատը, ցուցամատը, միջնամատը և հպում ճակատին՝ ասելով՝ *«Հանուն Հոր»*, իջեցնում կրծքին՝ ասելով՝ «և Որդվո», տանում կրծքի ձախ կողմը՝ ասելով՝ *«և Հոգվույն»*, ապա կրծքի աջ կողմը՝ ասելով՝ *«Սրբո»*, և դնում կրծքի վրա ու ասում. *«ամեն»*: Երեք մատների

միացումը խորհրդանշում է Ս. Երրորդությունը: Մյուս երկուսը՝ ճկույթն ու մատնեմատը, միասին սեղմում ենք ափին, ինչը ցույց է տալիս Քրիստոսի կատարյալ Աստված և կատարյալ մարդ լինելը: Իսկ մատների սեղմված լինելը նշանակում է, որ այդ երկուսը մեկ միավորյալ բնություն են:

Ըստ Եկեղեցու հայրերի՝ խաչակնքելիս ձեռքը տանում ենք ճակատը՝ հիշելով, որ երկնքում էինք, ապա իջեցնում դեպի սիրտը՝ մտաբերելով, որ երկիր ընկանք, երբ ձախ ենք տանում՝ նշում ենք, որ մեղավորների դասում եղանք և ապա աջ՝ հաստատելով, որ արդարների դասում ենք ցանկանում լինել: Խաչակնքելով մեր մարմնի չորս կողմերը՝ պաշտպանվում ենք աշխարհի փորձություններից, սատանայից, անհավատներից և մեղքերից: Մեկ այլ մեկնության համաձայն, երբ մեր ձեռքը վեր ենք տանում, ուզում ենք ասել, որ այսուհետ ոչ թե մեր մարմինն է թելադրելու մեզ, այլ Քրիստոս: Իսկ աջ և ձախ տանելով՝ ասում ենք, որ ձեռքերը խաչվեցին խաչի վրա, և չար գործերի համար պիտանացու չեն, այլ պետք է միայն բարին գործեն: Եվ վերջապես ձեռքը, բացված դնելով սրտի մասում և ասելով *«ամեն»*, հաստատում ենք այս ամենը:

Չ. Թաղում, հարություն

Հիսուսի խաչելությունից և մահից հետո Նրա ծածուկ աշակերտներից Հովսեփ Արեմաթացին, որն արդար, բարեպաշտ և հարուստ մարդ էր, Հիսուսի մարմինը խնդրելու նպատակով գնում է Պիղատոսի մոտ: Չնայած վերջինս զար-



մանում է, որ Հիսուս այսքան շուտ Իր հոգին ավանդեց, բայց նաև կարգադրում է, որ Նրա մարմինը հանձնեն: Հովսեփը գնում է թաղման համար անհրաժեշտ մաքուր կտավները, իսկ Տիրոջ ծպտյալ մյուս աշակերտ Նիկոդեմոսը՝ հալվեի հետ խառնված զմուռսը: Նրանք իջեցնում են Հիսուսի մարմինը խաչից, և հրեական օրենքի համաձայն՝ օծում Նրա մարմինը՝ պատելով կտավներով և խնկերով: Ապա Հիսուսի մարմինը դնում են նոր գերեզմանի մեջ, և այն փակում մի մեծ քարով: Անհանգիստ էին փարիսեցիներն ու քահանայապետները, քանզի հիշում էին Տիրոջ խոսքերը, որ երրորդ օրը հարություն է առնելու: Ուստի գալիս են Պիղատոսի մոտ և խնդրում, որ զինվորները երեք օր պահակություն անեն գերեզմանի մոտ, որովհետև գուցե աշակերտները գան, գողանան Նրան և ժողովրդին մոլորեցնեն՝ ասելով, թե Հիսուս հարություն է առել:

Մինչ Քրիստոս գերեզմանի մեջ էր, մարդկային հոգով դժոխք իջավ և ավերեց այն՝ փրկություն պարգևելով հինկտակարանյան մարդկանց. *«Արդարև, մեր բոլորի համար, մեղքերի պատճառով, մեկ անգամ մեռավ ինքը Քրիստոս՝ Արդարը՝ անարդարների համար, որպեսզի մեզ մոտեցնի Աստծուն. Նա թեպետև մեռավ մարմնով, բայց կենդանի է հոգով, որով և գնաց քարոզեց այն հոգիներին, որոնք մի ժամանակ ապստամբել էին»* (Ա Պետ. 3. 18-20): Առաքյալը քիչ անց հավելում է. *«Քանի որ սրա համար իսկ քարոզվեց Ավետարանը նաև մեռելներին»* (Ա Պետ. 4. 6):

Երբ կիրակի առավոտյան Յուղաբեր կանայք՝

Մարիամ Մագդաղենացին, Հակոբի մայր Մարիամը, Սաղոմեն, Հովհաննան, գնում են գերեզմանը խնկարկելու, այն թափուր են գտնում: Մինչ նրանք փորձում էին հասկանալ կատարվածը, երկու հրեշտակներ ավետում են, որ պետք չէ Ողջին մեռելների մեջ փնտրել, քանզի հարություն առավ: Այո՛, Կյանքը չէր կարող գերեզմանի մեջ մնալ, և Լույսը չէր կարող չհաղթել խավարին: Քրիստոս Իր հարությամբ հաղթեց մահվանը և ցույց տվեց, որ մահը վերջը չէ: Չպետք է մոռանալ, որ առանց հարության հավատի քրիստոնեություն չկա: Առաջին քրիստոնյաներն ապրում էին հենց հարության ավետիսի ուրախությամբ, որը փոխանցվել և պահպանվել է նաև Հայոց Եկեղեցում: Անսահման այդ ուրախության վրա է հիմնված նաև Եկեղեցու ողջ ծիսական համակարգը: Ս. Հարության տոնը դարձել է ամենագլխավորն ու ամենաէականը, երբ Տիրոջ կյանքի ամեն հանգրվան իմաստավորվում է Նրա հրաշափառ հարությամբ: Քրիստոսի հարությունը հիմքն է քրիստոնեական հավատքի և անհերքելի մի իրականություն, ուստի Ս. Պողոս առաքյալն առանց վարանելու ասում է. *«Եթե Քրիստոս հարութիւն չի առել, իզուր է մեր քարոզութիւնը, իզուր է ձեր հավատը»* (Ա Կորնթ. 15. 14): Ս. Հարությամբ են իմաստավորվում Տիրոջ խաչելությունը, մահը և թաղումը, քանզի մեր Տերը ոչ միայն խաչվեց և թաղվեց, այլ նաև հարություն առավ մեռնելներից: Քրիստոնյան աներկբա պետք է հավատա, որ ինչպես Տերը հարություն առավ, այնպես էլ մեկ օր Նրա նման

հարություն ենք առնելու՝ վայելելով երկնքի արքայությունը մեր հարազատների և մտերիմների հետ:

Է. Աո Հայր համբարձում

Ս. Հարությունից հետո Հիսուս 40 օր շարունակ երևաց Իր աշակերտներին և Յուղաբեր կանանց՝ գոտեպնդելով, մխիթարելով և զորացնելով նրանց հավատի և առաքելական կոչման մեջ՝ խոսելով երկնքի արքայության մասին. *«Ի-րեն կենդանի ներկայացրեց նրանց առաջ շատ ապացույցներով՝ քառասուն օրերի ընթացքում խոսելով Աստծո արքայության մասին»* (Գործք 1. 3-4): Տիրոջ այս երևումները նոր ուժ տվեցին առաքյալներին, որոնք շփոթված էին նախորդ դեպքերից: Նրանք հասկացան, որ Վարդապետն իսկապես հարություն է առել և չի լքել իրենց, կատարվել են Նրա մարգարեական խոսքերը: Տիրոջ խոսքը նրանց համար համբերություն և քաջալերություն էր գալիք փորձություններին և ավետարանական գործունեությանն ընդառաջ. *«Եթե ես գնամ, ձեզ համար տեղ կպատրաստեմ, դարձյալ կգամ և ձեզ կվերցնեմ Ինձ մոտ, որպեսզի ուր Ես եմ, այնտեղ նաև դուք լինեք»* (Հովհ. 14. 3):

Եվ ահա գարնանային մի առավոտ, Հիսուս առաքյալների հետ բարձրացավ Ձիթենյաց լեռը, Իր վերջին պատգամները տվեց նրանց, օրհնեց և երկինք համբարձվեց՝ նստելով Հոր աջ կողմում: Մինչ առաքյալներն ապշահար երկնքին էին նայում, այդ ժամանակ երևացին երկու սպիտակազգեստ մարդիկ՝ ասելով. *«Ո՛վ գալիլեացիք,*

ինչո՞ւ եք կանգնած նայում երկնքին. այս Հիսուսը, որ ձեր միջից երկինք բարձրացավ, գալու է նույն ձևով, ինչպես տեսաք Նրա երկինք գնալը» (Գործք 1. 11):

Քրիստոսի համբարձումը պարզապես Նրա երկրային կյանքի ավարտն էր: Նա երկինք գնաց, որպեսզի մխիթարիչ Ս. Հոգուն ուղարկի. *«Եթե ես չգնամ, Մխիթարիչը ձեզ մոտ չի գա, իսկ եթե գնամ, Նրան կուղարկեմ ձեզ մոտ»* (Հովհ. 16. 7): Համբարձումը նախապատրաստությունն էր նաև Հոգեգալստի, երբ Ս. Հոգին կրակե լեզուների տեսքով իջավ առաքյալների վրա: Ս. Հոգով զորանալով՝ առաքյալներն աշխարհով մեկ սկսեցին քարոզել Ս. Ավետարանը: Չնայած Հիսուս մարմնով երկինք համբարձվեց, բայց Նա մշտապես Իր ամենասուրբ կամքը կատարողների հետ է:

Ը. Երկրորդ գալուստ

Հավատո հանգանակում խոստովանում ենք, որ մեր Տեր Հիսուս Քրիստոս երկրորդ անգամ *«գալու է նույն մարմնով և Հոր փառքով՝ դատելու կենդանիներին և մեռյալներին, որի թագավորությունը վախճան չունի»*: Ավետարանն ասում է. *«Եվ այն ժամանակ պիտի տեսնեն Մարդու Որդուն՝ եկած ամպերի վրայով՝ զորությամբ և բազում փառքով»* (Մարկ. 13. 26): Իսկ Գործք Առաքելոցում այս մասին ասվում է. *«Այս Հիսուսը, որ ձեր միջից երկինք բարձրացավ, գալու է նույն ձևով, ինչպես տեսաք Նրա երկինք գնալը»* (Գործք 1. 11): Երկրորդ գալստյան մասին է խոսում նաև Հուդա առաքյալն իր



ընդհանրական թղթում՝ վկայակոչելով Ենովքի մարգարեությունը. *«Ահավասիկ եկավ Տերը բյուրավոր սուրբ հրեշտակներով՝ դատաստան տեսնելու բոլորի հանդեպ և հանդիմանելու բոլոր ամբարիշտներին իրենց այն գործերի համար, որ ամբարշտությամբ գործեցին, և այն բոլոր խիստ խոսքերի համար, որ նրա դեմ ասացին մեղավորները և ամբարիշտները»* (Հուդա 1. 14-15):

Բնականաբար, Տիրոջ երկրորդ գալուստը տարբերվելու է առաջինից: Եթե առաջին գալստյան ժամանակ Հիսուս մարդկության փրկության համար աշխարհ եկավ *«ծառայի կերպարանք առնելով, մարդկանց նման լինելով և մարդու կերպարանքով խոնարհեցրեց Ինքն իրեն»* (Փիլ. 2. 7), ապա երկրորդ գալստյանն արդեն գալու է Իր ամբողջական փառքով և հրեշտակների բյուրավոր բանակների ուղեկցությամբ՝ նստելու փառքի գահին և դատաստան անելու: Երկրորդ գալստին Հիսուս արդեն գալու է ոչ թե դատապարտվելու մարդկանց կողմից, այլ դատելու նրանց՝ իբրև արդար Դատավոր, որին հնարավոր չէ կաշառել և խաբել:

Դարերի ընթացքում մարդիկ մշտապես սպասել են Տիրոջ երկրորդ գալստյանը, անգամ որոշակի ժամանակներ սահմանել և սխալվել: Թե ե՛րբ է լինելու աշխարհի վախճանը, ոչ ոք չգիտե: Այս մասին Հիսուս հստակ ասում է. *«Բայց այդ օրվա և ժամի մասին ոչ ոք չգիտե. ո՛չ երկնքի հրեշտակները և ո՛չ էլ Որդին, այլ միայն Հայրը»* (Մատթ. 24. 36, Մարկ. 13. 32), իսկ Գործքը հավելում է.

«Ձեզ տրված չէ իմանալ այն ժամերը և ժամանակները, որոնք Հայրը հաստատեց Իր իշխանության մեջ» (Գործք 1. 7): Բայց Ավետարանը նաև պատգամում է մեզ միշտ արթուն լինել և աղոթել. *«Զգո՛ւյշ եղեք, հսկեցե՛ք ու աղոթեցե՛ք, քանի որ չգիտեք, թէ ե՛րբ է ժամանակը...: Բայց ինչ ձեզ եմ ասում, ամենքին եմ ասում՝ արթո՛ւն կացեք»* (Մարկ. 13. 33, 37):

Չնայած ոչ ոք չգիտե երկրորդ գալստյան ստույգ ժամանակի մասին, բայց մեր Տերն Ավետարանում բազմիցս խոսում է Իր երկրորդ գալստյան և դրան նախորդող նշանների մասին: Նշենք դրանցից մի քանիսը՝

ա. Ավետարանը պիտի քարոզվի բոլոր ազգերին. *«Արքայության այս Ավետարանը պիտի քարոզվի ամբողջ աշխարհում՝ իւ վկայություն բոլոր հեթանոսների, և ապա պիտի գա վախճանը»* (Մատթ. 24. 14):

բ. Կեղծ Քրիստոսներ ու մարգարեներ կհայտնվեն, որոնք Տիրոջ անունով մարդկանց կմոլորեցնեն, մեծամեծ հրաշքներ ու զարմանալի գործեր կկատարեն (տե՛ս Մատթ. 24. 5, 24-27, Մարկ. 13. 5-7, 21-22, Ղուկ. 21. 8):

գ. Նեռը՝ հակաքրիստոսը կամ դերաքրիստոսը պիտի աշխարհ գա: Ս. Գրքում «Նեռ» արտահայտությունն օգտագործվում է երկու իմաստով. նախ՝ ընդհանրապես այս անունն է տրվում Քրիստոսի հակառակորդներին և քրիստոնյաներին հալածողներին. *«Եվ ինչպես լսել եք, Նեռը գալու է, բայց արդեն իսկ եկել են բազում նեռեր, դրանից էլ կարող եք իմանալ, որ վերջին ժամանակն է»* (Ա Հովհ. 2. 18): Եվ երկրորդ՝ կիրառվում է

Քրիստոսի այն հակառակորդի դեպքում, ով աշխարհ պիտի գա նախքան աշխարհի վախճանը: Ս. Պողոսը նրան անվանում է «անօրենության մարդ» (տե՛ս Բ Թես. 2. 3-11): Եկեղեցական որոշ հայրեր և մատենագիրներ (Ս. Կյուրեղ Երուսաղեմացի, Եվսեբիոս Կեսարացի, Ս. Եփրեմ Ասորի), հիմնվելով Հայտնության գրքում նշված «գազանի» թվի՝ 666-ի հունարեն անվանական համարժեքի վրա, այն նույնացնում են Ներոն կայսեր հետ, ով դաժանաբար հալածում էր քրիստոնյաներին: Ս. Գրիգոր Տաթևացին Նեռի թվային հայերեն համարժեքը՝ ՈԿՋ մեկնաբանում է այսպես. *«Ուրանամ կամաւ զԱրարիչն»* (ուրանում եմ կամովին Արարչին)[167]:

դ. Չարի իշխանությունը պիտի տարածվի. *«եվ անօրենության շատանալուց՝ շատերի սերը պիտի ցամաքի»* (Մատթ. 24. 12): Իսկ Ս. Պողոսը հավելում է. *«Վերջին օրերին չար ժամանակներ պիտի գան, երբ մարդիկ պիտի լինեն անձնասեր, փողասեր, հպարտ, ամբարտավան, հայհոյող, ծնողներին անհնազանդ, անշնորհակալ, անմաքուր, անհաշտ, անգութ, բանսարկու, անժուժկալ, դաժանաբարո, անբարեսեր, մատնիչ, հանդուգն, մեծամիտ, ավելի շատ հեշտասեր, քան աստվածասեր, մարդիկ, որ ունեն աստվածպաշտության կերպարանք, սակայն ուրացել են նրա զորությունը»* (Բ Տիմ. 3. 1-5): Այս ամենով հանդերձ, *«երբ Մարդու Որդին գա, արդյո՞ք երկրի վրա հավատ կգտնի»* (Ղուկ. 18. 8):

ե. Ս. Գիրքը հավելում է նաև. *«Լսելու եք պատե-*

167 Նեռի մասին տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 774-775:

րազմների ձայներ և պատերազմների լուրեր. զգո՛ւշ եղեք, չխռովվեք, որովհետև պետք է, որ այդ ամենը լինի, բայց դա դեռ վախճանը չէ: Ազգ ազգի դեմ պիտի ելնի, և թագավորություն՝ թագավորության դեմ, և պիտի լինեն սով, համաճարակ ու տեղ-տեղ երկրաշարժեր: Սակայն այս ամենը սկիզբն է երկանց: Այն ժամանակ ձեզ նեղության պիտի մատնեն և պիտի սպանեն ձեզ. և Իմ անվան պատճառով բոլոր ազգերի կողմից ատելի պիտի լինեք: Եվ այն ժամանակ շատերը պիտի գայթակղվեն և միմյանց պիտի մատնեն ու միմյանց պիտի ատեն» (Մատթ. 24. 4-10): Սա էլ ամենը չէ, քանզի *«արեգակը պիտի խավարի, և լուսինն իր լույսը չպիտի տա, և աստղերը երկնքից պիտի ընկնեն, ու երկնքի զորությունները պիտի շարժվեն: Եվ ապա երկնքի վրա Մարդու Որդու նշանը պիտի երևա, ու այդ ժամանակ երկրի բոլոր ազգերը լացուկոծ պիտի անեն և պիտի տեսնեն Մարդու Որդուն, որ գալիս է երկնքի ամպերի վրայով՝ զորությամբ և բազում փառքով: Եվ Նա պիտի ուղարկի իր հրեշտակներին մեծ շեփորով, ու պիտի հավաքեն նրա ընտրյալներին չորս կողմերից՝ երկնքի ծագերից մինչև մյուս ծագերը»* (Մատթ. 24. 29-31): Եկեղեցու հայրերն ավետարանական այս հատվածի «Մարդու Որդու նշան» արտահայտության ներքո հասկացել են փրկարար Խաչը:

Երկրորդ գալուստը լինելու է հանկարծակի. *«Ինչպես փայլակը, որ ելնում է արևելքից և երևում է մինչև արևմուտք, Մարդու Որդու գալուստն այնպես կլինի»* (Մատթ. 24. 27), *«Ինչպես ջրհեղեղից առաջ եղած օրերն էին, - երբ ուտում էին ու խմում, կին էին*



առնում ու մարդու էին գնում, մինչև այն օրը, երբ Նոյը տապանը մտավ, ու նրանք բան չիմացան, մինչև որ ջրհեղեղը եկավ ու վերցրեց բոլորին, - այնպես պիտի լինի Մարդու Որդու գալուստն էլ» (Մատթ. 24. 38-39):

Գիտենալով վերոգրյալը՝ քրիստոնյայի պարտքն է ամեն ժամ պատրաստ լինել դրան, որի մասին խոսում են նաև սուրբ հայրերը, երբ խորհուրդ են տալիս ամեն օրն ապրել, ինչպես վերջին օրը: Տիրոջ երկրորդ գալստյան և դատաստանի մասին մտածումները պիտի խթան հանդիսանան, որ մենք առաջին հերթին մտածենք մեր ապրած կյանքի մասին: Ինչ կյանք ենք վարում, ինչպիսի՞ արժեքներով ենք իմաստավորում կամ փչացնում աստվածապարգև կյանքը: Չէ՞ որ քրիստոնեական վարդապետության տեսանկյունից երկրային և ժամանակավոր այս կյանքը նախապատրաստությունն է երկնային կյանքի:

Իրականում քրիստոնյայի համար կարևորը ոչ թե ապրած տարիների քանակն է, այլ որակը: Քանի որ կարող ես երկար ապրել, բայց առանց աստվածճանաչողության ու Աստծո, և հակառակը՝ կարճ, սակայն իմաստավորված Տիրոջով: Ուստի մենք ամեն ինչ պետք է անենք մյուս կյանքում՝ հավիտենականում ապրելու համար: Բայց շատերի ապրելակերպը ճիշտ հակառակն է ցույց տալիս՝ ամեն ինչ անում ենք այս կյանքն ապրելու համար, որի վկայությունն է նաև ժողովրդական խոսքը. *«Մարդ մեկ անգամ է ծնվում, ուստի ամեն ինչ էլ պետք է անի և փորձի»*: Ինքներս մեզ հարց տանք՝ ինչ ենք

անում, որ Տիրոջ երկրորդ գալստյան ժամանակ պարզերես կանգնենք նրա առաջ և հենց Նրանից լսենք այնքան բաղձալի խոսքերը. *«Ապրե՛ս, բարի՛ և հավատարի՛մ ծառա, որովհետև այդ քչի մեջ հավատարիմ եղար, շատի վրա կկարգեմ քեզ. մտի՛ր քո Տիրոջ ուրախության մեջ»* (Մատթ. 25. 21):

Թ. Ընդհանրական հարություն

Մեռելների հարության ուսմունքն առաջին հերթին հիմնված է Հիսուսի հարության փաստի վրա: Ինչպես մեր Տերը հարություն առավ մեռելներից, այնպես էլ մենք մեկ օր հարություն պիտի առնենք: Այս մասին Հիսուս ասում է. *«Ինչո՞ւ եք զարմանում, որովհետև կգա ժամանակ, երբ բոլոր նրանք, ովքեր գերեզմաններում են, կլսեն Նրա ձայնը և դուրս կգան: Ովքեր բարի գործեր են արել՝ կյանքի հարության համար, իսկ ովքեր չար գործեր՝ դատաստանի հարության»* (Հովհ. 5. 28-29):

Հին Կտակարանի բազում տեղիներ անդրադառնում են մեռելների հարությանը: Հոբն ասում է. *«Քանզի գիտեմ, որ հավերժական է Նա, ով երկրի վրա պիտի փրկի ինձ՝ հարությունն տալով մարմնիս, որ այս ամենը համբերեց, տարավ»* (Հոբ 19. 25-26), իսկ Եսայի մարգարեն հավելում է. *«Պիտի հառնեն մեռածները և կանգնեն նրանք, որոնք գերեզմաններում են, և ուրախանալու են երկրի վրա, որովհետև այն ցողը, որ քեզնից է, բժշկություն է նրանց համար, իսկ ամբարիշտների երկիրը պիտի կործանվի»* (Ես. 26. 19): Հատուցման և մեռելների հարության մասին է խոսում նաև Դանիել մարգարեն. *«Երկրում*

հողի մեջ ննջածներից շատերը հարություն պիտի առնեն. ոմանք հավիտենական կյանքի համար, ոմանք էլ՝ հավիտենական նախատինքի և ամոթի» (Դան. 12. 2): Այդ ժամանակ *«իմաստուն մարդիկ կճառագեն իբրև երկնակամարի լուսատուներ, իսկ արդարներից շատերն առավել ևս՝ իբրև հավիտենական աստղեր...: Շատերը պիտի ընտրվեն, սպիտականան, փորձվեն և մաքրվեն, անօրենները պիտի անօրենություն անեն, ամբարիշտները խելքի չպիտի գան»* (Դան. 12. 3, 10):

Մեռելների հարությանն է անդրադառնում նաև Եզեկիել մարգարեն. *«Տիրոջ ձեռքը հանգչեց ինձ վրա, բարձրացրեց ինձ Տիրոջ Հոգով, դրեց ինձ մի դաշտի մեջ, որ լի էր մարդկանց ոսկորներով: Պտտեցրեց ինձ ոսկորների շուրջը: Դրանք շատ-շատ էին դաշտի երեսին ու սաստիկ չորացած էին: Նա ասաց ինձ. «Մարդո՛ւ որդի, արդյոք կկենդանանա՞ն այդ ոսկորները»: Ես ասացի. «Տե՛ր Աստված, այդ Դու գիտես»: Նա ասաց ինձ. «Մարդո՛ւ որդի, մարգարեացի՛ր այդ ոսկորների վրա և ասա՛ դրանց. «Չորացա՛ծ ոսկորներ, լսեցե՛ք Տիրոջ պատգամները: Այսպես է ասում Տեր Աստված այդ ոսկորներին. «Ահա Ես ձեզ վրա կենդանի շունչ եմ բերելու, ձեզ ջղեր եմ տալու, ձեզ վրա միս եմ բերելու և մաշկ քաշելու, Իմ հոգին եմ տալու ձեզ, և դուք կենդանանալու եք: Եվ պիտի իմանաք, որ Ես եմ Տերը»: Ես մարգարեացա, ինչպես հրամայել էր ինձ Տերը: Ու երբ մարգարեացա, մի ձայն լսեցի. հետո շարժում եղավ, և ոսկորը ոսկորի հետ մոտեցավ բոլոր հոդերին: Տեսա, որ ջղերն ու մսերը պատում էին ոսկորները, նրանց վրա մաշկ էր ձգվում, բայց դրանց մեջ դեռ շունչ չկար:*

Նա ասաց ինձ. «Մարգարեացի՛ր, մարդո՛ւ որդի, մարգարեացի՛ր շնչի վրա և ասա՛ շնչին. «Այսպես է ասում Տեր Աստված. «Ե՛կ, ո՛վ շունչ, չորս հողմերից, ու փչի՛ր մեռելների վրա, և նրանք կկենդանանան»: Ես մարգարեացա, ինչպես հրամայել էր ինձ Տերը: Ու շունչ մտավ նրանց մեջ, և կենդանացան: Ելան կանգնեցին իրենց ոտքերի վրա. դա բազմախուռն մի ժողովուրդ էր: Եվ Տերը խոսեց ինձ հետ ու ասաց. «Մարդո՛ւ որդի, այդ ոսկորներն Իսրայելի ամբողջ տունն են: Դրանք ասում են. «Չորացան մեր ոսկորները, մեր հույսը կտրվեց, ու մենք մեռանք» (Եզեկ. 37. 1-11): Վերոգրյալ մարգարեություններում հիշատակվող *Իսրայելի ժողովուրդը* կամ *Իսրայելը* Եկեղեցու հայրերի կողմից մեկնաբանվել է իբրև մարգարեություն համընդհանուր հարության մասին, որը պիտի հաջորդի Քրիստոսի աճեղ երկրորդ գալստյանը:

Ինչպես տեսնում ենք, մեռելների հարության մասին գաղափարը կար դեռևս մինչև Քրիստոս և Նրանից հետո: Եթե փարիսեցիները հավատում էին սրան, ապա սադուկեցիները կտրականապես մերժում էին: Ուստի երբ վերջինները մոտեցան Տիրոջը և հարցրեցին, թե հարության ժամանակ ո՞ւմ կինը պիտի լինի նա, ով ամուսնացել էր յոթ եղբայրների հետ, Հիսուս պատասխանեց. *«Մոլորվածնե՛ր, ո՛չ Գրքերն եք հասկանում և ո՛չ էլ Աստծո զորությունը, որովհետև հարության ժամանակ ո՛չ կին են առնում և ո՛չ էլ մարդու գնում, այլ կլինեն ինչպես հրեշտակները երկնքում: Բայց մեռելների հարության մասին չե՞ք կարդացել Աստծուց ձեզ ասվածը. Ես եմ Աբրահամի Աստվածը, Իսահակի*

Աստվածը և Հակոբի Աստվածը. և Աստված՝ մեռելների Աստվածը չէ, այլ՝ կենդանիների» (Մատթ. 22. 29-32):

Մեռելների հարության մասին ուսմունքն առավել համակարգված ենք տեսնում արդեն Ս. Պողոս առաքյալի թղթերում: Նա շատ հստակ նշում է, որ այն տեղի է ունենալու Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ. *«եղբայրնե՛ր, չեմ ուզում, որ անգետ լինեք ննջեցյալների մասին, որպեսզի չխորեք, ինչպես ուրիշները, որոնք հույս չունեն: Եթե հավատում ենք, թե Հիսուս մեռավ և հարություն առավ, այդպես էլ Աստված Հիսուսի միջոցով ննջեցյալներին ետ կյանքի պիտի բերի նրա հետ: Մենք այս բանն ասում ենք Տիրոջ խոսքով. եթե մենք ողջ մնանք մինչև Տիրոջ գալուստը, չպիտի կանխենք ննջեցյալներին, որովհետև Տերն Ինքը, ազդարարության նշանով, հրեշտակապետի ձայնով և Աստծո շեփորով պիտի իջնի երկնքից, և Քրիստոսով մեռածներն առաջինը հարություն պիտի առնեն. ապա և մենք, որ կենդանի մնացած պիտի լինենք, նրանց հետ միասին պիտի հափշտակվենք-տարվենք ամպերի վրայից Տիրոջ առաջ օդում և այդպես մշտապես Տիրոջ հետ պիտի լինենք»* (Ա Թես. 4. 12-16): Ընդհանրական հարությունը կապելով Քրիստոսի հարության հետ՝ Ս. Պողոսը մեկ այլ տեղ ասում է. *«Իսկ եթե քարոզվում է, թե Քրիստոս մեռելներից հարություն է առել, ձեզնից ոմանք ինչպե՞ս են ասում, թե մեռելների հարություն չկա: Եթե մեռելների հարություն չկա, ապա և Քրիստոս հարություն չի առել: Եվ եթե Քրիստոս հարություն չի առել, իզուր է մեր քարոզությունը, իզուր է և ձեր հավատը: Եվ Աստծո սուտ վկաները եղած*

կլինենք, քանի որ Աստծո մասին վկայեցինք, թե հարություն տվեց Քրիստոսին. արդարև, եթե հարություն չառնեին մեռելները, Նրան հարություն չէր տա: Իսկ եթե մեռելները հարություն չեն առնում, ապա Քրիստոս էլ հարություն չի առել: Եվ եթե Քրիստոս հարություն չի առել, իզուր է ձեր հավատը. և տակավին նույն մեղքերի մեջ եք: Իսկ արդ, նրանք, որ ննջեցին ի Քրիստոս, կորան արդյոք: Եթե միայն այս կյանքի համար ենք հույս դրել ի Քրիստոս, ողորմելի ենք, քան բոլոր մարդիկ» (Ա Կորնթ. 15. 12-19):

Մեկ այլ հարց է, թե ինչ մարմնով ենք հարություն առնելու այդ ժամանակ: Այս մասին նույնպես խոսում է Ս. Պողոս առաքյալը: Ըստ ուղղափառ դավանության, որը հիմնված է հենց նրա ուսմունքի վրա, մենք հարություն պիտի առնենք ոչ թե հողեղեն՝ ապականացու մարմնով, այլ անապական, հոգևոր և անմահ: Մարմինները նույն ձևով պիտի լինեն, սակայն տարբեր են լինելու նրանց հատկություններն ու կարողությունները: Առաքյալն այս ճշմարտությունը բացատրում է ցորենի օրինակով, որը մինչև չմեռնի, չի կենդանանա: Ամենակարող Աստված նրան տալիս է այն մարմինը, ինչ Ինքը ցանկանում է. *«Եվ Աստված նրան մարմին է տալիս, ինչպես որ կամենում է, և սերմերից յուրաքանչյուրին՝ իր մարմինը: Ամեն մարմին նույն մարմինը չէ. այլ է մարմինը մարդկանց և այլ է մարմինն անասունների, այլ է մարմինը թռչունների և այլ է մարմինը ձկների: Կան նաև երկնավոր մարմիններ և երկրավոր մարմիններ. բայց այլ է փառքը երկնավորների և այլ է փառքը երկրավորների, այլ է փառքն արեգակի, այլ է փառքը լուսնի և այլ է փառքն*

աստղերի. և մի աստղ փառքով առավել է, քան մի ուրիշ աստղ: Այսպես է նաև մեռելների հարությունը. սերմանվում է ապականությամբ և հարություն է առնում առանց ապականության. սերմանվում է անարգությամբ և հարություն է առնում փառքով. սերմանվում է տկարությամբ և հարություն է առնում զորությամբ. սերմանվում է շնչավոր մարմին և հարություն է առնում հոգևոր մարմին. եթե կա շնչավոր մարմին, կա նաև՝ հոգևոր...: Պիտի նորոգվենք հանկարծակի, մի ակնթարթում, վերջին փողի ժամանակ, քանզի փողը պիտի հնչի, և մեռելները հարություն պիտի առնեն առանց ապականության, և մենք պիտի նորոգվենք. որովհետև պետք է, որ այս ապականացու մարմինն անապականություն կրի, և այս մահկանացու գոյությունը հագնի անմահություն» (Ա Կորնթ. 15. 38-44, 52-53): Հարության ժամանակ կվերականգնվեն նաև մեր մարմնական թերությունները, այսինքն՝ խելքով անմիտների և անդամալույծների պակասությունները կվերանան, թերիաս կամ չորացած անդամները կվերանորոգվեն և կվերանան նաև մարմնական ավելորդությունները[168]:

Եկեղեցու հայրերի և մատենագիրների գործերում քննարկվել է նաև այն հարցը, թե արդյոք կպահպանվի՞ մարդու սեռը, թե՞ կվերանա, չնայած դատաստանից հետո այլևս չեն լինելու ամուսնություններ կամ որդեծնություններ: Եկեղեցու հայրերի գործերում զանազան կարծիքներ են արտահայտվել խնդրի վերաբերյալ: Ըստ մեր եռամեծ վարդապետ Ս. Գրիգոր Տաթևացու՝

168 Գիրք հարցմանց, էջ 725:

հարուցյալ մարմիններում Տերը կպահպանի սեռային տարբերությունը, ինչպես եղել է երկրի վրա, բայց այնտեղ չի կարևորվելու տվյալ մարդու սեռային պատկանելությունը կամ տարիքը, քանզի մարդիկ լինելու են հրեշտակների նման: Մարդիկ ճանաչվելու են իրենց բարի գործերով, հատուկ դեմքով, փառքով և տարբերվելու են անվամբ[169]: Նույնն է պնդում նաև մեր Եկեղեցու նշանավոր աստվածաբան Մաղաքիա արք. Օրմանյանը՝ գրելով. *«Յարութիւնը պիտի ըլլայ նորոգ մերձեցմամբ մարմիններու հետ, և այն՝ իւրաքանչիւրինը իր սեփական մարմինին հետ, ու պահելով էական ու սեռական հանգամանքները, զոր ունէր մահուան ատեն»*[170]:

Հարուցյալ մարմնի հասակի հարցում էլ Եկեղեցու հայրերը տարբեր կերպ են արտահայտվում: Ս. Եփրեմ Ասորու նման Ս. Գրիգոր Տաթևացին էլ կարծում է, որ ամենքս հարություն ենք առնելու 30 տարեկանում, այսինքն՝ կատարյալ տարիքում[171]: Քանի որ նույն այդ տարիքում ստեղծվեց մեր նախահայր Ադամը, նույն տարիքում Հիսուս մկրտվեց և Իր առաքելությունը սկսեց և այլն:

Ժ. Հատուցում

Քրիստոսի երկրորդ գալստից, մեռելների ընդհանրական հարությունից հետո տեղի կունենա

169 Գիրք հարցմանց, էջ 725-726:

170 **Մաղաքիա արքեպս. Օրմանեան**, Տեղիք աստուածաբանութեան, էջ 189:

171 **Святой Ефрем Сирин**, Творения, Том 4, Москва, 1995, стр. 105, Գիրք հարցմանց, էջ 726.



ահեղ դատաստանը, որի Դատավորը Քրիստոս է: Այս դատաստանը տարբերվելու է երկրային դատերից իր բովանդակությամբ և նշանակությամբ: Վերջին դատաստանի ժամանակ ամենքս կանգնելու ենք արդար և անկաշառ Դատավորի առաջ և պատասխան ենք տալու մեր անցած կյանքի համար: Այլ խոսքով՝ մեր փոխարեն խոսելու են մեր գործերը: Այդ ժամանակ պատասխան ենք տալու ոչ միայն մեր մեղքերի, այլ նաև դատվելու ենք ասված խոսքերի համար. *«Բայց ասում եմ ձեզ, թե մարդիկ իրենց խոսած ամեն դատարկ բանի համար դատաստանի օրը հաշիվ պիտի տան, որովհետև՝ քո խոսքերով պիտի արդարանաս, և քո խոսքերով պիտի դատապարտվես»* (Մատթ. 12. 36-37):

Դատաստանի արդյունքում արդարները կժառանգեն հավիտենական կյանքը, իսկ մեղավորները՝ կայրվեն դժոխքի կրակներում: Եթե մեղավորները սարսափում են Աստծո դատաստանից, ապա արդարներն անհամբեր սպասում են դրան, քանզի ինչպես Ս. Պողոս առաքյալն է ասում. *«Այս ժամանակի չարչարանքներն արժանի չեն համեմատվելու գալիք փառքի հետ, որ հայտնվելու է մեզ»* (Հռոմ. 8. 18): Արդարներին տրվելիք այդ փառքի լույսը Հիսուս համեմատում է արեգակի հետ. *«Այն ժամանակ արդարներն արեգակի նման կփայլեն երկնքի արքայությունում»* (Մատթ. 13. 43):

Աստծո դատաստանի մասին խոսվում է արդեն Հին Կտակարանում (տե՛ս Ժող. 11. 9), սակայն ավելի մանրամասն՝ Նորում: Մեր Տերը նշում է, որ երկրորդ գալստյան ժամանակ գա-

լու է փառքով և հրեշտակների ուղեկցությամբ՝ ամեն մեկին ըստ իր կատարած գործերի դատելու. *«Արդ, երբ որ Մարդու Որդին գա Իր փառքով և բոլոր հրեշտակները՝ Իր հետ, այն ժամանակ Նա պիտի նստի Իր փառքի գահի վրա, ու Նրա առաջ պիտի հավաքվեն բոլոր ազգերը, և Նա նրանց միմյանցից պիտի զատի, ինչպես մի հովիվ, որ զատում է ոչխարներն այծերից։ Եվ ոչխարներն Իր աջին պիտի կանգնեցնի, իսկ այծերը՝ ձախին»* (Մատթ. 25. 31-33): Այդ ժամանակ Նա արդարներին ասելու է. *«Եկե՛ք, իմ Հոր օրհնյալնե՛ր, ժառանգեցե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը»* (Մատթ. 25. 34), իսկ մեղավորներին՝ *«Անիծյալնե՛ր, գնացե՛ք Ինձնից հավիտենական կրակը, որ պատրաստված է սատանայի և իր հրեշտակների համար»* (Մատթ. 25. 41):

Դատաստանի առաջ են կագնելու թե՛ մեռածները և թե՛ ողջերը. *«Այս բանն եմ վկայել տալիս Աստծո և Հիսուս Քրիստոսի առաջ, որ դատելու է կենդանիներին և մեռածներին՝ իր հայտնության օրը, երբ գա Իր արքայությամբ»* (Բ Տիմ. 4. 1): Այդ ժամանակ վերջնականապես կդատապարտվի սատանան, արմատախիլ կլինի նաև չարը. *«Եվ երկնքից՝ Աստծո մոտից կրակ պիտի իջնի ու պիտի լափի նրանց և նրանց զորագլխին՝ սատանային. Նա նրանց պիտի գցի կրակի և ծծմբի ծովի մեջ»* (Հայտ. 20. 9-10):

Այս ամենից հետո նոր երկիր և նոր երկինք պիտի լինեն, այսինքն՝ ներկա աշխարհը պիտի վերափոխվի: Այս մասին Ս. Եսայի մարգարեն ասում է. *«Ահա Ես նոր երկինք և նոր երկիր պիտի*

ստեղծեմ» (Ես. 65. 17), իսկ Ս. Պողոս առաքյալը հավելում է. *«Ասածո խոստման համաձայն՝ աչքներս հառած սպասում ենք նոր երկնքի և նոր երկրի, որոնցում արդարությունն է բնակվում»* (Բ Պետ. 3. 13):

Ս. Մկրտությանը պատրաստվող յուրաքանչյուր անձ հստակ պետք է իմանա, որ կա դրախտ և դժոխք: Արդեն իսկ վերևում էլ տեսանք, որ խնդրի մասին շատ պարզ և հստակ խոսում է նաև մեր Տերը: Հետևաբար, մեզ մնում է Աստծուց տրված երկրային կյանքն ապրել քրիստոնեավայել, որպեսզի արժանանք երանական կյանքին՝ մշտապես վայելելով Տիրոջ ներկայությունը: Այս մտածումով դժոխքն հենց այն վայրն է, ուր Աստված չկա: Մենք այս կյանքում էլ կարող ենք մեր կյանքը դժոխք դարձնել՝ մերժելով Աստծուն: Պետք է մեկ բան միշտ հիշել. քանի դեռ այս մարմնում ենք, կարող ենք ապաշխարել մեր մեղքերի համար, իսկ մահից հետո այլևս հնարավոր չէ:

Ս. ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԾԵՍԸ

122. Ինչպես է կատարվում Ս. Մկրտության ծեսը Հայոց Եկեղեցում:

Ս. Մկրտության արարողությունը մեր Եկեղեցում կատարվում է ըստ «Մաշտոց» ծիսամատյանի: Գրերի գյուտից և Աստվածաշնչի հայերեն թարգմանությունից հետո Ս. Սահակ հայրապետը և Ս. Մեսրոպ Մաշտոցն իրենց աշակերտների հետ ձեռնարկում են մեր եկեղեցու Ծիսարանի կազմումը: Ավանդություններից մեկի համաձայն՝ «Մաշտոց» ժողովածուի անունը կապվում է հենց եռամեծ վարդապետ Ս. Մեսրոպի անվան հետ, բայց գիտության մեջ այսօր իշխող կարծիքն է, որ ծիսական կանոններն առաջին անգամ մեկտեղել է Մաշտոց Ա Եղիվարդեցի կաթողիկոսը (897-898), որի անվամբ էլ իրականում այն կոչվում է:

Հայոց Եկեղեցում այսօր գործածվում են երեք տեսակի «Մաշտոցներ»՝ «Փոքր կամ Ձեռաց Մաշտոց» քահանայի համար, որում զետեղված են քահանայի կողմից կատարվող խորհուրդները, զանազան արարողակարգեր և օրհնություններ, «Մայր Մաշտոց», որը հավելյալ պարունակում է նաև եպիսկոպոսին հատուկ արարողությունները՝ ձեռնադրություն, եկեղեցու օծում, քահանայաթաղ և այլն, և վերջապես՝ «Հայր Մաշտոց», որում դրված են կաթողիկոսին հատուկ կարգերը՝ եպիսկոպոսի ձեռնադրություն,

մեռոնօրհնեք, կաթողիկոսական և թագավորական օծումներ:

Ս. Մկրտության ծեսի հնագույն բնագիրը մեզ է հասել 10-11-րդ դդ. թվագրվող երկու երկաթագիր ձեռագիր ընդօրինակություններով, որի համեմատական բնագիրը տպագրվել է 2012 թ. Ս. Էջմիածնում Մաշտոցյան Մատենադարանի գլխավոր ավանդապահ Գևորգ Տեր-Վարդանյանի աշխատասիրությամբ[172]: Բնականաբար, դարերի ընթացքում Ս. Մկրտության բնագիրը ենթարկվել է փոխոխությունների՝ ավելացել կամ կրճատվել են որոշ հատվածներ՝ պահպանելով խորհրդի հիմնական կառուցվածքը: Ս. Մկրտության կանոնը հետագայում խմբագրվել է Ս. Հովհան Որոտնեցու աշակերտ Գևորգ վրդ. Երզնկացու (1350-1416) կողմից: Վերջինս «Խրատ Մկրտության» աշխատության մեջ հստակեցրել է կանոնի խրատները, խորագրերը՝ դնելով աղոթքների և սաղմոսների առաջին բառերը: Այժմ մեր եկեղեցականներն այս խորհուրդը կատարելիս հիմնականում գործածում են վերջին հարյուրամյակում Ս. Էջմիածնում և Անթիլիասում տպագրված «Մաշտոցները»: Մեր ուսումնասիրությունն առավել աբողջական լինելու համար ծեսի բացատրության ժամանակ օգտվել ենք «Հնագույն Մաշտոցից», որում պահպանվել է խորհրդի ծիսական արարողության բուն հայկական կամ ամենավաղ տարբերակը, ձեռագիր տարբեր «Մաշտոցներից», ինչպես նաև այսօր կիրառվող գործնական «Մաշտոց-

172 Մայր Մաշտոց, հ. Ա, գիրք Ա, էջ 215-234:

ներից»՝ ընթերցողին ցույց տալու համար նաև Ս. Մկրտության խորհրդակատարության ծիսական զարգացումը և շեշտադրումները: Աչքի ենք անցկացրել նաև 17-20-րդ դարերի տպագիր «Մաշտոցները» և նկատի ունեցել 2014 թ. նոյեմբերի 11-13-ը Մայր Աթոռում գումարված Եպիսկոպոսաց ժողովում հաստատված Ս. Մկրտության միասնական բնագիրը[173]:

123. Ինչպե՞ս է կոչվում այս խորհուրդը «Մաշտոցներում»:

Ս. Մկրտության խորհրդի խորագիրը տարբեր է ձեռագիր և տպագիր «Մաշտոցներում»: «Հնագույն Մաշտոցից» մինչև 15-րդ դարի ձեռագիր «Մաշտոցներում» Ս. Մկրտության խորհրդի վերնագիրը հիմնականում այսպես է. *«Կանոն Մկրտության, երբ [մեկին] քրիստոնյա են դարձնում»*: Հետագա «Մաշտոցներում» կա՛մ *«Կանոն Մկրտության»* է և կա՛մ *«Կանոն կենդանարար Ս. Մկրտության»*: Վերջին Եպիսկոպոսաց ժողովում ընդունվեց հետևյալ տարբերակը՝ *«Կանոն կենդանարար Ս. Մկրտության և Ս. Դրոշմի»*:

124. Ինչո՞վ է սկսվում Ս. Մկրտության ծեսը:

Հնագույն և մինչև 17-րդ դարը պահպանված «Մաշտոցներում» Ս. Մկրտության ծիսակատարությանը նախորդել է երախայի պատրաս-

173 Տե՛ս Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, Եպիսկոպոսաց ժողով, 11-13 նոյեմբեր 2014, Խորհուրդ Սուրբ Մկրտության, էջ 3-17 (անտիպ):



տության շրջանը, որը տևել է երեք կամ ավելի շաբաթ: Մինչև եկեղեցի մտնելը, չմկրտվածի վրա ասվել է 101-րդ սաղմոսը և «Տեր Աստված մեր» սկսվածքով աղոթքը: 18-րդ դարից սկսած՝ վերացել է այս պատրաստության կարգը, և Ս. Մկրտության ծեսը սկսվում է *«Օրհնում ենք Քեզ՝ Ս. Հոգի, ճշմարի՛տ Աստված»* արտահայտությամբ: Քանի որ այժմ սովորություն է դարձել բոլոր արարողությունները սկսել և ավարտել Տերունական աղոթքով, Ս. Մկրտությունը նույնպես սկսում և ավարտում ենք «Հայր մեր»-ով:

125. Ինչո՞ւ ենք Ս. Մկրտության խորհուրդը սկսում՝ Ս. Հոգուն դիմելով:

Հիսուսի համբարձումից հետո Եկեղեցում սկսվել է Ս. Հոգու դարաշրջանը, որը հաճախ անվանում ենք նաև «շնորհների շրջան»: Հիսուս Իր երկրային քարոզության ժամանակ զգուշացրել էր առաքյալներին, որ Հայր Աստված կուղարկի Մխիթարիչ Ս. Հոգուն, և նույն այդ Հոգով նրանք կզորանան Հոգեգալստին՝ Տիրոջ Ս. Ավետարանը քարոզելով բոլորին և հավատացողներին մկրտելով Ս. Երրորդության անունով: Եվ այս նվիրական պահին խորհրդակատար հոգևորականը դիմում է Ս. Հոգի Աստծուն, որպեսզի Ս. Մկրտության փրկարար խորհուրդը կատարվի աստվածային ներգործությամբ, ինչպես առաքյալների ժամանակ էր:

126. Որտեղի՞ց է սկսվում Ս. Մկրտության խորհուրդը:

«Հնագույն Մաշտոցի» սկզբում դրված է հետևյալ խրատը. *«Եվ երախային տանում են եկեղեցու ներսի կողմը՝ դռան մոտ և ասում»*: Ցավոք, այսօր մեծ մասամբ Ս. Մկրտության ծեսը սկսվում է Ս. Ավազանի մոտ: Բայց եթե հնարավորություն կա, ապա այն պետք է անպայման սկսել եկեղեցու դռան մոտից, այնուհետև արարողության համապատասխան հատվածում մտնել դաս և շարականի երգեցողությամբ շարժվել դեպի Ս. Ավազանը: Չպետք է մոռանալ, որ եկեղեցու գլխավոր դուռը միշտ նայում է դեպի արևելք, որտեղից ծագում է արդարության կենդանի Արեգակը՝ մեր Տերը: Արարողության ժամանակ՝ արևմուտքից արևելք շարժվելը խորհրդանշում է անցումը խավարից դեպի լույս, մահվանից դեպի կյանք, երբ հին մարդը մեռնում է և նորը ծնվում:

127. Ի՞նչ է ասում խորհրդակատար հոգևորականը դռան մոտ:

«Հնագույն Մաշտոցից» մինչև 20-րդ դարի սկիզբը քահանան դռան մոտ ասել է երեք սաղմոսներ՝ 24.1, 25.1 և 50: Այսօր այս երեք սաղմոսներից պահպանվել է միայն վերջինը, իսկ առաջին երկուսը կրճատվել են: Այժմ սաղմոսն արտասանելուց հետո երգվում է Ս. Ներսես Շնորհալու հեղինակած «Երրորդութիւն անբաժանելի» շարականը, որին հաջորդում է քարոզ. *«Եվ նաև խաղաղության համար Տիրոջն աղաչենք: Եվ կրկին այս երախայի համար աղաչենք մարդասեր Աստծուն, որպեսզի ողորմի սրան իր մեծ ողորմութ-*

յամբ, և արժանի դարձնի վերստին ծննդյան լվացման ու անապական զգեստի, և Իր անվանը հավատացողների հետ համադասի, և ապրեցնի Իր ողորմության շնորհիվ, ամենակալ մեր Տեր Աստված, ապրեցրո՛ւ և ողորմի՛ր»[174]: Այս քարոզից հետո մկրտող հոգևորականը երեք անգամ «Տե՛ր, ողորմի՛ր» ասելուց հետո աղոթք է ընթերցում. *«Ընդունի՛ր, մարդասե՛ր Տեր, Քեզ ընծայվող այս երախային, սրբի՛ր սրա միաքն ու խորհուրդները հակառակորդի բոլոր նենգություններից։ Եվ արժանի՛ դարձրու սրան՝ Ս. Ավազանի միջոցով լվանալու իր մեղքերի հնությունը և նորոգվելու Քո Քրիստոսի շնորհների լույսով։ Տե՛ր Աստված, մեծ և փառավորված բոլոր արարածներից, Քո այս ծառան, ահեղ և ամենազոր անվանդ ապավինելով, խոնարհեցրեց իր գլուխը սուրբ անվանդ առջև, որին ծնրադրում են բոլոր երկնավորները, երկրավորները և սանդարամետականները, և ամեն լեզու թող խոստովանի, թե Տեր է Հիսուս Քրիստոս ի փառս Հայր Աստծո։ Թող հաղորդվի սա ահավոր և հաղթող անվանդ, որ հալածեց դևերի խաբեությունն ու մոլորությունների կռապաշտությունը և խափանեց սատանայական բոլոր որոգայթները։ Նայի՛ր, Տե՛ր, Քո ողորմությամբ սրան, Քո ամենահաղթ կոչմամբդ և սուրբ անվամբդ սրա վրա, մերժի՛ր և հեռացրո՛ւ սրանից պիղծ այսերի կողմից թաքցրած խորհուրդները, խոսքերը, գործերը և բոլոր խաբեությունները, որոնցով չար դևերը սովոր են խաբել և կործանել մարդկանց։ Որպեսզի, հաղթող անունիդ զարհուրելով, տագնապի և տանջվի աներևույթ տանջանքով,*

174 Մաշտոց..., 1905, էջ 16:

երդմամբ հեռանա սրանից և այլևս չմոտենա սրան։

Լցրո՛ւ սրան երկնային շնորհներովդ և զվարճացրո՛ւ ամենաբարի կոչմամբդ՝ քրիստոնյա անվանելով, և հարմար ժամանակ արժանի՛ դարձրու վերստին ծննդյան Մկրտութեանը։ Եվ ընդունելով Քո Ս. Հոգիդ՝ մարմին և անդամ լինի Քո Ս. Եկեղեցու։ Եվ անարատ քրիստոնեութեամբ առաքինի կյանք վարելով այս աշխարհում՝ հանդերձյալ բարիքներիդ հասնի բոլոր սրբերիդ հետ՝ փառավորելով անփոփոխելի տերութեունդ, այժմ և միշտ և հավիտյանս. ամեն»[175]։ Այս աղոթքը «Հնագույն Մաշտոցում» ընդմիջարկվում է փոքր քարոզով։ Հետագա «Մաշտոցներում» այն կրճատվել է, փոփոխության ենթարկվել և երկու աղոթքները դարձել են մեկ։

128. Ի՞նչ է կատարվում այս աղոթքից հետո։

Ապա քահանան և կնքահայրը ի դեմս մանուկ մկրտյալի երեք անգամ ծնրադրում են՝ ասելով 21.11 սաղմոսը. *«Քեզ հանձնվեցի ես արգանդից, մորս որովայնից սկսած, Դու ես իմ Աստվածը»*։ Եթե մկրտվողը չափահաս է, ապա նա և կնքահայրը պետք է դեպի խորան ծնրադրեն։ Սովորաբար այսօր ընդունված է, որ բոլորը խոնարհվում են, երբ քահանան արտասանում է այս սաղմոսը։ Ըստ «Մաշտոցի» հրահանգի՝ այս պահին ծնողները մանուկ մկրտյալին տալիս են կնքահոր գիրկը, բոլորը շրջվում են դեպի արևմուտք և ասում «Հրաժարիմքը»։

175 Մայր Մաշտոց, հ. Ա, գիրք Ա, էջ 217-218։

129. Ի՞նչ է «Հրաժարիմքը»:

Ս. Մկրտության բուն խորհրդից առաջ ապագա քրիստոնյան պետք է անպայման հրապարակավ հրաժարվի սատանայից և ապա արտասանի հավատքի դավանությունը: Հնում այս ծիսակարգը կատարվում էր Ավագ Ուրբաթ կամ Ավագ Շաբաթ, որով ավարտվում էր երախայի պատրաստության շրջանը, և Ս. Ձատկին տվյալ անձը մկրտվում էր՝ դառնալով քրիստոնյա և Եկեղեցու անդամ: Վաղ Եկեղեցում դիվահալածության կարգից հետո «Հրաժարիմքի» արտասանությամբ երախան հաստատում էր, որ չի վախենում դեմ առ դեմ հանդիպել սատանային և կամավոր հրաժարվում է նրա իշխանությունից: Սա ձևական ծիսական մի քայլ չէ, որը դարեր շարունակ կրկնում ենք, այլ քրիստոնյայի մերժումը և հրաժարումը սատանայից ու նրա խաբկանքներից, որոնք այնքան շատ են նաև արդի աշխարհում:

130. Ինչո՞ւ ենք «Հրաժարիմքի» ժամանակ շրջվում դեպի արևմուտք:

Արևմուտքը խորհրդանշում է խավարը, որտեղ բնակվում է սատանան: Ավետարաններում ասվում է, որ երկրորդ գալստյան ժամանակ Տերը հայտնվելու է արևելքից, ուստի հենց այս սպասման պատճառով էլ աղոթելիս հայացքներս միշտ ուղղում ենք դեպի արևելք, որտեղ Ս. Սեղանն է: Բայց քանի որ սատանան հարվածում է մեզ «թիկունքից»՝ խափանելու համար մեր աղոթական վիճակը, Ս. Մկրտության այս

պահին շրջվում ենք դեպի արևմուտք, պատկերավոր ձևով հարվածում ենք սատանային, մեր հաստատուն «ոչ»-ը ասում նրան և մեր հավատարմությունը ցույց տալիս Տիրոջը:

«Հրաժարիմքի» ժամանակ ձեռքերը ներքև ենք պահում, իսկ ափերը՝ կոր: Սովորաբար այժմ «Հրաժարիմքը» արտասանում է ծիսակատար քահանան՝ վերջում պարզապես ներկաները կրկնում են վերջին արտահայտությունը՝ *«Հրաժարվելով հրաժարվում ենք»*: Եթե կնքահայրը կամ չափահաս մկրտվողը գիտեն, ապա խրախուսելի է, որ «Հրաժարիմքը» միայն իրենք կարդան:

131. Ի՞նչ ենք ասում «Հրաժարիմքի» ժամանակ:

«Հնագույն Մաշտոցից» մինչև 1667 թ. Ոսկան արք. Երևանցու (1614-1674) հրատարակած «Մաշտոց» ժողովածուն «Հրաժարիմքի» բնագիրը փոքր-ինչ այլ է. *«Հրաժարվում ենք քեզանից, սատանա՛, քո ողջ խաբեությունից, քո պատրանքներից, քո պաշտամունքից, քո ճամփաներից, քո հրեշտակներից և քո զորությունից»*[176]: Երեք անգամ այս ասելուց հետո, քահանան կրկին հարցնում է երախային՝ *«Հրաժարվո՞ւմ ես, հրաժարվո՞ւմ ես, հրաժարվո՞ւմ ես»*: Իսկ նա էլ ամեն հարցումին պատասխանում է. *«Հրաժարվում եմ»*[177]:

1704 թ. «Մաշտոցից» մինչև այսօր «Հրաժա-

176 Հրաժարիմքի այս տարբերակը որոշ կրճատումներով առկա է նաև 1676 թ. տպագիր «Մաշտոցում». տե՛ս Գիրգ սրբոյն Մաշտոցայ վարդապետի, ի Զմիւռնեայ, 1676, էջ 20:

177 Գիրգ սրբոյն Մաշտոցայ վարդապետի, Յամստէլօդամ, 1667, էջ 20:



րիմքի» համար գործածվում է հետևյալ բնագիրը. *«Հրաժարվում ենք սատանայից և նրա ամբողջ խաբեությունից, նրա պատրանքներից, նրա խորհուրդներից, նրա ճամփաներից, նրա չար կամքից, նրա չար հրեշտակներից, նրա չար գործակիցներից, նրա չար կամքը կատարողներից և նրա ամբողջ չար զորությունից հրաժարվելով հրաժարվում ենք»*[178]:

Ս. Կյուրեղ Երուսաղեմացին «Կոչումն ընծայութեան» երկում, բացատրելով Ս. Մկրտության ժամանակ «Հրաժարիմքի» իմաստը, ասում է. *«Որովհետև աշխարհի արևմտյան հատվածը, որտեղ նայում ենք, խավարի վայրն է, իսկ սատանան, ով իրապես խավարն է, խավարի մեջ իշխանություն ունի: Այդ պատճառով դեպի արևմուտք շրջվելով՝ անջատվում և հրաժարվում եք այդ խավար ու մթին տիրակալից: Եվ ինչ էր ասում ձեզանից յուրաքանչյուրը, երբ կանգնած նայում էիք դեպի արևմուտք. «Հրաժարվո՛ւմ եմ քեզանից, սատանա՛», հրաժարվում չար ու դաժան բռնակալից. այլևս չեմ վախենում քո իշխանությունից: Քանզի Քրիստոս, մարդ դառնալով, կործանեց քո իշխանությունը, մեռնելով որպես մարդ, իր մահով վերջ տվեց մահին, որպեսզի ես չլինեմ մշտապես սարկացած ու գերության մեջ: Ծխտում եմ քեզ՝ դավադիր և խորամանկ օձիդ: Հրաժարվում եմ քեզանից, քանզի նենգամիտ լինելով՝ բարեկամ ձևացար և ամեն անօրենություն գործեցիր՝ իմ նախահայրերին մղելով ըմբոստության: Հրաժարվո՛ւմ եմ քեզանից, սատանա՛, քանզի դու ես պատճառ և գործակից ամեն չարության...: Եվ արդ, երբ դու հեռացար սատանայից*

178 Գիրք սրբոյն Մաշտոցայ վարդապետի, Կ. Պոլիս, 1704, էջ 9:

և ոտնակոխ արեցիր նրա հետ ունեցած ամբողջ համաձայնությունը և դրա հետ միասին լուծեցիր դժոխքի հանդեպ ունեցած քո նախկին պայմանագրությունները նրա հետ, այնժամ Աստված բացեց դրախտը քեզ համար, որ տնկել էր արևելքում, և որտեղից արտաքսվեց մեր նախահայր Ադամը իր ըմբոստության և օրինազանցության պատճառով: Եվ այդ է խորհրդանշում քո շրջվելը արևմուտքից դեպի արևելք, որն էլ լույսի վայրն է»[179]:

132. Ի՞նչ է «Հավատամքը»:

«Հրաժարիմքից» հետո ներկաները շրջվում են դեպի արևելք և ձեռնամած (երկու ձեռքերի ափերը միացրած) ասում «Հավատամքը», որը մեր քրիստոնեական հավատքի խտացված ամփոփումն է, երբ բարձրաձայն բերանով խոստովանում և ասում ենք այն, ինչին հավատում ենք: Ուղղափառ հավատքի խոստովանությունը Եկեղեցի մուտք գործելու խորհրդական դուռն է և առաջին նախապայմանը: Ուստի դա է պահանջվում նաև յուրաքանչյուր մկրտյալից: Ս. Աթանաս Ալեքսանդրացին ասում է. *«Աստծուն ճանաչելու առաջին տեսակն ուղղափառ հավատքի խոստովանությունն է...: Քանզի քրիստոնեության անունը Քրիստոսին ճշմարիտ խոստովանելն է, իսկ քրիստոնյա է կոչվում նա, ով ճշմարիտ խոստովանությունն ունի»*[180]:

---

179 Կոչումն ընծայության, էջ 362-363:

180 Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք և ընդդիմասա[ց]ութիւնք, էջ 239-240:

Մեր Եկեղեցու ծիսակարգում գործածում ենք երեք «Հավատամքներ»՝ առաջին՝ Նիկիակոստանդնուպոլսյանը կամ պարզապես Նիկիական հանգանակը, որն ասում ենք Ս. Պատարագի ժամանակ, երկրորդ՝ Ս. Գրիգոր Տաթևացու խմբագրած «Խոստովանում և կատարյալ սրտով հավատում ենք» սկսվածքով հավատքի դավանությունը, որը զետեղված է «Ժամագրքի» սկզբում, և երրորդ՝ Ս. Մկրտության ժամանակ ասվող հավատքի համառոտ խոստովանությունը:

133. Ի՞նչ ենք ասում «Հավատամքի» ժամանակ:

«Հրաժարիմքից» հետո մկրտող հոգևորականն ասում է. *«Հավատում ենք Ամենասուրբ Երրորդությանը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն: Հավատում ենք Գաբրիելի ավետմանը, Քրիստոսի ծննդին, մկրտությանը, չարչարանքներին, խաչելությանը, երեքօրյա թաղմանը, հարությանը, աստվածապես համբարձվելուն և Հոր աջ կողմը նստելուն, ահեղ և փառավոր երկրորդ գալստյանը. խոստովանում ենք և հավատում»*: Եթե մկրտյալը չափահաս է, ապա կարող է նաև նա ընթերցել: Հավատքի խոստովանության այս տարբերակն արդեն առկա է 1704 թ. «Մաշտոցում»[181]:

---

181 Պոլսական ավանդության մեջ Ս. Մկրտության ժամանակ ասվում է միայն Նիկիական հանգանակը. տե՛ս Մաշտոց, Իսթանպուլ, 1985, էջ 50-54, հմմտ. Մաշտոց յորում աւանդին սրբազան արարողութիւնք ազգիս՝ ըստ Սահմանադրութեան Սուրբ Եկեղեցւոյս Հայոց, Երուսաղէմ, 1933, էջ 22:

134. Միշտ այսպե՞ս է եղել հավատքի խոստովանությունը Ս. Մկրտության արարողության ժամանակ:

Հնագույն Մաշտոցից մինչև «Մաշտոցի» 1667 թ. Ոսկան Երևանցու հրատարակությունը հավատքի խոստովանությունն այսպես է կատարվել: Մկրտող քահանան երեք անգամ հարցնում է մկրտյալին. *«Հավատո՞ւմ ես Ամենասուրբ Երրորդութ֊յանը՝ Հորը, Որդուն և Ս. Հոգուն. հավատո՞ւմ ես»*: Մկրտվողը պատասխանում է. *«Հավատո՛ւմ եմ»*: Ապա հոգևորականը մեկ առ մեկ հարցնում է. *«Հավատո՞ւմ ես Հորը, հավատո՞ւմ ես Որդուն, հավատո՞ւմ ես Ս. Հոգուն»*: Երախան ամեն անգամ ասում է. *«Հավատո՛ւմ եմ, հավատո՛ւմ եմ, հավատո՛ւմ եմ»*: Նորից է քահանան հարցնում. *«Հավատո՞ւմ ես, հավատո՞ւմ ես, հավատո՞ւմ ես»*: Երախան կրկին մեկ առ մեկ ասում է. *«Հավատո՛ւմ եմ»*: Անհատական այս խոստովանությունից հետո ներկաներն ասում են Նիկիական հանգանակը: Ինչպես տեսնում ենք, բուն հայկական ծեսում նախ պահանջվել է մկրտյալի հավատքի անհատական խոստովանությունը, որի մասին վկայում են նաև բայաձևերը, ապա արարողության ներկաներինը[182]:

Համառոտ և ընդարձակ «Հավատամքները» պահպանվել են նաև 18-20-րդ դարերի տպա-

182 Նույն պատկերն ենք տեսնում նաև մեղքերի ընդհանրական խոստովանության կարգում նախքան Ս. Գրիգոր Տաթևացու խմբագրումը. տե՛ս **Զաքարիա աբեղա Բաղումյան**, Կիրակոս վարդապետ Երզնկացու խրատները մեղքերի խոստովանության մասին, «Էջմիածին», Գ, 2012, էջ 71, 76-77, 91:

գիր «Մաշտոցներում»: Նիկիական հանգանակն արդեն բացակայում է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հրատարակած բարեփոխված և կրճատված վերջին «Մաշտոցում»[183], որն այսօր եկեղեցականները շատ են գործածում: Նիկիական «Հավատամքի» կրճատման պատճառը գործնական ծիսական կյանքն է, քանզի եկեղեցականների մեծ մասն իրականում ընթերցում է «Հավատամքի» միայն համառոտ տարբերակը: Բայց այն հոգևորականները, ովքեր հնարավորություն ունեն, կարող են երկուսն էլ ընթերցել:

135. Ինչո՞ւ ենք «Հավատամքը» ձեռնամած ասում:

Այն խորհրդանշում է մեր սրտի, հոգու, մտքի և զգայարանների միությունը, երբ տվյալ մարդն իր ողջ էությամբ հավատում է կարդացվածին: Ձեռնամած ենք լինում նաև «Կեցո»-ի և «Փառք ի բարձունս»-ի ժամանակ: Պատարագիչ հոգևորականը նույնպես ծածուկ որոշ աղոթքներ ձեռնամած է կարդում:

136. Ի՞նչ է խորհրդանշում դեպի արևելք շրջվելը:

Արևելքը մեր հոգու դարձն է դեպի Քրիստոս՝ կենդանի Լույսը: Մենք հավատում ենք, որ Հիսուս երկրորդ գալստյան ժամանակ հայտնվելու է արևելքից, ուստի այդ սպասումով էլ դեպի արևելք ենք աղոթում՝ ըստ առաքելական կանոնների: Սա է պատճառը, որ մեր եկեղեցու Ս. Սե-

183 Մաշտոց յորում աւանդին արարողութիւնք ազգիս՝ ըստ սահմանադրութեան Սուրբ Եկեղեցւոյն Հայոց, Թեհրան, 2001, էջ 34-35:

ղանն արևելքում է: Այս մասին Ս. Գրիգոր Տաթևացին ասում է. *«Որովհետև սատանան, տգիտությունը և մեղքը խավար են, ուստի դեպի արևմուտք ուրանում և հրաժարվում ենք: Իսկ Աստված, գիտությունը և դավանությունը լույս են, [ուստի] արևելք ենք շրջվում: Բայց սրանից երեք բան է բացահայտվում. նախ՝ քանի որ լույսը և խավարը, տգիտությունը և գիտությունը, չարը և բարին միասին չեն կարող լինել, որովհետև իրար հակառակ են, ինչպես ջերմությունը և ցուրտը, մահը և կյանքը: Այս է ուսուցանում Ավետարանում. «Չեք կարող ծառայել Աստծուն և մամոնային» (Մատթ. 6. 24, Ղուկ. 16. 13): Այդ պատճառով պետք է մեկից հեռանալ, իսկ մյուսին՝ մոտենալ: Երկրորդ՝ ցույց է տալիս, որ պետք է նախ չարից հեռանալ և ապա բարուն մոտենալ, խավարից փախչել և ապա լույսի մեջ բնակվել, քանզի սրբի տեղը սուրբ պիտի լինի...: Երրորդ՝ ցույց է տալիս, թե բավական չէ միայն չարից հեռանալը, այլև բարիք գործելը, ոչ միայն խավարն ու տգիտությունը թողնելը, այլև լույսն ու գիտությունը ստանալը»*[184]:

137. Ի՞նչ է ասվում «Հավատամքից» հետո:

Այնուհետև երգվում է Պետրոս Գետադարձ կաթողիկոսի (1019-1058) գրած շարականը. *«Քո ողորմության դուռը բացի՛ր մեր առաջ, Տե՛ր, և արժանի՛ դարձրու լուսեղեն հարկերիդ Քո սրբերի հետ»*: Այս պահին արարողության մասնակիցները դռան մոտից գալիս են դեպի դաս: Շարականից հետո ասվում է քարոզ և կարճ աղոթք, որից հե-

184 Ամառան հատոր, էջ 146:

տո երգվում է Ս. Ներսես Շնորհալու հեղինակած «Արդարության Արեգակ» սկսվածքով շարականը: Վերջինիս երգեցողության ժամանակ ներկաները քայլում են դեպի Ս. Ավազան, որտեղ պիտի կատարվի արդեն բուն Ս. Մկրտությունը:

138. Ինչպե՞ս է կատարվում բուն Մկրտությունը:

Այժմ քահանան ջուրը լցնում է Ս. Ավազանի մեջ՝ ասելով 28. 3, 1 սաղմոսը, ընթերցվում է Ս. Պողոս առաքյալի թղթից մեկ հատված (Գաղ. 3. 23-29), Հովհաննեսի Ավետարանից Նիկոդեմոսի մասին պատմող դրվագը (3. 1-8), խաչով օրհնվում է ջուրը և Ս. Մյուռոնը կաթեցվում է Ս. Ավազանի մեջ: Այս պահին կնքահայրն ու երախան կանգնում են Ս. Ավազանի մոտ, իսկ քահանան կարդում է հետևյալ աղոթքը. *«Որ կանչեցիր Քո ծառային, Տե՛ր, Մկրտության սրբության և լուսավորության, աղաչում ենք Քեզ, սրան արժանացրո՛ւ մեծ շնորհներիդ: Մերկացրո՛ւ սրանից մեղքի հնության, նորոգի՛ր նոր կյանքով և լցրո՛ւ Ս. Հոգուդ զորությամբ՝ Քրիստոսի փառքիդ նորոգության համար: Եվ Քեզ, Հզորիդ և Միածին Որդուդ և ազատիչ Ս. Հոգուդ վայելում են իշխանությունը և պատիվը, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»*[185]: Այնուհետև կնքահոր հետ հարց ու պատասխանից հետո քահանան մկրտում է երախային Ս. Երրորդության անունով՝ ասելով Ս. Մկրտության բանաձևը:

185 Մաշտոց..., 1905, էջ 45:

139. Ի՞նչ խորհուրդ ունի մկրտվողին նոր անուն դնելը:

Եկեղեցական ավանդության համաձայն՝ Ս. Մկրտության ժամանակ երախային նոր անուն են տալիս, որը խորհրդանշում է Եկեղեցու Ս. Ավազանից նոր մարդու՝ արդեն քրիստոնյայի ծնունդը: Այսպես է նաև քահանայական ձեռնադրության ժամանակ, երբ ձեռնադրող եպիսկոպոսն ընծայացուի ճակատը Ս. Մյուռոնով օծելիս նրան նոր անուն է տալիս: Ս. Մկրտության ժամանակ քահանան, բարձրաձայն արտասանելով Ս. Մկրտության բանաձևը, երախային ընկղմում է ջրի մեջ և ասում. *«(Արդասանում է անունը) Աստծո այս ծառան...»*: Սովորաբար մկրտյալին տալիս են որևէ սրբի անուն այն մտածումով, որպեսզի տվյալ սուրբը բարեխոս և պահապան լինի մկրտվողին կյանքի հետագա օրերին[186]: Նկատի պետք է ունենալ, որ նախկինում չկային այսօրվա պետական պատկան մարմինները, որոնք այժմ փաստաթղթով արձանագրում են երեխայի անունը ծննդից հետո: Հնում մեր Եկեղեցում ընդունված սովորությամբ մանկանը մկրտում էին ութօրյա հասակում, և նրա մկրտության անունն էլ դառնում էր նրա քաղաքացիական անունը: Այսօր իրականությունը տարբեր է, քանզի ծննդյան վկայականի և Ս. Մկրտության անունները կարող են տարբեր լինել: Հատկապես խնդիրը բարդ է խորհրդա-

186 Անվանափոխության մասին տե՛ս նաև **Священник Константин Пархоменко**, Таинство вхождения в Церковь, Санкт Петербург-Москва, 2002, стр. 23-29.



յին տարիներին ծնված մեծահասակների դեպքում, որոնք ունեն ոչ քրիստոնեական անուններ՝ *Կառլեն, Լենդրուշ, Վիլեն, Շաքար, Բախտիար, Գյուլնար, Գյուլիզար* և այլն: Նույնն է պարագան նաև օտարահունչ անունների դեպքում: Բնականաբար, նման դեպքերում եկեղեցականն անպայման անվանափոխություն է կատարում:

140. Ո՞վ է որոշում, թե ի՛նչ անուն դնեն երախային:

Անվանափոխությունը մկրտող հոգևորականի իրավունքն է: Ըստ ձեռագիր մի քանի «Մաշտոցների»՝ ծնողներն իրենք են քահանային ասում երեխայի անունը[187], իսկ 1785 թ. տպագիր «Մաշտոցից» սկսյալ՝ անուն դնելը վերապահված է հոգևորականին[188]: Մեր խորհուրդն է հոգևորականներին, որ արարողությունից առաջ անվանափոխության համար անպայման խորհրդակցեն ծնողների և կնքահոր հետ, որպեսզի նաև նրանց սրտով լինի իրենց զավակի անունը: Եթե երախան ունի արդեն քրիստոնեական կամ հայկական անուն, ապա քահանան կարող է նույն անունը թողնել: Խնդիրը բարդ է,

187 Օր. տե՛ս ՄՄ ձեռ. Հ[մի] 4846, թ. 33աբ, Հ[մի] 959, թ. 82բ, Հ[մի] 7846, թ. 80ա, Հ[մի] 2788, թ. 79բ: Ձեռագիր այս «Մաշտոցները» ունեն հետևյալ խրատը. «Եվ ապա իջեցնում է նորընծային Ավազանի մեջ և անունը խնդրում ծնողներից»: Հետաքրքրական է, որ վերոգրյալ չորս ձեռագրերը գրվել են նույն վայրում՝ Աղթամարում, որոնցից առաջին երկուսն ունեն *նորընծայ* բառի խոտոր գրության ձևը՝ *նորընձայ*: Սա վկայում է Աղթամարի շրջակայքում ընդհանրացած տեղային ավանդության մասին, քանզի որևէ այլ «Մաշտոցում» չենք հանդիպում նման խրատի, երբ մկրտյալի անունը ծնողներն են ասում:

188 Սուրբ Գիրքս, որ կոչի Մաշտոց, Կ. Պոլիս, 1785, էջ 29:

երբ մարդն ապրում է արտերկրում, ունի օտարահունչ անուն և ցանկանում է մկրտվել նույն անունով, որպեսզի փաստաթղթերի հարցում միօրինակություն լինի: Նման դեպքերում լավ կլինի խոսել և բացատրել անվանափոխության իմաստը՝ ամեն ինչ անելով սիրով և համբերությամբ: Չպետք է ծայրահեղության մեջ ընկնել և անգամ հայկական, բայց ոչ քրիստոնեական անունները փոխել, ինչպես օր.՝ Աստղիկ, Արամ, Տիգրան, Անահիտ և այլն: Ուստի ծնողները պատասխանատվությամբ և ազգային բարձր գիտակցությամբ պետք է մոտենան իրենց զավակների անուն դնելուն, անպայման աչքի անցկացնեն անձնանունների բառարանները, չտարվեն օտարամոլությամբ՝ երեխաների համար ընտրելով հայկական և քրիստոնեական բարեհունչ անուններ:

141. Ինչո՞վ է սկսվում Ս. Դրոշմի խորհուրդը:

Հայոց Եկեղեցում Ս. Մկրտության և Ս. Դրոշմի խորհուրդները կատարվել են միշտ միասին: «Մաշտոցներում» այս խորհրդի սկիզբը տարբեր է: Մեզ հասած ամենահին «Մաշտոցում» Ս. Մկրտությունից հետո ընթերցվում է Մատթեոսի Ավետարանից Հիսուսի Մկրտության հատվածը (3. 2-17), որը պահպանվել է նաև 1905 թ. Վաղարշապատի «Մաշտոցում», ապա «Հայր մեր» և «Որ լուսավորեցիր» սկսվածքով աղոթքը: Հետագայում ավելացել են ևս մեկ ընթերցված Ս. Պողոսի՝ հռոմեացիներին ուղղված թղթից (6. 3-11), ինչպես նաև «Որ համագոյդ», «Որ յառա-



ջագոյն» և «Աղբիւր շնորհաց» հոգեզմայլ շարականները: Այժմ սովորաբար երգվում է «Որ համագոյդ» շարականը և ասվում հետևյալ աղոթքը. *«Որ լուսավորեցիր արարածներիդ, Քրիստո՛ս Աստված, ծագեցնելով աստվածության լույսը մեր մեջ, և այժմ ազատեցիր քո այս ծառային, մաքրեցիր և արդարացրեցիր ու տվեցիր սրան որդեգրության պատիվը: Շնորհի՛ր սրան, Տե՛ր, նաև կյանքի հավատարմություն և պարգևի՛ր մշտամնա անապականություն՝ միացնելով սրան արդարներիդ և սրբերիդ թվին և նրանց հետ փառավորելու Քեզ Հոր և Ս. Հոգուդ հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամէն:*

Աստվա՛ծ, Դո՛ւ, որ մեծ ես, մշտնջենավոր և բոլոր գաղտնիքներն իմացող, որ սուրբ ես և սրբերի մեջ հանգստացող, բոլոր մարդկանց փրկիչ, որ շնորհեցիր ճշմարտության գիտությունդ բոլոր հավատացյալներին և իշխանություն տվեցիր՝ Աստծո որդիներ լինելու՝ ջրից և Հոգուց վերստին ծննդյան շնորհով:

Որ նաև (տալիս է անունը) *ծառայիդ նորոգեցիր Քո Ս. Ավազանի քավությամբ, սրբացրո՛ւ սրան, Տե՛ր, Քո ճշմարտությամբ և Ս. Հոգուդ շնորհների լույսով, որպեսզի լինի աստվածությանդ տաճար և բնակարան, և կարողանա գնալ արդարության բոլոր ճանապարհներով, և կանգնել համարձակությամբ Միածնիդ՝ Մեր Տեր Հիսուս Քրիստոսի ահեղ ատյանի առջև, որի հետ Քեզ՝ ամենակալ Հորը և կենդանարար ու ազատիչ Ս. Հոգուդ վայելում են փառքը, իշխանությունը և պատիվը, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամէն»*[189]: Այս աղոթքից հետո քահանան արդեն մկրտված

189 Մաշտոց..., 1905, էջ 52-53:

և լուսավորված քրիստոնյային սկսում է դրոշմել Ս. Մյուռոնով:

142. Ի՞նչ է խաղաղության ողջույնը:

Քահանան Սրբալույս Մյուռոնով քրիստոնյային դրոշմելուց հետո խաչակնքում է նրան և ասում. *«Խաղաղությո՛ւն քեզ, փրկվա՛ծդ Աստուծոյ, խաղաղությո՛ւն քեզ, օծվա՛ծդ Աստուծոյ»*[190]: Կնքահայրը կամ մկրտյալը, դիմելով քահանային, պատասխանում է. *«Եվ քո հոգուն»*, այսինքն՝ նույն խաղաղությունը թող լինի նաև ձեզ հետ[191]: Այս խաղաղությունն է տալիս բոլորին հոգևորականը Ս. Պատարագի ընթացքում և ժամերգությունների ժամանակ աղոթքներն ընթերցելիս, երբ տյառնագրում է նրանց: Կատարյալ խաղաղությունը բնորոշ է Ս. Երրորդության անձերի փոխհարաբերություններին, որ ունեն նույն կամքն ու

190 Խաղաղության այս ողջույնը կարելի է տեսնել նաև լատինական ծեսում: Ըստ Մաղաքիա արք. Օրմանյանի՝ այս պահին եպիսկոպոսը թեթևակի ապտակում է դրոշմվածին: Այս սովորությունը սկզբնավորվել է 12-րդ դարում, երբ Ս. Դրոշմն անջատվեց Ս. Մկրտությունից: Լատիններն ապտակելը խորհրդաբար բացատրում են՝ իբրև նշան համբերության և արիության, որի հիմքը միջնադարյան ասպետական արարողություններն էին: Քանզի երբ նոր ասպետ էին ընդունում, նրան էին հանձնում սուրը և թեթևակի ապտակում՝ որպես իշխանության նշան. **Մաղաքիա արքեպս. Օրմանեան**, Տեղիք աստուածաբանութեան, էջ 257:

191 «Մաշտոցներում» այս պատասխանը վերագրվում է երկուսին էլ, բայց այսօր գործնականում այն չի ասվում: Մեր կարծիքով լավ կլինի, որ քահանաները, երբ նախապես հանդիպում են մկրտվողի և կնքահոր հետ, նաև այս մասին ծանուցեն, որպեսզի նրանք էլ իրենց մասնակցությունն ունենան արարողությանը: Եթե մկրտյալը մանուկ է, ապա, բնականաբար, կնքահայրը կարող է ասել պատասխանը, իսկ չափահասի դեպքում կարելի է թողնել մկրտյալին:



իշխանությունը, նրանց միջև չկան խռովություն և պատերազմ, այլ միշտ խաղաղություն է: Ս. Ներսես Շնորհալին Մատթեոսի Ավետարանի 5. 9 համարը մեկնելիս այս խաղաղությունն անվանում է *«առաջին և ծայրագույն»*: Այն տրված էր նաև առաջին մարդուն, որը խախտվեց պատվիրանազանցության և անհնազանդության պատճառով: Բայց Աստվածորդու՝ ճշմարիտ Խաղաղության, մարդեղությամբ և գալստյամբ խաղաղություն հաստատվեց երկնքում և երկրի վրա, ինչպես որ հրեշտակների բազմությունն էր երգում Նրա ծննդյան ժամանակ. *«Փա՜ռք Աստծուն բարձունքներում, և երկրի վրա՝ խաղաղություն»* (Ղուկ. 2. 14)[192]: Մարդ միայն Քրիստոսով կարող է ստանալ և ապրել այդ խաղաղությունը, որը վեր է մտքից և տարբեր՝ աշխարհի խաղաղությունից (տե՛ս Հովի. 14. 27, Փիլ. 4. 7): Քրիստոսի խաղաղությունն է բաշխվում Եկեղեցու մեջ՝ ջերմացնելով և գոտեպնդելով հավատացյալին, որը սպասում է վերջնական խաղաղությանը Տիրոջ երկրորդ գալստից հետո: Եվ Ս. Մկրտության այս պահին, երբ նոր մկրտվածն անմեղ է՝ մաքրված բոլոր մեղքերից և լուսավոր, աստվածային նույն խաղաղությունն ենք մաղթում նրան:

143. Ինչո՞ւ են մկրտյային նոր զգեստ հագցնում:

Վաղ Եկեղեցում Ս. Մկրտության ծեսի անբաժանելի մասն էր հին զգեստ հանելն ու նո-

192 Տե՛ս Մեկնութիւն Սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթէոսի..., էջ 97, **Ս. Ներսես Շնորհալի**, Մեկնություն Մատթեոսի Ավետարանի, էջ 247-248:

րը հագցնելը[193]: Մեր Եկեղեցում պահպանված «Հնագույն Մաշտոցից» սկսած՝ Ս. Դրոշմից հետո մկրտյալին նոր զգեստ են հագցնում[194]: Այս խրատի վաղ տարբերակներում չի նշվում, թե երեխայի զգեստն ի՛նչ գույնի պետք է լինի: Բայց եկեղեցական մեր ավանդության մեջ արդեն 7-րդ դարում Ստեփանոս Սյունեցին եկեղեցու խորհրդաբանությանը նվիրված ճառում նշում է, որ նոր մկրտվածին սպիտակ զգեստ հագցնելը խորհրդանշում է նախահայր Ադամի «առաջին պատմուճանը»[195]: Հետևաբար, ընդունված է մկրտվածին նոր և սպիտակ զգեստ հագցնելը, որը խորհրդանշում է մկրտվածի անմեղությունն ու մաքրությունը, լուսավոր վարքն ու պայծառ հավատքը, ինչպես նաև սուրբ և նոր կյանքը[196]: Ըստ Ս. Գրիգոր Տաթևացու՝ զգեստներ հանելը խորհրդանշում է Ադամի մերկությունը, մկրտյալի դեպքում՝ հին մարդուն՝ Ադամից մերկանալը և նոր Ադամին՝ Քրիստոսին, հագնելը, ինչպես Ս. Պողոս առաքյալն է ասում. *«Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտվեցիք, Քրիստոսով զգեստավորվեցիք»* (Գաղ. 3. 27)[197]: Այսօր զգեստափոխվելու

193 Տե՛ս **Протопресвитер Александр Шмеман**, Водою и духом, стр. 89-95.

194 Ըստ Ս. Դիոնիսիոս Արեոպագացու՝ զգեստավորումը կատարվում էր Ս. Մկրտությունից անմիջապես հետո՝ նախքան Ս. Դրոշմի խորհուրդը. տե՛ս The Armenian Version of the works attributed to Dionysius the Areopagite, p. 69. Ծիսական այս ավանդությունն այսօր էլ պահպանվել է բյուզանդական ծեսում:

195 Մատենագիրք հայոց, Զ. հատոր, Ը. դար, էջ 493:

196 Գիրք հարցմանց, էջ 594, Ամառան հատոր, էջ 148:

197 Ձմեռան հատոր, էջ 61:



այս խրատը հնարավոր է կիրառել մանկահասակների դեպքում, իսկ մեծահասակներն արարողության ընթացքում պարզապես պետք է լինեն խորհրդին պատշաճ հագուստով:

144. Ի՞նչ են խորհրդանշում վառված մոմերը:

1905 թ. տպագիր «Մաշտոցը» խրատում է, որ զգեստափոխվելուց հետո երկու վառված մոմ են տալիս կնքահորը (եթե մկրտվողը մանուկ է) կամ նոր մկրտվածին[198]: Այսօր ընդունված է նշված երկու մոմերը տալ Ս. Մկրտության արարողությանը ներկա երկու մանուկների, կամ պարզապես դրանք դնում են Ս. Ավազանի մոտ:

Զարմանալիորեն խրատը բացակայում է «Հնագույն Մաշտոցում», ինչպես նաև 17-19 դարերի տպագիրներում: Բայց 16-րդ դարից սկսած՝ ձեռագիր «Մաշտոցները» այն ունեն, որոնցում նշվում է, որ քահանան մկրտյալին տալիս է կարմիր և կանաչ գույնի մոմեր՝ ասելով. *«Վերցրո՛ւ հավատքի և բարի գործերի ճրագները, որպեսզի երկնավոր Փեսայի գալու ժամանակ արժանանաս մտնելու լույսի առագաստի մեջ և վայելելու հավիտենական կյանքը»*[199]:

Ըստ Ս. Գրիգոր Տաթևացու՝ մկրտվածին վառված մոմ տալը խորհրդանշում է հավատքի լույսը, պատվիրաններն իմանալն ու կատարելը՝ ըստ սուրբգրային հետևյալ խոսքի. *«Քո խոսքը*

198 Մաշտոց..., 1905, էջ 56:

199 Օր.՝ տե՛ս ՄՄ ձեռ. Հմր 955, թ. 48բ, Հմր 1771, թ. 132ա, Հմր 3822, թ. 24ա-բ, Հմր 3648, թ. 2բ, Հմր 3561, թ. 26ա, Հմր 5166, թ. 48բ, Հմր 6881, թ. 8բ-9ա:

ճրագ է ոտքերիս համար» (Սաղմ. 118. 105), և *«Թող փայլի ձեր լույսը մարդկանց առաջ»* (Մատթ. 5. 16)[200]:

145. Ի՞նչ է նարոտը:

Ս. Մկրտությանն անմիջապես հաջորդող Ս. Դրոշմի խորհրդի վերջում քահանան օրհնում է խաչով նարոտը, որը կարմիր և սպիտակ թելերից է հյուսված: Հայ մատենագրության մեջ նարոտի մասին պահպանված վաղագույն վկայությունը 7-րդ դարից է: Ստեփանոս Սյունեցին իր ճառերից մեկում նշում է նարոտի սպիտակ և կարմիր գույների մասին՝ այն կապելով Քրիստոսի մարդեղության հետ[201]: Ըստ եռամեծ Ս. Գրիգոր Տաթևացու՝ այս գույները խորհրդանշում են Քրիստոսի կողից բխած ջուրն ու արյունը[202]: Իսկ 18-րդ դարի մատենագիր, Կ. Պոլսի հայոց պատրիարք Հակոբ Նալյանը յոթ խորհուրդներին նվիրված անտիպ աշխատության մեջ, հետևելով սուրբգրային մեկնություններին և հայրախոսական գրականությանը, հավելում է. *«Սպիտակը նշանն է աստվածության, իսկ կարմիրը՝ արյամբ ներկված մարդկության, ոլորված լինելը Քրիստոսի միավորության օրինակն է. ինչպես մեկ նարոտը կազմված է երկու զանազան նյութերից և գույներից, այդպես էլ մեկ և նույն Քրիստոս կազմված է աստվածությունից և մարդկությունից»*[203]: Հետաքրքրական է, որ նարո-

200 Զմեռան հատոր, էջ 61:

201 Տե՛ս Մատենագիրք հայոց, Զ. հատոր, Ը. դար, էջ 493:

202 Գիրք հարցմանց, էջ 594, Ամառան հատոր, էջ 148, 203:

203 ՄՄ ձեռ. Հմր 6812, թ. 8ա, հմմտ. Երգ Երգոց՝ համդերձ մեկնութեամբ նախնեաց, աշխատասիրութեամբ՝ Տ. Մեսրոպ քահանայ

տի մասին չի հիշատակվում «Հնագույն Մաշտոցում», սակայն 14-րդ դարից սկսած՝ ձեռագրերում արդեն նշվում է նարոտի օգտագործման մասին:

Նարոտի օրհնության կարգը շատ պարզ է: Սարկավագն ասում է. *«Եվ նաև խաղաղության համար Տիրոջն աղաչենք»*, իսկ քահանան խաչով օրհնում է և ասում. *«Օրհնություն և փառք Հորը, Որդուն և Ս. Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»*: Չնայած կանոնական որևէ ցուցում չկա, բայց սովորաբար օրհնված նարոտով խաչը քահանան ընկղմում է Ս. Ավազանի մեջ և տալիս կնքահորը՝ սանիկի պարանոցին կապելու համար:

Նարոտ են դնում նաև հարսի և փեսայի գլխին Ս. Պսակի խորհրդի ժամանակ, որն այսօր մեծ մասամբ փոխվել է թագերի[204]: Նարոտները լինում էին տարբեր տեսակի՝ կանաչ-կարմիր, կանաչ-կարմիր-սպիտակ, երբեմն էլ յոթ գույնով՝ խորհրդանշելով ծիածանի գույները[205]: Սակայն նարոտի ընդունված և ճիշտ տարբերակը երկու գույներովն է՝ սպիտակ և կարմիր:

Արամեանի, «Գանձասար» հանդէս, Երևան, 1993, էջ 92-93:

204 **Ստեփանոս ա. քհնյ. Մանդինեանց,** Աստուածպաշտութիւն Հայաստանեայց Ուղղափառ Եկեղեցւոյ, արդի աշխարհաբարի վերածեց՝ Վարանդ Վրդ. Քորթմոսեան, Անթիլիաս, 2010, էջ 150:

205 Տե՛ս **Ա. Հ. Մուշեղյան**, Նարոտի խորհուրդը կամ ծեսի վերականգնման ուրվագիծ, «Էջմիածին», Ը-Թ, 1997, էջ 88-91: Օր.՝ Բաղեշում կնունքի նարոտը եռագույն էր՝ սպիտակ, կարմիր և կապույտ, որը երեք օր մնում էր նորամկրտյալի վզին. տե՛ս **Ռաֆիկ Նահապետյան,** Նորածնի մկրտությունը որպես նրա հասարակական ճանաչման փուլ, էջ 226:

146. Քանի՞ օր պետք է կրել նարոտը:

Այս մասին որևէ ցուցում չկա: Սովորաբար նարոտով խաչը կրում են երեք օր, որից հետո այն փոխարինում են շղթայով, իսկ նարոտը պահում որպես հիշատակ: Սակայն կան մարդիկ, ովքեր խաչը շարունակում են կրել նարոտով: Երկու տարբերակներն էլ ընդունելի են:

147. Ի՞նչ է խորհրդանշում Ս. Մկրտության խաչը:

Ըստ Ստեփանոս Սյունեցու՝ պարանոցին խաչ կրելը Քրիստոսին խաչակից լինելու և Նրա հետ թագավորելու խորհուրդն ունի, ինչպես որ Ս. Պողոս առաքյալն է ասում. *«եթե նրա չարչարանքներին կցորդ ենք, հաղորդակից ենք լինելու նաև փառքին»* (Հռոմ. 8. 17)[206]:

148. Ի՞նչ է կատարվում խաղաղության ողջույնից հետո:

Երգվում է «Աստուած խօսեցաւ» շարականը, որը հավանաբար Ս. Մկրտության ծեսի մեջ է մտել 15-րդ դարից: Ապա քահանան ասում է հետևյալ աղոթքը. *«Օրհնյա՛լ ես, բարեխնամո՛ղ Աստված, որ ծառայիդ փրկության հանդերձ և ուրախության պատմուճան հագցրեցիր, փրկության սաղավարտ և շնորհների պսակ դրեցիր սրա գլխին և ապահով զենք ընդդեմ հակառակորդի, որի համար մենք էլ գոհանալով փառավորում ենք Քեզ Որդու և Ս. Հոգուդ հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից:*

Ամենակա՛լ Տեր Աստված, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայր, Քեզ են խոնարհեցնում հավատացյալներն

206 Տե՛ս Մատենագիրք հայոց, Զ. հատոր, Ը. դար, էջ 493-494:



իրենց գլուխները: Մեկնի՛ր աներևույթ աջդ, օրհնի՛ր սրանց և հաջողի՛ր նրանց ձեռքի գործերը: Եվ ովքեր կուսության մեջ են, ամրացրո՛ւ նրանց կյանքի ընթացքը ժուժկալությամբ և ամենայն աստվածպաշտությամբ և պահի՛ր խաղաղության մեջ: Մնի՛ր այս մանկանը, հասցրո՛ւ կատարյալ հասակի, պարսպի՛ր բոլորին իրենց յուրաքանչյուր հարկում ցնծությամբ և ուրախությամբ Հիսուս Քրիստոսով մեր Տիրոջով, որի հետ Քեզ Հոր և Ս. Հոգուդ վայելում են փառքը, իշխանությունը և պատիվը, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»[207]:

149. Ի՞նչ են խորհրդանշում նոր մկրտվածին Ս. Սեղան հանելը և երկրպագությունը:

Ըստ Ս. Գրիգոր Տաթևացու՝ նոր մկրտվածին խորան բարձրացնելը և երկրպագությունը խորհրդանշում են բոլոր տնօրինություններից հետո Տիրոջ երկինք բարձրանալն ու Հոր աջ կողմում նստելը[208]: Այսօր ծիսական այս միավորը կատարվում է այսպես. քահանան, ասելով 42-րդ սաղմոսը, մանուկ մկրտյալին հանում է Ս. Սեղան և երեք անգամ երկրպագում: Իսկ եթե մկրտվողը չափահաս է, ապա ընդհանրացած սովորություն է նրան տանել ատյան՝ Ս. Խորանի առջև, և այնտեղ կատարել երկրպագությունը: Վերջինիս ժամանակ մկրտող հոգևորականը բարձրաձայն ասում է. *«(Այս անուն) Քրիստոսի այս ծառան, երախայրությունից Մկրտութ-*

207 Մաշտոց..., 1905, էջ 57-58:

208 Ձմեռան հատոր, էջ 61:

յան, Մկրտութ֊յունից՝ երկրպագութ֊յան գալով՝ երկրպագում է այս Ս. Սեղանին, երկրպագում է այս Ս. Խորանին, երկրպագում է այս Ս. Ավազանին, որ անօրենութ֊յունը վրայից հանեց և աստվագիտութ֊յան լույսը հագավ»[209]: Ամեն անգամ «երկրպագում է» բայն ասելիս քահանան և մկրտվածը խոնարհվում են նախ՝ Ս. Սեղանին, երկրորդ՝ Ս. Խորանին և երրորդ՝ Ս. Ավազանին:

150. Ի՞նչ է խորհրդանշում Ս. Հաղորդություն ստանալն արարողության վերջում:

Երկրպագությունից հետո քահանան առաջին անգամ Ս. Հաղորդություն է տալիս նոր մկրտվածին: Փաստորեն Ս. Մկրտության ժամանակ միանգամից երեք խորհուրդ է կատարվում՝ Ս. Ավազանից ջրի մկրտությամբ վերստին ծնվում ենք և քրիստոնյա դառնում, Ս. Դրոշմով արժանանում ենք Ս. Հոգու շնորհներին, իսկ Ս. Հաղորդությամբ կատարվում է մեր ամբողջական անդամակցությունը Քրիստոսի Եկեղեցուն: Նկատի պետք է ունենալ, որ առանց Ս. Հաղորդության, չի կարող լինել քրիստոնյայի հոգևոր կյանք, ուստի այն կարևոր նշանակություն ունի մարդու կյանքում:

Եթե մկրտվողը չափահաս է, ապա քահանան Ս. Հաղորդությունը դնում է նրա բերանի մեջ, իսկ մանուկներին սովորաբար շրթնահաղորդ են անում: Քանի որ այդ պահին նոր մկրտվածն ամենամաքուրն է, քահանան Ս. Հաղորդություն տալիս ասում է. *«Մեր Տեր և Փրկչի՝ Հիսուս Քրիստո-*

209 Մաշտոց..., 1905, էջ 60:

սի Մարմինն ու Արյունը թող քեզ համար փրկություն և առաջնորդ լինեն անվախճան կյանքում. ամեն»[210]: Ուստի լավ կլինի, որ չափահաս մկրտվողները նախապես ֆիզիկապես և հոգեպես պատրաստվեն առաջին անգամ իրենց կյանքում Ս. Հաղորդություն ստանալու համար:

151. Ի՞նչ աղոթք է կարդում հոգևորականը Ս. Հաղորդություն տալուց հետո:

Այս աղոթքն առկա է «Հնագույն Մաշտոցում», որից և փոխանցվել է մյուսներին և մասնավորապես ասվում է.

«Փա՛ռք Քեզ, Թագավո՛ր հավիտենական, որ աճեցնում և լցնում ես եկեղեցին հավատքի լույսով անհամար փրկվածներիս Քրիստոսիդ աստվածծանոթության միջոցով, որոնց վերատին ծննդյամբ արժանի դարձրեցիր երկնավոր Հորդ որդեգրության՝ հաղորդելով Միածնիդ Մարմնին և Արյանը: Եվ այժմ, Տե՛ր, պահի՛ր սրան Ս. Հոգուդ սրբությամբ՝ անարատությամբ կատարելու կամքդ և անմեղությամբ հասնելու հավիտենական կյանքիդ: Եվ մեզ բոլորին՝ սրա մերձավորներին, օրհնի՛ր մեր Տեր Հիսուս Քրիստոսի

---

210 Տե՛ս Մաշտոց..., 1905, էջ 60: Քահանայի նման պատասխանը հանդիպում է 15-16-րդ դարերի ձեռագիր «Մաշտոցներում». տե՛ս օր.՝ ՄՄ ձեռ. Հմր 1771, թ. 132բ, Հմր 5824, թ. 3ա, ՄՄ ձեռ. Հմր 5902, թ. 13ա, Հմր 6881, թ. 22ա: Մեծավ մասամբ «Մաշտոցներում» բացակայում է այս խրատը, ուստի մեր հոգևորականները հաճախ այս պահին ասում են Ս. Պատարագի ընթացքում Ս. Հաղորդության ժամանակ ասվող հետևյալ խոսքերը. «Սա թող լինի մեղքերիդ քավության և թողության համար»: Նկատի ունենալով, որ նոր մկրտվածն այդ պահին ամենամաքուրն է, ներված են նրա բոլոր մեղքերը, ավելի տրամաբանական է ասել վերոգրյալ խրատը:

շնորհներով և մարդասիրությամբ, որին վայելում են փառքը, իշխանությունը և պատիվը, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Խաղաղություն և խաղաղության ստեղծող, Հիսո՛ւս Քրիստոս, օծյալ, երկրպագելի և հավիտենական Քահանայապետ: Ահա (տալիս է անունը) այս ծառան ընդունեց սրբության օծումդ: Ուստի աղաչում ենք, Քե՛զ, Տե՛ր, թող չջնջվի նա կյանքի գրքիցդ: Եվ մենք արժանի լինենք երկնային փառքիդ, երբ պսակես սրբերիդ և անունդ սիրողներին, և անդադար փառավորենք Քեզ Հոր և Ս. Հոգուդ հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»[211]: Այնուհետև քահանան օրհնում է խաչը նարոտով, «Ս. Խաչիւս» և «Պահպանիչ»: Ս. Մկրտության արարողությունն ավարտվում է Տերունական աղոթքով, որը լավ կլինի միասնաբար ասել:

Հնում Ս. Մկրտությունից հետո մկրտյալին տուն էին տանում շուրջառով և վառված մոմերով, շարականներ երգում, Ս. Պողոս առաքյալի եբրայեցիներին ուղղված թղթից մի հատված և Ավետարան ընթերցում՝ վերջում մկրտյալին հանձնելով մորը[212]: Ազգագրագետ, բանահավաք Երվանդ Լալայանը (1864-1931) մեջբերում է հետաքրքրական մի սովորություն, որ պահպանվել էր Արցախի Վարանդայի գավառում: Մինչդեռ եկեղեցում ընթանում էր Ս. Մկրտության արարողությունը, երեխայի մանկաբարձը՝ տատմերը, Ս. Ավազանից շշով մի փոքր մյուռո-

211 Մաշտոց..., 1905, էջ 60-62:

212 Մաշտոց..., Երուսաղէմ, 1933, էջ 60-61:



նաջուր վերցնելով, շտապում է տուն, դրանով լվանում ծննդկանի մոր ձեռքերը, որպեսզի նա մաքուր ձեռքերով առաջին անգամ գրկեր իր կնքված մանկանը[213]:

152. Կարելի՞ է համբուրել նոր մկրտվածին:

Այո՛: 14-րդ դարից սկսած մեր «Մաշտոց» ժողովածուներում հստակ նշվում է, որ Ս. Մկրտության մասնակիցները կարող են համբուրել նոր մկրտվածին[214]: Ուստի ճիշտ չեն այն բոլոր հոգևորականները, ովքեր նման արգելք են դնում:

153. Ի՞նչ է Ս. Մկրտության ութօրեքը:

«Հնագույն Մաշտոցում» պահպանվել է հետաքրքիր մի խրատ, որն այսօր գործնականում չի կատարվում: Մկրտված անձը սպիտակ զգեստներով ութ[215] օր մնում էր եկեղեցում՝ գլուխը ծածկելով սպիտակ փակեղով: Այդ օրերի ընթացքում նորածին քրիստոնյան անդադար աղոթում էր և ճաշակում Տիրոջ փրկարար Մարմինն ու Արյունը: Սա մի տեսակ նախապատրաստությունն էր նոր կյանք մտնելու, բայց այ-

213 Ազգագրական հանդէս, հ. Բ, Շուշի, 1897, էջ 148:

214 Տե՛ս ՄՄ ձեռ. Հ^{թր} 826, թ. 237բ, Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ, Կ. Պոլիս, 1807, էջ 18, Մաշտոց..., 1905, էջ 63, Մաշտոց..., Երուսաղէմ, 1933, էջ 58, Մաշտոց յորում աւանդին սրբազան արարողութիւնք ազգիս՝ ըստ Սահմանադրութեան Սուրբ Եկեղեցւոյս Հայոց, Սբ. Էջմիածին, 2001, էջ 77:

215 Ըստ Եկեղեցու հայրերի՝ ութը Քրիստոսի, Աստծո արքայության կամ հարության թիվն է. այս մասին տե՛ս **Մեսրոպ քահանայ Արամեան**, Մկրտութեան արարողութեան աստուածաբանութիւնը, «Գանձասար» հ. Դ, Երևան, 1993, էջ 90-91, **Протопресвитер Александр Шмеман**, Водою и духом, стр. 160-164.

սուիետ իբրև քրիստոնյա ու Եկեղեցու անդամ՝ զորացած Ս. Հարության հույսով և լուսավորված Աստծո կենդանի խոսքով: Ըստ վերոգրյալ «Մաշտոցի»՝ ութերորդ օրը քահանան վերցնում է մկրտյալի գլխից պսակը (որոշ ձեռագրերում նարոտը կամ թագը)՝ ասելով այս աղոթքը. *«Ովքեր մկրտվեցին և լուսավորվեցին, և [նրանց] տվեցիր Քո սրբությունը, Տե՛ր, տո՛ւր նաև հաստատուն մնալու սրբությանդ մեջ՝ պայծառացնելով աստվածությանդ լույսով: Տե՛ր, պահի՛ր հաստատությամբ շնորհների մեջ, որոնք տվեցիր [նրան]: Հեռացրո՛ւ թշնամու մոլորությունից, նրա պատրանքներից և անօրեն գործերից, որպեսզի լույսով [և] գիտությամբ գնա Քո ճանապարհներով և ուղիղ վարքով հասնի խոստացածդ հանգիստը: Ուղարկի՛ր խաղաղության հրեշտակիդ, որ գա պահի նրան: Եվ ամենքս արժանի լինենք մեր տեր Հիսուս Քրիստոսի հայտնության հույսով, որի հետ Հորը, միաժամանակ և Ս. Հոգուդ վայելում են փառքը, իշխանությունը և պատիվը, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»*[216]: Դրանից հետո քահանան լվանում է մկրտվածի մյուռոնված տեղերը:

154. Ինչպե՞ս է այսօր կատարվում մեռոնահանի արարողությունը:

Ըստ նոր «Մաշտոցների»՝ քահանան երրորդ օրը գնում է մկրտյալի տուն և մեռոնահանությունը կատարում՝ ըստ ութերորդ օրը նախատեսված արարողության, որը կատարվել է հնում: Ըստ խրատի՝ քահանան վերցնում է նարոտը

216 Մայր Մաշտոց, հ. Ա, գիրք Ա, էջ 233-234:



մկրտյալի գլխից և աղոթք ասում: Քանի որ այժմ նարոտ չենք կապում գլխին, այլ նոր մկրտվածը պարզապես նարոտով խաչ է կրում, այս խրատը չի կիրառվում գործնականում: Աղոթքում մասնավորապես ասվում է. *«Տե՛ր, որ Քո գիտութեան լուսով առաջնորդեցիր Քո այս ծառային՝ վերստին ծնվելու ջրով և Ս. Հոգով, հաստատի՛ր սրան Քո հավատքի և սիրո մեջ, փրկի՛ր սրան չարից և ապրեցրո՛ւ Միածին Որդուդ շնորհներով և գթութեամբ, քանի որ օրհնյալ ես, ամենակա՛լ Հայր, կենդանարար և ազատիչ Ս. Հոգուդ հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»*: Ապա քահանան լվանում է դրոշմված տեղերը և շարունակում աղոթել. *«Որ Ս. Ավազանի Մկրտութեամբ մեղքերից ազատում պարգևեցիր քո այս ծառայի միջոցով, և այժմ աղաչում եմ Քե՛զ, Տե՛ր, ծագեցրո՛ւ երեսիդ լույսը սրա վրա, սպառազինի՛ր սրան հավատքով ընդդեմ հակառակորդի, հաստատի՛ր սրան պատվիրաններիդ վեմի վրա, անբիծ և անարատ դարձրո՛ւ սրա անապական զգեստն աղտեղութեան բոլոր մեղքերից, անխաթար պահի՛ր Ս. Հոգուդ դրոշմը մինչև ահեղ դատաստան, քավիչ եղիր մեզ ըստ Քո գթութեան, քանզի բարերար և մարդասեր ես Աստված լինելով, և մենք փառք ենք մատուցում Հորը, Որդուն և Ս. Հոգուդ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

Որ հագավ Քեզ՝ մեր Տիրոջդ և Աստծուդ և խոնարհեցրեց քեզ իր գլուխը, անհաղթելի պահի՛ր հպարտ թշնամու պատերազմներից և անապական պսակովդ մինչև վախճանը բոլորի հաղթող ցույց տուր, որովհետև Դո՛ւ ես ողորմում և ապրեցնում մեզ, Քրիստո՛ս, մեր Աստված, և Քեզ փառք ենք վերառաքում Հոր և

Ամենասուրբ Հոգուդ հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»:

Քահանան նախ լվանում է մկրտվածի երեսը՝ ասելով. *«Արդարացա՛ր, սրբվեցի՛ր, զորացի՛ր Հոր, Որդու և Ս. Հոգու անունով, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»*: Արարողությունն ավարտվում է «Պահպանիչ»-ով և «Հայր մեր»-ով[217]:

155. Իսկ առանց քահանայի ինչպե՞ս են մկրտյալին Մյուռոնից հանում:

Այժմ մեծ մասամբ բարեպաշտական այս արարողությունը կատարվում է առանց քահանայի, չնայած որ նախընտրելի է նրա ներկայությունը: Կնքահայրը և քավորկինը Ս. Մկրտությունից հետո երրորդ օրը գնում են իրենց սանիկի տուն, Տերունական աղոթքն ասում և ջրով լվանում են մյուռոնված մասերը: Եթե մկրտվողը մանուկ երեխա է, ապա քավորկինը նրան լողացնում է նոր կամ անուշ եփելու ամանի մեջ[218]: Այնուհետև այդ ջուրը թափում են մաքուր տեղ՝ ծաղիկների կամ ծառի տակ: Բնականաբար, եթե կնքահայրն ամուսնացած չէ, ապա մանկանը կարող է լողացնել մայրը կամ հարազատներից մեկը: Չափահաս մկրտյալի դեպքում ինքը կարող է լվանալ պահանջվող մասերը: Բացի այդ, նկատի ունենալով Մյուռոնի առկայությունը, ճիշտ կլինի, որ ամուսնացած չափահասը մինչև մեռոնահանություն ապրի առանց ամուս-

217 Մաշտոց..., 1905, էջ 74-76:

218 Կ. Պոլսում այսպիսի տեղական սովորություն կա. քավորկինը երեխային լողացնելիս նաև ոսկե դրամներ է նետում ջրի մեջ՝ հանուն մանկան հաջողության և զորացման:



նական կյանքի՝ առանց սեռական հարաբերությունների՝ ցուցաբերելով ժուժկալություն և զսպվածություն: Այս է պատճառը, որ ամուսնացող զույգերը պետք է մկրտվեն ոչ թե պսակվելուց մեկ օր առաջ, այլ ավելի շուտ:

156. Ինչո՞ւ պետք է երեք օր չլվացվել Ս. Մկրտությունից հետո:

Մեռոնահանության գեղեցիկ արարողությամբ ևս մեկ անգամ շեշտվում է մեր ժողովրդի խորին հարգանքն ու ակնածանքը Ս. Մյուռոնի հանդեպ, որն արտահայտվում է նաև Ս. Մկրտությունից հետո երեք օր չլվացվելու սովորությամբ[219]: Հավանաբար սա է նաև պատճառը, որ հոգևորականները կամ ժողովուրդն արգելում են համբուրել նոր մկրտվածին: Այժմ չլվացվելու սովորությունը հնարավոր է կիրառել մանկահասակ երեխաների դեպքում: Բայց ելնելով ժամանակի և հիգիենայի պահանջներից՝ երեք օր չլվացված լինելը խոչընդոտ է մանկապարտեզ և դպրոց հաճախող երեխաների ու պատանիների, աշխատող և ծառայության մեջ գտնվող մարդկանց և ուրիշների համար: Ուստի նրանց կարելի է Մյուռոնից հանել ավելի շուտ կամ հենց եկեղեցում՝ Ս. Մկրտությունից հետո: Պետք է չմոռանալ, որ մեռոնահանությունը վարդապետական խնդիր չէ, այլ բարեպաշտական մի սովորություն, որը հնարավորինս պետք է պահել:

---

219 Բաղեշում կատարվող մեռոնահանության մասին տե՛ս **Ռաֆիկ Նահապետյան,** Նորածնի մկրտությունը որպես նրա հասարակական ճանաչման փուլ, էջ 228:

157. Որքա՞ն է տևում Ս. Մկրտության արարողությունը:

Սովորաբար 30-40 րոպե՝ կախված խորհրդակատար հոգևորականի առոգանությունից, ընթերցելու կամ երգելու նրա արագությունից: Չպետք է մոռանալ, որ այս խորհուրդն ամեն մարդու կյանքում միայն մեկ անգամ է կատարվում: Հետևաբար, մեր նշած ժամանակն այնքան էլ շատ չէ, երբ հաշվի ենք առնում Ս. Մկրտության կարևորությունը և նշանակությունը: Համեմատության համար մի պահ մտածեք, թե օրվա մեջ քանի՛ ժամ եք անցկացնում հեռուստացույցի և համակարգչի առաջ համացանցից օգտվելիս, որքա՛ն ժամանակ եք տրամադրում զանազան գնումների, զվարճանքների և երկրորդական բաների համար, երբեմն մի քանի ժամանոց ֆիլմեր կամ ներկայացումներ դիտում և այլն: Միթե՞ սրանք ավելի կարևոր են, քան ձեր հոգու փրկությունը, որի սկիզբը դրվում է Ս. Մկրտությամբ:



Ս. ԴՐՈՇՄԻ ՀՈՐՀՐԴԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

158. Ի՞նչ է Ս. Դրոշմը:

Ս. Դրոշմի արարողությունը Ս. Մկրտության խորհրդի անքակտելի մասն է՝ ծիսական մեկ միավոր, ուստի ձեռագրերում նույնպես այն բաժանված չէ Մկրտությունից: Հայոց Եկեղեցում վերջինս և Դրոշմը կատարվել են մշտապես միասին՝ պահպանելով ծեսի ներքին տրամաբանությունն ու իմաստը: Հայոց Եկեղեցու աստվածաբանական մտածողության համաձայն՝ Ս. Մկրտությունը ջրով լվացումն է և Սրբալույս Մյուռոնով օծումը:

Արևմտյան Եկեղեցին սխոլաստիկ աստվածաբանության ազդեցությամբ 13-րդ դարում փոփոխեց Ընդհանրական Եկեղեցու այս ավանդությունը՝ Դրոշմը բաժանելով Մկրտությունից: Հայ իրականության մեջ առաջին հեղինակը Ս. Գրիգոր Տաթևացին է, ով «Գիրք հարցմանց» աշխատության մեջ Դրոշմը դիտում է իբրև առանձին խորհուրդ: Պետք է հաշվի առնել, որ Տաթևացին պայքարում էր կաթոլիկության դեմ, ուստի այս բաժանմամբ ցանկանում էր ցույց տալ, որ Հայոց Եկեղեցին էլ Կաթոլիկ Եկեղեցու նման ունի յոթ սուրբ խորհուրդներ: Բայց եռամեծը վարդապետն իր մյուս գործերում, հավատարիմ մնալով Հայոց Եկեղեցու ծիսական ավանդությանը, շեշտում է Մկրտության և Դրոշմի

միասնականությունը՝ գրելով. *«Որովհետև Դրոշմը Մկրտության խորհուրդն է»*[220]:

Ս. Դրոշմի խորհրդով՝ Սրբալույս Մյուռոնով մկրտվածի մարմնի մասերի օծմամբ, մարդ ստանում է Ս. Հոգու յոթնարփյան շնորհները[221]. *«Նրա վրա պիտի իջնի Աստծո հոգին, իմաստության և հանճարի հոգին, խորհրդի ու զորության հոգին, գիտության և աստվածապաշտության հոգին. Աստծո երկյուղի հոգին պիտի լցնի այն»* (Ես. 11. 2-3): Եթե Ս. Մկրտությամբ մաքրվում ենք սկզբնական մեղքից, դառնում քրիստոնյա և անդամագրվում Քրիստոսի Եկեղեցուն, ապա այս խորհրդով զորանում և ամրանում ենք հավատքի մեջ, արիանում և ուժ ստանում՝ արդեն նոր կյանքում պայքարելու սատանայի փորձությունների և հարձակումների դեմ[222]: Սրբազան այս խորհուրդն անձնական Հոգեգալուստ է ամեն մկրտվածի համար՝ Ս. Հոգու կնիքը մեզ վրա: Այդ պատճառով է, որ ժողովուրդը Ս. Մկրտության և Ս. Դրոշմի խորհուրդները միասին հաճախ անվանում է նաև «կնունք»: *«Ես մկրտված եմ»* և *«ես կնքված եմ»* արտահայտություններն ունեն նույն իմաստը և բովանդակությունը, քանզի եկեղեցական մեր ավանդությամբ մեկը չի կարող մկրտված լինել առանց դրոշմվելու:

---

220 Ձմեռան հատոր, էջ 576:

221 Տե՛ս Գիրք հարցմանց, էջ 593, **Иеромонах Иларион (Алфеев)**, Таинство веры. Введение в православное богословие, Москва-Клин, 1996, стр. 150-151.

222 Հմմտ. Գիրք հարցմանց, էջ 593, Ամառան հատոր, էջ 145:

159. Ինչո՞ւ է կարևոր այս խորհուրդը:

Քանզի Ս. Հոգով կնքվելն է մեզ պահում և առաջնորդում այս ժամանակավոր կյանքում, ինչպես Ս. Պողոս առաքյալն է ասում. *«Այս բանը գրեցի ձեզ, որպեսզի ոչ ոք ձեզ չմոլորեցնի: Իսկ այն օծումը, որը դուք ընդունեցիք Նրանից, թող բնակվի ձեր մեջ, և կարիք չկա, որ մեկը ձեզ ուսուցանի»* (Ա Հովհ. 2. 26-27), իսկ մեկ այլ տեղ՝ *«Նրանով է, որ դուք էլ լսեցիք ճշմարտության խոսքը՝ ձեր փրկության Ավետարանը, որին հավատալով՝ կնքվեցիք խոստացված Ս. Հոգով, որ մեր ժառանգության առհավատչյան է, մինչև այն օրը, երբ կատարելապես կտիրանանք փրկությանը՝ ի գովություն Նրա փառքի»* (Եփես. 1. 13-14)[223]:

Եկեղեցու հայրերը, կարևորելով Ս. Դրոշմի խորհուրդը մարդու կյանքում, այն կապում են քրիստոնյա կոչվելու հետ, ուստի Ս. Կյուրեղ Երուսաղեմացին ասում է. *«Այս սուրբ օծման արժանանալով՝ դուք կոչվում եք «քրիստոնյաներ»՝ ձեր վերածննդով արդարացնելով նաև այդ անվանումը: Քանզի նախքան այդ Մկրտության և Ս. Հոգու շնորհին արժանանալը, դուք իրականում դեռևս արժանի չեք այդ անվանը, այլ ճանապարհ ելած՝ առաջ եք ըն-*

223 Տե՛ս նաև **Արշակ Տէր Միքելեան**, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնէականը, Երուսաղէմ, 1993, էջ 391, Հանդիսարան ուղղափառութեան Հայոց Եկեղեցւոյ, յօրինեաց Տէր Մատթէոս արքեպիսկոպոս նախորդ պատրիարք Կոստանդնուպօլսոյ, Կօստանդնուպօլիս, 1854, էջ 307-314, Հրահանգ քրիստոնէական հաւատոյ ըստ ուղղափառ դաւանութեան Եկեղեցւոյ Հայաստանեայց, աշխատասիրութեամբ Մսերայ Մագիստրոսի, Մոսքուա, 1861, էջ 50-52:

թանում՝ քրիստոնյա դառնալու»[224]: Իսկ աղոթասաց Ս. Գրիգոր Նարեկացին Ս. Մյուռոնին նվիրված Նարեկի 93-րդ գլխում, նկատի ունենալով, որ հունարեն *Քրիստոս* բառը նշանակում է *Օծյալ*, ասում է. *«Առանց որի (այսինքն՝ Դրոշմի) հնարավոր չէ լինել քրիստոնյա, և կամ անվանվել նազովրեցի»*[225]:

160. Ինչո՞ւ ենք Ս. Դրոշմը կատարում Ս. Մկրտությունից հետո:

Այս երկու խորհուրդների միասին կատարելը պատահական չէ, այլ ունի սուրբգրային իր հիմքը՝ մեր Տիրոջ և Փրկչի Մկրտությունը: Ավետարանիչները վկայում են, որ երբ Հիսուս մկրտվեց Հորդանան գետում Ս. Հովհաննես Մկրտչի ձեռքով, Ս. Հոգին աղավնակերպ իջավ Նրա վրա (տե՛ս Մատթ. 3. 16, Մարկ. 1. 10, Ղուկ, 3. 22): Եթե Ս. Մկրտությամբ մեռնում և հարություն ենք առնում Քրիստոսի հետ, ապա Ս. Դրոշմով մասնակից ենք դառնում Հոգեգալստին, երբ Ս. Հոգին կրակե լեզուների տեսքով իջավ առաքյալների վրա: Ուստի, Հայոց Եկեղեցին, հետևելով Ընդհանրական Եկեղեցու հնավանդ սովորությանը և Ուղղափառ մյուս Եկեղեցիներին, Ս. Մկրտության և Ս. Դրոշմի խորհուրդները կա-

---

224 Կոչումն ընծայության, էջ 373: Այս միտքը Ս. Կյուրեղից առաջ արտահայտել է Թեոփիլոս Անտիոքացին. «Քրիստոս անունը նշանակում է «Օծյալ»...: Այդ պատճառով քրիստոնյաներ ենք կոչվում, քանզի օծվում ենք աստվածային յուղով». տե՛ս **Митрополит Иларион (Алфеев)**, Православие, Том II, Москва, 2009, стр. 610.

225 **Գրիգոր Նարեկացի**, Մատեան ողբերգութեան, Բան ՂԳ, տ. 407-408, էջ 631:

տարում է միասին[226]: Միայն Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցին է, որ 13-րդ դարի վերջից երկու խորհուրդներն առանձնացրեց՝ Ս. Դրոշմը մանկահասակների դեպքում կատարելով ավելի ուշ, երբ մկրտյալը 12-14 տարեկան է դառնում:

161. Ինչպե՞ս էր կատարվում այս խորհուրդն առաքելական շրջանում:

Երբ առաքյալները Հոգեգալստին զորացան Ս. Հոգով, սկսեցին քարոզել Տիրոջ մասին և հավատացողներին մկրտել. *«Ապաշխարեցե՛ք, և ձեզանից յուրաքանչյուրը թող մկրտվի Տեր Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, և պիտի ընդունեք Ս. Հոգու պարգևը»* (Գործք 2. 38): Այդ ժամանակ Հիսուսի առաքյալները Ս. Հոգու տվչությունը կատարում էին աղոթքով կամ մկրտյալի վրա իրենց ձեռքերը դնելով, այսինքն՝ ձեռնադրությամբ: Գործքում պատմվում է նմանատիպ մի քանի դեպքերի մասին: Ս. Պետրոսն ու Ս. Հովհաննեսը Երուսաղեմից Սամարիա մեկնեցին հատուկ հենց այդ նպատակով. *«Աղոթում էին նրանց համար, որպեսզի ստանան Ս. Հոգին, քանի որ մինչև այն ժամանակ նրանցից ոչ մեկի վրա Ս. Հոգին դեռ չէր իջել, այլ միայն մկրտվել էին Տեր Հիսուսի անունով: Այն ժամանակ ձեռքները դրեցին նրանց վրա, և նրանք Ս. Հոգին ստացան»* (Գործք 8. 15-17): Մեկ այլ տեղում Ս. Պողոսը ձեռքը դնում է Ս. Հովհաննես Մկրտչի մի քանի աշակերտների վրա, և Ս. Հոգին իջնում է նրանց վրա (Գործք

226 **Սեպուհ ծայրագոյն վարդապետ Սարգսեան**, Հայոց Եկեղեցւոյ խորհուրդներն ու ծէսերը. «Գանձասար» աստուածաբանական հանդէս, հ. Ա, Երևան, 1992, էջ 70-71:

19. 2-6)։ Անշուշտ, ձեռնադրությունը պահանջում էր առաքյալների անմիջական մասնակցությունն այդ սրբազան արարողությանը, բայց նրանք Տիրոջից անմիջական պատվեր ունեին՝ աշխարհով մեկ քարոզելու և տարածելու Ս. Ավետարանը։ Ուստի, հենց այդ շրջանում էլ հավատացյալների և մկրտվել ցանկացողների ավելացման արդյունքում ձեռք դնելը փոխարինվեց Ս. Մյուռոնով օծմամբ, որը Ս. Հոգու նշանակն է։

162. Ս. Դրոշմի խորհուրդը կրկնելի՞ է։

Ո՛չ։ Ինչպես մեկ անգամ մկրտվում ենք, այնպես էլ մեկ անգամ դրոշմվում։ Հայոց Եկեղեցին դրոշմում է միայն այն չունեցողներին, օր.՝ բողոքականներին, որոնք չունեն այս խորհուրդը։ Իսկ եթե վավերական Մկրտություն ունեցող կաթոլիկը ցանկանա դառնալ Հայոց Եկեղեցու անդամ և դրոշմված չլինի, ապա նրան միայն կդրոշմեն։ Այս սկզբունքն է կիրառվել նմանատիպ բոլոր դեպքերում։

Ս. Ներսես Շնորհալին արևորդիների մասին գրած նամակում քահանաներին հորդորում և ցուցումներ է տալիս, թե ինչպե՛ս նրանց քրիստոնյա դարձնեն։ Եթե դարձի են եկել, խոստովանել Հայոց Եկեղեցու դավանանքը, ապա որոշակի նախապատրաստական աշխատանքից և ապաշխարությունից հետո կարելի է մկրտել։ Իսկ ովքեր նախկինում մկրտված են եղել, խոստովանությունից և ապաշխարությունից հետո միայն դրոշմեն Ս. Մյուռոնով[227]։

227 Տե՛ս **Սբ. Ներսես Շնորհալի**, Նամականի, գրաբարից թարգ-

Ս. ԴՐՈՇՄԻ ԽՈՐՀՐԴԻ ԲԱՆԱՁԵՎԸ, ԵՂԱՆԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆՅԱՆ

163. Ո՞վ է խորհրդի պաշտոնյան:

Հայոց Եկեղեցում Ս. Դրոշմի խորհուրդը կարող է կատարել միայն քահանայական ձեռնադրություն և օծում ունեցող հոգևորականը, այսինքն՝ ամուսնացյալ կամ կուսակրոն քահանայից մինչև կաթողիկոս:

164. Ի՞նչ բացառություններ կան այս հարցում:

Կաթոլիկ Եկեղեցում դրոշմելը վերապահված է եպիսկոպոսին: Վերջինիս բացակայության դեպքում այն կարող է կատարել նաև քահանան, եթե ունի թեմակալ առաջնորդ եպիսկոպոսի թույլտվությունը: Կաթոլիկների մոտ այս խորհուրդն իրենց հոգևոր իշխանության սահմաններում կարող են կատարել նաև այն վանահայրերը, ովքեր ունեն նույն եպիսկոպոսական իշխանությունը, բացի ձեռնադրություն կատարելուց, ինչպես նաև ընդհանուր փոխանորդները: Բնականաբար, բացառիկ դեպքերում, օր.՝ մահամերձության, քահանան նույնպես կարող է կատարել Ս. Դրոշմի խորհուրդը[228]:

մանությունն ու ծանոթագրությունները Սեդա Ստամբոլցյանի, Ս. Էջմիածին, 2011, էջ 200-203:

228 Տե՛ս Քրիստոնէական Կաթողիկէ Եկեղեցւոյ, էջ 523, 531: Կաթոլիկ Եկեղեցում եպիսկոպոսը ձեռքերը դնում է դրոշմվողների խմբի վրա, ինչպես որ առաքելական ժամանակներում էր՝ ասելով

165. Ո՞րն է այս խորհրդի բանաձևը:

Քահանան Սրբալույս Մյուռոնով խաչաձև օծում է մկրտյալի զգայարանները՝ մարմնի ինը մասերը՝ ասելով. *«Քրիստոսի անունով այս կնիքը…»*:

166. Ի՞նչ խորհուրդ ունի խաչաձև օծելը:

Ս. Գրիգոր Տաթևացին խաչանման օծելը կապում է խաչի խորհրդի հետ. *«Խաչը փրկեց մեզ, խաչն է մեր պահապանն ու կնիքը, խաչն է սրբերի սրբությունը, խաչն է մեր մեղքերի քավությունն ու թողությունը, խաչն է երկնքի արքայության ճանապարհն ու դուռը»*[229]:

հետևյալ աղոթքը. *«Ամենաբարի՛ Աստված, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Հայր, նայի՛ր այս մկրտյալներին, որոնց վրա ենք դնում մեր ձեռքերը: Մկրտությամբ նրանց մեղքից ազատեցիր, ջրից և Հոգուց վերստին ծնեցիր: Այժմ, խոստմանդ համաձայն՝ սփոի՛ր նրանց վրա Ս. Հոգիդ: Որդուդ՝ Հիսուսի վրա հանգչող Հոգին, տո՛ւր նրանց լիությամբ իմաստության և հանճարի հոգի, խրատի և ուժի հոգի, գիտության և որդիական սիրո հոգի: Համակի՛ր նրանց աստվածավախության երկյուղով՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսով».* նույն տեղում, էջ 526:

229 Ձմեռան հատոր, էջ 577:

Ս. ԴՐՈՇՄԻ ՀՈՐՀՐԴԻ ԻՆՆ ՕԾՈՒՄՆԵՐԸ

167. Ինչպե՞ս է կատարվել Դրոշմը մեզ մոտ:

Զանազան ծիսական ավանդություններ են եղել այս խորհրդի վերաբերյալ Վաղ Եկեղեցում: Հայոց Եկեղեցու ծեսը ձևավորվել է արևելյան և արևմտյան ավանդությունների համադրմամբ: Հայկական ուշագրավ նմանատիպ վաղնջական մի ավանդություն է նկարագրում Ագաթանգեղոս պատմիչը Ս. Գրիգորի կողմից Ս. Երրորդության անունով արքունական ընտանիքի և մյուսների Ս. Մկրտությունը նկարագրելիս: Քանի որ հատվածն իսկապես գեղեցիկ և կարևոր է, մեջբերենք այն. *«Երբ բոլոր մարդիկ ու թագավորն իջնում էին այնտեղ՝ եփրատ գետի մեջ մկրտվելու, Աստծուց աքանչելի հրաշք երևաց, քանզի գետի ջրերը կանգնելով ետ դարձան: Մաստիկ լույս երևաց լուսավոր այան նման և կանգնեց գետի ջրերի վրա ու նրա վրա տերունական խաչի կերպարանքը, և լույսն այնքան ծագեց, մինչև արգելեց ու նվաղեցրեց արեգակի ճառագայթները:* **Օծության Յուղը, որ Գրիգորը մարդկանց վրա էր թափում, գետի մեջ շրջան կատարելով՝ մարդկանց շուրջն էր պտտվում**: *Բոլորը զարմացած օրհնում էին Աստծո փառքի համար...: Ելան այնտեղից մեծ ցնծությամբ, սպիտակ հանդերձներով, սաղմոսներով ու օրհնություններով, վառած կանթեղներով, մոմերով և լուսավառ ջահե-*

րով, մեծ ուրախությամբ և սաստիկ զվարթությամբ լուսավորված ու հրեշտակացած: Աստծո որդեգրի անուն ստացած մտան Ս. Ավետարանի ժառանգության մեջ և սրբերի վիճակին խառնվելով, Քրիստոսի անուշ հոտով ծաղկելով, վեր ելան, տերունական տունը դարձան: Այնտեղ [Գրիգորը] օրհնության պատարագ մատուցեց, ամենքին Հաղորդություն տվեց Գոհության խորհրդով, բոլորին բաշխեց Ս. Մարմինն ու պատվական Արյունն Ամենափրկիչ Քրիստոսի»[230]: Այս վկայությունից պարզվում է, որ Ս. Գրիգորը Ս. Հոգու նշանակ օծության Յուղը թափում էր մկրտվողների վրա հենց ջրի մեջ: Նման ձևով դրոշմելու մասին այլ տեղեկություններ և փաստեր չունենք:

168. Ո՞ր հատվածներն են դրոշմվում:

Այժմ Դրոշմի արարողության ժամանակ քահանան Ս. Մյուռոնով օծում է մկրտվողի մարմնի ինը մասերը՝ **ճակատը, աչքերը, ականջները, հոտոտելիքը, բերանը, ձեռքերը, սիրտը, թիկունքը և ոտքերը**: Չգայարանների օծմամբ մկրտվածն առավել զորանում է և ամբողջականորեն զինվորագրվում Քրիստոսի անհաղթ բանակին:

169. Իսկ այլ օծումներ եղե՞լ են Հայոց Եկեղեցում:

Այո՛. տարբեր դարաշրջաններում եղել են նաև այլ օծումներ, որոնք ընդհանրական բնույթ չեն

230 Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, § 833-834, էջ 433-434, **Ագաթանգեղոս**, Պատմություն հայոց, աշխարհաբար թարգմանություն ներածականով ու ծանոթագրություններով Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1977, էջ 136-137:

կրել: «Հնագույն Մաշտոցում» պահպանվել են տասն օծումներ, քանզի թիկունքի օծումից բացի, կա նաև մեջքի օծում[231]: Որոշ ձեռագրեր ունեն նաև երեսի և ծնկների օծումներ իրենց հատուկ բանաձևերով[232]: Ս. Դրոշմի օծումների այսօր գործածական տարբերակին հանդիպում ենք արդեն 1704 թ. տպագիր «Մաշտոցում»[233]:

170. Որո՞նք են Ս. Դրոշմի ինն օծությունները:

Քահանան նախ Ս. Մյուռոնով օծում է մկրտյալի

1. *ճակատը*՝ ասելով. **«Քրիստոսի անունով քեզ վրա հեղված անուշ յուղն անապական պարգևների երկնավոր կնիքն է»:**

Ըստ Ս. Կյուրեղ Երուսաղեմցու՝ առաջինը ճակատն է օծվում՝ ձերբազատվելու համար նախահոր ամոթից, որպեսզի բաց երեսով արտացոլենք Տիրոջ փառքը[234]: Իսկ Ս. Գրիգոր Տաթևացին նշում է, որ ճակատի մեջ են հավաքված բոլոր զգայարանները, և դրա օծմամբ աներկյուղ ենք դառնում և զորացնում մարմնի մյուս անդամները: Այն նաև ցույց է տալիս, որ մարդկանց բաց ճակատով և համարձակությամբ պետք է ներկայացնել ուղղափառ հավատքի դավանությունը և ոչ թե թաքցնել[235]:

---

231 Մայր Մաշտոց, հ. Ա, գիրք Ա, էջ 230-231:

232 Մանրամասն տե՛ս **Հ. Ս. Ճեմճեմեան**, Մկրտութեան արարողութիւնը Մաշտոցներու մեջ, «Բազմավէպ», Վենետիկ, Դ, 1972, էջ 385-386:

233 Գիրք սրբոյն Մաշտոցայ վարդապետի, Կ. Պոլիս, 1704, էջ 23:

234 Կոչումն ընծայության, էջ 373:

235 Ամառան հատոր, էջ 151:

2. *աչքերը*. **«Հիսուս Քրիստոսի անունով այս կնիքը թող լուսավորի աչքերդ, որպեսզի երբեք մահվամբ չննջես»**:

Նկատի ունենալով 12. 4 սաղմոսը՝ Ս. Հոգու լուսավորությունն ենք հայցում մկրտյալի աչքերին՝ հավիտենական մահով չքնելու համար: Իբրև քրիստոնյաներ՝ մենք աներկբա հավատում ենք, որ երկրային մահը վերջը չէ, այլ Տիրոջ երկրորդ գալստյան ժամանակ պիտի արժանանանք հավիտենական կյանքին, քանզի մեր Տերն Իր հրաշափառ հարությամբ հաղթեց մահվանը:

3. *ականջները*. **«Սուրբ օծումը թող լինի քեզ որպես լսելիք աստվածային պատվիրանների»:**

Ս. Հոգու օգնականությունն ենք խնդրում՝ հանապազ ունկնդիր լինելու աստվածային պատվիրաններին և Աստծո խոսքին, մեր կյանքն իմաստավորելու Տիրոջով և Նրա լույս պատգամներով:

4. *հոտոտելիքը*. **«Հիսուս Քրիստոսի անունով այս կնիքը թող քեզ համար լինի անուշահոտություն կյանքից կյանք»:**

Ս. Կյուրեղն ասում է. *«Այնուհետև այն կքսեք հոտոտելիքին, որպեսզի աստվածային Մեռոնի բուրմունքը զգալով՝ ասեք. «Քրիստոսի բուրմունքն ենք Աստծո առաջ և փրկվածների մեջ»* (Բ Կորնթ. 2. 15)[236]: Ինչպես առաքյալներն էին Տիրոջ խոսքը քարոզում և Նրանով ապրում, այնպես էլ քրիստոնյան պետք է Ս. Հոգու զորությամբ առաքի-

236 Կոչումն ընծայության, էջ 373:



նի կյանքով ապրի, իր շրջապատում լույս և բարություն տարածի՝ դառնալով Տիրոջ անուշահոտությունը: Հենց այդ աստվածային բուրմունքով քրիստոնյան պետք է տարբերվի մյուսներից:

5. *բերանը*. **«Հիսուս Քրիստոսի անունով այս կնիքը թող քեզ լինի բերանի պահպանություն և ամուր դուռ շուրթերիդ»:**

Սրանով խնդրում ենք Աստծուն, որ քրիստոնյան այսուհետ իր բերանով չհայհոյի կամ պիղծ բաներ ասի: Նկատի պետք է ունենալ, որ բացի ֆիզիոլոգիական գործառույթից, բերանն ունի նաև իր հոգևոր նշանակությունը՝ Տիրոջ փառաբանելն ու օրհնաբանելը, Նրան Տեր և Փրկիչ խոստովանելը: Այդ նույն բերանով մենք Ս. Հաղորդություն ենք ստանում, ճաշակում Քրիստոսին, և նույն բերանով հայհոյում և զանազան մեղքեր գործում, որոնք անհամատեղելի են: Ուստի այս օծումը հիշելով՝ պետք է մեր բերանն ու լեզուն միշտ մաքուր պահենք:

6. *ձեռքերը*. **«Հիսուս Քրիստոսի անունով այս կնիքը թող քեզ լինի պատճառ բարեգործության, բոլոր առաքինի գործերի և վարքի»:**

Այսուհետ այս ձեռքերով միայն բարիք պետք է գործել և օգտակար լինել մյուսներին՝ հեռու մնալով գողությունից, արյունոտվելուց և մյուս արատավոր երևույթներից:

7. *սիրտը*. **«Այս աստվածային կնիքը թող սուրբ սիրտ հաստատի քո մեջ և ուղիղ հոգի նորոգի քո մեջ»:**

50.12 սաղմոսի այս տողերն աղերսագին խնդրանք են Աստծուն՝ մաքուր սիրտ ունենալու համար: Սիրտն արյունատար համակարգի կենտրոնական օրգանն է, որն արյունը մղում է անոթներ, ապահովում նրա շարժումը և վերադարձը դեպի սիրտ: Հոգևոր առումով այն խորհուրդների բնակավայրն է, որից ելնում են զանազան մեղքեր (Մատթ. 15. 19): Ուստի քրիստոնյան ամեն ինչ պետք է անի՝ սիրտը մաքուր պահելու համար. չէ՞ որ սրտով մաքուրներն են տեսնելու Աստծուն (Մատթ. 5. 8): Ս. Կյուրեղն այսպես է մեկնաբանում այս օծումը. *«Ամենից առաջ կքսեք կրծքին, որպեսզի «ճշմարտությամբ գոտեպնդված և արդարության զրահը հագած՝ կարողանաք հանգցնել սատանայի բոլոր հնարքները»: Քանզի ինչպես որ Փրկիչը Մկրտությունից և Ս. Հոգու այցելությունից հետո դուրս եկավ և հաղթեց հակառակորդին, այդպես էլ դուք Ս. Մկրտությունից հետո, Ս. Հոգու զրահով գոտևորված, կդիամադրեք թշնամու ուժերին և կհաղթեք նրան՝ ասելով. «Ամեն ինչ կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով»*[237]:

8. *թիկունքը*. **«Հիսուս Քրիստոսի անունով այս կնիքը թող քեզ լինի ամուր վահան, որով կարողանաս չարի բոլոր մխացող նետերը հանգցնել»**:

Ս. Պողոսն ասում է. *«Առե՛ք Աստծո սպառազինությունը, որպեսզի կարողանաք չար օրում դեմ կանգնել չարին: Եվ երբ ամեն ինչ կատարեք, հաս-*

237 Կոչումն ընծայության, էջ 373:



տատո՛ւն կացեք՝ տեղում պինդ կանգնած, ձեր մեջքերը գոտեպնդած ճշմարտությամբ, և արդարության զրահը հագած՝ ձեր ոտքերն ամրացրեք խաղաղության Ավետարանի պատրաստությամբ: Եվ այս բոլորի վրա, առե՛ք հավատի վահանը, որով պիտի կարողանաք հանգցնել չարի բոլոր մխացող նետերը: Եվ առե՛ք փրկության սաղավարտն ու Հոգու սուսերը, որ Աստծո խոսքն է» (Եփես. 6. 13-17):

9. *ոտքերը*. **«Այս աստվածային կնիքը թող ուղղի ընթացքդ դեպի հավիտենական կյանք, որպեսզի չերերաս»**:

Այստեղ խոսքը քրիստոնյայի հաստատուն ընթացքի մասին է, որի վերջնական նպատակակետը երկնքի արքայության ժառանգումն է: Միայն ամուր ոտքերով, որոնք ճանապարհին չեն շեղվում այս ու այն կողմ, կարելի է հասնել ցանկացածին: Ուստի քրիստոնյան պետք է զգոն և աչալուրջ լինի և մշտապես հետևի իր ընթացքին:

Ս. ԴՐՈՇՄԻ ՀՈՐՀՐԴԻ ՆՅՈՒԹԸ՝ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆ

171. Ո՞րն է Ս. Դրոշմի նյութը:

Ս. Դրոշմի արարողության ժամանակ գործածվող տեսանելի նյութը Սրբալույս Մյուռոնն է՝ Ս. Հոգու նշանակը:

172. Ինչպե՞ս է ստուգաբանվում «Մյուռոն» բառը:

Ըստ մեծանուն լեզվաբան Հրաչյա Աճառյանի՝ հունարեն «Մեռոն» բառը նշանակում է «հեղուկ անուշահոտություն, հոտավետ յուղ», որը ծագում է «քսել, օծել» արմատից[238]: Չնայած այս ստուգաբանությանը, հայկական միջավայրում այն կապվել է «մեռնել», «դառնություն» և «մռայլ» բառերի հետ: Հայոց Եկեղեցու վարդապետներն ու հայրերն այսպես են մեկնաբանել՝ նկատի ունենալով Ս. Մկրտության խորհուրդը: Ս. Գրիգոր Նարեկացին եբրայեցերենի հետևողականությամբ Մյուռոնը ստուգաբանում է «մեռա» բառով, որ նշանակում է «դառնություն»:

Ս. Մկրտության խորհրդով բաժնեկից ենք դառնում Քրիստոսի չարչարանքների դառնությանը, բայց վերստին ծնվելով Ս. Ավազանից՝ Նրա հետ նաև հարություն ենք առնում: Իսկ Մյուռոնի «մռայլ» ստուգաբանությունը, որը եր-

238 **Հր. Աճառյան**, Հայերենի արմատական բառարան, հ. Գ, Երևան, 1977, էջ 326-327:



բեմն նաև այլ բառերով կոչվում է «խավար» և «մթին», կապվում է աստվածային ճշմարտությունների և Աստծո ճանաչողության հետ: Այդ ճշմարտությունները և Աստված անմատչելի են մեր մտքի համար, հետևաբար նաև խավար և մութ, սակայն դրանց քաղցրությունը և մասամբ ճանաչողությունը տրված է ընտրյալներին և սրբերին[239]:

173. Ի՞նչ է խորհրդանշում Մյուռոնը կամ օծության Յուղն Աստվածաշնչում:

Հնում արևելյան ազգերը և հատկապես հրեաներն իրենց աստվածպաշտության մեջ ձիթենու յուղ էին օգտագործում: Աստված Ինքը Մովսեսին պատվիրեց օծության Յուղի պատրաստման ձևը, որով զանազան առարկաներ էին օծում (տես Ելք 30. 22-33): Օծումից հետո դրանք դառնում էին սրբագործված, զանազանվում մյուսներից և օգտագործվում ծիսական արարողությունների ժամանակ: Օծվում էին նաև քահանաները և թագավորները, ինչպես նաև ննջեցյալների մարմինները՝ ապականվելուց զերծ պահելու համար[240]: Օծության Յուղն այն տեսանելի, զգալի նշանն էր, որով Աստծո Հոգին ներգործում էր մարդկանց և առարկաների վրա: Այս Յուղի աստվածաբանական բա-

---

239 Տե՛ս **Գրիգոր Նարեկացի**, Մատեան ողբերգութեան, էջ 1120, ծնթ. 77:

240 Տե՛ս **Մեսրոպ քահանայ Արամեան**, Մկրտութեան արարողութեան աստուածաբանութիւնը, «Գանձասար» աստուածաբանական հանդէս, հ. Դ, էջ 77, ծնթ. 12:

ցատրությունը տրված է Երգ Երգոց գրքում, որի 1. 2-ում ասվում է. *«Քո անունը հեղված անուշ յուղ է»*: Ըստ Եկեղեցու հայրերի՝ *«Հեղուած իւղը Քրիստոսն է՝ Օծեալը: Աստուածութեան իւղը հեղւում է մեր բնութեան մէջ, անբաժանելիօրէն միաւորւում նրա հետ, օծում և աստուածացնում այն: Նախայաւիտեան Բանը հեղւում է մեր բնութեան մէջ՝ ճշմարտապէս մարդանում սուրբ Կոյսից»* (Նիւսացի, Տաթևացի)[241]:

Օծման նշանակությունը վերահմաստավորվեց Հիսուս Քրիստոսի գալստյամբ: Նա դարձավ բացարձակ Օծումը. *«Դավթի քաղաքում ձեզ համար ծնվեց մի Փրկիչ, որ օծյալ Տերն է»* (Ղուկ. 2. 11): Իսկ Ս. Պետրոսը Հոգեգալստից հետո նորադարձներին ասում էր. *«Իսրայելի ամբողջ տունը վստահորեն թող իմանա, որ Աստված Նրան և՛ Տեր, և՛ Օծյալ արեց, այն Հիսուսին, որին դուք խաչեցիք»* (Գործք 2. 36): Նոր Կտակարանում Յուղով օծումը նաև հարգանքի նշան էր: Հիշենք, թե ինչպե՛ս Բեթանիայում՝ Սիմոն բորոտի տանը, օծվեց Հիսուսի մարմինը, որը Նրա թաղման խորհուրդն ուներ (Մատթ. 26. 7, Մարկ. 14. 3, Հովի. 12. 3)[242]:

174. Ի՞նչ խորհուրդ ունի քրիստոնեական Մյուռոնը:

Քրիստոնեական Մյուռոնն ամբողջացումն ու կատարելությունն է նախկին բոլոր յուղերի, որոնք տարբեր ժամանակներում օգտագործվել

241 Երգ Երգոց՝ հանդերձ մեկնութեամբ նախնեաց, էջ 23-24:

242 Խնդրի մասին տե՛ս նաև Սրբալույս Մյուռոն, կազմեց՝ Վարդան Դևրիկյանը, Ս. Էջմիածին, 2008, էջ 7-11:

են Հայոց Եկեղեցում: Սրբալույս Մյուռոնի խորհուրդը լավագույնս բացահայտվում է Մյուռոնի օրհնության կանոնի՝ կաթողիկոսի կողմից ասվող աղոթքներում: Ս. Հոգու զորությամբ այն դառնում է *«ցնծության յուղ, լուսավոր զգեստ, թագավորական օծում, հոգիների և մարմինների մաքրություն, հոգևոր շնորհք, կյանքի պահապան, արդարության կնիք, հավատքի զենք, հաղթող նահատակ ընդդեմ բանսարկուի բոլոր գործերի, հոգիների փրկություն, սրտերի ցնծություն, հավիտենական ուրախություն»*, քանզի սրանով օծվողը *«երկյուղած կլինի Աստծուց և աներկյուղ՝ հակառակորդից»*[243]: Ս. Երրորդությունն է խառնվում և միավորվում այս Յուղին և մեզ շնորհում *«հոգիների ճառագայթ, մտքի լուսավորություն, դեմքի խաչակնքում, անձերի զորություն, ախոյան ընդդեմ դևերի, ցավերի փարատում, կույսերի պահպանում, մանուկների զարգացում, ծերերի լիացում, նվիրյալների մկրտող և թագավորների պսակ»*[244]: Ս. Դրոշմի ժամանակ Քրիստոսի անունով ստացած կնիքները մեզ զորացնում և պահպանում են մինչև Տիրոջ երկրորդ գալուստը՝ փայլելու երկնքի աստղերի պես դատաստանի ժամանակ: Սրբալույս Մյուռոնի օծմամբ ամբողջանում է Ս. Մկրտությունը, ինչպես Ս. Հաղորդությամբ՝ Դրոշմը՝ իր լրումին հասցնելով Ս. Մկրտության խորհրդակատարությունը[245]:

---

243 Կանոն օրհնութեան Սրբալոյս Մեռոնին, Վաղարշապատ, 1890, էջ 12:

244 Նույն տեղում, էջ 26:

245 Տե՛ս **Մեսրոպ քահանայ Արամեան**, Մկրտութեան արարողութեան աստուածաբանութիւնը, «Գանձասար» աստուածաբա-

175. Որտեղի՞ց է սկիզբ առնում հայկական Մյուռոնը:

Հայոց Եկեղեցում Ս. Մյուռոնի գործածությունը գալիս է առաքելական ժամանակներից: Ըստ ազգային Ավանդության, որը մեջբերված է ԺԳ դարի նշանավոր աստվածաբան Վանական վարդապետի աշխատության մեջ, Քրիստոսի օրհնած յուղը Հայաստան է բերել Հայոց աշխարհի առաջին լուսավորիչ Ս. Թադեոս առաքյալը[246]: Այս մասին է նշում նաև Վարդան վրդ. Արևելցին իր «Աշխարհացոյց» երկում[247]: Մեկ այլ ավանդությունն էլ Մյուռոնը կապում է Ս. Մովսես մարգարեի պատրաստած Յուղի հետ, որը հասել էր մինչև Հիսուս:

Հայաստան գալով՝ առաքյալն իր հետ բերած սրբազան Յուղով օծում է հիվանդ Աբգար թագավորին և բժշկում նրան: Այնուհետև նա մեկնում է Տարոն, ուր մշտադալար մի եղերդենու տակ թաղում է շշով բերած իր Յուղը: Այդտեղ իջած լույսով և Ս. Գրիգոր Լուսավորչին երևացած տեսիլքի շնորհիվ հայոց առաջին հայրապետը գտնում է առաքյալի թաղած սուրբ Յուղը և խառնում իր օրհնած Մյուռոնին: Հետագայում Լուսավորիչն այդ վայրում կառուցում է Ս. Հովհաննես Մկրտչի անունով մի եկեղեցի, որը հայ մատենագրության մեջ կոչվում է նաև «Եղրդու-

---

նական հանդէս, հ. Դ, էջ 78-79:

246 «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 533:

247 Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, քննական հրատարակութիւն Հայկ Պէրպէրեանի՝ համեմատութեամբ 24 ձեռագրի և տպագրի, Բարիզ, 1960, էջ 20:

տի վանք» կամ «Ս. Շիշ յուղի վանք»: Եվ այսպես ամեն անգամ, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսները նոր Մյուռոն են օրհնել, դրան ավելացրել են նաև լուսավորչավանդ Ս. Մյուռոնը, որպեսզի հնի մեջ բնակվող սրբալույս Շնորհը փոխանցվի նորին: Այս քայլով մեր Եկեղեցին ոչ միայն ապահովում է դարեդար փոխանցվող Մյուռոնի հաջորդականությունը, այլ նաև ևս մեկ անգամ շեշտում Սրբազան Ավանդության հանդեպ իր հավատարմությունը:

176. Ի՞նչ ծիսական արարողություններ են կատարվում Ս. Մյուռոնով:

Ս. Մյուռոնը Հայոց Եկեղեցում գործածվում է հետևյալ դեպքերում՝

✠ Ս. Դրոշմի խորհրդի ժամանակ, երբ քահանայական աստիճան ունեցող հոգևորականը Ս. Մյուռոնով օծում է մկրտվածի մարմնի ինը մասերը՝ նրան փոխանցելով Ս. Հոգու շնորհները:

✠ Ս. Մյուռոնով են կատարվում քահանայական, եպիսկոպոսական և կաթողիկոսական օծումները: Քահանայական օծման ժամանակ ձեռնադրող եպիսկոպոսն օծում է ընծայացուի ճակատը և երկու ձեռքերը, եպիսկոպոս ձեռնադրելիս Ամենայն Հայոց Կաթողիկոսն օծում է ապագա եպիսկոպոսի ճակատը և աջ բթամատը՝ իշխանություն տալով նրան ձեռնադրություններ կատարելու, եկեղեցիներ օծելու և այլն: Մեր Եկեղեցում օծվում են նաև Ամենայն Հայոց և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսները: Ս. Մյուռոնը հեղվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի

գլխին՝ որպես Հայոց Եկեղեցու ընդհանրական Հայրապետի և Լուսավորչի հոտի միությունը պահպանողի: Մյուռոնով օծվելն է պատճառը, որ հայ հավատացյալը համբուրում է օծված հոգևորականի աջը, իսկ ձեռնադրությունից հետո՝ մյուռոնված ճակատը: Հնում Մյուռոնով են օծվել նաև հայ թագավորները:

✠ Մյուռոնով են օծվում նորակառույց եկեղեցու հիմքի խաչապատկեր քարե սալիկները, դուռը, զանգը, գմբեթի խաչը, եկեղեցու նավակատիքին՝ Ս. Խորանը, Մկրտության Ս. Ավազանը, Հիսուս մանկան հետ Տիրամոր նկարը և եկեղեցու սյուները: Եվ միայն օծվելուց հետո է եկեղեցում մատուցվում Ս. Պատարագ, քանզի այն արդեն սրբագործված է և մաքուր:

✠ Ամեն տարի հունվարի 6-ին՝ Ս. Ծննդյան և Աստվածհայտնության տոնին, Ս. Պատարագից հետո կատարվող ջրօրհնեքի ժամանակ Ս. Մյուռոնը հեղվում է Հորդանան գետը խորհրդանշող ավազանի մեջ՝ ի հիշատակ Մկրտության ժամանակ Հորդանանում Հիսուսի վրա Ս. Հոգու էջքի:

177. Ինչի՞ց է կազմված Ս. Մյուռոնը:

Ս. Մյուռոնն ունի երկու էական բաղադրիչ՝ ձիթենու յուղ և բալասան, որոնց խառնվում է 40-ից ավելի տարբեր հոտավետ խունկերի, ծաղիկների, անուշահոտ բույսերի արմատների, ծաղկաջրերի, յուղային հյութերի և տերևների միաշաղախված հեղուկը: Նյութերի այս բուրումնավետությունը խորհրդանշում է քրիստոնեական հավատքի և կյանքի անուշահոտությունը: Մեզ են հասել հայկական բազում ձեռագրեր,

որոնք անդրադառնում են Ս. Մյուռոնի կանոնին, խորհրդին, անհրաժեշտ նյութերին և այս սրբազան Յուղին առնչվող այլ խնդիրներին: Հատկապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն ձեռագրերը, որոնք մանրամասն անդրադառնում են Մյուռոնի համար անհրաժեշտ նյութերին: Խնդրի վերաբերյալ մեզ հասած ամենահին ձեռագիրը 1461 թ. ընդօրինակված Մաշտոցյան Մատենադարանի Ձեռ. 4997 ձեռագիրն է, որտեղ խոսվում է 40 բույսերի և նյութերի մասին[248]: Այլ ձեռագրերում նյութերի քանակը հասնում է անգամ մինչև 58-ի: Հետաքրքրական է, որ նմանաբնույթ ձեռագիր մատյաններում բացակայում է ձիթապտղի ձեթի մասին հիշատակությունը, քանզի բոլորին էլ պարզ էր, որ առանց ձիթայուղի հնարավոր չէ Ս. Մյուռոն պատրաստել: Մյուռոնի նյութերի ուսումնասիրությունը և դրանց աշխարհագրական տարածվածության վերլուծությունը փաստում են, որ այդ բույսերի մեծ մասն աճում են մերձարևադարձային և արևադարձային կլիմայական գոտիներում[249]: Միայն դրանցից մի քանիսը կարող ենք գտնել Արևմտյան Հայաստանում և ներկայիս Հայաստանի Հանրապետությունում: Այս բացը լրացնելու նպատակով վերջին երեք մեռոնօրհնեքների ժամանակ ավելացվել են նաև որոշ բույսեր Արցախից և Հայաստանից՝ նյութերի քանակը հասցնելով 72-ի՝ ըստ Տիրոջ աշակերտների խորհրդանշական թվի:

248 Տե՛ս ՄՄ ձեռ. Ձեռ. 4997, թ. 75ա:

249 Մանրամասն տե՛ս **Նազիկ Խանջյան, Միրանուշ Գալստյան**, Հայ Եկեղեցու սրբալույս մեռոնը, Երևան, 2001, էջ 14-91:

178. Ի՞նչ նշանակություն ունի բալասանը Ս. Մյուռոնի բաղադրության մեջ:

Ձիթայուղից հետո Ս. Մյուռոնի երկրորդ հիմնական նյութը *բալասանն* է (լատ. Commifora opobalasamum): Այն փշատենու նման մշտադալար ծառի կեղևի կտրվածքից հոսող յուղային խեժ է, որը հանդիպում է Արաբական թերակղզում, Հնդկաստանում, Աֆրիկայում, Պաղեստինում և Վիետնամում: Բալասանն օգտագործվում է կրոնաճիսական նպատակով և բժշկության մեջ: Մյուռոնի պատրաստության ժամանակ բալասանը փափկեցնում են կտավատի յուղով, որպեսզի կարողանա միախառնվել ձիթենու յուղին: Մյուռոնի կանոնը հրահանգում է, որ որքան շատ լինի այն, այնքան ավելի լավ է: Որպես Մյուռոնի մակարդ՝ բալասանի մասին ստեղծվել են տարբեր ավանդություններ հայ մատենագրության մեջ, այն գովերգվել է նաև գեղարվեստական ստեղծագործություններում: Վարդան վարդապետն իր «Աշխարհացոյց» աշխատության մեջ նշում է, որ Տիրամայրը լվացել է մանուկ Հիսուսի հագուստը և ջուրը թափել, որտեղ էլ բուսնել է բալասանի ծառը[250]: Այս ավանդազրույցը մեջբերել է նաև Հակոբ Նալյան պատրիարքը՝ Նարեկի 93-րդ գլուխը մեկնելիս: Ըստ նրա՝ ինչպես ծառի ճեղքումից բալասանի յուղային խեժն է դուրս գալիս, այնպես էլ Հիսուսի կողի խոցմամբ՝ Տիրոջ փրկարար արյունը[251]:

---

250 Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, էջ 66:

251 **Յակոբ պատրիարք Նալեան**, Մեկնութիւն աղօթից և ներբողինաց Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հրեշտակական վարդապետի, Կոստանդնուպոլիս, 1745, էջ 702:

179. Ե՞րբ է սկսվում Մյուռոնօրհնության պատրաստությունը:

Ս. Մյուռոնի պատրաստությունը սկսվում է մյուռոնօրհնությունից 50 օր առաջ, երբ աշխարհի զանազան վայրերից (Հնդկաստան, Իսրայել, Պաղեստին, Հունաստան և այլն) արդեն Մայր Աթոռ են բերված լինում անհրաժեշտ բոլոր նյութերը: Անշուշտ, Մյուռոնի նյութերին պետք է մոտենալ զգուշությամբ և երկյուղածությամբ: Ս. Մյուռոնի կանոնում պատվիրվում է, որ պատրաստողները լավ խառնեն դրանք, որպեսզի միավորվեն և շաղախվեն իրար հետ, և Տերն էլ վարձահատույց կլինի նրանց այս ամենի համար: Նույն կանոնը նաև ասում է, որ եթե մեկ, երկու կամ երեք նյութեր անգամ պակասեն, ապա դա արգելք չի կարող լինել Մյուռոնի օրհնության համար: Մյուռոնի բոլոր նյութերը մշակվում են հոգևորականների կողմից՝ կոշտերը ծեծվում և մանրացվում են, մաղվում և փափկացվում հատուկ յուղերով: Վեհափառ Հայրապետի ձեռամբ օրհնվում են Ս. Մյուռոնի անհրաժեշտ բոլոր նյութերը, լցվում մեծ կաթսայի մեջ, որոնք երեք օր շարունակ կրակի վրա շոգիացման եղանակով եփվում են: Այդ օրերի ընթացքում ընթերցվում են աղոթքներ, սաղմոսներ և երգվում են շարականներ: Եփման ամբողջ գործընթացն անցնում է աղոթական և խորհրդավոր մթնոլորտում: Կրակի վրայից վերցնելուց հետո կաթսան թողնում են մի քանի օր, որպեսզի չլուծված ողջ նստվածքը ցած իջնի և մնա պարզված մաքուր հեղուկը, որը քամում են մաքուր կտավով և պահում մինչև մյու-

ռոնօրհնության օրը: Իսկ մյուռոնօրհնությունից 40 օրեր առաջ անարատ ձիթենու յուղով Մյուռոնի կաթսան դրվում է Ս. Էջմիածնի Մայր Տաճարի Ավագ Ս. Խորանի վրա և ծածկվում նրբահյուս շղարշով: Հնում այն ծածկվում էր յոթ շարք շղարշներով, որոնք հաճախ նաև երփներանգ էին: Ընդհանրապես յոթ թիվը խորհրդանշում է Եկեղեցու յոթ խորհուրդները, յոթ առաքինությունները, Ս. Հոգու յոթ շնորհները և այլն, իսկ շղարշների տարբեր գույնի լինելը, հավանաբար, կապ ունի մարդու և Աստծո միջև հաստատված ուխտի՝ ծիածանի յոթ գույների հետ: Եվ այսպես մինչև մյուռոնօրհնեք ամեն օր՝ երեկոյան ժամերգության վերջում, կատարվում է հատուկ կարգ, որը բաղկացած է Հոգեգալստյան կանոնի շարականներից, օծության Յուղին նվիրված քարոզաշարից, ավետարանական տարբեր ընթերցվածքներից և աղոթքից: Կարճ աղոթքում խնդրում ենք, որ Աստված ունկնդիր լինի մեր աղաչանքներին, և Իր ողորմությունն ուղարկի այդ ձիթենու մեջ, որը մարդկությանը տրված է օգտակարության և փրկության համար: Խնդրում ենք նաև, որ Ս. Հոգու շնորհները բնակվեն մեր և այս ձիթայուղի մեջ, որպեսզի արժանի լինենք հրեշտակների ինը դասերի նման փառաբանելու Աստծուն:

180. Ո՞վ է օրհնում Ս. Մյուռոնը:

Հայոց Եկեղեցում Ս. Մյուռոնի օրհնությունը վերապահված է Ամենայն Հայոց Կաթողիկոսին և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին: Մյուռո-



նօրհնության ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերցնում է ծաղիկներից պատրաստված խտանյութը և լցնում է կաթսայի մեջ, իսկ հետո նույն ձևով նաև բալասանը: Այնուհետև նա հին Մյուռոնը լցնում է նորի մեջ, որից հետո երգվում է «Առաքելոյ աղաւնոյ» շարականը: Ապա Հայոց Հայրապետը տյառնագրում և խառնում է Մյուռոնը Հայոց Եկեղեցու ավանդական երեք նվիրական սրբություններով՝ Տիրոջ խաչափայտի մասունքով Կենաց Խաչով[252], աստվածամուխ Ս. Գեղարդով[253] և Ս. Գրիգոր Լուսավորչի Աջով՝[254] երեք անգամ ասելով. *«Թող օրհնվի և սրբվի Մեռոնս այս Ս. Խաչի նշանով, այս Ս. Ավետարանով, Ս. Աջովս (կամ Գեղարդովս) և օրվա շնորհով Հոր, Որդու և Ս. Հոգու անունով...»:* Հայրապետական այս օրհնություններից հետո կաթսան կրկին ծածկվում է նուրբ շղարշով:

---

252 Մասունքակիր այս խաչը պատրաստվել է հատուկ Փիլիպոս Ա Աղբակեցի Կաթողիկոսի (1632-1655) համար 1652 թ.: Նշենք, որ Մայր Աթոռում պահվում են նաև այլ սրբություններ, որոնք Հիսուսի խաչափայտի մասունքով են: Ս. Գրիգոր Նարեկացին իր «Աղոթամատյանի» 93-րդ գլխում, որն ամբողջությամբ նվիրված է Մյուռոնին, ասում է, որ խնկելի, պաշտելի և երանելի այս Յուղը մարդուն որևէ օգուտ չի տա, եթե տերունի կենսատու խաչով չտյառնագրվի. **Գրիգոր Նարեկացի**, Մատեան ողբերգութեան, Բան ՂԳ, տ. 272-274, էջ 627:

253 Գեղարդի մասին տե՛ս **Ի. Գ. Ղարիբյան**, Հրաշագործ Սուրբ Գեղարդ, խմբագրությամբ՝ Շահե արք. Ածեմյանի, Երևան, 2003, էջ 7-62:

254 Աջի մասին տե՛ս **Իգիթ Ղարիբյան**, Գրիգոր Լուսավորչի աջը, «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, հուլիս Ա-սեպտեմբեր Ա, 2003:

181. Ի՞նչ հաճախականությամբ է օրհնվում Ս. Մյուռոնը:

Ըստ վերջին շրջանում ձևավորված սովորության՝ Մյուռոնն օրհնվում է 5-7 տարին մեկ, բայց անհրաժեշտության դեպքում այն կարող է նաև խախտվել: Անկասկած, երջանիկ է այն կաթողիկոսը, ով իր գահակալության ընթացքում կարողանում է գեթ մեկ անգամ Մյուռոն օրհնել և իր հայրապետական օրհնությունը բաշխել հավատացյալներին: Ցավոք, պատմության ընթացքում ունեցել ենք նաև այնպիսի կաթողիկոսներ, ովքեր այդպես էլ չեն հասցրել կատարել սրբազան այս արարողությունը: Օր.՝ Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցի Իզմիրլյանը (1908-1910) իր կարճ գահակալության ընթացքում չհասցրեց Մյուռոն օրհնել, քանզի 1909 թ. նշանակված արարողությունը հետաձգվեց Կովկասում բռնկված խոլերայի պատճառով: Նույն ճակատագրին արժանացան նաև երջանկահիշատակ Խորեն Ա Մուրադբեկյանը (1932-1938) և Գևորգ Ջ Չորեքչյանը (1945-1954), որոնց նույնպես բախտ չվիճակվեց Մյուռոն օրհնել խորհրդային կարգերի պատճառով: 29 տարվա դադարից հետո վերջապես 1955 թ. հոկտեմբերի 8-ին իր առաջին մյուռոնօրհնությունը կատարեց նորընտիր Վազգեն Ա Պալճյանը (1955-1994): Բացի սրանից, Վազգեն կաթողիկոսն իր գահակալության ընթացքում կատարեց ևս 5 մյուռոնօրհնեք: 1991 թ. սեպտեմբերի 29-ին Աստծո կամքով նա օրհնեց նորանկախ Հայաստանի Հանրապետության առաջին Մյուռոնը՝

անվանելով այն «Անկախության Մյուռոն»: Վազգեն կաթողիկոսին հաջորդած Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը 1996 թ. սեպտեմբերի 8-ին Մայր Աթոռում կատարեց իր առաջին Մյուռոնի օրհնությունը՝ կոչելով այն «Վերածնության Մյուռոն»: Բայց հաջորդը տեղի ունեցավ ոչ թե յոթ տարի հետո, այլ՝ հինգ, այսինքն՝ 2001 թ., երբ ազգովի նշում էինք քրիստոնեությունը Հայաստանուն պետական կրոն հռչակման 1700-ամյակը: Վերոգրյալ բոլոր օրինակները և պատմական տվյալները ցույց են տալիս, որ ազգային-եկեղեցական կարևոր և հիշարժան տարեթվերի, Մյուռոնի պակասության կամ այլ հանգամանքների դեպքում Վեհափառ Հայրապետը կարող է մյուռոնօրհնեք կատարել՝ օգտվելով իրեն վերապահված իրավունքից:

182. Ե՞րբ է օրհնվում Ս. Մյուռոնը:

Սկզբնական շրջանում մյուռոնօրհնությունը կատարվում էր Ավագ Հինգշաբթի օրը, երբ Հիսուս հաստատեց Ս. Հաղորդության խորհուրդը: 19-րդ դարի «Մաշտոցները» հրահանգում են, որ այն կարելի է կատարել նաև Հոգեգալստին կամ որևէ այլ պատշաճ օր: Վերջին շրջանում մյուռոնօրհնությունը կատարվում է Վարագա Ս. Խաչի տոնին, որը խաչին նվիրված հայոց ազգային-եկեղեցական ինքնատիպ տոնն է: Հաշվի առնելով, որ այդ օրը բազմաթիվ ուխտավորներ են ժամանում Ս. Էջմիածին աշխարհի բոլոր կողմերից, ինչպես նաև Արարատյան դաշտավայրի եղանակային պայմանները՝ այժմ Մյուռոնն

օրհնվում է աշնանը: 20-րդ դարում սրբազան այս արարողությունը կատարվել է Մայր Տաճարի ներսում կամ զանգակատան դիմաց: Քանի որ այժմ շատերն են ցանկանում մասնակցել մյուռոնօրհնությանը, 2001 թ. սկսած այն տեղի է ունենում Ս. Տրդատի նորակառույց Բաց խորանում:

183. Ինչպե՞ս է կատարվում բուն մյուռոնօրհնեքը:

Հնում մյուռոնօրհնեքը կատարվել է Ս. Պատարագի ընթացքում: Վերջին շրջանում այդ օրն առավոտյան Մայր Տաճարում Ս. Պատարագ է մատուցվում, իսկ երեկոյան տեղի է ունենում բուն արարողությունը: Նախքան արարողությունը, Վեհափառը և 12 արքեպիսկոպոսներ կամ եպիսկոպոսներ զգեստավորվում են պատարագչի ամբողջական հագուստներով: Հայոց Հայրապետը հոգևորականների դասի ուղեկցությամբ և ամպհովանու ներքո Վեհարանից կամ Մայր Տաճարից «Խորհուրդ խորին» շարականի երգեցողության և Մայր Տաճարի զանգերի ղողանջների ներքո ուղղվում է դեպի Բաց խորան: Հայոց Հայրապետի աջ և ձախ կողմերում ընթանում են վեցական սրբազաններ՝ իրենց ձեռքերին ունենալով Մյուռոնի համար անհրաժեշտ սրբությունները՝ խաչափայտի մասունքով Կենաց Խաչը, Ս. Գեղարդը և Ս. Գրիգոր Լուսավորչի Աջը: Բացի մյուռոնօրհնությանն անհրաժեշտ այս երեք սրբություններից, արարողությանը դուրս են բերվում նաև այլ սրբություններ:

Սրբազանները տանում են նաև հին Մյուռոնը, բալասանը և Մյուռոնի նյութերի անոթը: Արդեն խորանի վրա Աստվածաշնչից ընթերցվում են ձիթենուն, օծության Յուղին, նրա պատրաստությանը և շնորհատու գործառույթին նվիրված մի քանի հատվածներ: Առանձին աղոթքներ է ընթերցում նաև Վեհափառ Հայրապետը՝ խնդրելով, որ Ս. Հոգին իջնի Յուղի մեջ և սրբացնի այն: Երբ Մայր Աթոռի լուսարարապետը բացում է կաթսայի կափարիչը, շարականի երգեցողության ժամանակ Հայոց Հայրապետը կաթսայի մեջ է լցնում ծաղիկներից պատրաստված խտանյութը, իսկ հետո նույն ձևով նաև բալասանը: Այնուհետև նա հին Մյուռոնը լցնում է նորի մեջ, որից հետո երգվում է «Առաքելոյ աղաւնոյ» շարականը: Ապա Հայոց Հայրապետը տյառնագրում և խառնում է Մյուռոնը Հայոց Եկեղեցու ավանդական երեք նվիրական սրբություններով: Հայրապետական այս օրհնություններից հետո կաթսան կրկին ծածկում են նուրբ շղարշով: Արարողությունն ավարտվում է «Պահապանիչ» աղոթքով, երբ Վեհափառ Հայրապետն օրհնում է ժողովրդին, որը շտապում է վայրկյան առաջ համբուրել Մյուռոնի տաք կաթսան և օրհնություն ստանալ: Ընդունված սովորության համաձայն՝ այդ օրն ուխտավորները նաև իրենց նվերներն են տալիս Ս. Էջմիածնին՝ ի պայծառություն Հայոց Եկեղեցու: Մյուռոնի կաթսան 7 օր շարունակ մնում է Մայր Տաճարում, որպեսզի հավատացյալները հնարավորություն ունենան այն համբուրելու և օրհնություն ստանալու:

184. Ինչո՞ւ ենք ասում Սրբալույս կամ կանաչ Մյուռոն:

Մյուռոնի մասին խոսելիս հաճախ գործածում ենք «Սրբալույս» մակդիրը, որն առաջին անգամ հայ մատենագրության մեջ կիրառել է Ս. Գրիգոր Նարեկացին իր անմահ «Աղոթամատյանի» 93-րդ գլխի խորագրում. *«Մեկնողական աղոթք Մյուռոնի Սրբալույս Յուղի մասին»*: Նարեկի այս գլուխն ամբողջությամբ նվիրված է Մյուռոնի հոգևոր խորհրդի բացատրությանը: «Սրբալույս Մյուռոն» ասելով՝ նկատի ունենք, որ այդ Յուղից բխած լույսը սուրբ է, հոգևոր և պայծառ, որը լուսավորում է ամեն քրիստոնյայի:

Ժողովուրդը Ս. Յուղը նաև կոչում է «կանաչ Մյուռոն»: Կանաչը մշտադալարության և թարմության խորհուրդն ունի: Ինչքան թարմ է Մյուռոնը մեր ճակատին, այնքան մենք ավելի մաքուր և Ս. Հոգու շնորհներով զարդարված ենք: Բացի այս հոգևոր իմաստից, նկատի պետք է ունենալ, որ Մյուռոնի գլխավոր նյութերից ձիթայուղը կանաչավուն է, և այն տարիների ընթացքում գունափոխվում է և դառնում ավելի կանաչ:

185. Ի՞նչ հրաշքներ են կատարվել Ս. Մյուռոնի շնորհիվ:

Դարերի ընթացքում հայոց Մյուռոնի հրաշագործ զորության մասին բազում պատմություններ են ստեղծվել՝ ընդգծելով նրա զորությունն ու ուժը: Այստեղ ուզում ենք պարզապես երկու օրինակ բերել:

Միջնադարում շրջանառված մի ավանդութ-

յան համաձայն՝ 1023 թ. հունվարի 6-ին՝ Աստվածհայտնության տոնին, բյուզանդական կայսեր և ավագանու ներկայությամբ Պետրոս Գետադարձը Մաչկա կոչվող գետակի վրա կատարում է մեր ավանդական Ջրօրհնեքի կարգը: Կայսրը կարգադրում է, որ Հայոց Հայրապետն արարողությունը կատարի հայկական ծեսով, իսկ հույները՝ իրենց: Նա հայերին ավելի բարձր տեղում է կանգնեցնում, քան հույներին: Ըստ Կիրակոս Գանձակեցու († 1271) այս քայլի իմաստն այն էր, որ վերևում հայերի օրհնածը ներքևում հույները վերստին օրհնեին՝ այն «կատարյալ» դարձնելով[255]: Արիստակես Լաստիվերցին (11-րդ դ.) գրում է, որ երբ կաթողիկոսը Մյուռոնը կաթեցրեց, հանկարծակի ճառագայթող լույսի ցնցուղներ դուրս ելան ջրից, դա տեսան բոլոր հավաքվածները, փառաբանեցին Աստծուն, և մեր հավատի զորությունը բարձրացավ[256]: Հետագա պատմիչները ոչ միայն չեն բավարարվում երևացած լույսի հրաշքով, այլ նաև որոշ հավելումներ կատարում: Սմբատ պատմիչը նշում է, թե գետի ջրերի վրա հուր երևաց, ջուրը մի պահ արգելափակվեց[257], իսկ Գանձակեցին հավելում է, թե Հայոց Հայրապետի աղոթ-

255 **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Երևան, 1982, էջ 77:

256 **Արիստակես Լաստիվերցի**, Պատմություն, թարգմանությունը Վ. Գևորգյանի, 1971, Երևան, էջ 10:

257 Սմբատ սպարապետի եղբօր Հեթմոյ առաջնոյ արքայի Հայոց պատմութիւն Յունաց ի Կոստանդնուպօլիս և Հայոց Մեծաց՝ ըստ կարգի ժամանակաց, Մոսկուա, 1856, էջ 29:

